# ԷՋՄԻԱԾԻՆ



Ե
2003

ДУБЛЕТ

ԾԹ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Մայիս
2003

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** - Ալեքսանդրիայի Պապ և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ-ի այցը Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . . . . . . . 3

**ՎԱԶԳԵՆ ՍՐԿ. ՔԵՍԱԲԼՅԱՆ** - Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 12

**ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ օծվեց Կրասնոյարսկի Սուրբ Սարգիս և վերաօծվեց Լվովի Սուրբ Աստվածածնի Վերափոխման եկեղեցիները . . . . . . . . . . . 18

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ ընտրվելու առիթով Կանադահայոց թեմում կազմակերպված հանդիսության . . . . . . . . 29

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը Հոգեշնորհ Տ. Վարուժան ծայրագույն վարդապետ Գասպարաճյանին . . . 31

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Անդրանիկ Զորայանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . 33

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Ջիվան Գալֆային «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . 35

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ** կոնդակը Մարգարիտ Հովսեփյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . . . . . . . . . 37

Հայրապետական գնահատություն . . . . . . . . . . . . . . . . . . . . 39

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Մայիսի 9-ի Հաղթանակի և Խաղաղության օրվա առիթով . . . . . . . . . . . . . . . . . . . . 40

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Անկախության օրվա առիթով . . . . . . . . . . . . . . . . . . . . 41

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով . . . . . . . . 42

Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանն ընտրվեց ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ . . . . . . . . . . . . . . . . 43

## ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ


Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Ս. Պատարագին . . . 45
Տ. Մեսրոպ եպիսկոպոս Չուլջյանի քարոզը խոսված Մայր Տաճարում մատուցված Ուխտի Պատարագին . . . 48
Տ. Ոսկան արքեպիսկոպոս Գալփաքյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Պատարագին . . . 50
Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանի քարոզը խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Համբարձման տոնին . . . 53


## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ


ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ - Հովսեփ Վայոցձորեցի Կաթողիկոս Հայոց . . 55
ԳԱՅԱՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ - Խազանունները երաժշտական տերմինահամակարգում . . . 63
ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ - Գրիգոր Մագիստրոսի «Ցաղագս խաչանշան գաւազանին, զոր ընծայեաց Տեառն Պետրոսի Հայոց Կաթողիկոսի» չափածո թուղթը . . . 71
ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ - Լվովի Տիրամոր Վերափոխման հայկական եկեղեցին . . . 77
ՍՈՒՍԱՆՆԱ ՋԱՆԻԿՅԱՆ - Հայ կերպարվեստի 1920-1960 թթ. վերելքի հոգևոր-ազգային հիմքերը . . . 83


## Հայագիտությունը Եվրոպայում


ԷԼԻԱՆՈՐԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ - Հայաստանի ազդարարողը Եվրոպայում . . 89


## Հրապարակում


ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ - Անծանոթ էջեր Նիկողայոս Ադոնցից . . . 97
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ - Հայ հայրենի ախոյաններ անցյալում . . . 99


## ԳՐԱԽՕՍԱԿԱՆ


ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ - Խմբագիրը, բանասերը, դիվանագետը . . . 106

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Մայր Տաճարում Ուխտի Պատարագ մատուցեց
Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ
Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը . . . . . . . . . . . . . . 109
Մայր Տաճարում Ուխտի Պատարագ մատուցեց
Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը . . . . . 110
Մայր Տաճարում Ուխտի Պատարագ մատուցեց
և քահանայական ձեռնադրություն կատարեց
Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը . . . . . . . . 111
ԷԴԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ - Քահանայական ձեռնադրություն
և Ուխտի Պատարագ Մայր Տաճարում . . . . . . . . . . . . . . . . . 112
Տ. Նշան աբեղա Պետրոսյան . . . . . . . . . . . . . . . . . . . . 114
Տ. Խաչատուր աբեղա Կնյազյան . . . . . . . . . . . . . . . . . . . 115
Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյան . . . . . . . . . . . . . . . . . 116
Տ. Շմավոն քահանա Ղևոնդյան . . . . . . . . . . . . . . . . . . . 117
Տ. Կիրակոս քահանա Աղոյան . . . . . . . . . . . . . . . . . . . . 118
Տարեվերջյան քննությունները Ճեմարանում և
ուխտագնացություն Ս. Գեղարդավանք . . . . . . . . . . . . . . . 119
ՍԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Ջրվեժի Ս. Կաթողիկե
եկեղեցու ուխտի տոնը . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 121
Վիրահայոց թեմի առաջնորդի անդրանիկ այցելությունը
Թբիլիսիի պետական մանկավարժական համալսարան . . . . . . . . . 123
Քահանայական ձեռնադրություն Գերմանահայոց թեմում . . . . . . . . 125
ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ - Խորհրդաժողով՝
նվիրված քրիստոնեական դաստիարակությանը . . . . . . . . . . . 126

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց
Իրանի կրթության նախարարին . . . . . . . . . . . . . . . . . . . 127
Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը փվեց
սպիտակցի երեխաներին . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 127

Եկեղեցական բեմ. լուրեր . . . . . . . . . . . . . . . . . . . . . 128

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 130
"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . . . . . . . . 133
"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . . . . . . 136

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՊԱՊ ԵՎ Ս. ՄԱՐԿՈՍԻ ԱԹՈՌԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՇԵՆՈՒԴԱ Գ-Ի ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով սույն թվականի մայիսի 2-ին եռօրյա այցով Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ, Ալեքսանդրիայի Պապ և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Շենուդա Գ-ն:

Եկեղեցական ավանդության համաձայն՝ քրիստոնեությունը Ալեքսանդրիայում քարոզվել է Ս. Մարկոս Ավետարանչի կողմից Ա դարում, և Ս. Մարկոսն էլ համարվում է Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հիմնադիրը: Բ դարի վերջերից քրիստոնեությունը սկսվում է քարոզվել և տարածվել Եգիպտոսի մյուս շրջաններում՝ Ալեքսանդրիայի Երախայից դպրոցի հիմնադիր Պանտենոսի և առաջին ղպտի եպիսկոպոս Դեմետրիոսի կողմից, որոնք քրիստոնեությունը քարոզելու հետ սկսում են ղպտերենի թարգմանել նաև Ս. Գիրքը:

Քրիստոնեության վաղ շրջանում Ալեքսանդրիան, Երուսաղեմի և Հռոմի հետ միասին, համարվում էր քրիստոնեության կարևոր կենտրոններից մեկը: Դ դարում Ալեքսանդրիայի Աթոռն իր իշխանությունը տարածել էր Եգիպտոսի և Լիբիայի շուրջ 100 եպիսկոպոսական Աթոռների վրա և համարվում էր Արևելյան կայսրության առաջին Աթոռը: Քաղկեդոնի ժողովի որոշումներով է, որ նա առաջնայնությունը զիջում է Կ. Պոլսի Աթոռին:

Պատմագրական աղբյուրները վկայում են, որ Դիոկղետիանոս կայսեր օրոք, 284 թվականին, Ալեքսանդրիայի պատրիարքությունն արձանագրում է նահատակների ամենամեծ թիվը աշխարհում, շուրջ 144.000: Ի հիշատակ այդ նահատակների, Ղպտի Եկեղեցու օրացույցը սկսվում է 284 թվականով:

451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո Ալեքսանդրիայում սկսվում է դավանաբանական վեճերի շրջանը, որի արդյունքում 642 թ. Եգիպտոսի արաբական նվաճումից հետո ղպտիները սպեղծում են իրենց ազգային ինքնուրույն Եկեղեցին: Նույն ժողովից հետո ժողովրդի մեծամասնությունը, հիմնականում ղպտիներ, մերժում են ընդունել Քաղկեդոնի ժողովի քրիստոսաբանական բանաձևը, իսկ փոքրամասնությունները, հիմնականում հույներ, հանդես են գալիս իբրև այդ բանաձևի ջատագով: Այսպիսով, Ալեքսանդրիայի Եկեղեցին բաժանվում է երկու՝ Ղպտի Ուղղափառ և Հույն Ուղղափառ պատրիարքությունների:

Եգիպտոսը նաև վանականության հայրենիքն է: Քրիստոնեության առաջին դարերի վանականների մեծ մասը ղպտիներ էին, որոնք ոչ միայն նպաստում էին վանական կյանքի, այլև ղպտի քրիստոնեական մշակույթի զարգացմանը:

Ղպտիները Ս. Աթանաս և Ս. Կյուրեղ Ալեքսանդրացիներին համարում են իրենց մեծագույն աստվածաբանները: Առաջինը Եկեղեցին փրկեց արիոսական հերձվածից, երկրորդը՝ նեստորականությունից:

642 թ. Եգիպտոսը գրավում են արաբական, իսկ 1517-ին՝ օսմանյան զորքերը:

ԺԹ դարի կեսերից Կյուրեղ Դ (1854-61) և Կյուրեղ Ե (1874-1927) Պատրիարքների օրոք Ղպտի Եկեղեցին զարգացման և վերազարթոնքի նոր շրջան է թևակոխում: Եկեղեցին,

ի մասնավորի՝ վանականությունը, կյանքի նոր փուլ է մտնում Կյուրեղ Զ Պատրիարքի (1959-71) օրոք, որը ճանաչված էր որպես ճգնակյաց հոգևորական:

Այսօր Ղպտի Եկեղեցին մեծագույնն է Մերձավոր Արևելքում, որի անդամների թիվը հասնում է շուրջ 10 միլիոնի: Նրա գահակալը՝ Ալեքսանդրիայի Պապ և Պատրիարքը Շենուդա Գ-ն է, որը մեծապես նպաստեց Ղպտի Եկեղեցու՝ վերջին քսան տարիների վերազարթոնքին:

Ղպտի Եկեղեցում այսօր գործում են մի քանի աստվածաբանական դպրոցներ. հինգը՝ Եգիպտոսում, երկուսը՝ Հյուսիսային Ամերիկայում, և մեկը՝ Ավստրալիայում:

1960-ական թվականներից սկսած ղպտիների արտագաղթի հետևանքով Ղպտի Եկեղեցին թեմեր է հիմնել գրեթե ամբողջ աշխարհում: Առաջին եկեղեցին հիմնադրվեց Տորոնտոյում (Կանադա) 1964 թ.: Մինչև 1993 թվականը Միացյալ Նահանգներում կային 50 ծուխեր, Կանադայում՝ 10, Ավստրալիայում՝ 16, և Արևմտյան Եվրոպայում՝23: Ընդհանուր առմամբ Ղպտի Եկեղեցին ունի 60 թեմ, որոնցից 45-ը՝ Եգիպտոսում, 15-ը՝ սփյուռքում, և 90-ից ավելի եպիսկոպոսներ:

Եկեղեցին հարուստ է բազմաթիվ երիտասարդական կազմակերպություններով, որոնց համար ստեղծվել է հատուկ երիտասարդական բաժին: Հասարակական և էկումենիկ ծառայությունների համար գոյություն ունի հատուկ բաժին, որը կազմակերպում է առողջապահական և կրթական զանազան ծրագրեր՝ օգնելու անապահով մարդկանց, գործազուրկներին, թմրամոլներին, ինչպես նաև հաշմանդամներին, ծերերին և որբերին:

Վերջին տասնամյակներում կուսակրոն սարկավագները և սարկավագուհիները հոգևոր և սոցիալական կարևոր դեր են կատարում եկեղեցում: Ղպտի աշխարհականները գործուն կերպով մասնակցում են ծիսական կյանքին:

Աֆրիկայում Ղպտի Եկեղեցու միսիոներական առաջին գործունեությունը հանգեցրեց Լիբիայի և Նուբիայի (Սուդան) մեծ մասի քրիստոնեացմանը: Ղպտի Եկեղեցին այսօր ևս ակտիվ քարոզչական գործունեություն է ծավալում Աֆրիկայի մյուս մասերում, ինչպես Քենիայում, Զամբիայում, Զիմբաբվեում, Նամիբիայում և Աֆրիկայի հարավում: Մինչև վերջերս Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցին գտնվում էր Ղպտի Ուղղափառ Եկեղեցու իրավասության ներքո և միայն 1959 թ. բաժանվեց և ավտոկեֆալ դարձավ:

Չնայած որ երկար դարեր ղպտերենը լռել է որպես խոսակցական և ծիսական լեզու, այն դեռ գործածվում է որոշ աղոթքներում և շարականներում: Ղպտի Եկեղեցում արարողությունների մեծ մասը կատարվում է արաբերենով:

Ղպտի Ուղղափառ Եկեղեցու բարձրագույն իշխանությունը Ս. Սինոդն է՝ Պատրիարքի նախագահությամբ: Այն կազմվում է բոլոր եպիսկոպոսների գումարումով:

Նորին Արբություն Շենուդա Գ Պապը (ավազանի անունով՝ Նազիր Գայեդ) ծնվել է 1923 թ.:

Ավարտելով Կահիրեի համալսարանը՝ ընդունվել է Ղպտի Ուղղափառ Ճեմարան:

1954 թ. հուլիսի 18-ին առանձնացել է անապատ և ընդունել վանականություն:

Ցանկանալով ամբողջովին առանձնանալ և նվիրվել Տիրոջը՝ դառնում է ճգնավոր և 6 տարի ապրում իր իսկ կողմից պատրաստած քարայրում:

1962 թ. սեպտեմբերի 2-ին նրջանկահիշատակ Կյուրեղ Զ Պապը նրան ձեռնադրում է եպիսկոպոս և նշանակում Քրիստոնեական Դաստիարակության պատասխանատու և Ղպտի Ուղղափառ Աստվածաբանական Ճեմարանի տեսուչ:

1971 թ. նոյեմբերի 14-ին Շենուդա եպիսկոպոսը ընտրվում է Ղպտի Եկեղեցու Պատրիարք՝ դառնալով Ալեքսանդրիայի և Ս. Մարկոսի Աթոռի 117-րդ գահակալը:

1962 թվականից ասյազա պատրիարքը եղել է Ղպտի Եկեղեցու պաշտոնական «Էլ Կերազա» ամսագրի գլխավոր խմբագիրը, ինչպես նաև հիմնել Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Աստվածաբանական Ճեմարանի մասնաճյուղեր Եգիպտոսում, Ամերիկայում, Ավստրալիայում և Մեծ Բրիտանիայում:

Նորին Սրբությունը հեղինակել է թվով 101 գրքեր: Դրանց կեսից ավելին թարգմանվել է անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով:

1971 թվականից ի վեր Շենուդա Գ Պապը ձեռնադրել է ավելի քան 80 մետրոպոլիտներ և եպիսկոպոսներ, ինչպես նաև 600 քահանաներ:

Նորին Սրբությունը ձեռնադրել է հարյուրավոր վանականներ և միանձնուհիներ ու վերաբացել շատ վանքեր և կուսանոցներ: Նա առաջին Պապն է, որ հիմնադրել է Ղպտի վանքեր Եգիպտոսից դուրս, որոնց թիվն այսօր հասնում է 9-ի:

Նրա գահակալության տարիներին Հյուսիսային Ամերիկայում Ղպտի եկեղեցիների թիվը 4-ից աճել է 100-ի, իսկ Ավստրալիայում և Նոր Զելանդիայում՝ 28-ի:

Շենուդա Գ-ն հիմնադրել է նաև առաջին Ղպտի Ուղղափառ եկեղեցին Հարավային Ամերիկայում՝ Սան Պաուլոյում /Բրազիլիա/, և երկրորդը՝ Բոլիվիայում:

Նորին Սրբության գահակալության տարիներին Ղպտի Ուղղափառ Եկեղեցին անդամակցում է ԵՀԽ-ին, Միջին Արևելքի Եկեղեցիների Խորհրդին, Համայն Աֆրիկայի Եկեղեցիների Խորհրդին, ԱՄՆ-ի Քրիստոսի Եկեղեցիների Ազգային Խորհրդին, Կանադայի Եկեղեցիների Խորհրդին, Ավստրալիայի Եկեղեցիների Խորհրդին:

2000 թ. մայիսին Նորին Սրբությունը հիմնադրել է առաջին Էկումենիկ գրասենյակը Հյուսիսային Ամերիկայի թեմում:

Մայիսի 2-ին, առավոտյան, «Զվարթնոց» օդանավակայանում ավանդական աղ ու հացով Շենուդա Գ Պատրիարքին և Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը՝ Ղպտի Եկեղեցու Ս. Սինոդի գլխավոր քարտուղար, Դամիետի մետրոպոլիտ Բիշոյին և Ղպտի Եկեղեցու Անգլիայի Անգելոս եպիսկոպոսին, դիմավորեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությունը, որին մաս էին կազմում Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Մայր Աթոռի վարչակազմակերպական գործերի կառավարիչ Գերաշնորհ Տ. Փառեն եպս. Ավետիքյանը: Դիմավորմանը մասնակցեց Հայաստանում Եգիպտոսի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Բաքրի Ռուշդի Էլ-Ամմարին:

Սա Նորին Սրբության երրորդ այցելությունն էր հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Առաջին անգամ Նորին Սրբություն Շենուդա Գ-ն Մայր Աթոռ էր ժամանել 1972

թ.` Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի հրավերով, իսկ երկրորդ անգամ 1995 թ.` մասնակցելու Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի գահակալության հանդիսություններին:

Հետմիջօրեին Տրդատ Կամարի մոտ բարձրաստիճան հյուրերին դիմավորեց Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը: Արևելյան Ուղղափառ Ընտանիքին պատկանող քույր Եկեղեցիների Հովվապետները հանդիսավոր թափորով և զանգերի ղողանջների ներքո մուտք գործեցին Մայր Տաճար, ուր տեղի ունեցավ բարիգալստյան արարողություն:

Միաժամանակ Սրբավայրում` Իջման Ս. Սեղանի առջև խոնարհվելուց և առ Աստված աղոթք բարձրացնելուց հետո, երկու Եկեղեցապետերը փոխանակեցին ողջույնի խոսքեր.

*«Մեր հայրերը 2000 տարիներ շարունակ պահել են իրենց հավատարմությունն առ Աստված: Նախախնամության կամքով շուրջ 1500 տարիներ մենք քայլել ենք պատմության միջով որպես նույնադավան Եկեղեցիներ, և մեր հավատարմությունն առատորեն վարձատրվել է Աստծո կողմից:*

*Մենք ցանկանում ենք արտահայտել մեր եղբայրական սերը Չերդ Սրբության, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու և նրա բարեպաշտ ժողովրդի նկատմամբ, նաև մեր պատրաստակամությունը՝ միասնաբար քայլելու մեր նվիրական առաքելության դժվարին ճանապարհներով, որպեսզի հաղթանակները մշտապես ուրախություն պարգևեն մեր ժողովուրդներին և զորացնեն նրանց իրենց սուրբ հավատքի մեջ»,*- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը:

*«Մենք աղոթում ենք, որ բոլորս մեկ լինենք, աշխատենք և գործենք միասին, վկայենք Երկնքի Արքայության և մեր լույս հավատքի մասին»,*- նշեց Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքն իր խոսքում:

Բարիգալստյան արարողությունից հետո երկու Հայրապետները, եկեղեցականաց թափորի ուղեկցությամբ, շարժվեցին դեպի Վեհարան:

Մայիսի 2-ին, ժամը 17.30-ին, Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը Ղպտի Ուղղափառ Եկեղեցու գահակալի հետ այցելեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի և հանդիսավոր թափորով, «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո մուտք գործեցին եկեղեցի` խոնարհվելու Ս. Գրիգոր Լուսավորչի սրբազան մասունքներին և միասին աղոթելու:

Համատեղ աղոթքից հետո երկու Հայրապետներն իրենց պատգամն ու օրհնությունը տվեցին հավատացյալներին:

*«Ղպտի Ուղղափառ Եկեղեցու հետ մենք նույն դավանանքն ու նույն հավատքն ունենք և երկար դարեր ապրել ենք ապավինած Աստծուն՝ կրելով բազում տառապանքներ մեր սուրբ հավատքի համար: Առ Աստված մեր հավատքը, մեր սերն ու նվիրումը և ապավինությունը կյանք և հարատևություն պարգևեցին մեր ժողովուրդներին. դժվարությունների առաջ չընկճվեցինք, չծնկեցինք, այլ Տիրոջ հավատքով զորացած կերտեցինք մեր վաղվա օրը՝ այսօրը, և Նորին Սրբության այս այցը պիտի գա զորացնելու մեր Եկեղեցին»,- ասաց Հայոց Հայրապետը:*

Նորին Սրբություն Շենուդա Գ Պատրիարքը, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, հավաստիացրեց, որ այսուհետ պիտի առավել ևս զորանա համագործակցության ոգին ու եղբայրական սերը երկու Եկեղեցիների միջև՝ մաղթելով հայ ժողովրդին և եկեղեցականաց դասին Սուրբ Հոգու զորակցությունը:


ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՄՈՏ



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ

Մայիսի 3-ին, ժամը 10.00-ին, Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Շենուդա Գ Պատրիարքն այցելեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, ուր նրանց դիմավորեցին Ակադեմիայի պաշտոնեությունը՝ գլխավորությամբ Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի: Վերջինս երկու Հովվապետերին մանրամասն ներկայացրեց ԳԱԱ-ի գործունեությունն ու ապագա ծրագրերը և այն սերտ կապերը, որ գոյություն ունեն Հայ Առաքելական Եկեղեցու և ԳԱԱ-ի միջև: Վեհափառ Հայրապետն իր շնորհակալությունը և գնահատանքը հայտնեց ԳԱԱ-ի ողջ անձնակազմին. *«Թեպետ ԳԱԱ-ն հիմնադրվել է խորհրդային տարիներին, սակայն առաջին իսկ պահից այս հաստատությունից ներս մշտապես առկա է եղել մեր հայրերի հավատքի արբազան լույսը և հարգանքը հանդեպ Հայ Եկեղեցին»*,- ասաց Գարեգին Բ Կաթողիկոսը:

Շենուդա Գ Պատրիարքն իր շնորհակալությունը հայտնեց ջերմ ընդունելության համար՝ մեծապես կարևորելով ԳԱԱ-ի գործունեությունը ոչ միայն ներհայաստանյան, այլև միջազգային առումով: *«Մենք պետք է ճանաչենք մեր ներքին ինքնությունը, մեր միտքը, հոգին և ոգին: Մենք մեծապես կարևորում ենք աշխարհի գիտությունը, բայց պետք է ընկալենք նաև այն գիտությունը, որ գալիս է երկնքից»*,- իր խոսքում նշեց Նորին Սրբություն Շենուդա Գ-ն:

Ի նշան փոխադարձ սիրո և հարգանքի՝ Հայոց Հայրապետը ԳԱԱ-ին նվիրեց Ս. Էջմիածնի Ավետարանի Ավստրիայում կատարված լուսատիպ նմանահանությունը:

Նույն օրը, ժամը 11.00-ին, քույր Եկեղեցիների երկու Հովվապետերը հանդիպում ունեցան ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ:

Հետմիջօրեին երկու Հայրապետներն այցելեցին Արաբկիրի Հայօրդյաց Տանը գտնվող բարեգործական ճաշարան, ուր հանդիպեցին տարեցների հետ, ինչպես նաև եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Ս. Ներսես Մեծ» բժշկական կենտրոնում:

Մայիսի 3-ին երկու Հայրապետները, բարձրաստիճան եկեղեցականաց դասի ուղեկցությամբ, այցելեցին Սևանա կղզի և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց, ուր նրանց դիմավորեց և բարի գալուստ մաղթեց դպրանոցի տեսուչ Հոգեշնորհ Տ. Գարեգին աբղ. Հակոբյանը:

Դպրանոցի նորակառույց համալիրին ծանոթանալուց հետո երկու Հայրապետները «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո մուտք գործեցին Ս. Հակոբ եկեղեցի, ուր կատարեցին համառոտ աղոթք:

Այնուհետև գեղարվեստական հայտագրով հանդես եկան Դպրանոցի սաները: Բարիգալստյան խոսքով Հովվապետերին ողջունեց տեսուչ Հայր Սուրբը՝ անդրադառնալով Վազգենյան Հոգևոր Դպրանոցի առաքելությանը:

Հավարտ հանդիպության իր օրհնության խոսքն ասաց Նորին Սրբություն Շենուդա Գ-ն, մասնավորաբար անդրադառնալով եկեղեցականի կոչմանն ու առաքելությանը և պատգամելով, որ հոգևորականը ոչ միայն գիտությամբ, այլ նաև իր հոգևոր կյանքով պետք է օրինակ լինի իր հոտի համար՝ ամենքին առաջնորդելու դեպի Աստծո արքայություն:

Այցի ավարտին դպրանոցի բակում կատարվեց նաև ծառատունկ:

Կիրակի օրը, մայիսի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նորին Սրբություն Շենուդա Գ Պապի/Պատրիարքի հանդիսապետությամբ, մատուցվեց ներթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ Սուրբ Էջմիածին էր ժամանել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ուկրաինայի թեմի ուխտավոր ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:

Պատարագի ընթացքում երկու քույր Եկեղեցիների Հովվապետերն իրենց օրհնությունն ու պատգամը փոխանցեցին հավատացյալներին: «Մեր հայացը այսօր երկինք է բարձրանում Աշխարհամատուրից ծավալվող լույսով, որ նորոգեց աշխարհը և առաքելական ժամանակներից թևածում է նաև Հայաստանում ու Եգիպտոսում: Եվ թեպետ անցյալի ավանդական չափանիշներով մեր երկրները աշխարհագրորեն միմյանցից բավական հեռու են, սակայն այն հավատակերտ ժամանակներից ի Քրիստոս հաղորդությամբ մեր ժողովուրդներին միացրել է մեկ, ընդհանրական, առաքելական և սուրբ Եկեղեցին:

Նույնն է և մեր առաքելությունը, որ եղբայրական սիրով զորացած պիտի շարունակենք, որպեսզի հավատը, հույսը և սերը լուսավորեն կյանքի իմաստը և դեպի Տերը ուղղորդեն նրա ընթացքները: Ձերդ Սրբություն, վստահ ենք, որ Ձեր այցը Ս. Էջմիածին եղբայրության նոր շունչ պիտի հաղորդի մեր Եկեղեցիների հարաբերություններին, որ իբրև թանկ հարստություն ժառանգել ենք մեր հայրերից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

*«Ձեր երկիրն առաջինն էր աշխարհում, որ ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Եվ ձեր Եկեղեցին կոչված է կրելու Տիրոջ խաչը: Մենք մի ենք մեր հավատքի և դավանանքի մեջ, և մեր երկու ժողովուրդները դարեր շարունակ անցել են բազում փորձությունների ու դժվարությունների միջով:*

*Մենք աղոթում ենք ձեր ժողովրդի և Եկեղեցու համար և հայցում Ձեր աղոթքը մեզ համար, որպեսզի առավել ամրապնդվենք ամենքս մեր առաքելության և ի Քրիստոս մեր ծառայության մեջ»,-* նշեց Ս. Մարկոսի Աթոռի գահակալը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ՀՀ-ում Եգիպտոսի, Սիրիայի և Իրաքի արտակարգ և լիազոր դեսպանները:

Մայիսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Շենուդա Գ Պատրիարքն այցելեցին Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր:

Ծաղկեպսակներ զետեղելուց հետո, երկու Հայրապետների հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի նահատակների:

Հոգեհանգստի ավարտին կատարվեց ծառատունկ:

Նույն օրը երկու Հայրապետները եղան Նոր Նորքի Հայորդյաց Տանը, ուր գեղարվեստական հայտագրով հանդես եկան Հայորդյաց Տան սաները:

Մայիսի 4-ին, երեկոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Շենուդա Գ Պատրիարքն ստորագրեցին Համատեղ Հայտարարություն:



ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴՈՒՄ



ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՎԵՐՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՄԵԿՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ



Ի ՀԻՇԱՏԱԿ ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՇԵՆՈՒԴԱ Գ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԾԱՌ Է ՏՆԿՈՒՄ
ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԲԱԿՈՒՄ



ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌՋԵՎ

# ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՍՏՈՐԱԳՐՎԱԾ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԵՎ ՂՊՏԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՇԵՆՈՒԴԱ Գ-Ի ՄԻՋԵՎ

*Մեկ լինելով քրիստոնեական ուղղափառ հավատքի մեջ՝ մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, որ շնորհեց մեզ այս հնարավորությունը՝ արտահայտելու մեր փոխադարձ եղբայրական սերը՝ Նորին Սրբություն Շենուդա Գ-ի Հայաստան կատարած երրորդ այցելության առիթով՝ Դամիետի Միտրոպոլիտ Բիշոյի և Անգելոս եպիսկոպոսի ուղեկցությամբ, 2003 թ. մայիսի 2-ից 5-ը, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի հոբելյանական տարում:*

*Ամենայն Հայոց Կաթողիկոսարանում Նորին Սրբություն Շենուդա Գ-ին, որը հաջորդն է Ս. Մարկոս Ավետարանչի, ինչպես նաև Ս. Աթանաս Մեծի և Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու, մեծագույն հարգանքով և սիրով ողջունում է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս Առաքյալների ու Ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդը:*

*Շատ ուրախալի է վերահաստատել մեր քրիստոնեական հավատքի միությունը, որը հավատարմորեն պահպանել ենք անցյալ դարերի ընթացքում և որը հիմնված է Սուրբ Գրքի և վաղ շրջանի Եկեղեցու Սրբազան Ավանդության վրա, և որը հռչակվել է առաջին երեք՝ Նիկիայի (325 թ.), Կ. Պոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) տիեզերաժողովների կողմից: Մենք նորոգում ենք մեր պարտավորությունները՝ ավելի որոշակի ձևով արտահայտելու այդ միությունը կյանքում և մեր Եկեղեցիների վկայությունը տալու՝ հնազանդվելով Մարմնացյալ Բանի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կամքին և շարունակելով մեր Եկեղեցու Հայրերի Սրբազան Ավանդության Ուղղափառ ժառանգությունը: Մենք պահպանում և արժևորում ենք մեր ընդհանուր Հայր Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու այն բանաձևը, թե՝ «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ Մարմնացելոյ»:*

*Մենք պարտավորվում ենք առավել տեսանելի և շոշափելի ձևով սերտացնելու Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ընտանիքին պատկանող մեր երկու Եկեղեցիների համագործակցությունը՝ ներգրավվելով տեղական, շրջանային և համաշխարհային մակարդակներում կազմակերպված էկումենիկ շարժման մեջ, գործուն կերպով դիմագրավելու մարտահրավերներին այնպիսի հերձվածների, ինչպիսիք են Եհովայի վկաները, Ադվենտիստները, Նեստորականները, Մորմոնները և այլ հերձվածներ, որոնք վտանգավոր են Եկեղեցու համար: Մեր ընդհանուր խնդիրն է նաև դիմագրավել ժամանակակից աշխարհի նոր մարտահրավերներին, որտեղ կյանքի ծայրահեղ միտումները խորապես ազդում են մարդկանց հոգևոր, բարոյական և հասարակական կյանքի վրա:*

*Ղպտի Ուղղափառ Եկեղեցին ջերմորեն շնորհավորում է Հայ Առաքելական Եկեղեցուն Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի հանդիսությունների առիթով:*

*Մենք ողջունում ենք առավել մեծ համագործակցություն սկսելու գաղափարը քրիստոնեական դաստիարակության, կիրակնօրյա դպրոցների, երիտասարդական հանդիպումների և գործունեության, ինչպես նաև աստվածաբանական կրթության ասպարեզներում՝ հավատարիմ մնալով մեր երկու Եկեղեցիների կենդանի ավանդույթներին: Ուսանողների և աստվածաբանության դասախոսների փոխանակումը մեր աստվածաբանական դպրոցների առաջնային կարևորություններից մեկն է: Որպես այս իրողության հավաստում, երկու հայ հոգևորականներ պատրաստվում են մեկնելու Եգիպտոս՝ մի քանի տարի վանական կյանքով ապրելու, ուսումնասիրելու ղպտերեն և արաբերեն, ինչպես նաև Ղպտի Ուղղափառ Եկեղեցու կենդանի ավանդությունը:*

*Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցանկություն հայտնեց ներկայացուցիչներ հրավիրել Արևելյան Ուղղափառ Ընտանիքի Եկեղեցիներից՝ հանդիպելու Ս. Էջմիածնում և միասին քննարկելու համագործակցության եզրերը՝ որպես միևնույն քրիստոնեական ուղղափառ հավատքն ունեցող Եկեղեցիներ:*

*Նորին Սրբություն Շենուդա Գ Պապը և Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Կաթողիկոսն այցելեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, որտեղ նրանց ջերմորեն ընդունեցին հոգևորականներն ու ժողովուրդը, այնուհետև նրանք իրենց պարգևը տվեցին հավատավոր ժողովրդին: Երևանում երկու Հայրապետներն այցելեցին նաև կառուցվող Ս. Երրորդություն եկեղեցի, «Ս. Ներսես Մեծ» հիվանդանոց և Հայորդյաց Տուն: Նրանք այցելեցին նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց, որտեղ Նորին Սրբություն Շենուդա Գ-ն ճառ տվեց:*

*Հայրապետներին ընդունեց Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանը: Նորին Սրբություն Շենուդա Գ-ն, օգտվելով առիթից, շնորհավորեց նախագահին իր վերընտրության առիթով և շնորհակալություն հայտնեց Հայոց Եկեղեցուն աջակցելու համար: Նրանք նաև այցելեցին Գիտությունների Ազգային Ակադեմիա, Եգիպտոսի Արաբական Հանրապետության դեսպանատուն, որտեղ նրանց ընդունեցին Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի և Լիբանանի դեսպանները: Երկու Հայրապետների համար ճաշկերույթ տվեցին Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը և այլ պետական պաշտոնյաներ:*

*Կիրակի օրը, Ս. Պատարագի ընթացքում, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում երկու Հայրապետների միջև տեղի ունեցավ պաշտոնական խոսքերի և նվերների փոխանակում:*

*Երկու Եկեղեցիների գահակալները այցելեցին Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակներ դրեցին և աղոթք վերառաքեցին առ Աստված: Այնուհետև Նորին Սրբություն Շենուդա Գ-ն ճառ տվեց Ծիծեռնակաբերդում:*

*Շենուդա Գ Պապը մեծ ուրախություն ապրեց՝ տեսնելով Հայ Առաքելական Եկեղեցու վերազարթոնքը, որը Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի հովվական խնամքի արդյունքն է: Մի քանի նոր եկեղեցիների կառուցումը, նոր ճեմարանների հաստատումը, որոնք ունեն մեծ թվով ուսանողներ, հիվանդանոցի գործունեությունը, Հայորդյաց Տների վերանորոգումը, Գիտությունների Ազգային Ակադեմիայի հետ համագործակցությունը, եռանդուն մասնակցությունը էկումենիկ շարժմանն ու երկխոսություններին և համատեղ գործունեությունը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, այս վերազարթոնքի ակնհայտ ապացույցներից են:*

*Մեր Եկեղեցիների բոլոր անդամների հետ միասին աղոթում ենք աշխարհում խաղաղության և արդարության, ինչպես նաև մարդկության բարօրության համար Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում, Եգիպտոսում, ամբողջ Միջին Արևելքում՝ ներառյալ Պաղեստինը և Իրաքը, և ամբողջ աշխարհում:*

*Թող Աստված առաջնորդի մեր Եկեղեցիներին ու բոլոր ժողովուրդներին դեպի Երկնքի Արքայություն տանող խաղաղության ճանապարհին:*

Հայտարարության ստորագրումից հետո երկու Հովվապետերը Վեհարանից հանդիսավոր թափորով առաջնորդվեցին Մայր Տաճար: Իջման Ս. Սեղանի առջև տեղի ունեցավ հրաժեշտի արարողություն, աղոթք բարձրացվեց առ Աստված երկու քույր Եկեղեցիների շենության և առավել զորացման համար:

Մայիսի 5-ի վաղ առավոտյան Վեհափառ Հայրապետը, Մայր Աթոռի հոգևոր դասի հետ, Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեց Շենուդա Գ Պատրիարքին և Ղպտի Եկեղեցու պատվիրակությանը:

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
*Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ, ՀԱՄԱՅՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ԻԼԻԱ Բ-Ի ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Սույն թվականի մայիսի 7-9-ը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի հրավերով, Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ն: Նորին Սրբության գլխավորած պատվիրակության կազմում էին Քութայիսի և Գաենատիի մետրոպոլիտ Կալիստրատ Մարգալիտաշվիլին, Ցխում-Աբխազիայի մետրոպոլիտ Դանիել Դատուաշվիլին, Ախալցխայի, Տաո-Կլարջեթի և Լազիայի Թեոդոր եպիսկոպոս Չուաձեն, Զուգդիդի և Ցաիշի Գերասիմ եպիսկոպոս Շարաշենիձեն, Տարիել ավագ քահանա Սիկինչալաշվիլին, Դավիթ ավագ քահանա Շարաշենիձեն, Թբիլիսիի Հոգևոր Ակադեմիայի պրոֆեսոր Սերգո Վարդոսանիձեն և թարգմանչուհի Նինո Այցիատուրին: Օդանավակայանում պատվիրակությանը մաս կազմեցին նաև Երևանի Սուրբ Հարություն վրաց եկեղեցու հոգևոր հովիվ Ալեքսանդր ավագ քահանա Շկարբոնենկոն, ինչպես նաև Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Նիկոլոզ Նիկոլոզիշվիլին և Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպանորդ պարոն Գեորգի Թևզաձեն:

Մայիսի 7-ի առավոտյան «Զվարթնոց» օդանավակայանում ավանդական աղ ու հացով Վրաց Եկեղեցու գահակալին և նրա շքախմբին դիմավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Վեհափառ Հայրապետի գլխավորած պատվիրակության կազմում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Տ. Եզնիկ եպս Պետրոսյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կճոյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանը, Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, Ջավախքի հոգևոր տեսուչ Տ. Բաբկեն աբղ. Սալբիյանը, Մայր Աթոռի Տեղեկատվական բաժնի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը, Կլոր Սեղանի գրասենյակի ԵՀԽ Հայաստանի համակարգող դոկտ. Կարեն Նազարյանը:

Դիմավորմանը ներկա էին ՀՀ կառավարության ներկայացուցիչներ, ինչպես նաև Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գեորգի Խոսրոևը:

Օդանավակայանից երկու Եկեղեցիների գահակալները եկան Ս. Էջմիածին, ուր բարձրաստիճան հյուրերին դիմավորելու էին հավաքվել Մայր Աթոռի հոգևոր դասը, պաշտոնեությանը և բազմաթիվ հավատացյալներ: Երկու Հովվապետները եկեղեցական թափորի ուղեկցությամբ, զույգ բուրվառների խնկարկումով և եկեղեցու զանգերի ղողանջների ներքո առաջնորդվեցին Մայր Տաճար, ուր, Իջման Ս. Սեղանի առջև խոնարհվելուց և առ Աստված աղոթք բարձրացնելուց հետո, երկու Հայրապետները բարիգալստյան ողջույնի խոսքեր փոխանակեցին:



ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏԵՐԸ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌՋԵՎ



ԵՐԵՎԱՆԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎՐԱՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄՈՏ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՎՐԱՑ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԻԼԻԱ Բ-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

*Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս.*

*Մեծապես ուրախ ենք Սուրբ Հարությանը հաջորդող հոգենորոգ այս օրերին «Քրիստոս յարեաւ» ավետիսով ողջունելու Ձերդ Սրբությանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ համայն հայոց հոգևոր կենտրոնում: Դուք առաջին անգամ չէ, որ այցելում եք Հայաստան և Սուրբ Էջմիածին, սակայն Մենք, իբրև Հայրապետ Հայոց, առաջին անգամ ենք ընդունում Ձեզ, որպեսզի այսօր միասնաբար աղոթենք մեր Տիրոջ Իջման Սուրբ Սեղանի առջև՝ համայն աշխարհի խաղաղության և մեր ժողովուրդների բարօրության:*

*Ձերդ Սրբություն, այս պահին, երբ բարի գալուստ ենք մաղթում Ձեզ, հիշեցինք, որ Մեր գահակալության առաջին տարում, երբ այցելեցինք Վրաստան՝ հավաստելու մեր Եկեղեցիների եղբայրությունը, կրկին Սուրբ Հարության հուսատու օրերն էին:*

*Տիրոջ ողորմած կամքով Հարության հավատը դարեր առաջ լուսավորեց նաև մեր ժողովուրդների հոգին և ուղղորդեց նրանց կյանքի ճանապարհը: Այսօր մենք միասնական աղոթք ենք բարձրացնում այս Սուրբ Տաճարում, որը 1700 տարի առաջ կառուցել է հավատո մեր Հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, երբ դարձի բերելով և մկրտելով համայն մեր ժողովրդին, Ռփսոփ Սեղան կանգնեցրեց այն վայրում, ուր Հարության լույսերի հետ մեր հողին իջավ Փրկիչն Աշխարհի:*

*Ապավինած Մարդացյալ Աստվածորդու ամենափրկիչ զորությանը, ծագումով եղբայր մեր ժողովուրդները միավորվեցին մի նոր եղբայրության մեջ, որին հավատարմությունը վկայել են բազմիցս: Դիրավի, բազմաթիվ ընդհանուր էջեր ունի մեր ժողովուրդների պատմությունը, մանավանդ՝ մեր սուրբ հավատի համար մղված պայքարի էջեր, սրբոց նահատակություններ, քանզի ինչպես 5-րդ դարում բնորոշել է Ավարայրի հերոս և նահատակ Սուրբ Վարդան Մամիկոնյանը, մեր ուխտը մարդկանց հետ չէ, այլ՝ Աստծո:*

*Քրիստոնյա մեր ժողովուրդներն այսօր էլ եղբայրաբար ապրում են կողք կողքի և օգնում միմյանց իրենց ազատ նոր կյանքի կերտման ճանապարհին: Գոհություն Բարձրյալին, այսօր բազմակողմ են մեր երկրների բարեկամական հարաբերությունները, տնտեսական ու մշակութային կապերը: Մեր ժողովուրդների ու Եկեղեցիների եղբայրության ու դարավոր հարաբերությունների նախանձավոր երաշխավորն է Վրաստանի հայ համայնքը: Քրիստոնյա Վրաստանում հայ ժողովրդի զավակները միշտ էլ իրենց ապահով ու ազատ են զգացել, վստահությամբ հիմնել եկեղեցիներ ու վանքեր, դպրոցներ ու բարեգործական և մշա-*

*կութային հաստատություններ։ Այսօր ևս վայելելով Վրաց պետության, Եկեղեցու և ժողովրդի անկեղծ բարեհաճությունը՝ հայորդիք հնարավորություն ունեն ապրելու իրենց ազգային-եկեղեցական կյանքով և, իբրև լիիրավ քաղաքացիները Վրաստանի, իրենց ազնիվ մասնակցությունը բերելու արդի հասարակական կյանքի զարգացմանն ու առաջընթացին։*

*Ձերդ Սրբություն, Բարձրյալի բարեհաճ կամքով հնարավոր դարձած մեր այս հանդիպումը մեր Եկեղեցիների և ժողովուրդների եղբայրության ու բարի հարաբերությունների մի նոր վկայությունն է։ Վկայությունն է նաև այն իրողության, որ մենք հավատարիմ ժառանգներն ենք մեր հայրերի ու շարունակողները մեզ թողած նրանց ավանդի։*

*Այսօր Մենք աղոթում ենք, որ Տերը հավատի ուխտի մեջ հաստատուն պահի մեր ժողովուրդներին, և Հարության լույսը միշտ առաջնորդի մեր կյանքի ընթացքները։ Մեր Եկեղեցիները, որ կրել են անաստվածության ժամանակների բռնությունները, այսօր կանգնած են դրանց հետևանքների՝ անհավատության մրուրը ժողովրդի հոգուց ամբողջությամբ մաքրելու, հավատի կյանքը զորացնելու հրամայականների առջև, և այդ ճանապարհին մեզ պիտի օգնի մեր դարավոր եղբայրությունը, մեր սերն ու ջերմ հարաբերությունները։*

*Փառք Բարձրյալին, որ ականատես ենք, թե ինչպես զորանում է նաև քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությունը՝ հանուն մարդկանց ու Աստծո առջև մեր նույն առաքելության հաջողության։ Աղոթում ենք նաև, որ երկնային խաղաղությունը հաստատվի մարդկանց հոգիներում և բոլոր երկրներում, որպեսզի աշխարհը կարող լինի դիմագրավել կարիք ու հիվանդություններ, հաղթահարելու հակամարտություններ ու ընդհարումներ, որպեսզի հավատը իմաստավորի մարդկանց կյանքը և առաջնորդի դեպի Աստված։*

*Թող Ամենախնամ ու Բարերար Աստված ընդունի մեր միասիրտ աղոթքը և մեր խնամքին հանձնված բանավոր հոտին պարգևի շնորհք և օրհնություն՝ զորացյալ լինելու հավատով և հաստատուն մնալու եղբայրության ու սիրո ճանապարհներին։*

*Մեր աղոթքն է, որ Տերը քաջառողջ պահպանի Ձեզ և պարգևի արևշատություն՝ հանուն Վրաց Եկեղեցու և ժողովրդի։ Թող Բարձրյալի Աջը հովանի լինի վրաց պետության իշխանավորներին և բարեպաշտ ժողովրդին։*

*Ողջագուրումով վերստին բարի գալուստ ենք մաղթում Ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին։*

Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքն իր պատասխան խոսքում մեկ անգամ ևս հավաստեց երկու Եկեղեցիների եղբայրական բարեկամության մասին՝ համոզմունքով, որ երկու Հովվապետերի ջանքերով առավել կամրապնդվի այդ բարեկամությունը՝ հաղթելով առկա բոլոր խնդիրներն ու դժվարությունները։

Հավարտ արարողության երկու Հովվապետերը հանդիսավոր թափորով ուղղվեցին դեպի Վեհարան՝ նախ կանգ առնելով երջանկահիշատակ Վազգեն Ա և Գարեգին Ա Կաթողի-

կոսների շիրիմների առջև և իրենց խարգանքի փուրքը մատուցելով երկու Հայրապետների հիշատակին:

Մայիսի 7-ի երեկոյան Վեհափառ Հայրապետն ու Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը բարձրաստիճան եկեղեցականաց դասի ուղեկցությամբ նախագահական նստավայրում հյուրընկալվեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից:

Այնուհետև երկու Հայրապետներն այցելեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի, «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո, եկեղեցականաց դասի ուղեկցությամբ մուտք գործելով եկեղեցի: Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով կառուցված տաճարում Վրաց Պատրիարքն իր խոնարհումը բերեց Հայոց Լուսավորչի մասունքներին, որից հետո երկու Հայրապետները Մայր եկեղեցու սրբազան կամարների ներքո համատեղ աղոթք հնչեցրեցին և իրենց օրհնությունները փոխանցեցին ներկա հավատացյալներին: Ի նշան այս այցելության, Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը նորակառույց Մայր եկեղեցուն նվիրեց Ս. Գևորգի պատկերով սրբանկար:

Այնուհետև երկու Եկեղեցիների գահակալները մեկնեցին Երևանի Նորագավիթ թաղամասում գտնվող հայկական Ս. Գևորգ, ապա և Ս. Հարություն վրացական եկեղեցիներ, Քրիստոսի Հրաշափառ Հարությանը նվիրված շարականի երգեցողության ներքո մուտք գործելով եկեղեցի: Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը օրհնության խոսքով դիմեց վրաց հավատացյալ համայնքին, Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ալեքսանդր Ավազքին, Շնորհակալության շնորհելով լանջախաչ:

Մայիսի 8-ին երկու Հովվապետերը այցելեցին ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա: Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը ներկայացրեց այն սերտ համագործակցությունը, որ գոյություն ունի Հայաստանի և Վրաստանի ակադեմիաների միջև, անդրադարձավ ԳԱԱ-ի գործունեությանն ու Հայոց Եկեղեցու հետ ունեցած գործակցությանը:

Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ նշելով, որ երկու ժողովուրդների միջև մշտապես առկա է եղբայրության ոգին: Ինչպես նկատեց Վրաց Կաթողիկոս-Պատրիարքը, երկու Եկեղեցիներն էլ շարունակ եղել են գիտության հովանավորներ, որոնց վանքերը ևս դարեր շարունակ եղել են գիտության նշանավոր կենտրոններ: «Այն դժվարությունները, որ կրում են գիտնականները, դրանք մեր ժողովուրդների ներկայիս դժվարությունների մի մասն են կազմում: Եվ մենք ամեն կերպ պետք է օժանդակենք մեր երկու ժողովուրդների գիտնականներին»,- ասաց Վրաց Կաթողիկոս-Պատրիարքը:

«Հոգևորականն ու գիտնականը մեր պատմության ընթացքին քայլել են կողք կողքի, սատարել և զորակցել միմյանց: Փառք և գոհություն ենք մատուցում, որ այսօր էլ ջերմ և սերտ հարաբերություններ են առկա մեր Եկեղեցու և Ակադեմիայի միջև: Մենք մեր շնորհակալությունն ու գնահատանքն ենք բերում այս ջերմ ընդունելության համար: Թող Աստված զորացնի և հաջողություններ ձեզ պարգևի ձեր գիտական կյանքում»,-ավելացրեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Գիտությունների Ազգային Ակադեմիա այցելությունից հետո երկու Եկեղեցիների առաջնորդներն այցելեցին նաև ՀՀ Ազգային ժողով և հանդիպում ունեցան ԱԺ նախագահ Արմեն

խաչափրյանի հետ: Վերջինս ողջունեց երկու գահակալների այցը ԱԺ և կարևորեց երկու Եկեղեցիների համագործակցությունը:

Այնուհետև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Վրաց Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը, հոգևոր դասի ուղեկցությամբ, այցելեցին Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշահամալիր: Ծաղկեպսակներ զետեղելուց հետո երկու Հայրապետների հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Մեծ եղեռնի բյուրավոր նահատակների:

Այնուհետև երկու Եկեղեցիների գահակալներն այցելեցին նաև Ցեղասպանության թանգարան, ուր թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանը հյուրերին հանգամանալից ներկայացրեց անցյալ դարասկզբին հայ ժողովրդի դեմ գործված ոճրագործությունը: Ի հիշատակ այս այցելության, հուշարձանի մերձակա պարածքում Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը եղևնի տնկեց: Երկու Հայրապետները պատասխանեցին նաև լրագրողների հարցերին:

Նույն օրը, հետմիջօրեի, կազմակերպվեց ընդունելություն Հայաստանում Վրաստանի դեսպանատանը, ուր ողջույնի խոսք ասաց Հայաստանում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Նիկոլոզ Նիկոլօզիշվիլին: Այնուհետև երկու Եկեղեցիների հոգևոր պետերն իրենց օրհնությունները բաշխեցին ընդունելությանը մասնակից վրաց համայնքի բարեպաշտ հավատացյալներին:

Այս ընդունելությանը հաջորդեց այցելությունը «Ս. Ներսես Մեծ» հիվանդանոց և Արաբկիրի Հայորդյաց Տուն, ուր բարձրաստիճան հյուրերի համար Հայորդյաց Տան շնորհալի սաները հանդես եկան համերգով, հավարտ որի փեղի սաները Նորին Սրբություն Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին նվիրեցին ձեռագործ մի գորգ:

Նույն օրը, երեկոյան, ի պատիվ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքի, «Հին Երևան» ռեստորանում տրվեց պաշտոնական ընթրիք, որին մասնակցում էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ և պետական այրեր, ընթացս որի կատարվեց նվերների փոխանակում: Վեհափառ Հայրապետը Վրաց Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքին նվիրեց երկու պանակե, մեկ լանջախաչ և Ս. Մեղանի ականակուռ արծաթե խաչ, իսկ Իլիա Բ Կաթողիկոս-Պատրիարքը Հայ Եկեղեցու գահակալին նվիրեց գեղեցիկ զարդատուփի մեջ դրված օբսիդիանե զատկական ձու, պանակե և արծաթե գրիչների հավաքածու:

Ընթրիքի ընթացքում երկուստեք հնչեցին բարեմաղթանքներ Հայ և Վրաց Եկեղեցիների բարեկամության, երկու Եկեղեցիների գահակալների կենաց արևշատության և հայ ու վրաց ժողովուրդների դարավոր եղբայրության համար:

Մայիսի 9-ին ավարտվեց Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի հնօրյա այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Առավոտյան երկու Եկեղեցիների Հովվապետերն այցելեցին Եռաբլուր՝ հարգանքի տուրք մատուցելու հայրենյաց պաշտպանության համար զոհված ազատամարտիկների հիշատակին և ծաղկեպսակներ դնելու Անհայտ Զինվորի հուշակոթողին: Եռաբլուրում երկու Հայրապետների հանդիսապետությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողութ-



ԵՌԱԲԼՈՒՐՈՒՄ



ՀԱՂԹԱՆԱԿԻ ԶԲՈՍԱՅԳՈՒՄ ԱՆՀԱՅՏ ԶԻՆՎՈՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԾԱՂԿԵՊՍԱԿ ԶԵՏԵՂԵԼԻՍ



ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ



«Ս. ՆԵՐՍԵՍ ՄԵԾ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

յուն: Այնուհետև երկու Հովվապետերը եկեղեցականների ուղեկցությամբ մեկնեցին Հաղթանակի այգի, ուր ծաղկեպսակներ զետեղեցին Անհայտ Զինվորի հուշակոթողին:

Այս արարողություններին ներկա էին նաև Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, ՀՀ բարձրաստիճան պետական այրեր և զինվորականներ:

Նույն օրը, միջօրեին, Վեհարանում երկու Հայրապետները ներկայացրեցին իրենց շքախմբի անդամներին:

Հետմիջօրեին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ի համատեղ ասուլիսը: Երկու Եկեղեցիների գահակալները պատասխանեցին լրագրողների հարցերին՝ անդրադառնալով Հայոց և Վրաց Եկեղեցիների այժմյան հարաբերություններին, աղանդավորական շարժումների հանդեպ որդեգրած վերաբերմունքին, ինչպես նաև հասարակության բարոյական նկարագրի և խաղաղ կյանքի կերտման գործում Եկեղեցիների դերին:

Մամլո ասուլիսից հետո երկու Հայրապետները հանդիսավոր թափորով առաջնորդվեցին Մայր Տաճար, ուր Իջման Ս. Սեղանի առջև կատարվեց հրաժեշտի արարողություն, որից հետո Նորին Սրբությունը հայրապետական շքախմբով Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում բարի ճանապարհ մաղթեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Բ-ին և նրա գլխավորած պատվիրակությանը:

*ՎԱԶԳԵՆ ՄՐԿ. ՔԵՄԱԲԼՅԱՆ*

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵՎ ՎԵՐԱՕԾՎԵՑ ԼՎՈՎԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Սույն թվականի մայիսի 14-18-ը Նորին Սրբությունը մասնավոր_հովվապետական այցով մեկնեց Ռուսաստանի Դաշնություն՝ Կրասնոյարսկ քաղաք, ապա Ուկրաինա՝ Լվով: Նորին Սրբության ձեռամբ օծվեց Կրասնոյարսկի նորակառույց Սուրբ Սարգիս, իսկ Լվովում վերաօծվեց Սուրբ Աստվածածնի Վերափոխման եկեղեցիները: Այս ուղևորության ընթացքում Հայրապետական պատվիրակության մաս էին կազմում Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանը, Տ. Գևորգ աբեղա Վանյանը (գավազանակիր), ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը և Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը:

Նորին Սրբությունն իր շքախմբով նախ ժամանեց Մոսկվա, ապա ուղևորվեց Կրասնոյարսկ, ուր Վեհափառ Հորը դիմավորելու էին եկել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արմեն Սմբատյանը, Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, Կրասնոյարսկի փոխնահանգապետ Յուրի Օլեյնիկովը և տեղի հայ համայնքի ներկայացուցիչները:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին ավանդական հայկական աղ ու հացով: Վեհափառ Հայրը ճաշակելով աղն ու հացը՝ շնորհակալության խոսք ուղղեց հավաքված ժողովրդին, ովքեր մի կողմ թողնելով առօրյա հոգսերը՝ եկել էին դիմավորելու իրենց Հայրապետին: Հավարտ այս արարողության Վեհափառ Հայրը լրատվամիջոցների ներկայացուցիչներին ասաց, թե որն է այս այցելության նպատակը:

Օդանավակայանից պատվիրակությունը փոխնահանգապետի ուղեկցությամբ ուղևորվեց Ենիսեյի ափ՝ ծանոթանալու այստեղի տեսարժան վայրերին:

Կրասնոյարսկում ապրում են շուրջ 12000 հայեր: 1998 թ. քաղաքային իշխանությունները տեղ հատկացրեցին եկեղեցու կառուցման համար, և կատարվեց եկեղեցու հիմնօրհնեքը: Եկեղեցու ճարտարապետն է այստեղ իր նախագծած կառույցներով հայտնի ճարտարապետ Արեգ Դեմիրխանովը, իսկ գլխավոր բարերարն է Սիբիրագրոարդշինի գլխավոր տնօրեն Սարգիս Մուրադյանը: Եկեղեցին ունի 140 մետր ընդհանուր մակերես և 28 մետր բարձրություն, որին կից գործում են նաև հայոց լեզվի ուսուցման դասարան և հանդիսությունների դահլիճ:

Հայրապետական թափորն ուղևորվեց դեպի նորակառույց եկեղեցի, որտեղ հայրապետական շքախմբին դիմավորելու էին եկել Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչները, տեղի և շրջակայքի բազմաթիվ հայեր, ինչպես նաև Կրասնոյարսկի քաղաքապետ Պյոտր Պիմաշկովը, քաղաքային խորհրդի նախագահ Վլադիմիր Չաշչինը, երկրամասի փոխնահանգապետ Յուրի Օլեյնիկովը, երկրամասի խորհրդարանի նախագահ Ալեքսանդր Ուսը և



ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿԻ ՆՈՐԱՕԾ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՆ



ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ Է ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵՐԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

պաշտոնատար այլ անձինք: Քանի որ եկեղեցին չէր կարող տեղավորել օծմանը ներկա գտնվել ցանկացողների խոծ բազմությանը, ուստի եկեղեցու շրջափակում ողջ արարողությունը հեռարձակվում էր հեռուստաէկրաններից: Պատարագի և օծման երգեցողությունը հոգևորախ նվիրումով կատարում էր Գերման Շեհրամանյանի ղեկավարած երգչախումբը: Երգչախմբում ընդգրկված ռուս աղջիկները հայերենով կատարեցին Պատարագի ողջ երգեցողությունը:

Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ի հնչյունների ներքո մուտք գործեց եկեղեցի, ուր ընթացս Ս. Պատարագի կատարվեց Կրասնոյարսկի Սուրբ Սարգիս Եկեղեցու օծումը: Օծման ընթացքում Նորին Սրբությանը բարիգալստյան ողջույնի խոսք ասաց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանը.

*«Սիրելի բարեպաշտ, հավատացյալ ժողովուրդ հայոց*

*Օրհներգության փառաբանության աղոթքը շուրթերիս բերում ենք մեր հոգու ամենաչքում զգացումներն այս պահին Ձերդ Սրբությանը, որ մեզ ամենքիս այս երջանիկ պահը շնորհեցիք, երբ ընդառաջեցիք Ձեր հավատացյալ հոտի խնդրանքին և եկաք Մայր Աթոռ Ս Էջմիածնից, որպես Հայոց Հայրապետ, որպես Հովվապետ համայն հայոց՝ օրհնելու Ձեր հավատավոր զավակաց: Այս օրվան ինչպես Կրասնոյարսկ քաղաքի, այնպես էլ մերձակա բոլոր հայաշատ քաղաքների հավատացյալ հայորդիք սպասել են տարիներ ի վեր: Եվ իրականացավ այս փայփայված իղձը ջանքով և արդյամբ մեր ազնիվ նվիրյալ հայորդիների՝ հավատարիմ ուխտյալ զավակների Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցվո և Մայր Աթոռի, և այս առիթով ցանկանում եմ մեր խորին երախտագիտությունն ու սերը հայտնել եկեղեցու մեծագործ բարերարին՝ պարոն Սարգիս Մուրադյանին, նրան լծակից և զորակից բազում հավատացյալ հայորդիներին, որոնք պարգևեցին մեզ այս երջանիկ օրը, այս պատմական օրը, երբ առաջին անգամ Հայ Եկեղեցվո պատմության մեջ Հայոց Հայրապետը ոտք է դնում մեր Ռուսահայոց թեմի գողտրիկ քաղաքներից Սիբիրիայի Կրասնոյարսկ մայրաքաղաքը:*

*Մենք անչափ երջանիկ ենք, որ Հայոց Հայրապետը մենակ չէ այստեղ, և բերում ենք մեր ողջույնը նրան ուղեկից մեր պատվարժան և հարգարժան դեսպանին Հայաստանի Հանրապետության՝ պրն Սմբատյանին, մեր ազգային Ակադեմիայի գործիչներին, Ռուսաստանի հայերի միության նախագահին, ինչպես նաև մեր շնորհակալությունը և ողջույնը ցանկանում ենք մեր հավատացյալների անունից փոխանցել քաղաքային-պետական իշխանությունների ներկայացուցիչներին, շրջանի և մարզի պաշտոնյաններին, որոնց եղբայրական սիրո և բարի կամեցողության վառ վկայությունն է այս նորակառույց Ս. Սարգիս եկեղեցին:*

*Վեհափառ Տեր, հազարավոր հայորդիներ կտրել-անցել են տասնյակ հազարավոր կիլոմետրեր, եկել են այսօր այստեղ սպասելու Ձեր հայրական օրհնությունը, Ձեր հայրական պատգամը, որ առավել ես վերանորոգված իրենց հավատքի մեջ, առավել ևս զորեպնդված իրենց նախնյաց սուրբ ուխտով, որպես ազնիվ քաղաքացիները Ռուսաստանի, իրենց երկրորդ հայրենիքի, իրենց ստեղծագործ*

*աշխատանքով ավելացնենք հայի նվիրական անվան պատիվն այս քաղաքի մեջ և շարունակողը լինենք այն մեծ գործի, որ ժառանգել ենք մենք մեր հայրերից, որպեսզի Հայ Եկեղեցին դառնա այն նվիրական վայրը, այն կենտրոնը, ուր ամեն հայորդի պիտի գտնի իր հոգու մխիթարությունն ու երջանկությունը, ինչպես այսօր:*

*Այս պահին, Վեհափառ Տեր, կրկին թույլ տվեք բերելու Ձեզ մեր որդիական սերը, երախտագիտությունը Ձերդ Սրբությանը և հայցել Ձեր հայրական օրհնությունն ու պատգամը մեր ողջ հավատացյալ ժողովրդին:*

Գերաշնորհ Սրբազան Հոր բարիգալստյան խոսքից հետո ներկաներին իր Հայրական օրհնությունն ու պատգամը ուղղեց Նորին Սրբությունը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆԸ

*«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:*

*Սիրելի բարեպաշտ հայորդիներ, որ ապրում եք Կրասնոյարսկ քաղաքում և շրջապատում*

*Հայրապետիս հոգին, ահա երկու օր է, բերկրանքի ու ցնծության մեջ է: Հովվապետական այցով Կրասնոյարսկ մեկնելու, նորակառույց եկեղեցի օծելու ուրախ զգացումով Մեր միաբանության հետ ծնրադրեցինք Միածնաէջ Ս. Սեղանի առջև և գոհության աղոթք առ Աստված բարձրացնելով ուղևորվեցինք Մոսկվա, այնտեղից՝ դեպի ձեզ՝ հարազատ ու սիրեցյալ զավակները մեր Եկեղեցու: Մեզ ուղեկից են Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ինչպես նաև պատվարժան հայորդիք, հայ կրթության ու գիտության վաստակավոր մշակներ՝ ՀՀ Ազգային Ակադեմիայի նախագահ պրոֆ. Ֆադեյ Սարգսյանը և Երևանի Պետական Համալսարանի ռեկտոր պրոֆ. Ռադիկ Մարտիրոսյանը: Մոսկվայում հայ համայնքի հետ ջերմ հանդիպումից հետո Մեզ միացան Ռուսաստանի հայերի միության նախագահ պրոֆ. Արա Աբրահամյանը և պրոֆ. Արմեն Սմբատյանը՝ Հայաստանի Հանրապետության լիազոր դեսպանը Ռուսաստանի Դաշնությունում: Փառք Տիրոջը, որ իր կամքով, ահա, Կրասնոյարսկում ենք, օծելու հայոց նորակառույց եկեղեցին և ուրախակից լինելու ձեզ հավատակերտ ու պատմական այս իրադարձության առիթով:*

*Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունն ենք բերել ձեզ, սիրելի հայորդիք, օրհնությունը համայն հայոց հոգևոր կենտրոնի, Քրիստոնեության 1700-ամյա մեր նվիրական սրբավայրի: Բերել ենք ձեզ նաև հայրենաբնակ ձեր եղբայրների ու քույրերի ողջույնն ու սերը, ամենաբարի մաղթանքները, որոնք վկայաբար*

*պիտի հագեցնեն պապակը ձեր հայրենակարոտության ու պիտի պարզեն ձեր հայացքի առջև մեր Մայր Հայրենիքի քաղցր պատկերը:*

*Սիրելի հայորդիք,*

*Այն օրից ի վեր, երբ մեր հայրերը Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությամբ 1700 տարիներ առաջ քրիստոնեությունը ընդունեցին որպես պետական կրոն, անխախտ ուխտ կապեցինք Աստծո հետ և դարերի փորձությունների մեջ հավատարիմ մնացինք մեր այդ սրբազան ուխտին՝ հռչակելով, թե՝ «Հայր մեր ճանաչեմք զսուրբ Ավետարան և մայր մեր Առաքելական Սուրբ Եկեղեցին»: Ոչինչ չկարողացավ այս ուխտից մեզ շարժել՝ ոչ արհավիրքը, ոչ հուր և ոչ սուր, ոչ թշնամու կողմից գործադրված որևէ բռնություն, անգամ նախորդ դարասկզբին մեր ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանությունը:*

*Հարությամբ Քրիստոսի հույսն է առաջնորդում մեր ժողովրդին, և այդ հույսին փարված մենք բազում մահեր վերապրեցինք ու պիտի շարունակենք հաղթահարել ամեն դժվարություն ու հաղթանակել՝ մեր աշխարհասփյուռ լինելու իրողությունը դարձնելով ուժի ու զորության մի նոր ակունք: Դուք էլ, սիրելի հայորդիք, որ կայք եք հաստատել եղբայրական Ռուսաստանում՝ հյուրընկալ և օրհնյալ այս հողում, պիտի ուժ ու զորություն դառնաք այս երկրի մեջ՝ ձեր ջանքերը բերելով այս երկրի շինության և զարգացման գործին, որպեսզի առավել ամրանա եղբայրությունը մեր քրիստոնյա ժողովուրդների և միշտ կանգուն լինի մեր դարավոր բարեկամության կամուրջը:*

*Մենք կարճ ժամանակով է, որ եկել ենք Կրասնոդարսկ, մի քանի ժամից պիտի հրաժեշտ տանք ձեզ, բայց մեկնում ենք վստահությամբ, որ գեղեցկակառույց այս եկեղեցին, որ Սուրբ Խաչի օրհնության թևերը երկինք է պարզել Սուրբ Սարգիս զորավարի բարեխոսությամբ և այսօր իր դռները բացեց ձեր առջև, պիտի դառնա ձեզ համար աղոթքի հարազատ տուն, փրկության տապան՝ հեռու մնալու ամենայն չարից ու չարությունից: Պիտի մտնեք այս կամարներից ներս ձեր սիրտը Աստծո առջև բացելու, բարուն հետամուտ լինելու համար Աստծո օգնականությունը հայցելու: Պիտի գաք ձեր զավակներին հավատով կրթելու, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու և հայրենական արժեքներով սնելու ու դաստիարակելու: Ի խորոց սրտի Հայրապետիս աղոթքն է, որ հայոց նորակառույց այս եկեղեցին միշտ լեցուն լինի հավատացյալ ժողովրդով ու դառնա ձեզ համար «տուն աղօթից եւ տեղի ապաւինի»:*

*Սիրելիներ, Հայրապետական Մեր հորդորն ու պատգամն է, որ համախումբ մնաք մեր Սուրբ Եկեղեցու հարկի ներքո, որպեսզի եկեղեցու Սուրբ Խորանից ճառագող լույսը միշտ լուսավորի ձեր կյանքի ճանապարհը, ձեր ընթացքը, ձեր գործերը դեպի բարին ու ազնիվը, դեպի արդարն ու գեղեցիկը, և դուք շարունակ սեր ու եղբայրություն վայելեք այս հողի վրա՝ միշտ հավատարիմ քրիստոնյա մեր ժողովրդի ստեղծարար նկարագրին:*

*Ձեր բարի անվան վկայությունն էր նաև, որ օդանավակայանում Մեզ դիմավորեցին ու իրենց խորին հարգանքը մատուցեցին տարածաշրջանի ղեկավարները:*

*Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում նրանց և հայցում, որ մշտապես Տիրոջ զորակցությունն ունենան իրենց առաքելության ճանապարհին:*

*Մեր նկատմամբ հարգանքը ձերն է նաև, սիրելի ժողովուրդ, և Հայրապետս ուրախ ու հպարտ է ձեզնով, որ բարեպաշտ ու նախանձախնդիր զավակներն եք ազգիս: Հայցում ենք, որ Աստծո սերն ու շնորհները միշտ ուղեկից լինեն ձեզ ու ձեր որդիներին: Աղոթք ենք բարձրացնում նաև մեր բարերարների համար, որոնց ազնիվ նվիրաբերումներով կառուցվում և շենանում է հայ կյանքը, հառնում են մշակույթի օջախները, հավատի, կրթության ու գիտության տները: Թող Աստված Իր Ամենազոր Աջը զորակից դարձնի մեզ ամենքիս, որպեսզի մեր գործերով ու կյանքով փառավորենք Տիրոջ անունը հավիտյանս. ամեն:*

Օրհնության խոսքից հետո Նորին Սրբությունը եկեղեցուն նվիրեց արծաթյա սկիհ:

Ս. Պատարագի ավարտից հետո Վեհափառ Հայրապետը «Ամեն հայի» մաղթանքի հնչյունների ներքո Հայրապետական շքախմբով դուրս եկավ եկեղեցուց, որի շրջափակում հավաքված էին շուրջ 2000 հավատացյալ հայորդիներ: Հատուկ այս նպատակով կառուցված բեմից Վեհափառ Հայրն իր օրհնությունը բաշխեց ներկաներին՝ տալով իր հայրական պատգամները:

Այստեղ Նորին Սրբությանը ողջունեցին և բարիգալստյան խոսք ասացին նախ տեղական իշխանության և Ռուսաց Եկեղեցու ներկայացուցիչները, ինչպես նաև Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը:

Ապա թեմի առաջնորդ Սրբազան Հայրն ընթերցեց Վեհափառ Հայրապետի Սրբատառ կոնդակը, որով Սիբիրագրոարդշինի գլխավոր տնօրեն, եկեղեցու բարերար Սարգիս Մուրադյանին հանձնվեց Հայոց Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն պարգևը, որին հաջորդեց եկեղեցու բարերարի շնորհակալության և երախտագիտության խոսքը:

Այնուհետև կատարվեց ծառատունկ, և Նորին Սրբությունը եկեղեցու բակում տնկեց մի եղևնի:

Հավարտ այս արարողության տեղի ունեցավ մեծ համերգ, որին մասնակցեցին տեղի ինքնուս և պրոֆեսիոնալ խմբեր: Համերգին իր մասնակցությունը բերեց նաև Սիբիրում ճանաչված ջութակահար Վարդան Մարկոսյանը, որը մինչ այդ էլ մի շարք բարեգործական համերգներով հանդես էր եկել հօգուտ եկեղեցու կառուցման:

Արարողության վերջում Նորին Սրբության պատվին տրվեց ճոխ ճաշկերույթ «Ցարական Մեղանապուն» ռեստորանում:

Կրասնոյարսկից Նորին Սրբության շքախումբը մեկնեց Մոսկվա, ուր մասնավոր այցելություն տվեց Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովին՝ քաղաքապետարանում:

Հայրապետական շքախումբն այնուհետև ուղևորվեց օդանավակայան, որտեղից մեկնեց Լվով: Այստեղ՝ օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը, Ուկրաինայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցու բարերար, Ուկրաինահայ թեմի թեմական խորհրդի ատենապետ և Ուկրաինայի հա-

յերի միության նախագահ Նվեր Մխիթարյանը, Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, Ուկրաինայի կրոնի գործոց նախարարը և այլ պետական պաշտոնատար անձինք, ինչպես նաև բազում հայորդիներ:

Օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին ավանդական աղ ու հացով, որից հետո Վեհափառ Հայրապետն իր օրհնությունը տվեց ներկաներին և ներկայացրեց պատվիրակության անդամներին:

Այնուհետև տրվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին բազմաթիվ պաշտոնատար անձինք: Հյուրասիրության ընթացքում ողջույնի և բարիգալստյան խոսքեր ասվեցին: Խոսք ասաց նաև Ուկրաինայի նախկին նախագահ Լեոնիդ Կրավչուկը: Այնուհետև ներկաներին օրհնության իր խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը.

*«Մեծարգո պետական այրեր և սիրելի հայրենակիցներ.*

*Շնորհակալ ենք այն ջերմ ընդունելության համար, որ ցուցաբերեցիք Մեր նկատմամբ, և որը վկայությունն է ոչ միայն այն իրողության, որ մեր երկու ժողովուրդներն ու պետություններն այսօր բարի, եղբայրական հարաբերություններ են իրարու հետ մշակում ու հաստատում, այլև վկայությունն է այն գնահատանքի, որին արժանանում է հայ ժողովրդի դարերի վաստակը, հավատարիմ ծառայությունն այս օրհնյալ երկրում: Երախտագետ հոգով Մենք Մեր գնահատանքն ենք բերում Ուկրաինայի պետությանն ու ժողովրդին այն եղբայրական սիրո համար, որ դրսևորում է մեր ժողովրդի զավակաց նկատմամբ: Այդ եղբայրության ու սիրո լավագույն դրսևորումն է Լվովի հայկական եկեղեցին հայ համայնքին վերադարձնելը: Բազմադարյա այդ սրբօրրանում մեր ժողովրդի զավակները մշտապես աղոթք պիտի բարձրացնեն առ Աստված Ուկրաինայի համար, նրա ասպնջական ժողովրդի համար, այս հողում կյանքի հարատև բարօրության համար: Մենք Մեր աղոթքն ենք միախառնում բազմահազար հայորդյաց աղոթքներին, որ հնչում են և պիտի հնչեն նաև այսօր և վաղը և մշտապես, որպեսզի աշխարհում լինի խաղաղություն, որ մարդիկ ապրեն սիրո մեջ, ստեղծագործ կյանքով: Թող Տերը միշտ մեզ հետ լինի, քանզի Աստծո հետ մենք միայն կարող ենք գտնել կատարյալ երջանկություն և խաղաղություն:*

*Թող Աստված օրհնի Ուկրաինայի հյուրընկալ և օրհնյալ հողը, Իր Աջը հովանի դարձնի նրա ժողովրդին և այստեղ ապրող բոլոր ժողովուրդներին, որպեսզի արիությամբ ու քաջությամբ հաղթահարեն այն բոլոր դժվարությունները, որ այսօր ծառացել են իրենց առջև, և դեպի ապագան իրենց հայացքն ուղղեն լավատեսությամբ ու հավատով, որով պիտի կարողանան վերաշինել իրենց հզոր հայրենիքը և բարօր ու շեն երկիրը: Մեր օրհնությունը ձեզ բոլորիդ:*

*Մենք ուրախ ենք այստեղ ողջունելու մեր ժողովրդի արժանավոր զավակ տիար Շառլ Ազնավուրին, որ նույնպես եկել է ուրախակից լինելու բոլորիս և իր աղոթքն առ Աստված բարձրացնելու Տիրամոր Վերափոխման Եկեղեցու վերաբացման առիթով: Ողջունում ենք նաև ներկայությունը ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի: Տոնական երկու օր ենք ապրելու՝ երկու օր միա-*

*սին. և շնորհակալություն Ուկրաինայի իշխանություններին և ձեզ՝ այս ուրախությունը պարգևելու համար:*

Ապա շնորհակալության խոսք ասաց Շառլ Ազնավուրը.

*«Երեք պատճառով ես անչափ ուրախ եմ գտնվելու այստեղ ձեզ հետ.*

*Ես միշտ ուրախ եմ եղել գտնվել այն երկրում, որ այսքան ջերմ են ընդունում հայ համայնքներին, որոնք ցեղասպանության պատճառով սփռված են աշխարհով մեկ: Ես անչափ շնորհակալ եմ այն երկրներին, որոնք ընդունում են հայ համայնքներին այնպես, ինչպես Ֆրանսիան է ընդունում հայերին, որտեղից որ ես եկել եմ: Սա առաջին պատճառն է:*

*Երկրորդ գլխավոր պատճառը, որ ես այստեղ եմ գտնվում, այն է, որ այստեղ վերաբացվում է մի եկեղեցի, որ երկար ժամանակ փակ է եղել. և ես շատ ուրախ եմ, որ այն վերաբացվում է, որովհետև եկեղեցին այն շաղախն է, որ միավորում է ժողովրդին և մանավանդ հայերի պարագային աշխարհի բոլոր ծայրերում:*

*Մեծապես Հայոց Եկեղեցու շնորհիվ է, որ մենք կարողացանք վերապրել այն բոլոր դժվարությունները, որոնք բաժին ընկան հայ ժողովրդին:*

*Եվ երրորդ պատճառը անձնական է. երբ փոքրերը մեծանում են, սովորաբար նրանք սկսում են զբաղվել իրենց անձնական խնդիրներով, բայց այս անգամ ինձ հաջողվեց համոզել իմ տղային գալ ինձ հետ, և այսօր նրա ծննդյան օրն է: Նա չի խոսում ոչ հայերեն, ոչ ռուսերեն, բայց նրա անունը Միշա է»:*

Հավարտ ճաշկերույթի Վեհափառ Հայրապետը և մեծ երգիչը մամլո ասուլիս տվեցին տեղական լրատվամիջոցների համար:

Մայիսի 18-ին կատարվեց Լվովի Տիրամոր Վերափոխման եկեղեցու վերաօծումը, որին ներկա էին Խարկովի, Դնեպրոպետրովսկի, Կիևի, Դոնեցկի, Չերկասի, Օդեսայի, Ղրիմի և Ուկրաինայի հայերի միությունների և համայնքների ներկայացուցիչները, Ուկրաինայի հայերի միության ղեկավարները՝ միության նախագահ Նվեր Մխիթարյանի գլխավորությամբ, Շառլ Ազնավուրը՝ որդու հետ, Ուկրաինայի առաջին նախագահ Լեոնիդ Կրավչուկը, հատուկ այս նպատակով Լվով եկած Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, հյուրեր Իտալիայից, Անգլիայից և բազմաթիվ այլ հայկական գաղութներից, ինչպես նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչները և տարբեր պատվիրակություններ:

Առավոտյան, մինչ Ս. Պատարագի սկիզբը, եկեղեցական հանդիսավոր թափորը հավաքվածների հոծ բազմության ուղեկցությամբ քաղաքի կենտրոնական հրապարակից Կրակովսկայա փողոցով շարժվեց դեպի հայկական եկեղեցի:

Այստեղ, եկեղեցու ավագ մուտքի առաջ, Նորին Սրբությանը հանդիսավոր կերպով եկեղեցու բանալիները հանձնեցին Լվովի նահանգապետը, մարզպետը և քաղաքապետը:



ՎԵՐԱՕԾՄԱՆԸ ՀԱՎԱՔՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ



«ՀՐԱՇԱՓԱՌ»-ՈՎ ՄՈՒՏՔ ԵԿԵՂԵՑԻ

Ապա Նորին Սրբությունն իր շնորհակալության և օրհնության խոսքն ասաց ներկաներին.

*«Սիրելի Սրբազան, պատվական պետական այրեր և շատ սիրելի հայորդիք.*

*Երախտագետ սրտով Մենք Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Լվով քաղաքի պետական, շրջանային և քաղաքային իշխանությանց, որոնց կնօրհնությամբ այսօր մեզ հանձնվեցին Լվովի Սուրբ Աստվածածնի Վերափոխման եկեղեցու բանալիները: Մենք աղոթք և հայց ենք բարձրացնում առ Աստված, որպեսզի այլևս երբեք չփակվեն եկեղեցու դռները հավատավոր ժողովրդի առաջ, որպեսզի երբեք չդադարի աղոթքն ու խնկարկումը եկեղեցու կամարների ներքո, որպեսզի երբեք չդադարի հնչել Տիրոջ Ավետարանի պատգամների բաշխումը Սուրբ Սեղանից, որ լույսն է մարդկային հոգու և հիմքը բարօր ու երջանիկ կյանքի: Մենք գոհունակ սրտով այս սուրբ եկեղեցու բանալիները փոխանցում ենք Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Ուկրաինայի թեմի ազգային բարերար տիար Նվեր Մխիթարյանին՝ մաղթանքով, որ մեր բարերար հայորդիք բանան բազում եկեղեցիների դռներ մեր հավատավոր ժողովրդի առջև:*

*Մեր գնահատանքը և օրհնությունը ձեզ»:*

Նորին Սրբության օրհնության խոսքից հետո եկեղեցու բարերար Նվեր Մխիթարյանը հանդիսավոր կերպով եկեղեցու բանալիները հանձնեց թեմակալ առաջնորդին:

Ապա սկսվեց Դռնբացեքի հանդիսավոր արարողությունը՝ հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի: «Բաց մեզ Տէր» շարականի հնչյունների ներքո, հավատավոր ժողովուրդը հանդիսավորապես մուտք գործեց եկեղեցի: Ապա Վեհափառ Հայրապետի ձեռամբ և ընթերակայությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոսի, Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի և Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանի կատարվեց վերաօծման կարգը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԼՎՈՎԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՄԱՆԸ

*«Այսօր պայծառ եւ սիւն լուսոյ*
*լցեալ աստուածային շնորհիւ սուրբ եկեղեցի*
*ի սմա զքեզ օրհնեմք Աստուած հարցն մերոց»:*
*(Շարական)*

*Սիրելի հավատավոր ժողովուրդ.*

*Մեծ խնդություն է Հայրապետիս համար Լվովում գտնվել այս հիշարժան օրը, երբ օծվում և վերաբացվում է Սուրբ Աստվածածնի Վերափոխման հայոց եկեղե-*

ցին: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ արժանացնում է Մեզ շնորհին ձեզ հետ
միասին գոհության աղոթք բարձրացնելու երկինք և շարականագրի խոսքով
կրկնելու. «Այսօր լույսի պայծառ այանը աստվածային շնորհով լցրել է սուրբ
եկեղեցին. այսպես քեզ ենք օրհնում, մեր հայրերի Աստված»:

Սիրելիներ, այսօր Տերը ունկնդիր է մեզ այնպես, ինչպես վեց և կես հարյուր-
ամյակ առաջ ունկնդիր եղավ մեր նախնիներին, ովքեր Լվովում հիմնեցին այս
փառապանծ եկեղեցին և Հայրենիքից հեռու իրենց նոր կյանքն սկսեցին հավատը
հոգում ու աղոթքը շուրթերին:

Արդարև, պատմության չարաղետ հանգամանքների բերումով հայը պարու-
ցիր սփռվել է տարբեր երկրներում, բայց ուր էլ որ հանգրվանել է, դպրոց ու եկե-
ղեցի է կառուցել և փրկարար խաչը պարզել երկինք՝ ի վկայություն Աստծո հետ
հավատի իր ուխտի: Ուկրաինայի այս հինավուրց և գեղեցիկ քաղաքի պատմու-
թյունն էլ հարուստ է հայկական հիշատակներով: Մեր ժողովրդի զավակներն այս-
տեղ հյուրընկալություն են գտել Լվովի հիմնադրման հեռավոր ժամանակներից,
երբ Լև Դանիլովիչ իշխանը բազմաթիվ հայ արհեստավորներ հրավիրեց իր նո-
րահաստատ քաղաքում բնակվելու:

Այսօր մենք բոլորս հպարտությամբ ենք հիշում, որ հայ համայնքը դարեր շա-
րունակ գործուն մասնակցություն է բերել քաղաքային կյանքի առաջընթացին ինչ-
պես Լվովում, այնպես և ողջ Գալիցիայում: Պատմական աղբյուրները հայերին
հիշում են իբրև լավագույն շինարարների, արհեստագործների ու վաճառական-
ների, ժամանակի կրթյալ մտավորականների, ովքեր համբավ ու փայլ են բերել
այն քաղաքներին, ուր ապրել են: Մասնավորաբար Լվովը հայոց պատմության
մեջ թանկ հիշատակներ ունի՝ լինելով Հայ Եկեղեցու հնագույն թեմերից մեկի ա-
թոռանիստ կենտրոնը: Այսօր մենք հպարտ ենք նաև, որ մեր նախնիները վտան-
գի պահին սրբորեն պաշտպանել են այս հողը, որը հանգրվան է տվել իրենց ու
դարձել երկրորդ Հայրենիք: Իրավի, անցյալի ավանդներն անբաժան մասն են
մեր կյանքի և ուղեցույց են ապագայի ճանապարհին: Այսօր քրիստոնյա մեր ժո-
ղովուրդները իրավունք ունեն հավաստելու, որ բոլոր ժամանակներում մեր հա-
րաբերությունները կառուցվել են բարիդրացիության, խաղաղ ստեղծագործ
կյանքի և հանուն ազատության՝ անխարդախ զինակցության հիմնաքարերով:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ: Մենք անչափ ուրախ ենք և մխիթարված, որ
Լվովի հայ համայնքը նոր զարթոնք է ապրում, զորացնում հավատի իր կյանքը՝
համախմբված Հայ Եկեղեցու շուրջ, վերարժևորելով անցյալի փառավոր հիշա-
տակները և նախնյաց ժառանգությունը մեզ: Սուրբ Աստվածածնի Վերափոխ-
ման եկեղեցու վերաբացումը ձեր նորոգ հավատի և հայրենի ավանդներին ձեր
հավատարմության լավագույն վկայությունն է: Այս երջանիկ առիթով Հայրապե-
տական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ և Մեր բարձր գնահա-
տանքը՝ Ուկրաինայի հայոց թեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս
արքեպիսկոպոս Բունիաթյանին և մեծագնիվ բարերար Մեր զավակներին՝
պարոնք Նիկոլայ Քոչարյանին և Նվեր Միխթարյանին, ովքեր ջանք ու միջոց

*չխնայեցին, որպեսզի հայոց եկեղեցին ամբողջությամբ ծառայի իբրև աղոթքի տուն, Սուրբ Տաճար Աստծո:*

*Մեր ողջույններն ու օրհնությունն ենք բերում Լվովի քաղաքային պատկան իշխանություններին, որ բարյացակամ գտնվեցին հայոց ավելի քան 650-ամյա եկեղեցին վերստին հայկական համայնքին տրամադրելու հարցում՝ ի սեր մեր Փրկչի և ի սեր մեր ժողովուրդների եղբայրության: Փառք Տիրոջը, որ այսօր շարականագրի խոսքով կարող ենք կրկնել. «Այսօր լույսի պայծառ սյունը աստվածային շնորհով լցրել է սուրբ եկեղեցին. այստեղ քեզ ենք օրհնում, մեր հայրերի Աստված»:*

*Մեր աղոթքն է, որ նորաբաց հայոց եկեղեցին Աստծո օրհնությունն ու լույսը առատացնի Ուկրաինայի հողում և հայ համայնքում: Թող Աստծո Սերը միշտ շաղկապող լինի մեզ միմյանց, զորացնի հայ և ուկրաինացի ժողովուրդների եղբայրությունը և առաջնորդի՝ ի պայծառություն Իր Սուրբ Եկեղեցու, ի բարօրություն անկախ մեր պետությունների ու իրենց նոր կյանքը կերտող մեր ժողովուրդների:*

*Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ամենեսեան ամէն:*

Հավարտ արարողության Նորին Սրբությունն իր օրհնության խոսքն ասաց ներկա հավատացյալներին, ինչպես նաև եկեղեցուն նվիրեց արծաթյա մի սկիհ և Տիրոջ Այլակերպության պատկերով մի սրբանկար, իսկ եկեղեցու բարերար Նվեր Մխիթարյանին պարգևատրեց Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանը: Այնուհետև Վեհափառ Հայրապետը բարերարի կուրծքը զարդարեց շքանշանով:

Հավարտ Ս. Պատարագի Կրոնի գործոց նախագահին ընթերցեց Ուկրաինայի նախագահ Լեոնիդ Կուչմայի շնորհավորական ուղերձը Նորին Սրբությանը՝ սույն եկեղեցին Հայոց Առաքելական Ս. Եկեղեցուն հանձնելու կապակցությամբ, ինչպես նաև նախագահի անունից Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանին պարգևատրեց «Աշխատանքի և բարի գործերի» շքանշանով՝ ասելով, որ նույն շքանշանով պարգևատրվել է նաև Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը, որպես նախկին առաջնորդ Ուկրաինայի հայոց թեմի, բայց շքանշանը ստացել է արդեն Անգլիայի հայոց թեմի առաջնորդի պաշտոնում, Անգլիայում Ուկրաինայի դեսպանից:

Ս. Պատարագի ավարտին Նորին Սրբությունը, Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը և Շառլ Ազնավուրը պարգևատրվեցին «Փոկաս» դինաստիայի մեծ մագիստրոս Նվեր Մխիթարյանի կողմից, որը Կոստանդիանոս Առաջին կայսեր կայսերական շքանշանի ուխտի մեծ մագիստրոս է ազնվականի տիտղոսով:

Պատարագի ավարտին եկեղեցու բակում տրվեց մատաղ:

Հետմիջօրեին Նորին Սրբությունն այցելեց Լվովի նահանգապետարան և քաղաքապետարան՝ հանդիպումներ ունենալով նահանգապետի և քաղաքապետի հետ:

Երեկոյան հյուրերը Նորին Սրբության գլխավորած պատվիրակության հետ մեկնեցին «Երկաթուղայինների պալատ», ուր տեղի ունեցավ հանդիսավոր նիստ և գեղարվեստական երեկո՝ նվիրված եկեղեցու վերածմանը, որի ընթացքում Լվովի եկեղեցական խորհրդի ատենապետ Նիկոլայ Քոչարյանին Վեհափառ Հայրապետը հանձնեց «Ս. Ներսես Շնորհալի» շքանշան: Հավարտ այս արարողության տեղի ունեցավ հայ երգ ու պարով համեմված համերգ, որին մասնակցեցին տարբեր ազգագրական համույթներ և անհատ կատարողներ:

Հաջորդ օրն այն հյուրանոցում, ուր իջևանել էր Նորին Սրբությունը, Վեհափառ Հայրապետին ողջունեցին Ուկրաինական Կաթոլիկ Համալսարանի «Սրիտենյա» (Տեառնընդառաջ) երգչախումբը՝ գլխավորությամբ համալսարանի ռեկտոր Բորիս Գուձյակի, որն էլ բարիգալստյան ողջույնի խոսք ասաց Վեհափառ Հայրապետին:

Այնուհետև Նորին Սրբությունը հայրապետական շքախմբով մեկնեց օդանավակայան, որտեղից՝ Մոսկվա, ապա՝ Հայաստան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

*ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ — ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻԹՈՎ ԿԱՆԱԴԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

### ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Սիրելի Սրբազան,

Գոհունակութեամբ տեղեկացանք, որ Կանադայի հայոց թեմի Թեմական խորհրդի նախաձեռնութեամբ առաջիկայ յունիս 6-ին տեղի պիտի ունենայ «Յարգանքի եւ հրաժեշտի հանդիսութիւն»՝ նուիրուած Ձերդ Սրբազնութեանը, որ ծառայական նոր պաշտօնի կոչումով՝ թողնում էք Կանադայի հայոց թեմի առաջնորդի պաշտօնը:

Սիրելի Սրբազան,

Վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ ձեռնադրուելով կուսակրօն քահանայ եւ, ունենալով երջանկայիշատակ Հայրապետի Հայրական օրհնութիւնը, Դուք հովուական Ձեր առաքելութիւնը սկսեցիք Կանադայի հայոց թեմում՝ որպէս Մայր Աթոռին երիտա-

սարդ միաբան կեանքի կոչելու Ձեր տեսիլքներն ու երազները: Այսօր արդեն Տիրախնամ
թեմում շուրջ քսան տարիների ծառայութեան վաստակն է Ձեր ուսերին: Նախանձախնդիր
ու անյոգնաբեկ ծառայութեամբ Դուք արժանացաք կանադահայոց սիրոյն ու գնահատան-
քին՝ երիցս կոչուելով թեմակալ առաջնորդի պատասխանատու պաշտօնին:

Ձեր գործունէութեան բարի արգասիքները տեսանելի են նաեւ Մայր Հայրենիքում, որ-տեղ Ձեր քաջալերանքով եւ Ձեր նախաձեռնութեամբ իրագործուեցին բարեսիրական մի շարք ծրագրեր՝ ի շինութիւն հայրենի մեր անկախ երկրի եւ ի բարօրութիւն հայրենաբնակ մեր ժողովրդի: Մասնաւոր յիշատակութեան արժանի են Կանադահայոց թեմի երիտա-սարդների այցելութիւնները Հայաստան CYMA-ի ծրագրի շրջանակներում, որ արդեն տա-սը տարիներ կեանքի են կոչւում Ձեր օրհնութեամբ ու հովանաւորութեամբ:

Սիրելի Սրբազան, շուրջ մէկ ամիս առաջ Տիրոջ կամքով Դուք ընտրուեցիք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդի պաշտօնում, եւ Մենք ուրախ սրտով հաստատեցինք Ձեր ընտրութիւնը՝ ծանօթ լինելով Կանադահայոց թեմում Ձեր արդիւնաշատ ծառայութեանը եւ Ձեր որդիական նուիրումին՝ հանդէպ Մայր Եկեղեցին ու Սուրբ Էջմիածինը: Ձեր առջեւ այ-լեւս ծառայութեան նոր ասպարէզ է, առաւել ընդգրկուն ու պատասխանատու:

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական այսու Գրով Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ ի խորոց սրտի աղօթում, որ Բարին Աստ-ուած օգնական ու աջակից լինի եւ հանապազ զօրացնի Ձեզ Ձեր կոչման մէջ՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին՝ ի զօրացում եւ ի պայծառացում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

*«Այնպէս լուսաւորեսցէ լոյս Ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս Ձեր բարիս, եւ փառաւորեսցեն զՀայր Ձեր որ յերկինս է» (Մատթ. Ե 16):*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 27-ն Մայիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 351

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՐՈՒԺԱՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՊԱՐԱՃՅԱՆԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՐՈՒԺԱՆ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՊԱՐԱՃԵԱՆ, ՈՐ Ի ԷՎԸՆՍԹԸՆ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից փեղեկացանք, որ առաջիկայ մայիս 31-ին պիտի նշուի քահանայական Ձեր ձեռնադրութեան յիսնամեայ յոբելեանը: Ուրախ այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը, շնորհաւորանքներն ու բարեմաղթութիւնները:

Սիրելի Հայր Սուրբ,

Կէս դար շարունակ Դուք անխոնջ նուիրումով սպասաւորում էք Մայր Եկեղեցու անդաստանում՝ Ձեր առաքելութիւնը սկսելով Երուսաղէմի Պատրիարքութիւնում՝ որպէս Դպրեվանքի փեսուչ եւ ուսուցիչ, այնուհետեւ շարունակելով Ձեր ծառայութիւնը ԱՄՆ հայոց Արեւելեան Տիրախնամ թեմում:

Ձեր բարեջան առաջնորդի միջոցով Մենք տեղեակ ենք հաւատաւոր ու ծառայասէր Ձեր ընթացքի բարի արգասիքներին եւ յանուն մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի ներդրած Ձեր անյոգնաբեկ ջանքերին: Ձեր հոգում կրելով Երուսաղէմի հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց վանքի Ժառանգաւորաց Վարժարանի կնիքը, Դուք, որպէս մշտարթուն հովիւ, Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դրել Տիրոջ խօսքը մեր ժողովրդի զաւակների հոգիներում սերմանելու սրբազան առաքելութեանը: Հոգեւոր Ձեր ծառայութեան պտուղները, որոնք գնահատուել են նաեւ Էվընսթըն քաղաքի քաղաքապետարանի կողմից, Ձեր հօտի բարեպաշտ հաւատացեալների Քրիստոսասէր հոգիներում նորոգում են հաւատն առ Աստուած եւ սէրը առ ազգային սրբազան արժէքները:

Սիրելի Հայր Սուրբ, Ձեր կեանքի յիշարժան այս հանգրուանին Հայրապետական Օրհնութեան այսու Գրով Մեր բարձր գնահատանքին ենք արժանացնում հոգեւոր ասպարէզում վաստակաշատ Ձեր վաստակը եւ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում Մեր օրհնութիւնը:

Ի խորոց սրտի մաղթում ենք, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի Ձեզ հոգեւոր կոչման մէջ եւ հանապազ զօրացնի՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը մեր ժողովրդի բարեպաշտ զաւակներին՝ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Ամենակարող Տէրն Իր հայրական սիրոյ մէջ պահի ու պահպանի Ձեզ. պարգեւի քաջառողջ արեւշատութիւն, հանապազ օրհնի Ձեր կեանքը գործոց յաջողութիւններով ու երկնաւոր պարգեւներով:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Տուաւ Գիրս Օրհնութեան ի 12-ն Մայիսի**
**յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ**
**ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի**
**ընդ համարաւ 350**

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՆԴՐԱՆԻԿ ՋՈՐԱՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՋՕՐԱՅԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյններն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն բերած Ձեր բարի եւ մեծարժէք ծառայութիւնների համար, որոնց մասին տեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանից:

Մեծարգոյ պրն Ջօրայեան,

Բազում տարիներ, զօրացած Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ, Դուք, որպէս բարեպաշտ հայորդի, Ձեր կարողութիւնները անձնուիրաբար ի սպաս էք դնում Մայր Եկեղեցու սրբազան առաքելութեան իրականացմանը՝ հաւատարիմ Տիրոջ խօսքին՝ «Երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ եւ պահիցեն» (Ղուկ. ԺԱ 28): Մայր Եկեղեցուն մատուցած Ձեր վարչական ծառայութիւնները եւ կատարած մեծագումար նուիրատուութիւնները բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ եւ վարձք ամբարում երկնքում:

Գովելի է Ձեր վաստակը առաւելաբար Կոստա Մեսայի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու պայծառութեան եւ ԱՄՆ հայոց Արեւմտեան Տիրախնամ թեմի առաջնորդանիստ Մայր եկեղեցու կառուցման նուիրական գործում: Մենք գոհութիւն ու փառք ենք մատուցում Բարձրեալին, որ Միացեալ Նահանգներում հայորդիները ապրում են Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հայրենեաց աւանդներին հաւատարիմ կեանքով՝ միշտ դրսեւորելով հայրենական կեանքի շինութեանը մասնակցութիւն բերելու պատրաստակամութիւնը:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով, ընդառաջ բարեջան Ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ միշտ եռանդուն ու կորովաշատ, շարունակէք Ձեր ծառայութիւնը բերել մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատացեալ ժողովրդին:

Թող Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ քաջառողջ ու երջանիկ պահի և պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին եւ յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեր բոլոր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Մայիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 160

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՃԻՎԱՆ ԳԱԼՖԱՅԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՃԻՎԱՆ ԳԱԼՖԱ, ՈՐ Ի ԳՈՍԹԱ ՄԵՍԱ, ԱՄՆ

Յարգարժան պրն Ճիվան Գալֆա,

Հայրապետիս համար անկեղծ ուրախութիւն է, որ առիթ ունենք Մեր օրհնութիւնը յղելու Ձեզ եւ գնահատելու մեծազնիւ հայորդուդ գործերով վկայուած աննուազ սէրը հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը:

Ձեր վաստակը արդիւնաշատ է յատկապէս Գոսթա Մեսայի Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու պայծառութեան եւ համայնքային կեանքի կազմակերպման նուիրական գործում: Առ Աստուած եւ առ հայրենին ունեցած Ձեր նախանձախնդիր հաւատքով եւ մեծագումար նուիրատուութիւններով Դուք անփոխարինելի ծառայութիւն բերեցիք Եկեղեցու շինութեան աստուածահաճոյ գործում՝ Ձեր անձնական օրինակով խրախուսելով նաեւ այլ հայորդիների: Այսօր շնորհիւ Ձեր եւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդեաց ազնիւ ջանքերի՝ Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցին իր շնորհաբաշխ դռներն է բացել հաւատաւոր մեր զաւակների առջեւ՝ արժանացնելով նրանց աստուածային օրհնութեան եւ նպաստելով նրանց ազգային ու հոգեւոր կեանքի անխաթար պահպանմանն ու զօրացմանը:

Համայն մեր ժողովրդի հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր բարեմաղթանքները եւ, ընդառաջ Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի ազնիւ խնդրանքին, ի գնահատութիւն Ձեր եկեղեցաշէն բազմարդիւն ծառայութեան, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ հայրենապաշտ ոգով ու եկեղեցանուէր գործերով պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած Իր Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ երկար կեանք, գործոց յարաճորդ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 1-ն Մայիսի
Յամի Տեառն 2003 եւ ի թուին Հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 161

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՐԳԱՐԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱԶՆԻՒ ՕՐԻՈՐԴ ՄԱՐԿՐԻԹ ՅՈՎՍԷՓԵԱՆ, ՈՐ Ի ԱՐԻԶՈՆԱ, ԱՄՆ

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր անկեղծ սէրն ու անմնացորդ նուիրումը, որը գիտէք արտայայտել նաեւ բարի եւ աստուածահաճոյ իրագործումներով:

Տիրոջ ողորմած կամքով յոբելեանական 2001 թուականին Միացեալ Նահանգներ կատարած Հովուապետական Մեր անդրանիկ այցելութեան ընթացքին Մենք եղանք նաեւ Արիզոնայի հայ համայնքում, եւ Մեր յիշողութեան մէջ թարմ են բարեպաշտ հայորդեաց հոգեւոր կեանքի աշխուժութիւնը, Մայր Եկեղեցու եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական անկեղծ զգացումներն ու ծառայութեան պատրաստակամութիւնը: Այսօր առանձնակի գոհունակութեամբ անդրադառնում ենք, որ շնորհիւ Արիզոնայի հայ համայնքին Ձեր նուիրաբերած հողատարածքի, հնարաւոր դարձաւ այնտեղ կառուցել ազգային սրահ եւ առժամեայ եկեղեցի, որի շուրջ այսօր համախմբուած է համայնքի հոգեւոր-ազգային կեանքը, եւ ուր Հովուապետական Մեր այցի ընթացքին Մեր աղօթքը բարձրացրեցինք առ Աստուած Արիզոնայի մեր հաւատացելոց հետ: Յատկապէս ուրախութեամբ է համակուած Հայրապետիս հոգին, որ Դուք և Ձեզ գործակից հայորդիք նախանձախնդիր էք նոր եկեղեցու կառուցմանը, որը պիտի լինի պսակը Ձեր բոլորի ազգաշէն ու եկեղեցանուէր գործերի:

Բարձր գնահատելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Եկեղեցուն, գոհունակ սրտով ընդառաջում ենք Գերաշնորհ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսէփեանի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարձրեալ Տէրը զօրացնի համայն մեր ժողովրդի եկեղեցասիրութեան եւ հայրենանուիրումի ոգին՝ Իր հանապազ հովանու ներքոյ միշտ առաջնորդելով մեծարժան գործերի:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Մայիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 163

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի մայիս ամսվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Ռեպուհ Թոմազյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Անահիտ Նալվարյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Հերի Ներսես Ջորթանյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Էնդրու Մեյմարյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Արաքսի Թաթուլյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
Սարգիս Ասատուրյան (Կանադահայոց թեմ)
Հրաչ Սիլվանյան (Ուկրաինայում Հայաստանի Հանրապետության դեսպան)

**Օրհնության գիր է տրվել.**
Կամո Մուրադյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Աղասի Գագոյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Արեգ Դեմիրխանով (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Ռաֆիկ Սարգսյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Խաչատուր Խաչատրյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Հակոբ Շաքյան (Արագածոտնի թեմ)
Հովհաննես Մկրյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
«Շուշի» պարային խմբին (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Ավստրալիայի հայոց թեմի պատգամավորական ժողովին
Կանադահայոց թեմի պատգամավորական ժողովին

**Ծաղկյա փիլոն կրելու իրավունք է շնորհվել.**
Մկրտիչ քահանա Երանյանին (Արագածոտնի թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅԻՍԻ 9-Ի ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և շնորհավորում ենք ձեզ Հաղթանակի և Խաղաղության օրվա առիթով և բերում ենք բոլորիդ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Հաղթանակը ֆաշիզմի դեմ, որը ձեռք բերվեց բազմաթիվ ժողովուրդների մեծ զոհողություններով, բռնությունն ու պատերազմը մերժելու և խաղաղությունն ընտրելու մարդկության կամքի վկայությունն է: Մեր հայրերը նույնպես ներդսական մասնակցություն են բերել ֆաշիզմի դեմ պատերազմը հաղթանակով ավարտելու պայքարին՝ ի սեր ազատ ու խաղաղ կյանքի, որը պատմության մեջ մշտական ձգտումն է եղել մեր ժողովրդի: Ազատության մեր սիրով ու խաղաղ գալիքի հավատով կերտեցինք նաև հայոց նորօրյա կյանքի մեծ հաղթանակը՝ Արցախի ազատագրությունը, և Մայիսի 9-ի տոնական ուրախությունն այսուհետ կրկնակի է մեզ համար:

Հաղթանակի ու խաղաղության պանծալի տոնի առիթով Մեր մասնավոր շնորհավորանքներն ու գնահատանքն ենք բերում հայրենյաց պաշտպան քաջարի զավակներին մեր ժողովրդի՝ Երկրորդ աշխարհամարտի վետերաններին և Արցախյան ազատամարտի մասնակիցներին: Աղոթք ենք բարձրացնում բոլոր նրանց համար, ովքեր չվերադարձան ռազմի դաշտից, և բոլոր նրանց, ովքեր այլևս մեզ հետ չեն: Մեզ հետ է, սակայն, նրանց գործը՝ մեր Հայրենիքի, մեր ժողովրդի ազատությունն ու խաղաղությունը, մեզ հետ է արդար պայքարի հաղթանակի հանդեպ նրանց հավատը:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ աշխարհի ժողովուրդները, տոնի խորհրդով անդրադառնալով շուրջ կես դար առաջ տեղի ունեցած Երկրորդ աշխարհամարտի իրադարձություններին, նորոգեն իրենց հոգում պատրաստակամությունը՝ միացյալ ջանքերով հաստատելու ու պահպանելու խաղաղությունը աշխարհի բոլոր անկյուններում: Թող Ամենախնամ Տերը ազատ ու խաղաղ պահպանի նաև մեր Հայրենիքը և օրհնի իր նոր կյանքը կերտող մեր ժողովրդի ջանքերը:

*Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:*

Ս. Էջմիածին,
9 մայիսի 2003 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի ժողովուրդ հայոց.

Անկախության Օրվա խորհրդով այսօր ուրախ ու լուսավորված են մեր հոգիները, և վերստին փառք ենք բարձրացնում երկինք, որ ազատ է մեր Հայրենիքն ու լեցուն նոր կյանքի հույսերով:

Այսօր մենք կրկին համակված ենք այն գիտակցությամբ, որ Հայաստանի անկախությունը մեզ ավանդված թանկ ու սրբազան ժառանգություն է: Չկա առանց անկախության ապրած մի դարաշրջան հայոց պատմության մեջ, երբ մեր ժողովուրդը ձգտած չլինի ու մաքառած չլինի վերագտնելու համար Հայաստանի ազատությունը: Այս ճշմարտությամբ զորեղացված և առած հավատքի վահանը մեր սրտերին, հավատարիմ լինենք Հայրենիքի առաջ մեր պարտքին, որպեսզի մեր զավակները ժառանգեն ազատ, հզոր ու բարօր Հայրենիք և միշտ ուրախ ու լավատես տոնեն Հայաստանի Անկախության Օրը:

Փա՜ռք հայոց անկախությունը կերտած հայորդիներին:

Փա՜ռք ազատասեր ու խաղաղասեր ազգիս հայոց:

Փա՜ռք մեր ազատ Հայրենիքին:

Սիրելի հայորդիք, Անկախության Օրվա պանծալի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում և Մեր օրհնությունն ենք հղում բոլորիդ ի Հայաստան և ի Սփյուռս: Թող Տերը պահպանի մեր Հայրենիքը, ազգս հայոց և պարգևի բարօրություն ու բարգավաճություն:

*Շնորհք եւ սէր Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանն. ամէն:*

Ս. Էջմիածին,
28 մայիսի 2003 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ
# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
# ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի շրջանավարտներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական սիրով ողջունում ենք ձեզ և շնորհավորում Շրջանավարտ դառնալու առիթով: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ, որ այսօր, ավարտելով ուսումնառությունը դպրոցում, թևակոխում եք ձեր կյանքի մի նոր շրջան:

Մեր հայրերի սուրբ հավատքով ոտք դրեք ձեր կյանքի նոր ճանապարհին, և այն կլուսավորի ձեր ուղին, ու ձեր քայլերը կլինեն հաստատուն ու անխոտոր: Այն ամենը, որ ուսանել եք դպրոցում, այն գիտելիքներն ու արժեքները, որ ամբարել եք ձեր նվիրյալ ուսուցիչների ջանքերով, դարձրեք գործեր: Գործեր, որ կրեն ավյունով լեցուն, ազնիվ ու շիտակ ձեր հոգու, ձեր հավատարմության, ձեր սիրո կնիքը՝ բարի պտուղներ բերելով մեր վերանկախացյալ Հայրենիքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին: Աղոթքն ու առ Աստված ապավինությունը ուղեկից դարձրեք ձեզ, և թող Տիրոջ օրհնությունը միշտ ձեզ հետ լինի և ի բարին կատարի աստվածահաճո ձեր բոլոր մտածումներն ու իղձերը:

***Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Յարուցեալ Տեառն մերոյ եղիցին ընդ ձեզ ամենեսեան. ամէն:***

Ս. Էջմիածին,
23 մայիսի 2003 թ.

# Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆՆ ԸՆՏՐՎԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Մայիսի 3-4-ը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ թեմական տարեկան 76-րդ ժողովը, որի ընթացքում պատգամավորների մեծամասնության քվեով նոր թեմակալ առաջնորդ ընտրվեց Հայ Եկեղեցու Կանադայի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը: Որպես Արևմտյան թեմի թվով 8-րդ թեմակալ առաջնորդ, Հովնան Սրբազանը հաջորդում է Գերշ. Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանին, որն իր 32-ամյա նվիրյալ ծառայությունից հետո կոչվել է հանգստի:



Մայիսի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական գրով օրհնեց և պաշտոնապես հաստատեց նոր թեմակալ առաջնորդի ընտրությունը:

Մայիսի 11-ին Փասադենայի Ս. Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում Գերշ. Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը մատուցեց առաջին Ս. Պատարագը՝ որպես թեմակալ առաջնորդ:

## Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1957 թ. դեկտեմբերի 1-ին Բեյրութում (ավազանի անունը՝ Վահրամ):

Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի «Քառասնից մանկանց» վարժարանում:

1970-1975 թթ. սովորել է Անթիլիասի դպրեվանքում և ավարտել Ժառանգավորաց վարժարանի հնգամյա շրջանը:

1976 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան: 1980 թ. ավարտել է ճեմարանը՝ պաշտպանելով ավարտաճառ՝ «Վրթանես Քերթող» թեմայով:

1978 թ. ձեռնադրվել է սարկավագ:

1980 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

1980-1983 թթ. ուսանել է Օքսֆորդի համալսարանում (Անգլիա) և ստացել Աստվածաբանության գծով բակալավրի աստիճան: Վերադառնալով Մայր Աթոռ՝ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանում դասավանդել է Հայ Եկեղեցու պատմություն, Ընդհանրական Եկեղեցու պատմություն և եկեղեցական երաժշտություն: Դասախոսմանը զուգահեռ պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Եկեղեցական տոների ուղեցույց» («Տոնացուցակ») թեմայով:

1984 թ. նշանակվել է Կանադայի Տորոնտո քաղաքի հոգևոր հովիվ:

1987 թ. Օքսֆորդի համալսարանում ստացել է Աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

1989 թ. ստացել է ծայրագույն վարդապետության փասը աստիճաններ՝ պաշտպանելով թեզ «Հովվական աստվածաբանության գործնական ձեռնարկ» թեմայով:

1990 թ. մայիսի 25-26-ին Օնտարիոյի Ս. Կատարինե եկեղեցում հրավիրված թեմական պատգամավորական ժողովի կողմից ընտրվել է Կանադայի հայոց թեմի առաջնորդ (այս պաշտոնում վերընտրվել է 1995 և 2000 թվականներին):

1990 թ. Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Վազգեն Առաջինի, ձեռնադրվել է եպիսկոպոս:

1993 թ. արժանացել է արքության պատվի:

2000 թ. առաջնորդությանը համարեղ նշանակվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի վարիչ-տնօրեն:

Նույն թվականից Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ է:

Հովնան արքեպս. Տերտերյանը հեղինակ է բազմաթիվ գրքերի ու հոդվածների:

2003 թ. մայիսի 3-ին Բըրբենքում (Կալիֆոռնիա) հրավիրված 76-րդ թեմական ժողովի պատգամավորների մեծամասնության քվեով ընտրվել է Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արևմտյան թեմի թեմակալ առաջնորդ:

# ՔԱՐՈԶ ԽՈՍԱԿԱՆ

## Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(11 մայիսի 2003 թ.)

*Էջմիածինը դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի հույսը, դարեր շարունակ հալածանքների է ենթարկվել և այսօր գոյություն ունի հայ ժողովրդի համար:*
(Արտակ եպս. Սմբատյանց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ձերդ Սրբություն Վեհափառ Տեր, ահա Շիրակի թեմի ուխտավոր ժողովուրդը Քրիստոսի Հարության կենսախինդ ավետիսով ողջունում է Ձեզ՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, Հայոց Եկեղեցու 132-րդ գահակալին: Այսօր և՛ ժողովուրդ, և՛ իշխանություն, և՛ հոգևոր դաս եկել ենք ուխտի՝ վայելելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանին և ստանալու Ձերդ Սրբության օրհնությունները:

Ուրախ ենք և երջանիկ, և բառերն անզոր են նկարագրելու այն ուրախությունը, հուզումը, ցնծությունը և երանությունը, որ պատել է մեր բոլորի հոգիները, քանզի 1700-ամյա այս տաճարում մեզ բախտ վիճակվեց պատարագել այս հոբելյանական տարում, որպես Շիրակի թեմի առաջնորդ, և մեր ժողովրդին բախտ վիճակվեց վայելելու այս 1700-ամյա տաճարի օրհնությունները: Եվ մեր ժողովրդի, իշխանության, հոգևոր դասի առաջին մաղթանքը պետք է լինի երկար կենաց արևշատություն Վեհափառ Հայրապետին, որպեսզի միշտ լուսավոր մնա 1700-ամյա այս հինավուրց տաճարը, մնա միշտ օրհնաբեր, մնա միշտ կենսաբեր և մնա միշտ ուխտավոր ժողովրդով լեցուն:

Այսօր մի պահ մերն է հերթը՝ խոնարհվելու Իջման Սուրբ Սեղանի առջև, ստանալու Միածնաէջ Սուրբ Սեղանի օրհնությունը և տանելու դեպի մեր աշխարհ՝ դեպի Շիրակ, որը հայտնի է իր եկեղեցասիրությամբ և իր նվիրումով ու հավատքով և ուխտավորի իր առաքելությամբ: Իրապես կցանկանայի, որպեսզի այս պահին քարերն աղաղակեին, որովհետև իմ խոսքերի պաշարը չի բավականացնելու՝ նկարագրել Էջմիածնի հմայքը, Էջմիածնի ուժը, Էջմիածնի զորությունը և Ամենայն Հայոց Հայրապետության հեղինակությունը հայ ժողովրդի կյանքից ներս:

Արդեն քանի օր է, խորհում էի այն մասին, թե ինչ բնաբան ընտրեմ՝ խոսքս կառուցելու համար, զանազան գեղեցիկ, պերճաշուք, պերճախոս արտահայտություններ էին գալիս իմ միտքը, բայց ես ընտրեցի հետևյալ նախադասությունը. «Էջմիածինը դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի հույսը, դարեր շարունակ հետապնդումների է ենթարկվել և այսօր գոյություն ունի հայ ժողովրդի համար»: Ինչո՞ւ ընտրեցի այս խոսքերը, որովհետև սրանք Շիրակի

թեմի ժամանակի առաջնորդ Արտակ եպս. Սմբատյանցի վերջին խոսքերն են՝ արտասանված 1937 թվականին, գնդակահարությունից առաջ:

Գիտենք բոլորս, թե ինչ հալածանքների և ինչ զրկանքների միջով անցավ Հայ Եկեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետությունը և նաև բոլոր թեմերը Հայաստան աշխարհի: Հետևաբար, այս նահատակ հոգևորականի վերջին խոսքերն ինձ համար եղան ուղենիշ՝ որոշակիացնելու Էջմիածնի խորհուրդը իմ մտքի ու հոգու մեջ և այն փոխանցելու նաև ձեզ:

Էջմիածինը դարեր շարունակ հույս է եղել հայ ժողովրդի համար: Անհուսության և անլուսության օվկիանոսում է եղել հաճախ մեր ժողովուրդը և, սակայն, այդ օվկիանոսում միշտ ունեցել է մի փարոս հույս և լույս: Այդ փարոսի անունը եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ինչ տառապանքների բովով է անցել մեր ժողովուրդը և սակայն ավետարանական այն խոսքի համաձայն, թե հույսը երբեք չի ամաչեցնում, հույսը փեսել է այս սքանչելի տաճարի մեջ, որը, որպես հրաշագործ ստեղծագործություն, թերևս համեմատելի չէ աշխարհի մյուս սքանչելի տաճարների հետ, սակայն իր խորհրդով, իր բովանդակությամբ, իր ներշնչումով, իր հույսի և լույսի փոխանցումով իրոք անհամեմատելի է աշխարհի տարածքում սփռված մեծաշուք շատ և շատ տաճարների հետ:

Այսօր էլ մենք ավելի լավ, ավելի բարօր պայմանների մեջ ենք ապրում, սակայն մեր ազգը չի կտրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնից: Այսօր էլ մեր հույսը, մեր ապավենը մեր հավատքն է և մեր հավատքի սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և որքան շնորհակալ ենք, որքան երախտապարտ ենք մեր հայրերին, մեր նախահայրերին, որ մեր Հայաստան աշխարհում կառուցեցին մի տաճար, մի տուն, որը երբեք չի հնանում, տնկեցին մի ծառ, որը երբեք չի չորանում, և Ավետարանի կենարար աղբյուրից մի առու բխեցրին, որը երբեք չի ցամաքում: Եվ այդ ամենը խտացնում ենք այն խորհրդի մեջ, որն անվանում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Այո, նահատակ եպիսկոպոսի խոսքերով Մայր Աթոռը դարեր շարունակ հետապնդումների էլ է ենթարկվել օտար նվաճողների կողմից և անցած տասնամյակներին, նամանավանդ 30-ական թվականների մութ տարիներին, հայի անուն կրող անձնավորությունների կողմից հետապնդումների է ենթարկվել՝ հավատարիմ լինելով ավետարանական պատգամին, թե ձեզ ուղարկում եմ իբրև գառներ գայլերի մեջ: 1700 տարի շարունակ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը եղել է այդ գառնուկը գայլերի ոհմակի մեջ, բայց կարողացել է պահել իր ինքնությունը, պահել իր նպատակադրումը, պահել իր հավատքը, պահել իր խոստովանությունը հանդեպ Քրիստոսի և նահատակության գնով հաճախ կարողացել է իր ժողովրդին պաշտպանել և պահպանել բոլոր տեսակի փորձություններից:

Այո՛, Էջմիածինը գոյություն ունեցել է, ունի և ունենալու է հայ ժողովրդի համար: Մի Աթոռ է, մի Տաճար է, մի Սրբություն է, որը երբեք չի ծառայել ուրիշին, այլ ծառայել է միմիայն հայ ժողովրդի կենսական շահերին երեկ և այսօր և հավիտյան: Եվ Ամենայն Հայոց Հայրապետները, որ այս Մայր Աթոռում հանգրվանել են, գահակալել են, իրենց արցունքներով լույսն են ավելացրել Լուսավորչի կանթեղի՝ ծառայելու համար ոչ թե մեկ ուրիշ օտար կայսրության կամ ժողովրդի, այլ ծառայելու համար ժողովրդին հայոց, և 1700 տարիներ հետո այդ կանթեղը շարունակում է լուսավորել, շարունակում է լուսավորել մեր ազգի ճանապարհը, շարունակում է լուսավորել մեր ճանապարհը՝ նաև ցույց տալով այն մոլորյալներին մեր

ազգի, թե ինչ սպասումների հետևից, ինչ ակնկալիքների հետևից անհրաժեշտ է, պարտ է, որ հայ մարդն ընթանա:

Իրոք, շատ քիչ ժողովուրդներ կարող են հպարտանալ այնպիսի մի խորհրդական գոյությամբ, ինչպիսին ունի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ ժողովրդի համար: Այս պահին, 1700-ամյա այս խորհրդավոր փաճարի պատերից ներս, մեր մաղթանքը և աղոթքը չի կարող լինել այլ, քան աղոթել այս Սրբազնասուրբ Մայր Աթոռի անսասանության և հավիտենական ընթացքի համար և աղոթել Գահակալի՝ այսօրվա Գահակալի՝ Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության համար: Թող մեր ուխտավորի աղոթքը հասնի երկինք, և Աստված Իր Բարեխնամ Աջը փարածի մեր ժողովրդի, մեր Եկեղեցու և ժողովրդի ու Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վրա:

Շարունակենք ապրել ուխտավորի վճռականությամբ, ուխտավորի համառությամբ և ուխտավորի հավատքով և ուխտավորի աղոթքով նաև ցնցենք երկինքը, որպեսզի իրապես մեր ընթացքն այս նոր հազարամյակում, նոր հարյուրամյակում և այս առաջիկա տասնամյակներին լինի Աստծո կենարար զորության և օրհնության ներքո:

Աղոթենք և մաղթենք, որ Տերն անսասան պահի մեր Մայր Եկեղեցին՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնով, Ամենայն Հայոց Հայրապետով և մեր ողջ ուխտավոր ու հավատացյալ հոգևոր դասով ու ժողովրդով, Իր լույսը վառի մեր հոգիներից ներս՝ ցույց տալով իրական և ճշմարտացի ճանապարհը դեպի Արքայությունը Երկնից՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճանապարհի միջոցով:

*«Շնորհ, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանսն. ամէն»:*

# Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(18 մայիսի 2003 թ.)

Սիրելի հավատացյալներ,

Այսօր ուխտի և փոխախմբության օր է մեզ բոլորիս համար, հատկապես Գուգարաց թեմի հավատացյալների, քանզի Մայր Տաճարի հիմնադրման 1700-ամյակին նվիրված ուխտագնացության շրջանակում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ գեղեցիկ ու պատեհ առիթ է ընձեռվել Լոռու և Տավուշի մարզերի հավատացյալներին համախմբված աղոթք անելու և իրենց ուխտը վերանորոգելու Ս. Էջմիածնի 1700 տարիների աղոթաբույր կամարների ներքո:

Օրն առավել հիշարժան է ու պատմական, քանզի մեր ուխտագնացությունը նախախնամության կամքով զուգադիպեց «Երևման Ս. Խաչի» տոնին և հինգ նորընծաների օծման արարողությանը:

Ինչպես գիտեք, Հայ Առաքելական մեր Մայր Եկեղեցին տարվա մեջ ունի խաչի չորս տոներ՝ Երևման Ս. Խաչի, Խաչվերաց, Վարագա Ս. Խաչ և Գյուտ Խաչի:

Երևման Ս. Խաչի տոնը հիշատակումն է լուսեղեն այն հրաշքի, որ տեղի ունեցավ 391 թվականի մայիսի 7-ին Երուսաղեմ քաղաքում: Այդ օրը, ցերեկվա ժամերին, Գողգոթայից մինչև Ձիթենյաց լեռը երկնակամարի վրա ի տես ամենքի երևում է լուսապայծառ Ս. Խաչի նշանը: Անքննելի այս հրաշքից երկյուղած, սակայն գոտեպնդված հավատացյալներն ու հոգևորականները գոհություն ու փառք մատուցելու համար եկեղեցի են մտնում, աղոթում ու անդադար երկրպագություն կատարում, ապա հատուկ տոն հաստատում, որը մինչ մեր օրերը շարունակվում է տոնվել Հայ և Հույն Եկեղեցիներում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ոչ միայն քավեց մեր մեղքերը խաչի վրա հեղած իր սրբարար արյամբ, այլև սրբագործեց այն, և խաչը քրիստոնյա ժողովուրդների համար դադարեց մահվան գործիք լինելուց: Սուրբ խաչը հանդիսացավ միջոց փրկության, զեն հաղթության ու վահան ամրության՝ ընդդեմ ամենայն երևելի և աներևույթ թշնամյաց:

Ահա դարեր շարունակ այս գիտակցությամբ զինված ու խաչի զորությամբ հաղթանակած հայ ժողովուրդն իր արժանավայել տեղն է զբաղեցնում աշխարհում: Պայքարների ու մաքառումների բովում թրծված մեր ժողովուրդն այսօր էլ հավատարիմ Ս. Խաչին՝ շարունակում է նույն ոգով իր արդար դատը պաշտպանել ու Մայր Հայրենիքի ապագան կերտել:

Տաճար, որ դիմակայել է բազմաթիվ արհավիրքների, թիրախ է դարձել ամեհի թշնամիների, հրդեհների, կողոպուտների ու ավերածությունների, խոնարհվել և դարձյալ երկինք է հառել ու հանդիսացել փրկության նավ ու փարոս կործանարար ալիքների մեջ փոթորկվող համայն հայ ժողովրդի համար:

Տաճար, որ լուռ համբերությամբ ու դառը կսկիծով դարեր շարունակ ականջալուր է եղել Հայոց Հայրապետների վշտերին ու պքնանքին, վանական միաբանների հառաչանքներին,

հավատացյալի արտասվալի աղոթքներին, ուխտավորի իղձերին, պանդուխտի հոգուցին, հիվանդի ցավերին, զինվորի աղաչանքին, մանկան ճիչին, աժելի ու ջահելի խնդրանքին:

Տաճար, որ 1700 տարի շարունակ աստվածային հրաշքով բուժել է ու մխիթարել, սիրել ու գգվել, սփոփել ու դարմանել, փրկել ու ապաստանել, հուսացել ու հուսադրել, կարեկցել ու օգնել, տոնել ու տոնախմբել տանջահար ու խաչված, բայց կրկին հարություն առած մի ողջ ժողովրդի՝ հայ ժողովրդի:

Սիրելի լռեցի ու տավուշեցի ուխտավորներ,

Ս. Էջմիածնի խորհուրդը մեր հոգում ու մտքում վառ պահելու գիտակցությամբ, մեր նախնյաց ավանդությանը հավատարիմ, այսօր մենք ևս ուխտի ենք եկել՝ վերստին վերանորոգելու և վերաիմաստավորելու համար մեր անցյալն ու ներկան: Մեր աղոթքն է, որ շարունակենք հավատարիմ մնալ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն, շարունակենք պահել մեր հոգևոր միասնությունը և փեղի չտանք ազգակործան մոլուցքով կուրացած օտարածին ու այլադավան կրոնական ու քաղաքական շարժումներին:

Թող Բարձրյալն Աստված ընդունելի անի ամենքիս ուխտն այս հինավուրց ու ալեհեր, սակայն հավետ օրհնաբաշխ մեր Ս. Էջմիածնի կամարների ներքո:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այսօր երիտասարդ սպասավորների ձեռնադրության և օծման խնդալից ու բերկրալի նս մեկ տոնական առիթ էր մեզ ընձեռվել: Հայոց հայրապետն այս պատիվը նույնպես մեզ է վերապահել, որի համար խոնարհաբար որդիական մեր սերն ու երախտագիտությունն ենք հայտնում:

Այսօր ի տես ամենքի մեր Մայր Եկեղեցին կրկին իր վերընթացն է ապրում՝ ի գլուխ ունենալով Հայոց Հայրապետը՝ աջակցությամբ մեր զինվորյալ միաբանության:

Եվ դուք, սիրելի նորընծաներ, առաքելավանդ ձեռնադրությամբ և Սրբալույս Մյուռոնով օծուն, Սուրբ Հոգու շնորհներով օժտված ու զորացած կոչվեցիք ի սպասավորություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն և հավատացյալ հայ ժողովրդին:

«Հունձք բազումք են և մշակք սակաւ» ավետարանական պատգամով դուք այսօր եկաք լրացնելու Ս. Էջմիածնի միաբանության շարքերը: Վստահ ենք, որ պիտի լինեք մշակներ առանց ամոթի և ձեր անսպառ ծառայությամբ պիտի պանծացնեք մեր Ս. Եկեղեցին առաջնորդելով ձեզ վստահված հոտը, այն հունձքը, որ սպասում է իր մշակներին:

Մեր հայրական հորդորն է, որ չլինեք արծաթասեր, այլ՝ աղքատասեր, չլինեք պատվասեր, այլ՝ ծառայասեր, չլինեք չարասեր, այլ՝ բարեսեր, Աստվածասեր ու Քրիստոսասեր, եկեղեցասեր ու ժողովրդասեր:

Սիրելի նորընծաներ, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի պատգամի համաձայն «Ինչպես որ Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք, ուրեմն, աշակերտ դարձրեք բոլոր ազգերին, նրանց մկրտեցեք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. ԻԸ 19-20):

Թող բարձրյալն Աստված հաճությամբ ընդունի Ձեր զոհաբերումն ու ընծայումը և օրհնի ձեր առաքելությունը ի փառս Աստծո, ի փառս Մայր Եկեղեցու և ի փառս հայ ժողովրդի:

«Հսկեցեք, հաստատուն կացեք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք, ամենայն ինչ ձեր՝ սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13-14). Ամեն:

# Տ. ՈՍԿԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՔՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(25 մայիսի 2003 թ.)

*«Եւ ծագեսցէ ձեզ երկիւղածաց անուան իմոյ արեգակն արդարութեան, եւ բժշկութիւն ի թեւս նորա. եւ ելջիք եւ խայտասջիք իբրեւ որթք արձակեալք ի կապոյ, եւ կոխեսջիք զանօրէնս, եւ եղիցին մոխիր ի ներքոյ ոտից ձերոց յաւուրն զոր ես արարից՝ ասէ Տէր Ամենակալ»:*

*«Բայց ձեզ՝ իմ անունից երկյուղ կրողներիդ համար արդարության արեգակը պիտի ծագի, բժշկություն պիտի լինի նրա շողերի մեջ, և դուք պիտի ելնեք ու խայտաք ինչպես կապից արձակված հորթեր, պիտի կոխոտեք անօրեններին, և նրանք մոխիր պիտի դառնան ձեր ոտքերի տակ այն օրը, որ ես եմ պատրաստելու,- ասում է Ամենակալ Տերը»:*
*(Մաղ. Դ 2-3)*

Սիրելի ազգակիցներ, այսօր, ինչպես արդեն լսեցիք, եկել եմ Հունաստանից՝ Ուխտի Ս. Պատարագ մատուցելու Միածնաէջ այս Տաճարի մեջ, նրա Ավագ Ս. Խորանի վրա: Ինձ համար ուխտի օր է, ինչու չէ՝ նաև ինձ հետ միասին հունահայ մեր հավատավոր ժողովրդի համար, ուխտի օր՝ ծնկաչոք աղոթելու Միածնաէջ Ս. Սեղանի առջև, հավատարմության օր, որ հայտնվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Ով առաքելաշավիղ Հայրապետն է Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի, Ներսես Շնորհալու և Խրիմյան Հայրիկի: Բերել ենք մեր խոսքը և ուխտը Ս. Էջմիածնին և հավատարմությունը նրա, ինչպես ասացի, առաքելաշավիղ Հայրապետին:

Այսօր հատկանշական է նաև նրանով, սիրելիներ, որովհետև ճիշտ 85 տարիներ առաջ, այս օրը, 6 դարերու հալածականությունից, օտարի գերիշխանությունից հայ ժողովուրդը, ոչ շատ հեռու այս սրբավայրից, լուծում էր իր դարերի վրեժը, հաղթանակ էր կռում իր դարավոր թշնամու նկատմամբ: Ճիշտ 85 տարիներ առաջ, այս օրը՝ մայիսի 25-ին և այս ռոպեին: Այդ օրը հայ ժողովուրդը աշխարհով մեկ ցույց տվեց, որ թեև շատ դարեր ենթակա է մնացել օտար իշխանության, բայց ունի շնորհքը, կարողությունը, զորությունը, ուժը՝ վերականգնելու իր անկախությունը:

Այո՛, սիրելիներ, 85 տարիներ առաջ, 6 դարերից հետո, հայ ժողովուրդը վերականգնեց իր անկախությունը, և թող ոչ մի հայ կասկած չունենա, որ այդ եղավ, եղել է և միշտ պիտի

լինի Եկեղեցու օրհնությամբ, Ս. Էջմիածնի զանգերի ղողանջի ներքո: Ճշմարիտ ազատությունը պայմանավորված է Աստծով և Եկեղեցիով:

Այսօր կրկին հայ ժողովուրդն ունի ազատություն և անկախություն, բայց ազատությունը պայմանավորված է, ինչպես ասացի, Աստծով և Եկեղեցիով: Ոչ ոք, ինչքան էլ քաղաքական ազատություն ունենա, չի կարող ազատ լինել, եթե չի ազատել իր հոգին: Նախ մարդն իր հոգով պետք է ազատ լինի, մարդը պետք է ճանաչի ճշմարտությունը և նրանով կարողանա ազատել իր հոգին կամ լինել ազատ:

Հովհաննես Ավետարանիչն ասում է. «Եւ ծանիջիք զճշմարտութիւնն եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ» (Հովհ. Ը 32): Այնքան ժամանակ, որ մենք չգիտենք աստվածային ճշմարտությունը, մենք չենք կարող ազատ լինել, իսկ եթե մենք իբրև անհատ ազատ չենք, ինչպե՞ս կարող ենք հասնել ազատության և անկախության: Նախ մենք ինքներս պիտի ճանաչենք աստվածային ճշմարտությունը և նրա վրա հիմնենք և հասնենք մեր ազատությանը:

Ազատությունը նաև, սիրելիներ, մեր Եկեղեցու հավաքականության մեջ լինելով է պայմանավորված, այսինքն՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցիով: Այն հայ հոգին, որը ճշմարտությունը ճանաչելով ազատված է, եթե ուզում է շարունակել իր ազատությունը, պետք է մնա հավատարիմ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն, որովհետև արտաքո այս Եկեղեցիին, մեր պապերից ժառանգ հասած Եկեղեցիին, մենք մեր հոգին գերի ենք դարձնում օտարի հավատքին և օտարի կրոնին: Մենք զարմանում ենք, թե ինչո՞ւ հայ մարդիկ իրենց սեփական, սուրբ և առաքելական հավատքը հանում են և փանում, գերի դարձնում օտարին:

Արա, սիրելիներ, նախևառաջ մեր անձը և ճշմարտությունը ճանաչելով՝ հասնենք ազատության և զայն պահենք ազատ՝ շնորհիվ մեր առաքելական Սուրբ Եկեղեցու:

Այսօր ունենք մեր հավաքական ազատությունը որպես անկախ պետականություն: Այո՛, երեք օր հետո, մայիսի 28-ին, Առաջին Հանրապետության անկախության փառեդարձն է: Ո՞վ ասաց, որ մենք կարող ենք կատարյալ անկախության հասնել առանց զոհողության և անձնուրացության: Պատմությունը վկայում է, որ մենք կարող ենք հասնել ճշմարիտ անկախության միայն զոհողությամբ և անձնուրացությամբ:

Թող այս օրը լինի մեզ համար ուխտի օր և ըմբռնումի օր, որ ազատությունը և անկախությունը հանրապետության առաջին պատասխանատուից մինչև շարքային քաղաքացին դնում է պարտավորության փակ՝ լինել անձնազոհ ու նվիրյալ: Եվ այդ թող հիմնավորված լինի մեր հավատքով: Արա, սիրելիներ, իմ ուխտի հետ միասին իմ աղաչական խոսքը կամ պատգամը ձեզ, ընդունեցեք և հավատացեք, որ ազատությունը պայմանավորված է Աստուծո շնչով, այնպես, ինչպես Միքայել Նալբանդյանն է ասում.

*Ազատն Աստված այն օրից,*
*Երբ հաճեցավ շունչ փչել,*
*Իմ հողանյութ շինվածքին*
*Կենդանություն պարգևել:*

Ազատությունը, այո՛, պայմանավորված է Աստծո շնչով. և ազատությունը պայմանավորված է զոհողությամբ ու անձնուրացությամբ: Պետք է լինենք զոհվելու պատրաստ և անձնուրացությամբ պատրաստ, որպեսզի այդպիսով նաև կարողանանք հասնել և խաչակից լինել Քրիստոսին, ինչպես շարականագիրն է ասում.

*Որք զանձինս իւրեանց Քեզ. Հայր, ընծայեցին*
*Եվ Որդւոյ քոյ Քրիստոսի եղեն խաչակիցք:*

Չկա դժվարություն անձնազոհության մեջ: Եթե զոհվես, խաչակից ես Քրիստոսին և հասնում ես երկնքի արքայության: Սա ազատության եկեղեցական ընկալումը:

Սիրելիներ, ինչպես ասացի, այսօր ուխտի օր է ինձ համար: Թող այս տարին ամբողջությամբ լինի ուխտի օր այս հրաշալի Տաճարի կառուցման 1700-ամյակի առթիվ: Այս տաճարը նախօրինակն է բոլոր հայ տաճարների:

Աղոթենք առ Բարձրյալն Աստված, որ անսասան պահի այս Տաճարը, աշխարհով մեկ ցրված հայ ժողովուրդը հավատարիմ պահի այս Տաճարին և նրա արժանավոր գահակալին՝ Գարեգին Բ առաքելաշավիղ Հայրապետին: Մենք թող ժամանակի ընթացքին չպայմանավորենք մեր հավատքը մեր Աստծո և ազգի նկատմամբ ժամանակավոր, ցուցե և ժամանակավրեպ երևույթներով, այլ այն պայմանավորենք հայ ժողովրդի 1700-ամյա լուսավորչաշավիղ պատմությամբ:

Եղել է այս Տաճարը և գնում է դեպի հավիտենականություն: Հայ ժողովրդի ապրելու համար այս Տաճարը բաբախող սիրտ է: Ուր հա՛յ կա և իր սրտում զգում է բաբախումը այս Տաճարի, նա, ուրեմն, կենդանի՛ է և ապրում է որպես հայ: Սա, սիրելիներ, իմ խորհուրդը, իմ աղաչանքը, իմ խնդրանքը և պատգամը ձեզ բոլորիդ:

Աղոթենք առ Բարձրյալն Աստված, որ Տերը շարունակի անսասան պահել Կաթողիկե այս Տաճարը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, երկար կյանք և արևշատություն պարգևի Հայոց Հայրապետին. ամեն:

# Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐԵՂԱ ՏՈՆԻԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՈՆԻՆ

(29 մայիսի 2003 թ.)

*«Սա է որ ի գերեզմանէն յարեաւ եւ աներեւոյթ զօրութեամբ եւ վերիամբարձեալ փառօք գայ առ Հայր՝ Տէր կարող ի պատերազմի».*
*«Սա է որ հարություն առավ գերեզմանից, ավերեց դժոխքը և վերիամբարձյալ փառքով գնաց Հոր մոտ՝ Տերը կարող պատերազմի»:*
(Շարակնոց)

«Ես հաղթեցի աշխարհին», որպես ավարտը իր առաքելության՝ այս վերջին խոսքերը հնչեցին Օրհնյալի շրթներից: Իր երկրավոր կյանքի պայքարը մարմնավորող այս խոսքերով կարծես մի հաղթարշավի համեստ վերջնահանդես էր պատրաստել հաղթության նշանի խաչափայտին գամված Աստծո Որդին:

*«Խաղաղություն եմ թողնում ձեզ, իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ, որ տարբեր է այս աշխարհի տված խաղաղությունից, մի խռովվեք և մի վախեցեք»(Հովհ. ԺԴ 27):*

Մտամոլոր և սրտաբեկ առաքյալներին սակայն պանշում էր թերահավատ այն միտքը, թե ո՞վ էր այդ Օրհնյալը, որի խաղաղության ու սիրո մարգարեական խոսքը քաղցր մանանայի պես ճաշակեց իրենց քիմքը, պայծառացավ ականջալուր միտքը՝ իմաստությամբ Սողոմոնի, Ավետարանազգամ խոսքերով Եսայի մարգարեի և երգով Դավթի, սրտերն ու հոգիներն ականատես դարձան Պայծառակերպությանն ու երկնային զորաց գնդերի փառաբանությանն ու երկրպագությանը:

Դեռևս հազարամյակներ էլ պիտի պահանջվեն, որ մենք՝ մարդ արարածներս, փորձենք նկարագրել փոխան խաղաղության՝ փազնապած առաքյալներին, որոնք, Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը սրտերում ծրարած, շտապում էին Գալիլեա, որտեղ ժամադրել էր նրանց Հիսուս:

«Խորհուրդն մեծ և սքանչելին» Իր հարուցյալ մարմնով աշխարհային քառասնօրյա հրաժեշտի օրերն էր ապրում Իր փոքր աճու հոտի հետ, երկնային խաղաղությունն էր հովանի դարձրել՝ որպես ջրհեղեղից հետո հաշտության ուխտի կամարակապ ծիածան, Նոր Ուխտով ապրելու վերջին պատգամներն էր փոխանցում առաքյալներին՝ հայտնվելով Երուսաղեմում, Էմմավուսի ճանապարհին, Գալիլեայում, Տիբերիայի լճի ափին.... մինչև Ձիթենյաց լեռ:

Երուսաղեմի պարիսպներից դուրս, Ոսկե քարակերտ դարպասներին դեմառդեմ, մի բարձրունք է խոյանում, կարծես՝ բաց կանաչագույն թավիշով զգեստավորված: Ձիթենյաց ծառերով առատ սրբավայրը դեռևս ունի երկհազարամյա բնակիչներ, որոնք սրբատեղիներում հնչող աղոթքներին ու ծեսերին միախառնում են մեղմ թափահարող իրենց ճյուղերը որպես ականատես վկաներ՝ պատմելով Քրիստոսի հրաշափառ Համբարձման մասին, ուր Աստծո Որդին իր ոտքերի վերջին հետքը թողեց աշխարհի վրա և փառքով համբարձվեց երկինք՝ բազմելով աջ կողմը Հայր Աստծո:

Շարականագրի օրհներգությունը փորձում է մեզ ներկայացնել Քրիստոսի հրաշափառ Համբարձումը՝ ասելով. «Զարհուրեցին երկնային իշխանությունները՝ տեսնելով վերևքը Քո, Քրիստոս, խումբ առ խումբ սարսափած կրկնում էին՝ ո՞վ է սա՝ փառքերի Թագավո-րը»:

Դու ես փառքերի Թագավորը և Տերը զորությունների: Ոսկե ուռից հարված լուսե շիթն է առաջնորդում մեզ 1700 տարիներ շարունակ. զարկից կերտվածքով տաճարի լուսե կա-մարակապը թևածել է հայոց ազգին, որ ունի տեսիլք՝ «Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա»: Համբարձումից հետո երկնային զորաց լույսի փառքով իջար և օրհնեցիր հայոց երկիրը Քո փրկարար խորհրդով: Հայտնվեցիր Հայոց Հայրապետին՝ Լուսավորչին մի ողջ ազգի, որը Դեկտոսի նման չայլայլվեց Պայծառսուկերպությունիցդ, այլ խոհեմորեն զորձեց անտառյան հավատքի ուժով՝ կերտելով Միածնաէջ այս Սուրբ Տաճարը և հաստատելով Հայրապետական Սուրբ Աթոռը Էջմիածնի:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին այսօր, տոնախմբելով Համբարձման տոնը, իր Տիրավանդ խորհրդին միախառնել է նաև հիշատակը փոխադրության Հայոց Հայրապետական Աթոռի՝ Սսից Սուրբ Էջմիածին 1441 թվականին, երբ իմաստուն վարդա-պետների և մեծանուն հայ իշխանաց ազգային նախանձախնդրությամբ Հայրապետական Աթոռը վերահաստատվեց Տերունակոխ Հայոց Սուրբ հողի և Աստվածահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս երկնակերտ տաճարում:

Կյանքի հազարամյա փորձն է հայ ժողովրդին ուսուցանել, թե «Զամենայն ազգս Հայոց կապեալ կա ի վերայ աջոյն Սրբոյն Գրիգորի եւ Սրբոյ Էջմիածնի»: Պատմության անողոք ալեկոծությունը աշխարհասփյուռ է դարձրել մեր ժողովրդին, սակայն կրկին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է, որ Լուսավորչի կանթեղի լույսով՝ որպես անսպառ փարոս, իր շնոր-հազարդ Գահակալի ջահակրությամբ հովվում է ընտրյալ հոտը Միածին Որդու:

*«Ուր մարմին է անդ եւ արծուիք ժողովեսցին». (Որտեղ մարմինն է, այնտեղ էլ արծիվներն են հավաքվում)* (Ղուկ. ԺԷ 37):

Վեհափառ Տեր և Սրբազնակատար Հայրապետ Ամենայն Հայոց, Ձերդ Սրբության սրբապատ կոնդակով այս տարին հռչակել եք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տարի, որի Միածնաէջ Սուրբ Խորանին ծնկադրելու կարոտ ուխտի է գալիս հայաստանաբնակ և սփյուռքահայ մեր ժողովուրդը՝ իր առաջնորդների հանդիսապետութ-յամբ: Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռի Սուրբ Էջմիածնում վերահաստատության, ուստի և նրա արժանավոր և Աստվածընտիր Գահակալիդ տոնն է նաև այսօր: Խոնարհա-բար շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը և աղոթակից ենք ողջ միաբանությամբ այն խունկերամ հոտին, որ ամեն կիրակի Ձերդ Սրբության հրավերով ժողովի է գումարվում Էջ-ման Սուրբ Սեղանի և Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռիդ շուրջ:

«Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէր, փառք Քեզ», որ անկախ հայրենիքի զարուն հովիտներում շարունակում են հնչել համբարձման խաղիկներն ու զուր-ղանները և գունագեղ ծաղիկներից ներշնչված՝ սեր են երգում, վիճակ զցում..., իրենց բախտը կապելով Նախախնամողիդ բարեհաճությանը: Հայ ժողովուրդը՝ որպես ընտրյալ ժողովուրդ, անսասան վեմ է, որի քարայրներում կողք-կողքի հնչում են ժողովրդական երգն ու պարը, ինչպես բաբախող սիրտ, և աղոթքն ու փառաբանությունը՝ որպես հոգի, որոնց ներդաշնակությամբ երաշխավորվում է հավերժի ճամփան:

«Քրիստոսի սէրը եւ խաղաղութիւնն ընդ մեզ, ընդ ամենեսեանս, ամէն»:

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

*ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

## ՀՈՎՍԵՓ ՎԱՅՈՑՁՈՐԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ

Ս. Սահակն ու Ս. Մաշտոցն իրենց «նորագյուտ ուսման աշակերտներին» խումբ-խումբ ուղարկեցին Հայաստանի տարբեր գավառներ՝ ուսուցանելու տեղի բնակիչներին, և պատգամեցին հետևել իրենց օրինակին և «կալ ի նմին կանոնի», այսինքն՝ օգտվել իրենց կազմած ձեռնարկներից[1]:

Նրանց թվում էր նաև Մաշտոցի ավագագույն աշակերտներից Հովսեփը, Վայոց ձորի Հողոցիմք գյուղից: Նա նվիրվեց հայ դպրության գործին, որպես ուսուցիչ «զգաստք, զգուշագույնք հրամանաց»[2] և Ս. Մաշտոցի կամքով եղ հետո նստեց Հայոց Կաթողիկոսական Աթոռին:

Մաշտոցի մահից հետո Հովսեփի պատվերով ու ցանկությամբ եղ Կորյունը գրում է իրենց ուսուցչի Վարքը. «...եկավ հասավ ինձ Հովսեփ կոչված մի պատվական մարդու, նրա աշակերտի հրամանը /այդ անելու համար/... Ուստի և ես, որ բախտ էի ունեցել /նրա/ մասնավոր աշակերտը լինելու, թեպետ և կրտսերագույնն էի /նրա աշակերտների մեջ/ և այդ մեր ուժերից վեր էր...»[3]:

Վենետիկի Մխիթարյան միաբաններից Հ. Պողոս վրդ. Անանյանը Մ. Աբեղյանի թարգմանության «Ուստի և իմ մասնատր աշակերտութեան վիճակ առեալ» այս հատվածի քննությունում գրում է. «Ցիշեալ նախադասութեան ուստի բառը իբր եզրակացուցիչ մակբայ իմաստ մը չունի, մինչդեռ իբր յարաբերական դերանուն պիտի նշանակէ որմէ կամ որուն ձեռքով: Այդ պարագային հարկ է փնտրել յարաբերեալը, որ Կորիւն միշտ յարաբերականէն հետու կը զետեղէ... Ուստի – որմէ յարաբերականը կը վերաբերի Յովսէփ անունին: Իսկ թարգմանութիւնը կամ իմաստը կըլլայ «Որմէ /կամ որուն ձեռքով/ ես ալ աշակերտութեան մասնակիցը /ըլլալու / բախտն ունեցած էի»[4]:

Այնուհետև հետազոտողն անում է հետևյալ եզրահանգումը. «Այսով փոքրիկ մանրամասնություն մը կը ճշտուի Կորիւնի կեանքի պատմութեան մէջ, այսինքն թէ՝ Կորիւն Մաշտոցի աշակերտը եղած է Յովսէփի ձեռքով, քանի որ ան կրտսերագոյն էր և Յովսէփ երիցագոյն աշակերտը»[5]:

Ինչպես հայտնի է, մինչև հայ գրերի գյուտը Վաղարշապատում գոյություն ուներ ասորալեզու դպրոց: Կորյունը հավանաբար սովորում էր այդ դպրոցում, որտեղից եղ հայոց

---

[1] Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխատասիրությամբ Արտ. Մաթևոսյանի, 1994, էջ 93:

[2] Նույն տեղում, էջ 105:

[3] Նույն տեղում, էջ 34:

[4] Հ. Պ. Անանյան, Վարք Մաշտոցի, Վենետիկ, 1964, էջ 12-13 ծն. 14:

[5] Նույն տեղում:

դառնում է Մաշտոցի աշակերտ և Ասո-
գրերի ստեղծման ժամանակ «Յովսէփի ձեռքով»
րիք մեկնած աշակերտների թվում էր[6]:
Ուսուցչի մահվանից տարիներ անց, երբ ավագագույն աշակերտներից շատերը միգու-
ցե ողջ էլ չէին, Հովսեփը ինչո՞ւ է աներկբայորեն դիմում Կորյունին:
Նախ՝ Հովսեփը քաջատեղյակ էր Կորյունի կարողություններին, և երկրորդ՝ նրա օգ-
նությամբ Կորյունը մասնակցել էր հայ գրերի ստեղծմանը: Այնտեղ, ուր Հովսեփն էր, Կոր-
յունը հետևում է նրան, և պատահական չէ, որ տեղապահն անչափ հավատում էր նրա ու-
նակություններին, ու իզուր չէ, որ նրան է վստահում գրել Մաշտոցի կյանքի պատմությու-
նը:

Երկրորդ անգամ Հովսեփ անունը հիշվում է Աստվածաշնչի թարգմանության ժամա-նակ Սամոսատում: Մաշտոցը Հռոփանոսի հետ հայոց նորաստեղծ գրերը վերջնական ձևի բերելուց հետո՝ ձեռնարկում են հունարենից թարգմանությանը, սկսելով Սողոմոնի առակներից. «Ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն»[7]: Եկեղյաց գավառը և Պաղնական տունը Հայաստանի հունական բաժնում էին, ուր ուսուցումը տարվում էր հունարեն լեզվով, այսինքն՝ Մաշտոցի այս աշակերտները քաջ տիրապետում էին հելլեն լեզվին:

Երրորդ անգամ Ս. Մաշտոցի՝ Վրաստանից հայրենիք վերադառնալուց հետո, երբ Ս. Սահակը ու Ս. Մաշտոցը նոր գրերով հայրենի դպրությունը զարգացնելու նպատակով Եդեսիա են ուղարկում իրենց լավագույն աշակերտներից երկուսին, «զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն, ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն՝ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուցեն»[8]:

Նույնն է վկայում և Մովսես Խորենացին. «Ապա եկեալ և առեալ Մեսրոպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և զմիւս ընկեր նմին ի Կողբ գեղջէ, որում անուն Եզնիկ կոչէր՝ առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ»[9]:

Թե՛ Խորենացու Պատմության, թե՛ Կորյունի «Վարքի» բնագրերի կազմողները և թե՛ Մաշտոցի կյանքի և մեզ հասած նրա գրական ժառանգության ուսումնասիրողներն այս Հովսեփին նույնացնում են Հովսեփ Պաղնացու հետ[10]: Սակայն, ինչպես տեսանք թե՛ Կորյունի և թե՛ Խորենացու վկայություններում, Հովսեփ Պաղնացին ընկերն է Հովհան Եկեղեցացու, և նրանք կրթվել են Հայաստանի հունական բաժնում, բնականաբար գիտեին ու հմտացել էին հունարենի մեջ: Իսկ Եզնիկն Արարատյան գավառից էր, նրա հետ հիշվող Հովսեփը ևս Հայաստանի պարսկական բաժնից էր, ուր ուսումը տարվում էր ասորերեն լեզվով: Եզնիկից և նրա ընկերոջից Եդեսիայի հարուստ գրադարաններում թարգմանութ-

---

[6] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 53:

[7] Նույն տեղում, էջ 90:

[8] Նույն տեղում, էջ 99:

[9] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Թիֆլիս, 1913, էջ 341: Այսուհետև՝ Պատմութիւն Հայոց:

[10] Պատմութիւն Հայոց, էջ 385: Կորիւն, Վարք Մաշտոցի, Երևան, 1981, էջ 312: Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 340: Այսուհետև՝ Մ. Օրմանյան. նշվ.աշխ.:

յունները կատարելու համար ամենից առաջ ասորերենի իմացություն էր պահանջվում: Բացի դրանից, թե՛ Կորյունը և թե՛ Խորենացին վկայում են, որ նրանք հունարեն չգիտեին էլ, քանի որ ասորերենից թարգմանությունները կատարելուց հետո միայն ուղևորվեցին Բյուզանդիոն, հունարեն սովորելու, հունարենի մեջ հմտացան ու նոր միայն «կարգվեցին ըստ հելլենական լեզուի» թարգմանիչներ:

Մենք հելլենագետ Հովսեփ Պաղնացու նաև ասորագետ լինելու մասին ոչ մի տեղեկություն չունենք, և բացի այդ՝ հունարենից Աստվածաշնչի թարգմանության մասնակիցը, այդ լեզուն նորից սովորելու կարիքը չուներ: Հովսեփ Պաղնացուն Կորյունը հիշում է մի անգամ ևս, որպեսզի տարբերակի գրքի պատվիրատու Հովսեփից, նրան անվանում է «Պաղանական տնից»:

Եդեսիայում Եկեղեցու հայրերի գործերի ասորերենից կատարված թարգմանությունների մեծ մասն ուսումնասիրողները վերագրում են Եզնիկ Կողբացուն, իսկ թարգմանությունների այն մասը, որոնք «Եղծ աղանդոց»-ի հեղինակի լեզվաոճային բնորոշ հատկանիշները չունեն, համարում են Հովսեփ Պաղնացու թարգմանություններ: Ուսումնասիրությունների արդյունքում բանասերները Եզնիկի գրչի գործ են համարում ինչպես Եդեսիայի եպիսկոպոս Ալիթալայի, այնպես էլ Եվսեբիոս Եմեսացու մեկնությունները[11]:

Եզնիկի հետ Եդեսիա մեկնած Հովսեփին է վերագրվում Եփրեմ Ասորու գործերի, ինչպես նաև Ափիրատ Զգոնի Ճառերի թարգմանությունը, «քանի որ անոնք ալ Եդեսիոյ մէջ թարգմանուած են, բայց չունին Եզնիկի լեզուին յատկանիշները»[12]:

Անշուշտ, ոսկեդարյան թարգմանության առաջին շրջանի գործերի մեջ է մտնում Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական Պատմության» ասորերենից կատարված թարգմանությունը: Այն, ինչպես գրում է Մովսես Խորենացին, Եդեսիայում թարգմանվել է հայրերենի Մեսրոպ Մաշտոցի հանձնարարությամբ. «Եկլէսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ, զոր եւտ թարգմանել երանելի վարդապետն մեր Մաշտոց ի հայ լեզու»[13]:

Եվ իրոք, այժմյան մեզ հայտնի հայերեն տարբերակը հետազոտողները համարում են բնագրից թարգմանված, քանի որ հայերեն թարգմանությունն ու հունական տարբերակը համեմատելիս թեև դրանց երկուսի ոչ ամբողջական լինելուն, խմբագրական, հատվածային տարբերություններ են նկատվում, իսկ «ոսկեդարյան դպրոցի ամենաասորաբան գրվածքի» հայերեն տարբերակի թարգմանության ժամանակն այժմ համարվում է 416-420 թթ.[14]:

Այս թարգմանությունը, ինչպես նաև Եփրեմ Ասորու և Զգոնի գործերը Եզնիկի թարգմանությունը չեն համարվում, մնում է ենթադրել, որ այս գործի թարգմանիչը ևս Եզնիկի ընկերն է՝ Հովսեփը:

Ավարտելով ասորական հայրերի գործերի ծրագրված թարգմանությունները, Մաշտոցի այս երկու աշակերտները անցնում են Բյուզանդիոն՝ հունարեն սովորելու, հունարենի մեջ հմտանալու և Եկեղեցու հունագիր հայրերի գործերը թարգմանելու համար: Ինչպես

---

[11] Հ. Պ. Անանյան, նշվ. աշխ., էջ 295:

[12] Նույն տեղում, էջ 296:

[13] Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 120:

[14] Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, հտ. Ա, Երևան, 1979, էջ 400:

Եդեսիայում, այպես էլ այստեղ նրանք Հովհան Ոսկեբերանի այն գործերը, որոնք նախատեսել էին թարգմանելու համար, բաժանում են իրար մեջ: Ոսկեբերանի «Եսայու Մեկնություն»-ը, ինչպես նաև «Մատթեոսի Ավետարանի մեկնություն»-ը համարվում են Եզնիկի կատարած թարգմանությունները: Այս նույն ժամանակ թարգմանված «Պողոսի Թղթերի մեկնություն»-ը, որ չունի Եզնիկի ոճը, ուստի «մենք կհամարինք, թէ ատիկա կատարուած ըլլայ իր ընկերոջ՝ Յովսէփի ձեռքով», գրում է հայր Պ. Անանյանը[15]:

Կորյունի և Խորենացու վկայությամբ որոշ ժամանակ անց Բյուզանդիոնում Եզնիկին ու Հովսեփին միանում են Ղևոնդը և Կորյունը՝ սովորելու և հունարենի մեջ հմտանալու ու իրենց ընկերներին օժանդակելու, ավարտին հասցնելու համար Եկեղեցու հայրերի հունարենով գրված գործերի թարգմանությունը:

Պատմահայրն ավելացնում է, որ այդ նպատակով նույն խմբին միանում են նաև Հովնան ու Արձան աշակերտները: Նրանք բոլորն էլ վայելում են տեղի Մաքսիմեղիանոս եպիսկոպոսի հյուրընկալությունը, այսինքն՝ ոչ ուշ, քան 431-434 թթ.[16]: Այս ժամանակը միանգամայն համապատասխանում է թարգմանիչների՝ Կոստանդնուպոլում գտնվելու տարիներին: Ստանալով իրենցից փորձառու եղբայրների՝ Հովսեփի և Եզնիկի աջակցությունը, աշակերտները վերադարձան հայրենիք՝ իրենց հետ բերելով աստվածատուր գրքերի «հաստատուն օրինակներ»-ը, սուրբ հայրերի գործերի թարգմանությունները, ինչպես նաև Եփեսոսի ու Նիկիական ժողովների կանոնները[17]:

Կոստանդինուպոլսից բերված այս «ստոյգ օրինակներով» Ս. Սահակը և Ս. Մեսրոպը վերստին թարգմանում են Ս. Գիրքը, քանի որ առաջինները «փութանակի թարգմանութիւն իցէին»: Կորյունի վկայությամբ՝ Սահակ Պարթևն Աստվածաշնչի թարգմանության վերջնական տարբերակը կատարել է Եզնիկի հետ:

Ինչո՞ւ Եզնիկը և ոչ թե Հովսեփը, եթե նա Պաղնացին է, չէ՞ որ նրա օգնությամբ Ս. Մեսրոպը սկսել էր Աստվածաշնչի թարգմանությունը, մի՞թե նրա օգնությունն ավելի շոշափելի չէր լինի, քան Եզնիկինը: Ուրեմն Եզնիկի հետ վերադարձող Հովսեփը Պաղնացին չէր, նա և իր գործընկեր Հովհան Եկեղեցացին ընդհանրապես բացակայում էին Հայաստանի պարսկական մասից:

Երրորդ անգամ Հովսեփ անվանը հանդիպում ենք Ս. Մաշտոցի վախճանվելիս մահճի շուրջը հավաքված աշակերտների թվում. «Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն են այս, առաջնում Յովսէփ, զոր և ի սկզբան գրեցաք, երկրորդին Թադիկ, արք զգաստք, զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն»[18]:

Եվ, վերջապես, չորրորդ անգամ նրա անվանը հանդիպում ենք ուսուցչի մահից հետո հրավիրված մի ժողովի մասնակիցների թվում. «Եւ գլխաւորս, վերակացուս, տեղապահս յայտ արարեալ հարցն կատարեցոց, որոց առաջինն Յովսէփ, գլխաւոր ժողովոյն և երկ-

[15] Հ. Պ. Անանյան, նշվ. աշխ., էջ 262:

[16] Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 100: Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 341: Հ. Պ. Անանյան, նշվ. աշխ., էջ 263:

[17] Կորյուն, նույն տեղում, Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 343:

[18] Նույն տեղում, էջ 105:

րորդն այլ աշակերտ՝ Յովհան անուն, այր իսկ սուրբ, վարդապետասէր և ճշմարտապատում»[19]:

Այսպիսի ճշմարտապատում, ականատեսի շարադրանք է Կորյունի երկը ոչ միայն իր ուսուցիչների, այլև նրանց աշակերտների ու իր դասընկերների մասին, որոնց թվում նաև՝ Հովսեփի:

Ո՞վ էր Եզնիկ Կողբացուն ուղեկցող ասորագետ, հետագայում նաև հելենագետ Հովսեփը:

Երբ Կորյունն ասում է «Յովսեփ, որ վերևում յիշեցինք» և «Յովսէփ, որ սկզբան գրեցինք», երկուսն էլ վերաբերում են «Յովսէփ կոչուած մի պատուական մարդուն»՝ Մաշտոցի վարքը գրել պատվիրողին: «Սկզբում», «վերևում» ասված բառերը չեն վերաբերում տվյալ պարբերությանը կամ էջին, այլ ձեռագրի սկզբին կամ վերևին, ուր պատվիրատուի անունից բացի այլ անուն չի հիշվում: Ի տարբերություն մյուս Պատմագրքերի, ուր պատվիրատուի անունը գրվում էր վերնագրում, Կորյունի գործում պատվիրատուի անունը գրվել է առաջաբանում, որը կարող էր կոչվել սկիզբ կամ վերև: Ձեռագրի մեջ, վերնագրում, միայն գրված է Մաշտոցի անունը, ո՛չ գործի հեղինակի անունը կա, որ սովորաբար ընդունված է ձեռագրերում, ո՛չ էլ պատվիրատուի:

Լուսավորության գործի երախտավորներից մեկն է Հովսեփը, որի մասին տեղեկություններ կան ոչ միայն Կորյունի, այլև Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Մեսրոպ Վայոցձորեցու մոտ:

«Իսկ զաթոռ եպիսկոպոսութեան տեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ նորին աշակերտն Յովսէփ քահանայ Վայոց ձորոյ, ի Խողոցիմք գեղջէ»,- գրում է Պատմահայրը[20]: Նույնն է ասում Ղազար Փարպեցին և իր Պատմության մի այլ տեղում ավելացնում. «Եւ Յովսէփ որ թէպէտ և երէց էր ըստ ձեռնադրութեան, այլ զկաթողիկոսութեան Հայոց զաթոռն ունէր ի ժամանակին»[21]:

Հովսեփ Վայոցձորեցուն որպես «եպիսկոպոս Արարատայ» է անվանում Եղիշեն[22]:

Այս վկայություններում կաթողիկոսին մե՛կ քահանա և մե՛կ եպիսկոպոս համարելը հավանաբար տարակուսանքի տեղիք է տվել: Թերևս դրանով պետք է բացատրել Հովսեփ Կաթողիկոսի ազգակցի՝ Մեսրոպ Վայոցձորեցու բավական ընդարձակ բացատրությունը: Ավարտելով իր «Պատմութիւն սրբոյն Ներսիսի հայրապետին» գործը, ըստ երևույթին համաձայն չլինելով Եղիշեի հետ, Վայոցձորեցին հիշատակարանում գրում է. «Ես՝ Մեսրոպ ազգակից սրբոյն Յովսէփայ երիցու, իմացուցանեմ վասն նորա, զոր ոմանք ասեն եթէ եպիսկոպոս գոլով նորա, չէ ճշմարիտ, վասն զի Ղևոնդ երէց Վանանդացի, որ է նահատակակից սրբոյն Յովսէփայ յաւուրսն սրբոյն Վարդանայ, ի ժամ մարտիրոսութեանն ասէր ցՅուսէփ եթէ. Յառաջ մատիր, զի դու աստիճանաւ ի վեր ես: Աստիճան ասաց և ոչ աթոռ,

[19] Նույն տեղում, էջ 106: Հաշվի առնելով, որ «Վարք Մաշտոցի» գործը Կորյունը գրել է առնվազն 440-ական թվականների կեսերին, Գր. Մաքսուդյանն այս ժողովը համարում է 444 թ. հրավիրված Շահապիվանի ժողովը (Հ. Գ. Մաքսուդյան, Ընտրեալք յԱստուծոյ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը, Երևան, 1995, էջ 36: Այսուհետև՝ Մաքսուդյան, նշվ. աշխ.):

[20] Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 358:

[21] Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1982, էջ 100:

[22] Եղիշե, Վասն Վարդանայ և Հայոց Պատերազմին, Երևան, 1989, էջ 45:

գի երիցու կարգ և սարկաւագի և դպրի՝ աստիճան է և ոչ աթոռ: Յորժամ ձեռնադրի եպիսկոպոս կամ կաթողիկոս, յայնժամ լինի աթոռոյն տուն քահանայութեանն... Եւ ի շփոթմանէ ժամանակին ոչ ժամանեաց Յուսէփ ձեռնադրիլ եպիսկոպոս կամ կաթողիկոս»[23]:

Սակայն, եթե Ղևոնդն ու Հովսեփն իրոք «աստիճանաւ երէց» էին, ապա ինչ ի նկատի ունի Ղևոնդը, երբ ասում է. «Յառաջ մատիր, զի դու աստիճանաւ ի վեր ես»:

Մաշտոցը երբ Հովսեփին պատրաստում էր նստեցնել Հայրապետական Աթոռին, ինչպե՞ս կարող էր չմտածել Հովսեփի աստիճանի մասին: Եվ վերջապես, մոտ 8 տարի, թեև պաշտոնապես չճանաչված, նա ղեկավարում էր Հայոց Եկեղեցին, ինչպե՞ս կարող էր քահանայի աստիճանում մնալ:

Բացի այդ, Ավարայրի պատմությունը գրելիս, անշուշտ, Եղիշեն օգտվել է եկեղեցական դիվանում պահվող նյութերից, ուստի ամբողջապես բերում է Հազկերտին և Թեոդոր կայսրին ուղղված նամակները, որոնցից առաջինն սկսվում է «Յովսէփ եպիսկոպոս, հանդերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս», իսկ երկրորդը՝ «Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք» վերտառությամբ[24]:

«Երեցը» նրա մականունն էր, ինչպես, ասենք, Հովհաննես Իմաստասերինը՝ «սարկաւագ», կամ Բաղդասարինը՝ «դպիր»: Հավանաբար նա երեցի կարգ է ունեցել, երբ սկսել է աշակերտել Մաշտոցին և այդ մականունն էլ մնացել է և՛ տեղապահ, և՛ հետո էլ՝ կաթողիկոս լինելու ժամանակ:

Հովսեփ Վայոցձորեցու եպիսկոպոսական ձեռնադրություն ունենալու վրա առանց երկբայելու Օրմանյանը գրում է. «Յովսէփի սեփականուած երէց անունին բուն պատճառն ալ ուրիշ բան չէ, բայց եթէ այն, որ ոչ Լուսաւորչազարմ և ոչ Աղբիանոսեան անձն մըն է նա, այլ Հողոցմեցի պարզ երէց մը, գուցէ առաջին անգամ ըլլալով յանկարծ մինչև կաթողիկոսական գահ կը բարձրանար: Ըստ այսմ երէց կոչումն ալ, մակդիր անունի ձև մը առած է Հողոցմեցի Յովսեփ կաթողիկոսի վերայ»[25]:

Ս. Մաշտոցի հետ հայոց գրերի ստեղծման ճանապարհը, ինչպես նաև գյուտին հաջորդած հայ մատենագրության ստեղծման դժվարություններով անցած Հովսեփ Վայոցձորեցուն այլ բան չէր մնում, քան նորից ենթարկվել ուսուցչի կամքին. Նրա պահանջով «Եւ արդ, յառաջ քան զվախճանելն Սահակայ եպիսկոպոսի, տայր տեղապահութիւն աթոռոյն Սրբոյն Գրիգորի՝ Մեսրոպայ վարդապետին, և Մեսրոպ տայր Յուսէփ երիցու»[26]:

Հովսեփ Վայոցձորեցին հինգ տարի շարունակ որպես տեղապահ ծառայեց Հայ Եկեղեցուն, թեև ինչպես իր նախորդները՝ չճանաչվեց Սասանյան արքունիքի կողմից:

Հայտնի է, որ Արշակունյաց թագավորության վերացումից հետո (428 թ.) Սասանյանները իրենց էին վերապահում ոչ միայն մարզպանների, այլև կաթողիկոս կարգելու իրավունքը: Նշանակված կաթողիկոսները հիմնականում ասորական միջավայրից էին և ժողովրդի ու ավագանու շրջանում մեծ հեղինակություն չէին վայելում:

---

[23] Ե-ԺԲ դարի հիշատակարաններ, կազմ. Արտ.Մաթևոսյան, Երևան, 1988, էջ 59: Այսուհետև՝ Ե-ԺԲ դարերի հիշատակարաններ:

[24] Եղիշե, Վասն Վարդանա, էջ 56:

[25] Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 385:

[26] Ե-ԺԲ դարի հիշատակարաններ, էջ 60:

Գահընկեց արված Սահակ Պարթևը տեղափոխվել էր Բագրևանդի եպիսկոպոսաթոռ և փաստացի շարունակում էր առաջնորդ մնալ Հայաստանի երկու հատվածի համար էլ: Իրենից հետո տեղապահ կարգված Մաշտոցը ևս հաջողությամբ իրականացնում էր առաջնորդի իր կոչումը և մեծ հեղինակություն վայելում: Այլ էր նրա աշակերտի պարագան: Հովսեփ Վայոցձորեցին Լուսավորչի տոհմից չէր, նա միաժամանակ և չէր հովանավորվում պարսկական արքունիքի կողմից: Հովսեփն, իհարկե, ուներ Հայոց արդեն հայ մարզպան Վասակ Սյունեցու հովանավորությունը, սակայն հոգևոր իշխանության ամրապնդման համար անհրաժեշտ էր նաև հզոր նախարարական տների միասնությունը և դաշինքը:

Այսպիսի պայմաններում Հովսեփ Վայոցձորեցու նախաձեռնությամբ 444 թ. հրավիրվում է եկեղեցական ժողով Շահապիվանի հայոց զորակայանում, որին հավասարապես մասնակցում էին նաև հայ ազդեցիկ նախարարական տները: «Կանոնագիրք Հայոց»-ում հիշատակված Շահապիվանի ժողովը նույնացվում է Ասողիկի հիշած «յետ մահուանն Սուրմակայ ժողովեալ հայրապետացն Հայոց` խնդրեալ գտին քահանա ոմն Յովսէփ անուն», ինչպես նաև Կորյունի «Եւ գլխաւորս, վերակացուս տեղապահս յայտ արարեալ հարցն կատարելոց, որոց առաջինն Յովսէփ գլխաւոր ժողովոյ» հիշատակված ժողովների հետ[27]:

Շահապիվանում քննարկվեցին Նիկիական ժողովի, ինչպես նաև 4-րդ դարում ընդունված հայ եկեղեցական կանոնները: Վերստին սահմանված թվով 20 կանոնները պարտադիր էին Հայաստանի երկու հատվածների համար էլ: Իրենց խստությամբ աչքի ընկնող այս կանոններն ամրացնում էին նաև եպիսկոպոսապետի իշխանությունը:

«Շահապիվանն ըստ երևույթին հայոց առաջին մեծ ժողովն էր, որ կաթողիկոս ընտրեց:

Այն նախատիպ ծառայեց Հայ Եկեղեցու հետագա ժողովների համար»,- գրում է Գրիգոր վրդ. Մաքսուդյանը[28]:

10-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ, Հովսեփը որպես կաթողիկոս ութ տարի իրականացրեց իր պարտականությունները, այսինքն` մինչև 452 թ. իր նահատակությունը[29]:

Վայոցձորեցու կաթողիկոսության սկզբնական շրջանում պարսկական արքունիքը աշխատում էր չմիջամտել երկրի հոգևոր գործերին:

Սակայն իրավիճակը փոխվեց 440-ական թվականների վերջին, երբ ուծացման վտանգը կախվեց հայ ժողովրդի գլխին: Ի պատասխան Հազկերտի` Հայաստանն ատրուշաններով ու մոգպետներով լցնելու պահանջի` կաթողիկոսի գլխավորությամբ Արտաշատում հրավիրվեց ժողով` 449 թ.: Ժողովին հավասարապես մասնակցում էին և՛ հոգևորականներ, և՛ աշխարհականներ: Մերժելով պարսկական արքունիքի առաջարկը` ժողովն ընդունեց Պատասխան Թուղթ:

---

[27] Մ. Օրմանյան. Նշվ. աշխ., էջ 377-78: Գր. Մաքսուդյան. Նշվ.աշխ., էջ 36:

[28] Գր. Մաքսուդյան, Նշվ. աշխ., էջ 36: Նույն կարծիքին է նաև Մ. Օրմանյանը, Նշվ. աշխ., էջ 384:

[29] Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 60:

Արտաշատում հրավիրված այս ժողովի և այնտեղ ընդունված Թղթի մասին հիշատակվում է ինչպես Ղազար Փարպեցու Պատմության, այնպես էլ Վարդանանց պատերազմին նվիրված Եղիշեի գործում: Դրանք երկուսն էլ բերված են ամբողջապես և ունեն որոշ խմբագրական տարբերություններ: Փարպեցու մոտ այն անխորագիր է, Եղիշեի մոտ սկսվում է «Յովսէփ եպիսկոպոս, հանդերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս. Միհրներսեհի մեծի հազարապետի արեաց և անարեաց՝ բազում խաղաղասէր մտօք բազմացի ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ արեաց»-ով[30]:

Բովանդակությամբ դրանք նույնն են. Հայաստանը պարտավորվում է կատարել արքունի բոլոր վարչական հրամանները, քանի որ Ավետարանը սովորեցնում է «Ծառայք հնազանդ լերուք մարմնաւոր տերանց ձերոց՝ որպէս Աստուծոյ»: Բայց երբ այդ պահանջը մեր հոգուն՝ քրիստոնեական հավատին է վերաբերում, փոխվում է հայ հոգևոր և աշխարհիկ ավագանու վերաբերմունքն ու տոնը. «Մեր հոգիների փրկության կամ կորստյան հոգսը թող ամենևին ձեզ չանհանգստացնի»,- գրում են նրանք[31]:

Դեպքերի ընթացքը հանգեցնում է Վարդանանց պատերազմին:

Ավարայրի ճակատամարտից (451 թ. մայիսի 26) հետո, մեկ տարի անց, վեց այլ հոգևորականների հետ կաթողիկոսը գերվեց:

Վարդանանց պատերազմի մասին Մ. Օրմանյանը գրում է. «Որչափ ալ Վարդան էր շարժման ոգին, սակայն անոր կազմակերպողն ու վարողները եկեղեցականներն էին և Յովսէփ կաթողիկոս առաջին դերն ունէր ամէն պարագայից, իրեն գլխաւոր խորհրդակից ունենալով Ղևոնդը»[32]:

Ս. Սահակ Պարթևի ավագագույն աշակերտներից է Ղևոնդ Երեցը: Տարիքով և փորձառությամբ ձերբակալված հոգևորականների մեջ ամենատարեցն էր ու հմուտը: Ղևոնդը շարժման ոգեշնչողն էր, նրա խոսքը ազդեցիկ էր, լինեն դա Ավարայրում, թե Տիզբոնի ատյանում: «Զսա (Հովսեփ - Ա. Դ.) զոր տեսանէքս, թէպէտ և մանկագոյն քան զիս տեսանէք տիովք,- ասում է Ղևոնդը,- այլ պատուով կարգեալ էր արժանաւորապէս, և գլուխ է ամենայն Հայոց քահանայութեան»[33]:

Ինչպես հայոց քահանայապետը, այնպես էլ Ղևոնդ երեցն ու մյուս հոգևորականները իրենց «արժանաւորապէս» պահեցին շուրջ երկու տարի տևած տառապալի ընթացքին: Հովսեփ Վայոցձորեցու գլխավորությամբ սուրբ հայրերը գիտակցված գնացին մարտիրոսանալու:

454 թ. հուլիսի 24-ին հանուն հավատքի նահատակված հոգևորականների հիշատակը Հայոց Եկեղեցին պանծացրեց Ղևոնդ Երեցի անվամբ «Սուրբ Ղևոնդեանք» կոչելով, և տոնախմբում է ցայսօր:

---

[30] Եղիշե, Վասն Վարդանայ, էջ 56:

[31] Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 102-103:

[32] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 435:

[33] Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, էջ 188:

*ԳԱՅԱՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ*

# ԽԱԶԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Խազերի երաժշտական նշանակության, նրանց կիրառման և բնույթի մասին գաղափար ենք կազմում շնորհիվ մեր խազագետների ուսումնասիրությունների (Գր. Գապասակալյան, Ե. Տնտեսյան, Կոմիտաս, Ռ. Աթայան, Ն. Թահմիզյան): Խազերի վերծանումը հայ հին մշակույթի դժվար լուծելի հիմնահարցերից է, որի վերջնական լուծումը դեռևս երկար և համառ աշխատանք է պահանջում:

Խազերի զարգացման պատմական ուղին Կոմիտասը բաժանել է երեք շրջանի՝ հին (IX-X դդ.), միջին ( XI-XVI դդ.) և վերջին (XVII-XVIII դդ.)[1]: Այս բաժանումն արտացոլում է խազագրության զարգացման փուլերը և ընդհանրություններ ունի Գ. Ջահուկյանի կատարած հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման հետ՝ հին (V-XI դդ.), միջին (XII-XVI դդ.) և նոր (XVII – մեր օրերը)[2]:

Ընդհանրապես խազերը բազմանշանակ են, ունեն հիմնական և երկրորդական տարբեր կիրառություններ, գործածվում են և՛ համակցված, և՛ անջատ-անջատ: Իր ուսումնասիրություններում, մասնավորապես «Ծարականի խազերի նշանակությունը» հոդվածում, Կոմիտասն առանձնացրել է խազերի որոշակի խմբեր՝

ա) ձայնաստիճանի խազեր,
բ) ձայներանգի խազեր,
գ) զարդախազեր,
դ) ձայնուժի խազեր,
ե) ամանակի խազեր
զ) բանալի խազեր,
է) առոգանության խազեր,
ը) կետադրության խազեր,
թ) ոճական խազեր,
ժ) կապող և զատող խազեր,
ժա) կիսանիշ խազեր[3]:

Ըստ էության՝ Կոմիտասը խմբավորել է շարականի խազերը՝ չնայած նկատի ուներ ընդհանրապես միջնադարյան խազարվեստը: Սակայն մյուս կողմից էլ, թերևս, միանգամայն բնական էր խազերի ուսումնասիրությունն ըստ Ծարակնոցի երգերի, քանի որ նրանց խազագրությունը պարզ էր, իսկ երգերը՝ կանոնական և պարտադիր, և դա նպաստում էր երգերի պահպանողականությանն ու քիչ փոփոխվելուն:

Դեռևս միջնադարում փորձեր են արվել դասակարգել խազ-տերմինները, նրանց գծագրաձևերը և կազմել տարբեր ցանկեր, որոնց իր ուսումնասիրություններում մեծ

[1] Komitas. Le systeme des signes de prosodie de l'Eglise Armenienne, 1914, Փարիզ, ԳԱԹ. Կոմիտասի ֆոնդ, նյութ 668, 669:

[2] Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 35:

[3] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 167:

ուշադրության է արժանացրել Ն. Թահմիզյանը: Այդ ցանկերը երեքն են և իրավացիորեն նրանց կարելի է անվանել «խազագրության արվեստի Այբուբեն»[4]:

Ստորև նշում ենք այդ խազ-տերմինների ցանկը՝ հիմնվելով Ն. Թահմիզյանի հետազոտությունների արդյունքների վրա[5]:

### Ա ցուցակ
### «Անուանք խազից շարականաց»

| | | | |
|---|---|---|---|
| շեշտ | սուր | վերնախաղ | ձակորճ |
| փուշ | թուր | ներքնախաղ | խում |
| բութ | ծունկ | բենկորճ | փաթութ |
| պարոյկ | թաշտ | խոսրովային | քարքաշ |
| երկար | ոլորակ | ծնկներ | հուհայ |
| սուղ | խունճ | էկորճ | զարկ |

### Բ ցուցակ
### «Անուն խազերուն այսոքիկ են»

| | | | |
|---|---|---|---|
| շեշտ | թուր | խոսրովային | հուհայ |
| փուշ | թաշտ | ծնկիկք | զարկ |
| դիր | ծոցբեր | էկորճայ | լերկ |
| բեր | խունճ | ձակորճայ | խաղ |
| քաշ | վերնախաղ | դում | բարձրահարեր |
| գլոր | ներքնախաղ | փաթութ | վերքաշ |
| սուր | բենկորճայ | քարքաշ | միմնաւոր |

### Գ ցուցակ
### «Անուանք եղանակաց ձայնից երգոց, գիտից իմաստնոց»

| | | |
|---|---|---|
| յարեշտ (արաշեշտ) | խածքեկ (հար) | հանգոյց |
| քաշ | խածյե (հարկոճայ) | խունճ |
| ստորադիր | կորճայ | քմազարդ |
| վերադիր | ծոցբեր | առանձնատրոպ |
| վանկ | բազմեղանակ | քմատրոպ |
| կոտ գրեհիկ | ողոմանեակ | ծանրատրոպ |
| խաղ | հարուկ | թագատրոպ |
| դող | ձայնդարձ | (կամ թագավորատրոպ) |

Առաջինը՝ «Անուանք խազից շարականաց», պարունակում է 24 խազ-տերմին և կազմված է XI դարի վերջերին՝ կենտրոնական Հայաստանում: Երկրորդը ներառում է 28 խազ

[4] Ն. Թահմիզյան. Հայկական խազագրության հիմնական նշանների երկու ցուցանակների մասին, ՊԲՀ, 1968, N 1, էջ 4:

[5] Ն. Թահմիզյան. Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, ԲՄ, Երևան, 1977, N 12:

և կրում է «Այս է անուն ձեներուն» կամ «Անուն խազերուն այսոքիկ են» խորագիրը: Այս ցուցակը կազմվել է XIII դարում Կիլիկիայում: Երրորդը պարունակում է 23 խազ, որոնք *«արուեստաւոր»* տերմինով բնորոշվող բարդ խազեր են և կրում են «Անուանք եղանակաց ձայնից երգոց, գիտից իմաստոնց» խորագիրը: Այս ցուցակի կազմումը կապված է Ներսես Շնորհալու անվան հետ: Այդ բարդ խազերը ցույց են տալիս մեղեդիական ամբողջական դարձվածքներ:

Ի դեպ, քանի որ վերոհիշյալ խազերը կիրառվել են միջնադարյան Հայաստանի տարբեր վայրերում, տարբեր ժամանակներում և տարբեր նկատառումներով, ուստի, բնականաբար, կարելի է ենթադրել, որ նրանք ունեցել են գործածության խառը ձևեր:

Երաժշտագետ Վ. Սամվելյանը «Հայկական խազերի ուսումնասիրությունը և նրա արդի վիճակը» հոդվածում փորձել է բացատրել որոշ խազերի արտահայտած իմաստները: Օրինակ, նա գտնում է. *«Էկորճը խուսրովային*-ի մի ուրիշ ձև է, *բենկորճը* համապատասխանում է լատիներեն Porrectus flexus–ին և նման է բյուզանդական γοφιομα բարձրացող խազին: Նախկինում այն եղել է առոգանության նշան *թաւ*, իսկ *ծակորճն* իր նշանակությամբ զուտ հայկական է, որի նմանը չկա ո՛չ լատինական, ո՛չ էլ հունական խազերի մեջ»[6]:

Խազերի իմաստային մեկնաբանությանն են անդրադարձել նաև Կոմիտասը, Ռ. Աթայանը, Ն. Թահմիզյանը: Ուսումնասիրելով խազերը պատմական զարգացման մեջ՝ նրանք նշել են խազագրերի բազմանշանակ լինելու փաստը, քանի որ կարող են որոշակի շրջանակներում ունենալ տարբեր իմաստներ: Այսպես, *ձայնդարձը* սերտորեն առնչվել է *երկար*–ի հետ, խառնվել նրան շարակնոցներում և փոխարինվել *պարոյկ*–ով կամ *խաղ*–ով: *Երկար*–ի գործածության հին առոգանական ձևի մնացորդներից է նաև *յարեշտը* կամ *արաշեշտը: Ստորագիրը* կապող նշանակություն ունի և համապատասխանում է liga–ին, քանի որ նրա օգնությամբ կապվում են իրար կից տարբեր խազեր, իսկ նրան հակառակ՝ *վերադիր*–ը զատող, անջատող է: Հարկ է նշել Կոմիտասի միտքն այն մասին, որ «կապող և զատող խազերն ուրիշ բան չեն, բայց եթե, համապատասխանաբար, «ստորադիրն» ու «վերադիրը»»[7]:

Հաճախ որևէ բայի հրամայական ձևը կիրառվում է իբրև տերմին՝ նպատակ ունենալով թելադրել պահանջվող գործողությունը, ինչպես՝ *յետ ձգէ, կըտուէ, սրէ, վերցո, դիր* և այլն: *Կըտուէ*-ն կըտուեմ բայի հրամայական եղանակն է և նշանակում է «կտրել զաւելորդ ոստս տնկոց, հատանել»:[8]

Վաղ շրջանին բնորոշ խազ-տերմինները, ժամանակի ընթացքում պահպանելով իրենց գործնական նշանակությունը, հանդես են գալիս այլ անվանումներով: Այսպես՝ *ոլորակ*–ից սերել է *ծոցբերը*, որ ենթադրում է ձայնի ալիքաձև շարժումների և ոլորումների կատարումը: *Խունձը* ներկայացնում է ձայների վարընթաց շարժում և հետագայում դառնում *ջերեփ:* Շարժման ուղղությամբ և չափական արժեքով *խունձ*-ին մոտ է նաև *ծունկը*, իսկ *ծնկներ* –ը *ծունկ*–ի կրկնապատկումն է (տևողության առումով): Նրանցից է սերում *բազմեղանակ*–ը՝

[6] Վ. Սամվելյան. Հայկական խազերի ուսումնասիրությունը և նրա արդի վիճակը. «Տեղեկագիր», Երևան, 1948, N 6, էջ 67:

[7] Կոմիտաս. Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 166-167:

[8] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. Ա:

ցույց տալով տևողության ժամանակում: *Բարձրահարեր* տերմինը Նոր հայկազյան բառարանում բացատրվում է *«բարձրահնչող»* բառանձնով[9]: Ի դեպ, «հարկանել» բայը գրաբարում բազմիմաստ է, ինչպես՝ «բախել զքնար, զտաւիղ», «հնչեցուցանել զփող»: Ուշագրավ է նաև ճաք արմատից գոյացած «հարիչ» բառը՝ կնտնտոցի նշանակությամբ:

Մեծ մասամբ խազանունները ինքնին խոսուն են և կարող են վճռական դեր խաղալ նրանց գործնական նշանակությունն ըմբռնելու խնդրում: Սակայն հնարավոր չէ մեկնաբանել բոլոր խազանունները, նրանց գործառույթները, մանավանդ վերափոխված ձևերը՝ կապված լրացուցիչ կամ օժանդակ ամենատարբեր նշանների՝ կետերի, զույգկետերի գործածության հետ: Ձևավորվելով իբրև երաժշտական արտասանության զանազան երանգները վավերացնելու ձևեր, մեր կարծիքով, խազանունները ձեռք են բերել տերմինային արժեք և վերածվել այս կամ այն չափով ավարտուն մի համակարգի:

Նրանք անխզելիորեն կապված են միջնադարյան երաժշտարվեստի գիտական հետազոտությունների հետ: Ուստի հայ երաժշտական տերմինաբանության վաղ շրջանի քննությունը չի կարելի պատկերացնել առանց խազանունների ուսումնասիրության: Այդ բառ-տերմինները, որոնք գործածվում են նեղ մասնագիտական ոլորտում և հասու չէին ոչ մասնագետներին, և՛ գործառական, և՛ բառակազմական-կառուցվածքային բնութագրերով նույնանում են երաժշտական տերմինային համակարգի ընդհանուր բնութագրին: Մյուս կողմից էլ՝ էականորեն տարբերվում են թերևս նրանով, որ արտահայտած երաժշտական իմաստներն ըմբռնելու համար հաճախ մնում է միայն հիմնվել ենթադրությունների վրա:

Պատահական չէր, որ միջնադարյան Հայաստանում արդեն տարբերակվել են «արուեստի», «չափով» ձայներ, իսկ Դավիթ Փիլիսոփան մարդկային ձայնը համարել է «պատկանատր»՝ ներդաշնակ, որը ձեռք է բերվում կրթությամբ: Հետաքրքիր է, որ «քերթողական արուեստի» սկզբնավորման հարցը քննելիս նա գտնում է, որ այն առաջացել է երաժշտությունից: Այդ կապակցությամբ բերում է երկու կարծիք. ոմանք «քերթողական արուեստն» սկսում են ձայնից, ոմանք էլ կապում են գրերի հետ: Դավիթ Փիլիսոփան ընդունում է այդ երկուսի համակցումը[10]: Ուրեմն եղել է ուսմունք, եղել են դիտարկումներ, եղել է նաև որոշակի միտում՝ որոշել բարձրության, ուժի, երանգի և տևողության տեսակետով նրա տարբեր դրսևորումների քնքուշ հատուկ հնչողության որակն ու բնույթը: Այդ են վկայում նաև Հովհ. Երզնկացու ուսումնասիրությունները: Նա իր «Մեկնութիւն քերականին» աշխատության մեջ տարբերել է «մեղմապէս»,«հանդարտաբար», «յորդեալ» ձայները, որոնք զանազանվում են որպես «մեծ ու փոքր», «ծանր ու թեթև», «սուր և բութ»[11]:

Հայ հոգևոր երգչային կամ ձայնային (վոկալ) արվեստն անցյալում հիմնված է եղել տղամարդկանց ձայնի վրա, ուստի հիշատակված տերմինները վերաբերում են *տենոր, բարիտոն* և *բաս* ձայնածավալներին:

Իր ուսումնասիրություններում Ն. Թահմիզյանն առանձնացրել է միջնադարյան տեսական գրականությունից վերցված երգչային կամ ձայնային արվեստին վերաբերող տեր-

---

[9] Նույն տեղում:

[10] Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատանքները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 126-127:

[11] Հովհ. Երզնկացի, Մեկնութիւն քերականին, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N 2329, էջ 44բ, 72ա, 73ա:

միՃների որոշակի ցանկ: «Խոսքը «Եօթնագրեանը» ձեռագրի մասին է,- գրում է նա,- որի երաժշտական և խազագիտական հատվածներում նշվում է ա, է, ի, ո ձայնավորներով եղանակելու մասին»[12]: Այդ տերմիններն են.

| Ա | | Բ | |
|---|---|---|---|
| բարձր | կամաց | բամբ | ծածուկ |
| դարձ | յէտ ձգէ | բարակ | հանդարտ |
| դիւր | շատ | բաց | մեծ |
| զարկ | անուշ | բութ | մեղմ |
| թանձր | չոր | գողտր | միջակ |
| յայն | պինդ | երկար | յորդեղակ |
| լար | սուր | գիլ | ողորկ |
| ծամ | վեր | թուլ | սուսկ |
| ծանր | ցած | թեթև | սուղ |
| կակուղ | քաշ | թուլլ | փոքր, քաղցր |

Նշված տերմինները վերաբերում են կատարման ընթացքում առանձին ձայների կամ մեղեդիների հնչողության բնույթի նպատակային փոփոխություններին: Ինչպես արդեն նշել ենք, այդ տերմինների երաժշտական իմաստները չեն համապատասխանում այդ բառերի բառարանային նշանակություններին: Նրանցից մի քանիսը՝ *զարկ, սուր, յէտ ձգէ, քաշ* նաև որոշակի խազանուններ են: Գործածված տերմինների մեծ մասը հայերեն արմատական բառեր են, որոնց նշանակությունը այժմ դժվար է պարզել, քանի որ միջնադարյան կատարողական արվեստի տեսական խնդիրները լուսաբանված չեն անգամ համաշխարհային երաժշտագիտության էջերում, իսկ եթե ինչ-որ բան էլ արված է, ապա դա վերաբերում է լատինալեզու երգեցողությանը:

Միջնադարում կազմավորվել էին համազգային նույն, բայց ոճականորեն տարբեր դպրոցներ՝ կիլիկյան և հայաստանյան, իրենց համալսարաններով, կից Տաթևի, Մեծոփի, Սուխարի վանքերին: Խազարվեստն, ըստ էության, այլևս չէր կատարելագործվում, բայց շարունակում էր մնալ կենդանի: Ուշ միջնադարում խազագետների քանակը պակասել էր: Կարևոր էր ոչ թե նախորդ խազավոր ձեռագրերը զարգացնել ու կատարելագործել, այլ բնագրերն ընթերցել կարողանալը և սովորեցնելը, հիմնականում երաժշտական և ոչ թե քերականական կիրառության գործառույթները պարզելը: Մի իրողություն, որը գոյատևեց մինչև XVIII դարի վերջերը:

XVIII-XIX դարերում կազմավորվել էին հայ հոգևոր երաժշտության հինգ մեծ ճյուղեր՝ Էջմիածնի, Կոստանդնուպոլսի, Նոր Ջուղայի, Երուսաղեմի և Վենետիկի: «Միանգամայն բնական է, որ այդ տարբեր վայրերում խազագրերին տարբեր նշանակություններ են հատկացվել, և տարբեր կենտրոններում խազավոր միևնույն ձեռագրերը կամ բնագրերը

[12] Ն. Թահմիզյան, Տաղ-խազերի մասին, ՊԲՀ, Երևան, 1984, N 4, էջ 135-136:

տարբեր կերպ են եղանակվել՝ տեղական տվյալ ավանդույթի համաձայն»[13]: Ուստի ուշ միջնադարում արդեն խազերով նշանագրելու ու կարդալու արվեստի ճգնաժամ էր սկսվել:

Այդ ժամանակաընթացքում էր, որ հայ հոգևոր երաժշտությունն օտար ազդեցություններից փրկելու համար Կ.Պոլսում Հ. Լիմոնջյանի կողմից ստեղծվեց հայկական նոր ձայնագրության համակարգը:

Ընդհանրապես ակնհայտ էր պոլսահայ երաժիշտների մեծ վարպետությունը թե՛ կատարողական գործունեության, թե՛ երաժշտության տեսության հարցերի ուսումնասիրության ասպարեզում: Անցնելով մասնագիտական լավ դպրոց՝ նրանք տիրապետում էին ոչ միայն հայկական եկեղեցական ութձայնի ուսմունքին, այլև մուղամաթի արվեստին: Այսպես, Կոմիտասը, նշելով հայկական ութձայնի ուսմունքի և արաբապարսկական լադային համակարգի ընդհանրությունները, կազմել է համեմատական աղյուսակ.

Առաջին ձայն - Էֆթյուգյահ
Առաջին կողմ – Սեգյահ
Երկրորդ ձայն – Հուսեյնի
Երկրորդ կողմ - Աջեմ
Երրորդ ձայն – Հիջազ
Երրորդ կողմ – Սաբա
Չորրորդ ձայն – Նավա/Սպահան
Չորրորդ կողմ – Ուշշաք[14]

Նույն սկզբունքով համեմատական աղյուսակ է կազմել նաև Գր. Գապասակալյանը՝ նկատի ունենալով հայոց և հունաց ութձայների համակարգը.

Առաջին ձայն – Պրոտոս
Երկրորդ ձայն – Տրիտոս
Երրորդ ձայն –Պլայիոս դու պրոտու
Չորրորդ ձայն – Վարիս
Առաջին կողմ - Դեֆդերոս
Երկրորդ կողմ – Տետարտոս
Երրորդ կողմ – Պլայիոս դու դեֆդերու
Չորրորդ կողմ– Պլայիոս դու տետարտու[15]

Ինչպես իրավացիորեն նշել է Ալ. Շահվերդյանը. «Պետք չէ մեծ նշանակություն տալ հայ երաժիշտների օտար, տվյալ դեպքում պարսկերեն, արաբերեն կամ հունարեն տերմինաբանությունը օգտագործելու փաստին, քանի որ այն չի խանգարել հիրավի ազգային արվեստ ստեղծելուն»[16]:

Հայ-բյուզանդական, հայ–հունական, հայ–լատինական, հայ– պարսկական երաժշտական կապերը հաստատվել էին հնուց ի վեր և բնական է, որ նրանցից յուրաքանչյուրն իր ուրույն կնիքն է դրել հայ երաժշտարվեստի և նրա տերմինաբանության վրա: Արևելյան երկրների և Հայաստանի միջև մշակութային ընդհանրությունները, հատկապես երաժշտության բնագավառում, երբեք կասկած չեն հարուցել: Այդ առումով ամենախոսունը *մակամաթն* է, որ հայ ժողովրդական մասնագիտացված երաժշտության ժանրային համա-

---

[13] Ն. Թահմիզյան, Խազագրության արվեստն իր պատմական զարգացման մեջ, Երևան, ՍՄ, 1977, N 12, էջ 110:

[14] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 114:

[15] Գր. Գապասակալյան, Գիրք երաժշտական, Կ. Պոլիս, 1803, էջ 69-70:

[16] А. Шахвердян. Очерки по истории армянской музыки XIX – XX вв., М., Музгиз, 1959, стр. 43:

կարգ է մտել իբրև արվեստ: *«Մակամաթ* կամ *մակոմաթ* տերմինները մեկնաբանվում են իբրև Միջին կամ Մերձավոր Արևելքի ժողովուրդների մոտ այդ արվեստի դրսևորումների ընդհանուր անվանում: Այդ տերմիններով են արտահայտվում նաև տարբեր վայրերում նրա տեղային դրսևորումները»,- նշել է Լ. Երնջակյանը[17]:

Հայ երաժշտության բառապաշարի մեջ են մտել *արևելյան լադային հնչյունաշար, արևելյան լադեր, մակամ, մուղամ, դաստգահ, փերդե, ավազե, գուշե, ուսուլ* և բազում այլ տերմիններ, այդ թվում և՝ նվագարանների անվանումներ, ինչպես՝ *գոս, զուռնա, թամբուր, թառ, դավալ, նաղարա, չաշտա, ռեբաբ, դուդ, սազ, սանթուր, քանոն, քեմանի, քամանչա* և այլն:

Հայաստանում վաղուց ի վեր գործածվել են տարբեր մուղամներ, որոնցից հիշատակելի են հետևյալները՝ *ռաստ, չարգահ, հիջազ, շուշթար, շուր, սահարի* և այլն: Որպես պարսկալեզու կամ թուրքալեզու բանաստեղծների տեքստերով ստեղծված ձայնային (վոկալ) և նվագարանային ստեղծագործություններ՝ մուղամները այժմ էլ լայն կիրառություն ունեն Մերձավոր և Միջին Արևելքի մի շարք երկրներում: Սակայն Հայաստանի երաժշտական կյանքում կայուն տեղ է գտել միայն նվագարանային մուղամը: Ոչ բնույթով, ո՛չ էլ թարգմանաբար հայերը չեն ընդունել ձայնային (վոկալ) մուղամը: Դա է նկատի ունեցել Կոմիտասը, երբ գրել է. «Հայերն անտարբեր չէին մշակույթով իրենց հարող ժողովուրդների երաժշտության նկատմամբ, հաճույքով իրենք էլ էին կատարում նրանց գործերը, բայց, անպատճառ, այդ ժողովուրդների լեզվով՝ թույլ չտալով իրենց երգերին խառնվել օտարների հետ»[18]:

Անշուշտ Հայաստանի միաձայն (մոնոդիկ) երաժշտության ավանդական ժանրերի համակարգում *մուղամաթի* արվեստը եղել է բավական գործուն: Այդ են վկայում ժամանակին գրված արևելյան երաժշտության ամենատարբեր ձեռնարկները, որոնք թե՛ տեսական դրույթների պարզաբանումով, թե՛ որոշակի տերմինաբանությամբ հաստատուն տեղ ունեն հայ երաժշտարվեստի պատմության մեջ[19]: Ինչպես նկատել է Վ. Լուկոնինը, «Արևելյան արվեստ հասկացությունը չունի ո՛չ խիստ աշխարհագրական, ո՛չ էլ ճշգրիտ ժամանակային սահմանումներ: Բարերար ազդեցություն գործելով հարևան և հեռավոր երկրների վրա և միաժամանակ փոխառելով նրանց նվաճումները՝ նրանք նս հազարամյակների ընթացքում զարգացրել են իրենց մշակույթը»[20]:

Սկսած XVI դարից մինչև XIX դարի առաջին կեսը հայ երաժշտարվեստն ամբողջությամբ տուրք էր տալիս «արևելյան» կոչված ճաշակին՝ Արևելահայաստանում պարսկական և Արևմտահայաստանում (մասնավորապես Պոլսում)՝ թուրքական հակումով: Այս ամենին ավելանում է նաև աշուղական արվեստի բուռն զարգացումը, որը, լինելով հին պատմական ժամանակաշրջանի մասնագիտացված արվեստ, նոր ժամանակներում դառնում է ավելի քան ժողովրդական: Ուստի զարմանալի չէր, որ կարծիքներ էին արտահայտվում

---

[17] Լ. Երնջակյան, Հայ–իրանական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1991, էջ 8:

[18] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 26:

[19] Հ. Այվազյան, Արևելյան երաժշտություն, ձեռագիր, ԳԱԹ; Հ. Հովհաննիսյան, Հայոց երաժշտության պատմություն, ձեռագիր, ԳԱԹ; Тамбурист Арутин, Руководство по восточной музыке, Ереван, 1968:

[20] В. Луконин, Искусство древнего Ирана.- В кн. История иранского государства и культуры, М., Наука, 1971, стр. 120:

հայերի՝ ազգային երաժշտություն չունենալու մասին: Այսպես՝ 1910 թ. «Տաճար»-ում լույս տեսած Հ. Թիրաքյանի «Հայկական երաժշտություն» հոդվածում մասնավորապես նշվում է. «Հայկական ըսուած երաժշտութիւնը զուտ աղոտ արձագանքն է պարսկա-արաբականին»[21]: Այս տեսակետի դեմ պայքար է ծավալել Կոմիտասը՝ գրելով. «Մեր երաժշտությունն էլ իր ամբողջ ազգային ոգով, ոճով նույնքան արևելյան է, որքան պարսիկ-արաբացին, բայց ո՛չ պարսիկ-արաբականը մերն է, ո՛չ էլ մերը նրա մի մասը, այլ խնդիր է, թե նրանց ազդեցությանն է ենթարկվել, միշտ այնպես, ինչպես մեր լեզուն հնդեվրոպականի մի ճյուղն է»[22]:

Իրոք, արտաքին ազդեցությունները երաժշտական մշակույթի, նրա ձևավորվող և զարգացող տերմինաբանության վրա բավական ուժեղ էին:

Նոր շրջանում, բնականաբար, ավելի են ուժեղանում թարգմանների և խոսվածքների տարբերությունները, աճում է լեզվական տարբերակների անմիօրինականությունը: Այս ամենի փայլուն ապացույցն են ժամանակի ժողովրդական և գուսանաաշուղական երաժշտության երգերը՝ բազմալեզու և խառը՝ միահյուսված արևելյան եղանակներով:

Հայ երաժշտարվեստին առնչվող գիտական անվանումների ուսումնասիրության շրջանակները բավականին ընդգրկուն են, քանի որ չեն սահմանափակվում միայն հայ հին ու միջնադարյան մատենագրությամբ, այլ առնչվում են արևելյան և հատկապես արևմտա-եվրոպական երաժշտության հարուստ ավանդույթներին: Այդ առումով հետաքրքիր են XIX դարի տարբեր ժամանակահատվածներում լույս տեսած երաժշտության ուսուցման մի շարք դասագրքեր: Դրանցից առաջինը Ն. Թաշչյանի դասագիրքն է, որ լույս տեսավ Վաղարշապատում և կոչվում էր «Դասագիրք եկեղեցական ձայնագրության հայոց»: Երկու տարի անց, 1876 թ., Թիֆլիսում լույս տեսավ Եզնիկ քահանա Երզնկյանցի «Հայկական ձայնագրության դասագիրքը»: Այս երկուսի համեմատությամբ առավել ընդարձակ էր Ա. Բրուտյանի «Դասագիրք հայկական եկեղեցական ձայնագրության» գիրքը, որը լույս տեսավ 1890 թ.: Այս դասագրքերը կարևոր էին նրանով, որ ունեին տեսական և գործնական բաժիններ և, բնականաբար, ենթադրվում էր նաև երաժշտական տերմինաբանության գործածություն, երաժշտական ամենատարբեր հասկացությունների բացատրություն: Իսկ 1882 թ. Վենետիկում լույս տեսած «Սկզբունք ձայնական երաժշտութեան եւրոպացւոց ի պէտս վարժարանաց» դասագիրքը հետաքրքիր է նրանով, որ վերջում բերված է գործածական տերմինների բառարան՝ իտալերեն–հայերեն և հայերեն–իտալերեն բաժիններով: Դա մի յուրօրինակ փորձ էր երաժշտական տերմինների հայացման ուղղությամբ: Այստեղ կարելի է գտնել քիչ թե շատ հաջողված տերմիններ, որոնք ունեցել են անգամ գործածություն, ինչպես՝ *հուշիկ* (Adagio), *վերջ* (fine), *հզոր* (forte), *չափավոր* (moderato), *մեղմ* (piano), *հիմնաձայն* (tonica) և այլն:

Հայ երաժշտական տերմինաբանության մշակումն ու գործածումը համակարգված դարձավ միայն դարավերջին, երբ մի շարք մտավորականների ջանքերով հաջողվեց ապահովել եվրոպական նոտագրության ընդունումն ու գործադրումը:

---

[21] Հ. Թիրաքյան, Հայկական երաժշտություն, «Տաճար», 1910, N 35, էջ 748:

[22] Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 140:

*ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ «ՅԱՂԱԳՍ ԽԱՉԱՆՇԱՆ ԳԱՒԱԶԱՆԻՆ, ԶՈՐ ԸՆԾԱՅԵԱՑ ՏԵԱՌՆ ՊԵՏՐՈՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ» ՉԱՓԱԾՈ ԹՈՒՂԹԸ

Ամենատարբեր առիթներով խոսվել է այն մասին, որ Գրիգոր Մագիստրոսը (990-1058) մեզանում այն հեղինակն է, ով առաջինն ստեղծեց թղթոց ժողովածու[1] և ամենաառաջինը շրջանառեց չափածո թուղթը[2]: Գրանցից մեկը (թիվ Թ-ն (9-րդ) նվիրված է խաչանշան գավազանի փառաբանությանը և ուղղված է Պետրոս Գետադարձին (1019-1058): Հետազոտողները ուշադրություն են դարձրել այդ երկի միայն տեսական մասի վրա[3], ուր բանաստեղծը քննում է տաղաչափական խնդիրներ[4]: Հուզականությամբ այն առանձնապես աչքի չի ընկնում: Բայց հեղինակն իր առջև այդպիսի խնդիր չի էլ դնում, այլ խոսում է իր նվեր-գավազանի մասին, մի բան, որ միջնադարյան նամակագրական ավանդույթում տարածված էր:

Գավազանի գործառնական, խորհրդապաշտական նշանակությունն աշխարհայացքային արժեք ունի: Նրա գործածությունը հին է, քանզի այն իշխանության, դիրքի և հեղինակության բազմադարյան նշանակն է[5]: Նախկին թագավորական տներում ընդունված էր գավազան կրելը: Նույնքան հին են կրոնական գավազանների կիրառությունները, որոնք իրենց հերթին խորհրդանշում են հոգևոր իշխանությունը, հովվական ազդեցությունը սեփական հոտի վրա: Մովսեսը փարավոնին ներկայացնում է աստվածային գավազանը, ինչն իր իշխանության և իրավունքի արտահայտությունն էր և խորհրդանշում էր, որ արդեն ինքն է իր ժողովրդի գլուխը:

Հայոց Առաքելական Եկեղեցին գավազան է շնորհել ոչ միայն կաթողիկոսներին ու թեմական առաջնորդներին[6], այլև վարդապետներին[7]:

Գավազանի գործածության մի ուրույն ոլորտ են ներկայացնում մանուկ-կտրիճների եղբայրությունները, ուր մանկտավագներին «իշխանություն» էր շնորհվում: Այս ամենի յուրատեսակ արձագանքները գտնում ենք ժողովրդական հարսանյաց ծեսում: Հայաստանի

---

[1] Տես Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Ե.,1970, էջ 39-45., Ա. Ալեքսանյան, Հայ միջնադարյան նամակը (4-14-րդ դդ.), Ե., 1997, էջ164-202:

[2] Տե՛ս Ս. Մխիթարյան, Գր. Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001, էջ 96-100:

[3] Տե՛ս Հր. Թամրազյան, Հայ քննադատություն, հ. Բ, Ե., 1985, էջ 201-202:

[4] Տես Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրոպոլ, 1910, էջ 33-34: Այսուհետև՝ Թղթեր:

[5] Տե՛ս Տ. Եարտըմեան, «Վարդապետը» հայ եկեղեցական մտածողութեան մէջ, Վենետիկ, 2001, էջ 73-76:

[6] Տես Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ծիսական բառարան, Ե., 1991, էջ 63-65:

[7] Տե՛ս Տ.Եարտըմեան, հիշյալ աշխատ., էջ 75:

տարբեր վայրերում (Վասպուրական, Ախալցխա, Ախալքալաք և այլն) մինչև 20-րդ դ. սկիզբը «թագավորին» (փեսային) պաշտպանող մակարապետը «գնում» էր այն մականը, որով կառավարում էր մակարներին (կորին-մանուկներին)[8]: «Թագուորցիները» (փեսայի կողմնակիցները) պարտավոր էին ենթարկվել նրան՝ պաշտպանելու ամուսնական զույգին, ինչպես իրական, այնպես էլ երևակայական վտանգներից:

Որպես կանոն՝ գավազանները պատրաստվում էին փայտից, ոսկորից կամ մետաղից (վերջին շրջանում նաև ապակուց): Կաթողիկոսականը կորագլուխ էր՝ հարցականաձև թեքվածքով (օձ կամ ճյուղ): «Հայ հռոմները» գործածում էին գնդաձևը՝ վրան խաչ, ինչը հայկական Կիլիկիո Աթոռի ավանդույթն էր[9]: Վարդապետականը երկթև էր՝ զույգ օձերի գլուխներով (շատ քիչ հանդիպում է նաև չորսը): Երկու թևերը խորհրդանշում են հոգևոր և աշխարհիկ իշխանությունները նաև՝ իմաստասիրությունը և խոհեմությունը: Գավազանների վրա օձի խորհրդանիշը մի կողմից կապվում է աստվածաշնչյան ավանդույթի, մյուս կողմից ՝ տոտեմիստական պատկերացումների հետ:

Գավազանն առաքելու և նամակի գրության մոտավոր թվականը պետք է լինի հավանաբար 1047-ից հետո, երբ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը ևս Գագիկ 2-րդի պես բյուզանդական արքունիքում պահվեց որպես պատանդ (1047-1051): Այդպես էլ նրան հետագայում չթույլատրվեց լինել Հայաստանում[10]: Հավանաբար իշխանը ցանկանում է սփոփել վշտահար կաթողիկոսին: Սա նաև իր մեղքերը նրա առջև քավելու մի յուրատեսակ ձև է, քանզի Հովհաննես արքայի հրամանով ինքը Բջնիում 1038 թ. ձերբակալում և պատվավոր կալանքի տակ 1,5 տարի պահում է նրան: Այդ տխուր միջադեպն ավարտվում է երկու իմաստասերների մտերմությամբ և հետագա բարեկամությամբ[11]: Թղթում Գր. Մագիստրոսը (990-1058) խոսում է Գետադարձին (կթղ. 1019-1058) կաթողիկոսական գավազան նվիրելու մասին: Ընդունված էր նամակում այդ մասին նշել, և առաքողները սիրում էին (հետևելով ընդունված կանոնին) գովաբանել դա[12]: Բանաստեղծությունը սկսվում է այսպես.

Ընծայեմ քեզ տարեկան նորոյս հասեալ ձեզ բարութեան,
Պսակս քաղցրութեան ամիս եկեալ պարառութեան,
Ցուպ նեցուկ և գաւազան մական տուեալ հաստատութեան,
Մոյթ յեցուկ մակագրական բոլոր յամէն ժառանգութեան[13]:

Բանաստեղծը Տեր Պետրոսի մականը համեմատում է Մովսեսի գավազանի հետ, քանզի նա իր իշխանությունը տարածեց նաև ծովի (կյանքի) վրա: Նա էր, որ վերացրեց

---

[8] Տես Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, Ե., 1973, էջ 148:
[9] Տես Մ. Օրմանյան, Ծիսական բառարան , Ե., 1991, էջ 64:
[10] Տես Թղթեր, էջ 32:
[11] Տես Կ. Կոստանյանց, Տեր Պետրոս Ա. Գետադարձ, Վաղարշապատ, 1897, էջ 16:
[12] Տես Ա. Ալեքսանյան, Հայ միջնադարյան նամակը, էջ 183:
[13] Թղթեր, էջ 31:

«անդրանկածախ» մեռելությունը և վիշապների կախարդությունը: Այն դարձավ եգիպտական ծառայությունից ազատվելու խորհրդանիշը.

Ոչ նոճին այժմ Եսթեմեայն, այլ սա ծաղկեալն ահարովնեան,
Ոչ սա ոստ ղոմփիական, այլ փոխադրող ջրոյն դառնութեան,
Ոչ այս տունկ է ձիթենւոյ, այլ հովուական ձեզ պետութեան,
Ոչ կապեալ յոստ հերակլեան, այլ գայիսոն զօրեղութեան:
Ոչ նիզակին տունկ ձիթենւոյ, այլ մակագրեալ քառաթեւեան.
Ոչ գործարան մահուն մահու, այլ ի մահու կենդանութեան[14]:

Սա մանկին գավազանը չէ, այլ զորեղության, հովվապետության գրավականը: Ողնափայտը պատրաստված է այն նույն ծառից, որից էր Քսյուսթրեսի (Նոյի) նավը: Սա ևս ժառանգականության շղթայի մեջ է դիտված: Բանաստեղծության մեջ ոչ միայն տրվում է հրեաների՝ եգիպտական գերությունից փրկվելու և վերապրելու գեղարվեստական նկարագրությունը, այլև ներկայացվում է աշխարհաստեղծման գաղափարի խորհրդանշական պատկերը՝ ծով, ջրերի նահանջ, մահվան վերացում, եգիպտական գերությունից փրկություն՝ գավազանի շնորհիվ, որ «Զողաբաղձ նշանակեալ՝ օրինակեալն տէրութեան» (այստեղ նորահայտ տերությունը գոյավորված նյութական աշխարհի խորհրդանիշն է): Բոլոր դեպքերում գավազանն արարչական-հրաշագործ հատկանիշներով է օժտված: Կալմիկների հնագույն զրույցներում դրա շնորհիվ են աստվածները օվկիանոսից ստեղծում Արևը, Լուսինը և աստղերը[15]: Այն միաժամանակ համաշխարհային կենտրոնի, հետևաբար երեք աշխարհների՝ սանդարամետի, երկրի, երկնքի միավորման խորհրդանիշն է: Այդ պատճառով էլ նկարագրված են կենաց ծառի (ինչի փայտից պատրաստված է գավազանը) արմատները, բունը և ցողունը՝ դալար ոստերով ու ծաղկած.

Ոչ դաբնի դա սարդենեան, այլ յարմատոց մեզ սաբեկեան,
Ոչ կաղնին արամազդեան, այլ Մամբրէին աբրահամեան,
Ոչ նոճին այժմ Եսթեմիայն, այլ սա ծաղկեալն ահարոնեան[16]:

Այդ երեք աշխարհների սիմվոլիկան պահպանված է նաև մականի կառուցվածքի մեջ. այն պատրաստված է երեք կտորից[17]:

Հաղթահարվել են ջրհեղեղյան ջրերը, իսկ գավազանն իրենց առաջնորդում է ուղիղ ճանապարհով (դեպի խաչը և դեպի փրկությունը): Մարդկության երկրորդ սկզբնավորումը նշանավորվում է նրա լուսափայլությամբ, հովանի դառնալով հոտի վրա: Այս սկիզբը մեկնաբանելով ըստ Աստվածաշնչի և կապելով Նոյ-Քսյուսթրեսի անվան հետ՝ կրկին անդրադառնում է արարչագործության թեմային՝ այս անգամ, սակայն, ըստ յունգյան

---

[14] Նույն տեղը, էջ 32:

[15] Տե՛ս М. Элиаде, Космос и история, М., 1987, с. 152.

[16] Թղթեր, էջ 32:

[17] Տե՛ս Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Ե., 1991, էջ 63:

պատկերացման: Բանն այն է, որ ջուր (ջրհեղեղ) և նավ խորհրդանիշերն իրենց խորքում կրկին կապվում են աշխարհաստեղծման արքետիպի հետ[18]: Այս դեպքում գտնվում են նոր հանգրվաններ (նախ՝ նավը, հետո՝ սուրբ Արարատը՝ որպես երկրային հանգրվան): Տեր Պետրոսն իր գործառույթով բանաստեղծության մեջ մոտենում է Նոյի կերպարին՝ դառնալով նոր Նոյ, քանզի նրա ձեռքում է Խաչանշան գավազանը՝ պատրաստված տապանի ողնափայտից: Նոր Նոյ Պետրոսը «Հօտիս հովանացեալ» կարող է բացել երկնային արքայության դռներն իրենց՝ մահկանացուների առջև: Բայց այս անգամ նա հոգիները մահվանից կփրկի՝ Տիրոջ առաջ միջնորդելով ու բարեխոսելով: Այսպես.

Զայդ առեալ ի ձեռս յիշեա՛ գիս արժանի ողորմութեան,
Ցանարիւն զենման մեծի սարսափելի գործառնութեան[19]:

Պետրոսը թող վայելի աստվածային իշխանությունը, քանզի նա է վեմը, այծերի և ոչխարների հոտերը բաժանողը, չարն ու բարին զատողը: Հրաշագործ գավազանով ջրերը խաղաղեցնելն ակամա հուշում է այն կապը, որ կա «Գետարգել Սուրբ Նշանի պատմութիւն»-ը երկի[20] և այս բանաստեղծության միջև:

Նահանջօղ գետոց յարիւն անդրանկածախ մեռելութեան,
Խափանիչդ վիշապաց կիւսոյ հմայից կախարդութեան,
Պատարիչ ջուրցն մածեալ դիզան ալեացն թանձրութեան[21]:

Հրաշագործությունը կատարվում է Քրիստոսի խաչափայտի մասունքով (այն նս խաչի ձև ունի ստեղծագործության մեջ)[22]: Պետրոսին Գր. Մագիստրոսն ընկալում է իբրև Աստծո ընտրյալի, իսկ պարականոնը կարծես հաստատում է, որ հենց այդ պատճառով են խաչափայտի մասունքները հայտնվում նրա մոտ, և նա կատարում է գետարգելության հրաշքը:

Խնդրում է, որ թույլ տա իրեն նրա սիրելի որդին լինել, իսկ Երկրորդ Գալստյան ժամանակ գավազանը ձեռքն առնելիս հիշի և բարեխոսի իր անձի համար: Երկարակեցություն է ցանկանում և հաստատություն «զաթոռդ սրբութեան» :

Եւ զբաժակդ մանուածոյ ճախարակեալ մակացութեան
Ի մատունսդ աստուածային աջոյդ առեալ քեզ օրհնութեան,
Եւ զանօթ իւղոյն սրբոյ կարծրագունի պահպանութեան,
Լուսափայլ որակութեան հաղորդաբար կցորդութեան[23]:

---

[18] Տե՛ս Карл Густав Юнг, Душа и миф . М., 1997, с. 323.

[19] Թղթեր, էջ 32:

[20] Տե՛ս Երևանի Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռ. 995, էջ 425ա-453ա:

[21] Թղթեր, էջ 32:

[22] Մ. Ուռհայեցի, Ժամանակագրություն, Ե., 1991, էջ 56-57:

[23] Թղթեր, էջ 32-33:

Դատաստանի օրը կատարվում է անարյուն զոհաբերության հանդեսը: Այդ ժամանակ թող Տեր Պետրոսը ձեռքն առնի իր նվերները՝ գավազանը (որի նշանակության մասին խոսվեց վերևում), «զբաժակդ մանուածոյ » և «զանօթ իւղոյն սրբոյ»: Այստեղ գավազանը մահը վերացնելու և դժոխքը կործանելու, գործվածքով նախշված բաժակը (թելերով հանդերձ)՝ ժամանակի և արարչագործության, իսկ յուղը՝ օծման, միաժամանակ մահվան և վերածնության խորհրդանիշերն են:

Փաստորեն բանաստեղծը պատկերում է այն քրիստոնեական սրբությունները, որոնք կյանքի շարունակականության ներքին խորհուրդ ունեն: Կրկին վերարծարծվում են մահվան ու վերածնության խորհդանշական գաղափարները: Մագիստրոսի և միջնադարյան քրիստոնյա մարդու պատկերացմամբ (այն կար նաև հին աշխարհում) մահվանը հետևում է նաև վերածնությունը, ինչի մասին գրում է Հին աշխարհի նշանավոր փիլիսոփա Պորփյուրը Իթակեի անձավի՝ որպես տիեզերքի սիմվոլի մասին խորհրդածելիս[24]: Ակնհայտ է, որ բանաստեղծության քնարական հերոսը ձգտում է լուսավոր եզերքների և երկնային կյանքի:

Անդրադառնալով եռյակ և քառյակ արվեստներին, համադրելով դրանք թվերի պյութագորյան տեսության հետ, ենթագիտակցորեն արտահայտելով տիեզերքն իր արական և իգական թվային արքետիպերով՝ Մագիստրոսը հավատարիմ է մնում նախորդ պատկերացումներին. «ի սարդենի մահակէ, պարտ գոլով երգել զհոմերական քերթուածսն, այլ տաղ է հոմերական քաջ ոլորեալ. և սա տաղ դիւցազնական չափաբերեալ ըստ Ելլենացւոցն: Իսկ ըստ Արաբացւոցն կշռեալ և բաղկացեալ է եռատասնեայ և երից քառից միոյ քուէի և շարամանեալ ամանակօք երկարացեալ քսան և չորից»[25]:

Վերածնության գաղափարը ենթագիտակցորեն արտահայտվել է դրա նաև թվերի միջոցով: Դա հաստատում է, որ Գր. Մագիստրոսը տիրապետել է մոգական թվերի սիմվոլիկային՝ դրանով արտահայտելով վերածնության արքետիպը[26]: Դարձյալ մտքի ու երևակայության բռնկում ու թռիչք, հունական, հրեական և արաբական մշակույթների նորովի ընկալում և անկաշկանդ մտածողություն: Աշխարհի վրա ճառագում է հոգևոր լույսը: Քրիստոսի շնորհիվ քաոսից կյանքը գնում է դեպի կարգաբանված տիեզերք: Դրա համար էլ բանաստեղծը ավարտում է խոսքը խորհրդապաշտական-ծիսական բանաձևումով:

Պարզվում է, որ իր երկը «ի թուականութենէ, և յերաժշտականութենէ և յերկրաչափութենէ և յաստղաբաշխութենէ շարաբարձեալ յինքեան ունի: Սակայն մեծի տեսութեան ունի պէտս»[27], քանզի եթե մեկը չի սովորել ճեմարանում, չի կարող այն հասկանալ: Բայց Տեր Պետրոսը վեր է այս ամենից, որովհետև տիրապետում է այն մեծ գիտությանը, որ կոչվում է աստվածագիտություն: Եվ նրա մասին կարող է ասել. դու, որ «ղամբարափայլ ջահավառութեամբ պայծառանաս, և լուսաւորես, որ քեզդ հետնին լուսափայլ շա-

---

[24] Տե՛ս Порфирий, О пещере нимф, А. А. Тахо – Годи , А. Ф. Лосев, Греческая культура в мифах, символах и терминах, С. П., 1999, с 578.

[25] Նույնը, էջ 33:

[26] Տե՛ս К. Г. Юнг, Душа и миф, М ., 1997, с. 323.

[27] Նույնը, էջ 33-34:

ղաց այլ ինչ յայտնի է, վասն զի ըստ սերովբէականն գերունակութեան մակպետական հեղումն ի ստորակայեալսն առ ի ծայրագոյն արփւոյն փեռեկի»[28]: Բանաստեղծը ցույց է տալիս քրիստոնեության հույսի և փրկության ներքին խորհուրդը:

Միաժամանակ ձևավորվում են ու ամբողջանում Մագիստրոսի գրական հայացքները: Դա առանձնապես դրսևորվում է տաղաչափության վերաբերյալ նրա կարծիքներում: Իր մանկավարժական փորձի մեջ ճշգրտելով այդ ասպարեզում հայ և օտարազգի ստեղծագործողների ձեռքբերումները, օգտագործելով այն մեր գրականության մեջ՝ նա անում է լուրջ եզրահանգումներ և «պարզում է իր բանաստեղծության գաղտնիքները, բնույթը, ձևը, տաղաչափությունը, հանգն ու վանկը»[29]: Ցանկանում է դյուցազնական *քաջ ոլորյալ* տաղը ձևի հմտությամբ հասցնել մանուկ ընթերցողին, շարադրել հստակ, վճիտ, որպեսզի դա լինի կատարյալ խոհական սնունդ նրանց համար:

Գր. Մագիստրոսի չափածո երկերն ընդհանրապես գալիս են մի կողմից շարունակելու նախորդ շրջանի բանաստեղծության ձեռքբերումները, մյուս կողմից՝ սկզբնավորելու նորը՝ վերջնականապես ձևավորելով բանաստեղծության միջնադարյան կառույցը: «Ցաղագս խաչանշան գաւազանին....» չափածո երկը դարաշրջանի հետաքրքրական գեղարվեստական նմուշներից մեկն է, որով հեղինակը փորձ է անում թե՛ գործնականում, թե՛ տեսականորեն գրականության մեջ արմատավորել ***հոմերական տաղը*** և սերունդներին կրթել ու դաստիարակել դրանով: Այն ուշագրավ է շատ առումներով[30] և կարող է հետազոտողներին հետաքրքիր փաստեր տրամադրել:

---

[28] Նույն տեղը:

[29] Հր. Թամրազյան, Հայ քննադատություն, հ. Ա, էջ 198:

[30] Բանաստեղծության մեջ նկատելի է մի հանգամանք ևս. Գր. Մագիստրոսը Տեր Պետրոսին դիմում է «Ձեզ» հարգական ձևով, ինչը խոսում է այդ դիմելաձևի ընդունված լինելու և մասնակի գործածելիության փաստի մասին:

*ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ*
***Պատմական գիտությունների դոկտոր***

# ԼՎՈՎԻ ՏԻՐԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Մայիսի 18-ին հանդիսավոր պայմաններում Նորին Սուրբ Օծություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռքով վերաօծվեց Արևելյան Եվրոպայի տարածքում գտնվող հայկական ամենանշանավոր տաճարը՝ Լվովի Տիրամոր Վերափոխման եկեղեցին, որի դռները հավատացյալների առջև փակվել էին 1944 թվականին:

Լվով քաղաքի կենտրոնական մասում «Հայկական փողոցի» վրա գտնվող, ներսից շքեղ որմնանկարներով ու խճանկարներով զարդարված, հայկական ազգային ճարտարապետության ոճով 1363 թ. կառուցված Տիրամոր Վերափոխման եկեղեցին այդ հինավուրց քաղաքի նշանավոր հուշարձաններից է: Շուրջ 60 տարի պահեստի վերածված այդ հսկա շինությունը զրկված է եղել պատշաճ խնամքից և նորոգման խիստ կարիք է ունեցել: Այդ ընթացքում շենքը չի ջեռուցվել: Խոնավությունից վնասվել են պատերը, դռները, պատուհանները և, ընդհանրապես, ներսում գտնված փայտե շինվածքները՝ էլ չենք խոսում հիասքանչ որմնանկարների ու խճանկարների մասին:

Հայերը Լվովում հաստատվել են քաղաքի հիմնադրման ժամանակներում 13-րդ դարում: Հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ հայերը Լվով եկել են Գալիցա-Վոլինյան իշխանության օրոք: Գալիցիայի իշխան Դանիելն իր որդու՝ Լևի անունով հիմնադրելով այդ քաղաքը, տարբեր վայրերից բնակիչներ է հրավիրել այնտեղ: 14-րդ դարում լեհերը գրավում են Լվովը, և քաղաքում սկսվում է նոր շինարարություն լեհ և գերմանացի գաղթականների համար: Այս ժամանակ հայերի գաղթը Լվով ավելի է ուժեղանում: Այն փաստը, որ 1356 թ. հունիսի 17-ին Լվով քաղաքին տված իր հրամանագրի մեջ լեհ թագավոր Կազիմիր Երրորդը հիշել է նաև հայերին՝ նրանց իրավունք վերապահելով ունենալ իրենց առանձին դատարանը և ղեկավարվել սեփական օրենքներով, պերճախոս կերպով վկայում է Լվովում հայերի հիմնավորված և մեծաթիվ լինելու մասին:

Ուկրաինացի նշանավոր պատմաբան, ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչը, որը հատուկ ուսումնասիրություն է նվիրել Լվովի հայ գաղութի սկզբնավորման հարցերին, գտնում է, որ հայերը Լվովի հնագույն բնակիչներից են: Վկայակոչելով միջնադարյան հեղինակներ Ի. Ալնպեկի ու Ց. Զիմորովիչի աշխատությունները՝ նա հատուկ ուշադրություն է դարձրել այն հանգամանքի վրա, որ Լվովում հաստատված հայ զորականները հագնված ու զինված են եղել թաթարների նման: Նրանց խոսակցական լեզուն եղել է թաթարերենը: Ց. Զիմորովիչը հաստատում է, որ հայրենիքից գաղթելուց հետո հայերը երկար ժամանակ ապրել են թաթարների տիրապետության ներքո: Ըստ Ի. Ալնպեկի, հայերն իրենց տնե-

րում խոսում էին թաթարների լեզվով, իսկ ժամասացությունն անց էին կացնում հայերեն[1]:

Լվովի, ինչպես նաև Կամենեց-Պոդոլսկի հայկական դատարաններում դատական ար-ձանագրությունները գրվում էին թաթարերեն, բայց հայերեն տառերով: Հետագայում ճշտվեց, որ այդ թաթարերենը ոչ այլ ինչ էր, եթե ոչ ղփչաղների (պոլովցիների) լեզուն: Ղփչաղերենը ժամանակակից կարաիմյան, կումիկյան ու մի շարք ուրիշ լեզուների հետ պատկանում է թուրքական լեզուների ղփչաղական խմբի ղփչաղա-օղուզյան ենթա-խմբին:

Հին Լվովի հայ բնակիչների մի մասը խոսում ու գրում էր պատմության բեմից հեռա-ցած և այլ ազգերի մեջ ձուլված այդ ժողովրդի լեզվով: Նրանց թողած գրական ժառան-գությունը հանդիսանում է ղփչաղերեն մնացած լեզվի ուշ շրջանի միակ գրավոր հուշարձա-նը: Հայտնի է, որ Լվովում հաստատվել էին Ղրիմի հարավային շրջաններից գաղթած շատ հայեր, որոնք ղփչաղների մեջ երկար տարիներ ապրելով՝ յուրացրել էին նրանց լե-զուն այնքան լավ, որ ոչ միայն դատական արձանագրություններ էին կազմում, այլև ղփչա-ղերեն գրում էին հոգևոր երկասիրություններ, բառարաններ և նույնիսկ ստեղծել էին այդ լեզվի քերականության ձեռնարկ:

Ղրիմից, Կիևից ու այլ վայրերից գաղթած ու Լվովում հաստատված հայերը պահպա-նել էին իրենց ազգային սովորությունները, մշակույթը, շինարարական յուրահատուկ ար-վեստը: Հաստատվելով այդ քաղաքում և մասնակցելով համաքաղաքային շինարարութ-յանը (պարիսպներ, միջնաբերդ, պալատներ և այլն)՝ նրանք իրենց համար կառուցում էին բնակելի տներ ու եկեղեցիներ:

Ըստ Ի. Պ. Կրիպյակևիչի, հայերը սկզբում հաստատվել էին քաղաքի Պոդգորյե կամ Պոդզամչե տարածքում, որտեղ կառուցել են երեք եկեղեցի, որոնցից հնագույնը կոչել էին Ս. Աննայի անունով:

Հայերը Լվովում զբաղվում էին արհեստներով ու առևտրով: Նրանք հռչակված էին որպես հմուտ ոսկերիչներ, կաշվեգործներ, զինագործներ, ջուլհակներ, թամբագործներ, գորգագործներ: Նրանք պատրաստում և վաճառում էին շքեղ վրաններ: Հայտնի էին լվովցի շատ նկարիչներ, որոնց ստեղծագործությունները պահպանվել և ցուցադրվում են Ուկրաինայի ու Լեհաստանի թանգարաններում: Լվովում ապրել ու ստեղծագործել են մի շարք հայ մանրանկարիչներ, որոնց նկարազարդած ձեռագրերից մի քանիսը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում և այլ գրադարաններում:

Օգտագործելով արևելյան լեզուների իրենց իմացությունը՝ Լվովի հայ առևտրական-ները իրենց ձեռքն էին վերցրել Արևելքի հետ կատարվող խիստ շահեկան առևտուրը: Շնորհիվ առևտրի ու արհեստների, հայերը բարեկեցիկ կյանք էին ստեղծել իրենց համար: 1656 թ. տվյալներով Լվովի անշարժ գույքի շուրջ մեկ երրորդը պատկանում էր հայերին: Ըստ լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնչի, լվովցի մի հայ՝ Քրիստափոր Բեռնատովիչը, այնքան էր հարստացել, որ լեհ թագավորը նրանից պարտք էր վերցնում[2]:

---

[1] И. П. Крипякевич, К вопросу о начале армянской колонии во Львове, «Исторические связи и дружба украинского и армянского народов» (сборник материалов второй украинской армянской научной сессии), Киев, 1965, стр. 122-123.

[2] Սադոկ Բարոնչ, Լեհաստանի նշանավոր հայերի կյանքը (լեհ.), Լվով, 1856, էջ 71:

Լեհահայերը, որոնց թիվը 17-րդ դարում հասնում էր 1000 գերդաստանի, ի վիճակի էին կառուցելու շքեղ տներ, եկեղեցիներ, մատուռներ, աղբյուրներ և այլն: 1363 թ. (իսկ մի քանի հեղինակների տվյալներով՝ 1361 թ.)[3] նրանք կառուցում են Հանգստատար Աստվածածին եկեղեցին, որը հիմա կոչվում է Տիրամոր Վերափոխման: «Եկեղեցի Հայոց,- գրում է Մինաս Բժշկյանը,- է արքեպիսկոպոսանիստ եւ հռչակատր ուխտատեղի ամենայն Քրիստոնէից... չափատր մեծ քարաշէն եւ գմբեթաւոր ի ձեւ քառակուսի, եւ ունէր զաւիթ ըստ սովորութեան ազգիս, այլ զկնի ժամանակաց միացուցին ընդ բուն տաճարին, որով փոքր ինչ երկայնաձեւ եղեւ եւ բազմախորշ, ունի 13 խորան եւ երեք դրունս»[4]:

Ուկրաինացի գիտնական Ե. Ա. Ցացկևիչի կարծիքով, Լվովի հայոց եկեղեցին հայկական ճարտարապետության ամենանշանավոր հուշարձանն է Արևմուտքում[5]: Այդ պատճառով այն մշտապես իր վրա է հրավիրել մասնագետների ուշադրությունը: Նրա մասին գրվել են բազմաթիվ հոդվածներ ու մենագրություններ, լուսանկարները տպվել են շատ գրքերում և ամսագրերում:

Վերափոխման եկեղեցին գտնվում է Լվովի հին քաղաքի հյուսիս-արևելյան մասում հայկական թաղամասի կենտրոնում: Այժմ այդ թաղամասի փողոցներից մեկը կրում է «Հայկական», մյուսները՝ «Լեսյա Ուկրաինկայի» և «Կարկովյան» անունները: Եկեղեցու կառուցման միջոցները տրամադրել են պարոն Հակոբ Ծահնշահ Կաֆացին և պարոն Ստեփան Փանոսյան Աբրահամենցը՝ Վայսուրի քաղաքից: Խաչագմբեթային ձև ունեցող այդ եկեղեցու տանիքը սկզբում պատած է եղել 105 x 47 սմ մեծություն և 19 սմ հաստություն ունեցող քարե սալիկներով: 1509 թ. այդ քարե տանիքը ծածկվել է կղմինդրներով, իսկ նոր ժամանակներում՝ թիթեղով: Եկեղեցու պատերի հաստությունը 140 սմ է, որոնք դրսից և ներսից երեսպատված են մեծ վարպետությամբ տաշված սալաքարերով:

Ըստ Յուզեֆ Զիմորովիչի, Ս. Աստվածածին եկեղեցին, ինչպես նաև Լվովի Գեորգի (Յուրա) տաճարը կառուցել է Դորե անունով ճարտարապետը: Վլ. Լոզինսկին կարծում է, որ դա գերմանացի Դորինգն է: Մեկ այլ ուսումնասիրող՝ Տ. Մանկովսկին, եկեղեցու ճարտարապետ համարում է իտալացի Դորիխին[6]: Հայ վիմագրության մասնագետ Գրիգոր Գրիգորյանը, որը վերծանել ու հրատարակել է Ուկրաինայի, Մոլդովայի և Ռուսաստանի բնակավայրերում եղած հայերեն վիմագիր ու այլ արձանագրությունները, հենվելով մի շարք հեղինակների գործերի վրա, գտնում է, որ Ս. Աստվածածին եկեղեցու ճարտարապետը ծագումով հայ, անեցի կամ կաֆայեցի Դորկոն է[7]:

Եկեղեցին թեև բաղկացած է տարբեր ժամանակներում կառուցված երեք մասերից, սակայն կոմպոզիցիոն առումով այն թողնում է միասնական, ճարտարապետական փայ-

---

[3] Դիվան հայ վիմագրության, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց՝ Գ. Մ. Գրիգորյան, Երևան, 1996, էջ 162:

[4] Մինաս Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 102:

[5] Е. А. Яцкевич, Памятники армянской культуры во Львове, Исторические связи и дружба украинского и армянского народов, Ереван, 1961, стр. 125.

[6] Д. О. Галустян, Из истории строительной деятельности в армянских поселениях Польши, «Պատմա-բանասիրական հանդես», 1975, N. 3, էջ 136:

[7] Դիվան հայ վիմագրության, էջ 163:

լուն լուծումներով կառուցված հայկական տաճարի տպավորություն և գեղագիտական հաճույք պատճառում դիտողներին: Ինչպես բոլոր հին եկեղեցիները, այնպես էլ այն դարերի ընթացքում ենթարկվել է վերանորոգումների, հետևապես և որոշ փոփոխությունների, բայց նրա ընդհանուր ոճը չի խաթարվել: Եկեղեցու շինարարները օգտագործել են շինարարության հայկական սկզբունքներ: Դա վերաբերում է քարերի մշակմանը, պատերի շարվածքին, գմբեթի կառուցվածքին: Մայր Հայրենիքում կառուցված գմբեթների նման այս եկեղեցու 12 նիստ ունեցող գմբեթի շինարարության ժամանակ ևս օգտագործվել են թրծված դատարկ կավե կճուճներ, որոնք թեթևացնելով գմբեթի ծանրությունը՝ ավելի ամուր և հուսալի են դարձրել այն: 1494 թ. օգոստոսի 6-ի հրդեհի ժամանակ գմբեթը վառվել է, բայց 1509 թ. Ասվատուր Քոփուլեն նորոգել է այն:

Զանգակատունը կառուցվել է եկեղեցուց քիչ հեռու: Սկզբում այն փայտաշեն էր և վառվել է 1527 թ. հունիսի 3-ի հրդեհի ժամանակ: Նրա հիմքի վրա 1571 թ. խոջա Անդրեաս Կաֆայեցին հայտնի ճարտարապետ Պյոտր Կրասովսկու միջոցով կառուցել է տալիս վիմաշեն զանգակատուն, որի հարավային մուտքի մոտ պահպանվել է Անդրեասի շինարարական արձանագրությունը: Սիմեոն Լեհացի ուղեգիրը վկայում է՝ «Զանգակատուն՝ մեծ և բարձր, Այա-Սոֆիայի և Երուսաղեմի նման, և մեծամեծ զանգակներ, որոնց հնչելիս քաղցրանվագ ձայնից զմայլվում էին մարդիկ»[8]:

Վանքի տարածքում եղել են եպիսկոպոսարանը, կանոնիկոսարանը, կուսանոցը և բուն եկեղեցին: Եպիսկոպոսարանը, որ եղել է վանքի արևելյան մասում, ունեցել է մատուռ և փոքրիկ գրատուն: Դեռևս 1360 թ. Լվովի հայ համայնքը ձգտում էր ստեղծել եպիսկոպոսական Աթոռ, որը վերջնականապես հաստատվեց 1367 թ.: Եպիսկոպոսի նստավայրից ոչ հեռու գտնվում էր Լվովի հայոց դատարանը: Հայտնի է, որ 1616 թ. Լվովում Հովհաննես Քարմատանենցը հիմնել էր հայկական տպարան և տպագրել մի քանի գրքեր: Վանքի տարածքում է եղել այդ տպարանի շենքը:

Կանոնիկոսարանը քահանաների բնակարանն էր՝ «պարսպապատ, բարձր եւ քարաշէն... Աստ է գրատունն բազում գրչագիր եւ տպագրեալ մատենից Հայոց եւ այլոց ազգաց»[9]: Այստեղ է գտնվել նաև գանձատունը՝ կրկնակի դռներով:

Կուսաստանը նույնպես պարսպապատ է եղել, քարաշեն և կրկնահարկ: Ունեցել է բազմաթիվ սենյակներ, առանձին բակ և պարտեզ: Մ. Բժշկյանը գրում է. «Անուանի է դպրատուն սոցա, եւ գլուխ համարի այլոց դպրոցաց. ուր վարժին 400 աղջկունք, եւ երբեմն աւելի, որք ուսանին զգրագրութիւն, զթուաբանութիւն եւ զայլ պատշաճ ուսմունս. եւս եւ զձեռագործս ինչ պիտանիս իրքեանց»[10]: Այս մենաստանն այրվել է 1781 թ., բայց հետո նորոգվել է:

Եկեղեցուց ոչ այնքան հեռու, մյուս փողոցի վրա, կառուցված է հայոց հիվանդանոցը:

Մայր Հայրենիքի, հայոց կաթողիկոսական Աթոռի հետ սերտ կապերով միացած Լվովի հայոց եկեղեցին դարեր շարունակ վիթխարի դեր է խաղացել հեռավոր այդ երկրում

---

[8] Սիմեոն Լեհացի, Ուղեգրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Արշակ Մադոյանի, Երևան, 1997, էջ 193:

[9] Մ. Բժշկյան, նշվ. աշխ. էջ 100:

[10] Նույն տեղում, էջ 101:



ԵԿԵՂԵՑՈՒ ՍՅՈՒՆԱԶԱՐԴ ԳԱՎԻԹԸ



ԼՎՈՎԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
(ԱՅՍ ԵՎ ՀԱՋՈՐԴ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼ Է ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ)

հայապահպանության, հայ մշակույթի հարատևման գործում: 1668 թ. արքեպիսկոպոսարանին կից բացված հայկական հոգևոր բարձրագույն դպրոցի ուսուցիչների և աշակերտների ջանքերով ստեղծվել էր դպրոցական թատրոն, որտեղ բեմադրվել են «Ս. Հռիփսիմեի մարտիրոսությունը», «Կեսարի մահը», «Սողոմոնի առակները» և այլ պիեսներ: Թատրոնը գործել է մինչև 1784 թ., և նրանով է սկսվում հայ թատրոնի նոր շրջանի պատմությունը:

Հայերը երկար ժամանակ կարողացան պահպանել իրենց ազգային ընկարագիրը Լվովում: Սակայն օտար միջավայրն աստիճանաբար ձուլում, կլանում էր նրանց: Դրան մեծապես նպաստեց նաև հայերի բռնի կաթոլիկացումը 17-րդ դարում: Տասնյակ տարիներ հայերը պայքարեցին հավատափոխների դեմ: Բայց ուժերն անհավասար էին: Մի կողմից պետական օժանդակություն վայելող ճիզվիտ հավատափոխներն էին, որոնց ձեռքին գործիք էր դարձել Նիկոլ Թորոսովիչ դավաճան արքեպիսկոպոսը, մյուս կողմից՝ հայրենիքից ու Մայր Եկեղեցուց կտրված ու գնալով քչացող համայնքն էր, որի վերնախավը դավաճանաբար անցել էր հավատափոխների կողմը: Նիկոլ Թորոսովիչը թալանեց եկեղեցին, ցիրուցան արեց այնտեղ հավաքված հնության մեծարժեք հուշարձանները, վանքի հարուստ մատենադարանը: Այդ ամենի մասին հրաշալի գրել է կատարվածին լավատեղյակ Առաքել Դավրիժեցի պատմիչը:

Լվովի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին իր հայաշունչ տեսքով, իր կամարների տակ թաղված հայ գործիչների տապանաքարերով լեհահայերին մշտապես հիշեցնում էր նրանց բուն ծագումը, արմատները: Դավանափոխությունը չկարողացավ դուրս մղել հայոց լեզուն վանքի շրջանակներից: Մինչև վերջ եկեղեցում բոլոր արարողությունները կատարվում էին հայերեն, իսկ վանքի դպրոցում կրթություն ստացած հայ հոգևորականները, որոնք ցրվում էին Լեհաստանի այլ քաղաքներում գործող հայկական եկեղեցիները, շարունակում էին հայերեն անցկացնել բոլոր կարգի եկեղեցական ծառայությունները մայրենին վաղուց մոռացած լեհահայերի կամ եկեղեցի այցելող լեհերի համար:

Լվովի հայ կաթոլիկ արքեպիսկոպոսարանը 1927 թ. հրատարակում էր լեհերեն «Սուրբ Գրիգորի պատվիրակը» պատկերազարդ ամսագիրը և «Գրիգորիանա» քառամսյա հանդեսը: Արքեպիսկոպոսարանը գործեց մինչև 1939 թ., երբ Արևմտյան Ուկրաինան միացվեց ԽՍՀՄ-ին:

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ վնասներ հասցրեց Հայոց այս եկեղեցուն և լվովահայ համայնքին: 1944 թ. երկրորդ անգամ Լվով մտած խորհրդային զորքերը թալանեցին վանքը, հոգևորականներից շատերը, որ չէին հասցրել հեռանալ Լեհաստան, ձերբակալվեցին և աքսորվեցին Սիբիր: Ականատեսները պատմում էին, որ եպիսկոպոսարանի պատուհաններից դուրս էին թափվում եկեղեցու գրքերն ու փաստաթղթերը: Անհետացան գրավոր մշակույթի բազմաթիվ հուշարձաններ: Դրանց թվում էին 1083 թ. ստեղծված Սկևռայի հռչակավոր Ավետարանը, Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունների» բնագիրը, կամենիցյան նշանավոր Աստվածամոր սրբապատկերը և այլն:

Բարեբախտաբար, Սկևռայի Ավետարանը գտնվեց և այժմ Լեհաստանում հանդիսանում է մի մասնավոր անձի սեփականությունը, Սիմեոն Լեհացու «Ուղեգրությունները» ընդօրինակել էր նշանավոր հայագետ Հ. Ներսես Ակինյանը և լույս ընծայել սկզբում

«Հանդես Ամսօրյա»-ի 1932-1935 թթ. համարներում, իսկ 1936 թ.՝ առանձին գրքով: Հետագայում այդ գործը թարգմանվեց ռուսերեն (1965 թ.) և քաղվածաբար՝ բուլղարերեն (1984 թ.): 1997 թ. լույս ընծայվեց «Ուղեգրության» աշխարհաբար թարգմանությունը: Լվովի հայերի մեծ մասը որպես լեհահպատակներ տեղափոխվեց Լեհաստան և հաստատվեց Վրոցլավ քաղաքում:

Վերափոխման եկեղեցին վերածվեց Ուկրաինական արվեստի թանգարանի պահեստարանի, որտեղ ամենաանխնամ կերպով պահվում էին ավելի քան 3000 հին ռուսական և ուկրաինական սրբապատկերներ: Տարիներ առաջ Մաշտոցի անվան Մատենադարանի կողմից գործուղված լինելով Լվով՝ տողերիս հեղինակին հաջողվեց Ս. Աստվածածին եկեղեցուց դուրս բերել և Երևան տեղափոխել մի քանի ձեռագրեր (որոնց մեջ Նիկոլ Թորոսովիչի Տաղարանը, եկեղեցու այցելուների մատյանը), Բերեժանի քաղաքի հայկական գաղութից մնացած արխիվային փաստաթղթերը և հնատիպ հայերեն գրքեր:

Հայ և ուկրաինացի գիտնականները գիտական նստաշրջանների ժամանակ, որոնք նվիրված էին հայ-ուկրաինական բարեկամությանն ու պատմական կապերին (1961, 1965, 1969 թթ.), մշտապես հարց էին բարձրացնում Ս. Աստվածածին եկեղեցին հայերին վերադարձնելու վերաբերյալ: Ուկրաինական կողմը համաձայն էր, բայց չէր կարողանում վճռել սրբապատկերները տեղափոխելու խնդիրը: Հարկ է նշել, որ Ս. Աստվածածին եկեղեցին հայերին վերադարձնելու պահանջով Լվով քաղաքի իշխանություններին էր դիմել նաև Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը:

Հարցը լուծվեց բոլորովին վերջերս, երբ հայերի միջոցներով վանքի տարածքում սրբապատկերների համար կառուցվեց հատուկ շենք և Ս. Աստվածածին եկեղեցին 2002 թ. հանձնվեց հայերին:

1363 թ. հիմնադրված Վերափոխման եկեղեցին, շուրջ 330 տարի Հայ Եկեղեցուց օտարված լինելուց հետո, վերադարձվեց իսկական տերերին: Լիահույս ենք, որ աղոթքի տուն և հոգևոր կենտրոն լինելուց բացի, այն նաև հայապահպանության կարևոր կենտրոն կդառնա Ուկրաինայի հայության համար:

*ՍՈՒՍԱՆՆԱ ՋԱՆԻԿՅԱՆ*

# ՀԱՅ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ 1920-1960 ԹԹ. ՎԵՐԵԼՔԻ ՀՈԳԵՎՈՐ-ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Հայ կերպարվեստն իր զարգացման բարձր մակարդակին հասավ XIX դարի երկրորդ կեսին: Եվրոպական երկրների համեմատությամբ հայ մշակույթն ուշ ոտք դրեց նոր շրջան: Եթե Իտալիայում նոր որակը, ասել է թե՝ Վերածնության շարժումը սկիզբ առավ XIV դարից, իսկ XV դարի երկրորդ կեսը վերելքի ընթացքն էր, ապա Հայաստանում քաղաքական ծանր և անբարենպաստ պայմանների պատճառով մշակութային ու լուսավորչական գործունեության աշխուժացումը սկսվեց XVII դարում միայն: Անհրաժեշտ է, սակայն, կատարել մի կարևոր վերապահում. XVII դ. հայ մշակույթի վերելքը չի կարելի որակել որպես «Հայկական ռենեսանս»: Իտալական վերածննդի հետ այն նույնացնելն անհիմն է: Ավելի ճիշտ կլինի դա համարել «վերանորոգության» շրջան, երբ ազգային մշակույթը թևակոխում է բնականոն զարգացման մի նոր փուլ, մի նոր աստիճան:

Հետաքրքրական է, առաջին հայացքից նույնիսկ անհավատալի, որ XVII-XVIII դարերում հայկական մշակույթի որակապես նոր վերելքը տեղի ունեցավ չնայած՝ երկրում առկա քաղաքական-տնտեսական ցածր աստիճանին: Դա բացառիկ երևույթ էր: Ինչո՞ւմն էր գաղտնիքը: Հայաստանը շարունակում էր մնալ քաղաքական ու տնտեսական ծայրահեղ հետամնաց համակարգ ունեցող Օսմանյան Թուրքիայի ու Սեֆյան Պարսկաստանի տիրապետության ներքո, որտեղ այդ դարերում խոսք չէր կարող լինել տնտեսական նոր հարաբերությունների (վաղ կապիտալիզմի) և դրանից բխող ազատ գաղափարախոսության ու հումանիզմի մասին:

Նման պայմաններում բացառիկ գնահատելին այն էր, որ այդ աննպաստ և «անմշակ դաշտից» անկախ, հայ մտավորականության քաղաքակրթության գենետիկ ուժն ու զգացողությունը, արձագանքելով եվրոպական մշակույթի առաջադեմ դրսևորումներին, հակվում էր և՛ հասարակական մտքի, գրական-փիլիսոփայական հոսանքների, և՛, իհարկե, արվեստի նոր պատկերացումների ձևավորմանը:

Վստահ կարող ենք ասել, որ նախորդած երկու դարերը չեն տեսել այնպիսի փայլուն դեմքեր, որպիսիք հանդես եկան XVII դարում՝ Առաքել Դավրիժեցի, Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, Զաքարիա Ագուլեցի, Գրիգոր Դարանաղցի, Ստեփաննոս Լեհացի, Սիմեոն Ջուղայեցի, Հովհաննես Ջուղայեցի, Սիմեոն Երևանցի...[1]

Բացվում են հոգևոր նոր դպրոցներ՝ Հարանց անապատի, Էջմիածնի, Լիմի, Սյունյաց Մեծ Անապատի: Իսկ Բաղեշի Ամրդոլու վանքում, փաստորեն, ստեղծվում է ուշ միջնա-

[1] Անունների թվարկումը կարելի է շարունակել՝ Մինաս, Հովհաննես Ջուղայեցի, Հովհաննես Մրքուզ, Ստեփաննոս, Հակոբ Ջուղայեցի, Զաքարիա Ավանցի, Մեսրոպ Բաղիշեցի, Սարգիս Խիզանցի, Գրիգորիս և ուրիշներ:

դարյան Հայաստանի վերջին ուսումնական բարձրագույն հաստատությունը: Այստեղ կար նաև նկարչության բաժին[2]:

Հոգևոր-մշակութային այս վերելքում կարևոր դեր կատարեց Հայ Եկեղեցին[3]: Ինչպես ողջ միջնադարում, XVII-XVIII դդ. պետականությունից զուրկ երկրում ժողովրդի հոգևոր ու մշակութային ոլորտը, մասամբ նաև՝ քաղաքական կյանքի ղեկը, իր վրա էր վերցրել Եկեղեցին: Ժամանակի արվեստի ու գրականության գրեթե բոլոր նշանավոր գործիչները հոգևոր դասի ներկայացուցիչներ էին: Կային նաև աշխարհիկ անձնավորություններ, օրինակ, Հովնաթանյան տոհմի նկարիչները, որոնց գործունեությունը, սակայն, գլխավորապես կապված էր եկեղեցիների հետ: Զարմանալի զուգադիպությամբ, երևի թե Աստծո տնօրինությամբ, հենց XVII դարում Էջմիածնում գահակալեցին գիտուն և արտակարգ եռանդուն գործիչներ Մովսես Գ Տաթևացին (կթղ. 1629-1632 թթ.), Փիլիպպոս Ա Աղբակեցին (կթղ. 1632-1655 թթ.), Հակոբ Դ Ջուղայեցին (կթղ. 1655-1680 թթ.):

Այս կաթողիկոսների ջանքերով հայոց տնտեսական և մշակութային կյանքը մտնում է նոր հունի մեջ: Կարգավորվում են վանական տնտեսությունները, վերակառուցվում և նկարազարդվում եկեղեցիները, մի շարք եկեղեցիներին կից կառուցվում են շքեղ զանգակատներ: Սկսում է տարածվել նաև տպագրական գործը:

Առավել երևելին XVII դ. վերանորոգության շրջանում փիլիսոփայական-աստվածաբանական մտքի սկզբնավորող Սիմեոն Ջուղայեցին է (XVI դ. վերջ - 1657 թ.): Ջուղայեցին միանգամայն այլ հարթության վրա է դնում կերպարի միասնության և ամբողջականության գաղափարը[4]:

Գեղագիտական իր ըմբռնումներին առաջադիմական որոշակի ձևակերպում տվեց փիլիսոփայական մտքի մյուս ականավոր դեմքը՝ Ստեփաննոս Լեհացին (XVI դ. վերջ - 1687 թ.): Նրա կարծիքով, ճանաչողության նպատակը ճշմարտության հասնելն է, առանց որի մարդը չի կարող ստեղծագործել: «Պատկերը, - ասում է Լեհացին, - պետք է լինի պատկերվողի նույնությունը, որից հետևում է պատկերվող օբյեկտի ընդհանուր և մասնավոր գծերի արտահայտումը»[5]:

Նոր մտածողությունն իր տեսական ու գործնական արտացոլումը գտնում է ականավոր փիլիսոփա, տրամաբան, քերական ու գեղանկարիչ Հովհաննես Ջուղայեցու (Մրքուզ) գործերում (1643-1715 թթ.): Օժտված լինելով գեղանկարչի փայլուն ձիրքով՝ Ջուղայեցին ստեղծագործական իր հարուստ փորձը գործնականորեն զուգակցել է փիլիսոփայական և գեղագիտական գաղափարների հետ: Նա հատկապես շեշտում է պատկերի մեջ կերպա-

---

[2] Տե՛ս Արշակ Ալպոյաճյան, Պատմություն Հայ դպրոցի, հ. Ա, Գահիրե, 1964. Համազասպ Հ. Ոսկյան, Հովհաննես վանականը և իր դպրոցը, Վիեննա, 1922. Ներսես վ. Ակինյան, Բաղեշի դպրոցը, Վիեննա, 1952:

[3] Հիմնականում եկեղեցական գործիչների ջանքերով առաջին անգամ եվրոպական տիպի թատրոններ ստեղծվեցին Լվովում և Վենետիկում (տե՛ս Լ. Զեքիյան, Հայ թատրոնի սկզբնաղբյուրը և հայ վերածննդի շարժումը, Վենետիկ, 1975):

[4] Հ. Միրզոյան, Սիմեոն Ջուղայեցի, Երևան, 1971:

[5] В. Чалоян, О философии Степаноса Львовского (Вопросы философии, М., 1958, с. 95):

րի ամբողջական էությունը վեր հանելու գործում տեսողականի և մտքի միասնականության դերը[6]:

Գեղագիտական նոր մտածողությունը արտահայտություն է գտնում նաև ժամանակի երևելի մյուս գործիչների մոտ՝ Մատթեոս Վանանդեցի, Հովհաննես Հոլով, Ոսկան Երևանցի, Թովմա Վանանդեցի, Աբգար դպիր Թոխաթեցի և այլք[7]:

Եկեղեցու ջանքերի, նախաձեռնության ու եռանդուն գործունեության շնորհիվ պահպանվեցին և մեզ հասան գեղագիտական նշված պատկերացումներին համահունչ նոր արվեստի (XVII-XVIII դդ.) լավագույն ստեղծագործությունները (Էջմիածնի Մայր Տաճարում, ինչպես նաև այլ եկեղեցիներում): Առաջին հերթին նկատի ունենք այժմ Երևանի ազգային պատկերասրահում պահվող «Սևանի Աստվածամայրը»[8], «Աստվածամոր յոթ վերքերը»[9], «Քրիստոս Ամենակալը», «Աստվածամայրը Մանկան հետ», «Աստվածամոր փառաբանումը» և այլն, Ս. Էջմիածնի Վեհարանի թանգարանի «Աստվածամայրը Մանկան հետ», «Աստվածամայրը Մանկան, Գրիգոր Լուսավորչի և Գրիգոր Նարեկացու հետ» և մի շարք այլ կտավներ: Անտարակույս առաջնային դեր ունեցան Հովնաթանյան նկարիչների աշխատանքները[10]: Ավելին, XVII-XVIII դդ. ձևավորվող կերպարվեստի նոր ժանրերը՝ բնանկար, դիմանկար, կենցաղային տեսարաններ, առավելապես կապված էին եկեղեցական որմնանկարչության հետ[11]:

Ահա նոր արվեստի բնականոն զարգացման[12] այս ընթացքը, ներառյալ նաև միջնադարյան մանրանկարչության լավագույն ավանդույթները, ամուր հիմք դարձան և ապահովեցին հայ գեղանկարչության XIX դ. վերջի և XX դ. սկզբի եվրոպական մակարդակը:

Գեղանկարչության ակադեմիական կրթության երախայրիքը մեզ մոտ եղավ Ստեփանոս Ներսիսյանը (1815-1884 թթ.): Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիան ավարտած արվեստագետը որպես աշխատանքի հիմնական ժանր նախընտրեց դիմանկարչությունը,

---

[6] Տե՛ս Հ. Միրզոյան, XVII դ. հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983: Ի դեպ, եկեղեցիներից զատ Ջուղայեցին նկարազարդել է նաև թե՛ հայերի և թե՛ պարսիկների առանձնատներն ու ապարանքները:

[7] Նրանք նաև եվրոպական մշակույթի հետ առնչված մարդիկ են, որոնց ստեղծագործությունների համգամանալից քննությունն սպասում է իր հետազոտողին:

[8] Տե՛ս Ա. Առաքելյան, Սևանի Աստվածամայրը և նրա ստեղծման ժամանակը (Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1983, թիվ 2-3):

[9] Ա. Առաքելյան, «Տիրամոր յոթ վերքերը» կտավի հեղինակի հարցի շուրջը («Լրաբեր», թիվ 5, Երևան, 1981):

[10] Գ. Լևոնյան, Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938. Մ. Ղազարյան, Հայ կերպարվեստը 17-18-րդ դդ., Երևան, 1974:

[11] Մասնավորապես նկատի ունենք Նախիջևան-Գողթն շրջանի եկեղեցիները (Ա. Այվազյան, Նախիջևանի որմնանկարչության արվեստը, Երևան, 1998) և Նոր Ջուղայի «հազար ու մի եկեղեցիները» (Մ. Ղազարյան, նշվ. աշխ.):

[12] «Բնական» ասելով՝ նկատի ենք ունենում արվեստի աստիճանական զարգացման բնականոն (օրինաչափ) ընթացքը, ի տարբերություն շատ այլ երկրների, որոնք զարգացած արվեստ ունեցող երկրներ էին:

թեև նրա անվան հետ է կապվում կենցաղային ժանրի առաջին ստեղծագործությունը հայ կերպարվեստում[13]:

Ստեփանոս Ներսիսյանից հետո ասպարեզ իջավ տաղանդավոր գեղանկարիչների մի ամբողջ համաստեղություն՝ Գ. Բաշինջաղյան, Վ. Սուրենյանց, Ե. Նազարյան, Հ. Շամշինյան, Զ. Զաքարյան, Վ. Խոջաբեկյան, Փ. Թերլեմեզյան, Ս. Աղաջանյան, Ե. Թադևոսյան, Մ. Սարյան...: Նրանցից հատկապես երեքը՝ Սուրենյանց, Թադևոսյան, Սարյան, ոչ միայն համարվեցին համաշխարհային չափանիշների մեծություններ, այլև առավելապես նրանց ստեղծագործությունների հուժկու տպավորությամբ ձևավորվեց անցյալ դարի 20-50-ական թվականների վերելքը: Մենք հատուկ ուշադրություն դարձրինք ակունքների վրա՝ ազգային ավանդույթներ և XIX դ. վերջի և XX-ի սկզբի դասական արվեստ, քանի որ այն սկզբունքային նշանակություն ունի (որոշակիորեն կրելով նաև քաղաքական երանգ) առաջ քաշված խնդրի ճիշտ լուսաբանման համար:

Խորհրդային արվեստագիտական գրականության մեջ այնպիսի տպավորություն է ստեղծված, կարծես թե 1920-1950-ականների հայ կերպարվեստի բուռն վերելքը պայմանավորված էր սոսկ խորհրդային համակարգի մշակութանպաստ ձեռնարկումներով[14]: Չժխտելով այդ կարևոր պարագան՝ միաժամանակ վերելքի հիմնական շեշտադրումները ուղղում ենք ազգային ավանդույթների դաշտը և այդ խորքի վրա XIX դ. վերջում հանդես եկած առավել պայծառ անհատականությունները՝ Սուրենյանց, Թադևոսյան և Սարյան[15]:

Չափազանց բնութագրական է, որ այս խոշոր վարպետներից երկուսն իրենց կայացման շրջանում եղել են Էջմիածնում, ուսումնասիրել միջնադարյան մատենական նկարչությունը, նույնիսկ նկարչություն դասավանդել Գևորգյան ճեմարանում՝ 1890-1892, 1893-1895 թթ.[16]: Ըստ էության հայ միջնադարյան արվեստի քաջիմացությունը կազմեց այն հիմքը, որի վրա ձևավորվեց այդ մեծատաղանդ արվեստագետների գեղագիտական հավատամքը: Մասնագիտական լայն կրթություն ստանալով Եվրոպայի ու Ռուսաստանի նշանավոր հաստատություններում՝ նրանք իրենց ստեղծագործությունների մեջ խտացրին եվրոպական և ռուսական կերպարվեստի լավագույն արժեքները՝ դրանք «անցկացնելով» իրենց անհատական (առել է թե՛ նաև ազգային նախասիրությունների ու ճաշակի) դիտակետով: Հաջորդ սերնդի համար այդ նյութն ավելի հասկանալի էր և ընդունելի: Ահա այս նկատառումով է, որ ընդգծում ենք խորհրդային հայ կերպարվեստի վերելքի գործում նրանց մեծ երախտիքը:

---

[13] Տե՛ս Մ. Ղազարյան, Ստեփանոս Ներսիսյան, «Տեղեկագիր» ՀԳԱ, 1962, թիվ 1: Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, հտ. Գ, Երևան, 1978:

[14] Նման դեպքում՝ խորհրդային նպաստավոր պայմանների առկայությամբ պետք է սպասվեր արվեստի բարձր մակարդակով նաև Միության մյուս հանրապետություններում (Բելոռուս, Մերձբալթիկա, Միջին Ասիա և այլն), մի բան, որը չեղավ:

[15] Չնայած Ե. Թադևոսյանը և Մ. Սարյանը ապրեցին նաև խորհրդային շրջանում (Թադևոսյանը մահացավ 1936 թ., իսկ Սարյանը՝ 1973), սակայն նրանք իրենց ուղենշային գործերը ստեղծել էին նախքան խորհրդային կարգերի հաստատումը:

[16] Եվ ոչ միայն Էջմիածնում: Օրինակ՝ Վ. Սուրենյանցը, լինելով Վենետիկում (1881-1882 թթ.), ամիսներ շարունակ համգամանորեն ուսումնասիրել է հայ մանրանկարչության գեղանկարչական սկզբունքները:

Արդեն XIX դ. վերջում Վ. Սուրենյանցն իր «Լքյալը» նկարով նորություն բերեց հայ կերպարվեստ: Առաջին անգամ հայկական նկարչության մեջ թափանցում են եվրոպական նորարարական արվեստի գեղանկարչական տարրերը, որոնք զուգորդվում են հեղինակի նուրբ գունազգացողության, պատկերն ստեղծելու անհատական ըմբռնումների հետ: Գնալով ավելի ակնառու է դառնում նկարչի հրապուրվածությունը, այսպես ասած, «մոդեռն» արվեստով, այդ ոճի պայմանականությանը, զարդանախշի ընդգծված ոճավորումներին, ճարտարապետական ինտերիերների դեկորատիվ լուծումներին հատկացրած մեծ ուշադրությամբ: Իսկ «Սալոմե» (1905 թ.) կտավը հայ կերպարվեստը հարստացրեց բոլորովին նոր կողմերով, XIX դ. սկզբի համաշխարհային արվեստի տեղաշարժերին համահունչ:

Մեծ եղավ Վ. Սուրենյանցի դերը հայկական գրաֆիկայի, հատկապես գրքի նկարազարդման ասպարեզում: Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի նկարազարդումները հետևողության օրինակ դարձան ոչ միայն հայ, այլ նաև ռուս նկարիչների գալիք սերունդների համար[17]:

«Իր բարձրարվեստ ստեղծագործությամբ Ե. Թադևոսյանը XX դ. առաջին կեսի հայ կերպարվեստի զարգացմանը խթանող մեծանուն նկարիչներից մեկն է», - գրել է արվեստաբան Ե. Մարտիկյանը:

Ե. Թադևոսյանը բազմակողմանի ստեղծագործող է. այդ առումով կարելի է համեմատություն անցկացնել թերևս միայն Վ. Սուրենյանցի հետ, մի բան, որը չի խանգարում նրանց գեղագիտական աշխարհայնեցողության ու նախասիրությունների շահեկան տարբերություններին: Ե. Թադևոսյանի վարպետ աշխատանքները գունանկարում, գրաֆիկական թերթերում, կիրառական արվեստի նմուշներում, խճանկարում, մանրանկարներում, մանրաքանդակում ուսուցման դպրոց դարձան հայ կերպարվեստի երիտասարդ սերնդի համար: Ավելին, Ե. Թադևոսյանի շնորհիվ հայ կերպարվեստագետները մոտիկից շփվեցին եվրոպական նորարարական հոսանքների հետ: Սուրենյանցից հետո Թադևոսյանն էր, որ մեր ազգային կերպարվեստի դասական ավանդույթները, ազգային պատկերամտածողությունը դաշնորեն կապեց XIX դ. վերջի և XX դ. սկզբի համաշխարհային գեղանկարչության ձեռքբերումների հետ և որպես ավարտուն որակ՝ այն թողեց նոր սերնդի նկարիչներին:

Ե. Թադևոսյանն իր խոսքն ասաց նաև դիմանկարի ժանրում: Նկարիչը հավասարապես ուշադրություն է դարձնում ոչ միայն կերպարի ֆիզիմանը, հոգեբանական կողմի վերհանմանը, այլև կտավի ընդհանուր մակերեսի գեղանկարչական կազմակերպման և բովանդակության յուրատիպ մատուցման վրա:

Երրորդ խոշոր անհատականությունը Մարտիրոս Սարյանն է (1880-1973 թթ.): Որպես արվեստագետ նա ձևավորվել է ժամանակի ամենաառաջադեմ մշակութային միջավայրում եվրոպական և ռուսական կերպարվեստի համաշխարհային մեծությունների ազդեցությամբ և նրանց հետ անմիջական շփմամբ: Հարազատ մնալով կերպարի ռեալիստական մեկնաբանությանը՝ իր ստեղծագործական կյանքի հաջորդ փուլում (1904-1911

[17] Բացի գրքի նկարազարդման հիանալի նմուշները, Սուրենյանցը մասնակցություն է ունեցել նաև թատերական բեմանկարչությանը:

թթ.) նա աստիճանաբար հեռանում է ավանդական-ակադեմիական մտածելակերպից՝ ձգտելով պատկերի արտահայտման նոր ձևերի: Որոնումների այդ ճանապարհին նկատելի դեր ունեցավ ֆրանսիական նորագույն շրջանի գեղանկարչության նկատմամբ վերլուծական մոտեցումը: Հրաժարվելով գունաընկալման առօրյա փորձից, դրա անմիջական վերարտադրումից՝ Սարյանը դիմում է հայ իրականության համար անսովոր պայմանական-երևակայական միջոցների, առավել ևս՝ ուժեղացնելով ներկերի զորությամբ օժտված գունալուսավորման տարրերը:

Բնապատկերներում ընդգծվում է բնության հավիտենական շարժման, նույնիսկ համատիեզերական կենսաուժի հավատամքը: Արվեստաբան Վ. Մաթևոսյանի խոսքերով ասած՝ «Սարյանը համաձայն է Գոգենի դեկորատիվ գունամտածողությանը, կռաչափ ծավալների սեզանյան ըմբռնմանը, Վան-Գոգի շեշտված գունագծային տեսակետին ու հայ միջնադարյան մանրանկարչության, որմնանկարչության ու ճարտարապետության մի շարք սկզբունքներին՝ ստանալով մի նոր, բացարձակապես սարյանական արժեք ու որակ»[18]:

Ահա, 1920-1950-ական թվականների կերպարվեստի բարձր վերելքը, խորհրդային համակարգի նպաստավոր պայմաններից զատ, հիմնականում պայմանավորվում է այս երեք խոշոր դեմքերի արվեստով ու գեղագիտական դավանանքով: Նրանք էին այն առաջին մեծությունները, որոնք կարողացան ազգային հարուստ ավանդույթները դաշնորեն հյուսել եվրոպական, մասամբ նաև՝ արևելյան նորագույն արվեստի արժեքների հետ: Ըստ էության, Սուրենյանցի, Թադևոսյանի և Սարյանի արվեստը դարձավ այն ամուր ատաղձը, որն ապահովեց խորհրդային ժամանակաշրջանի կերպարվեստի վերելքը:

[18] Վ. Մաթևոսյան, Սարյան Մարտիրոս, ՀՍՀ, թիվ 10, էջ 239:

## ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

*ԷԼԻԱՆՈՐԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ*
*ԵՊՀ «Հայագիտությունը Ֆրանսիայում*
*XIX դարում» թեմայի ղեկավար*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԴԱՐԱՐՈՂԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ
## *(Հայագետ Անտուան-Ժան Սեն-Մարտենի (1791-1832) մահվան 170-ամյակի կապակցությամբ)*

*«Եթե իմաստունների և հռչակավոր մարդկանց*
*կյանքը պատկանում է ժամանակակից պատմությանը,*
*ապա հետագա սերունդները, իրենց հերթին, նրանց*
*դասերի ու առաքինությունների կարիքն ունեն*
*իբրև հիացմունքի արժանի օրինակներ...»*[1]:

Այս խոսքերով են սկսվում նշանավոր ֆրանսիացի արևելագետ և հայագետ Մարի-Ֆելիսիտե Բրոսսեի հուշերն իր ուսուցիչ, 19-րդ դարի առաջին երեսնամյակի անվանի գիտնական, Պատվո Լեգեոնի շքանշանակիր, հայագետ Անտուան-Ժան Սեն-Մարտենի մասին, որը մեծ ավանդ ունի ֆրանսիական հայագիտության զարգացման գործում:

Ֆրանսիացի մի այլ ականավոր հայագետ՝ Վիկտոր Լանգլուայի խոսքերով, «հայ գրականությունը, Արևելքի ամենաարդյունաշատ և սքանչելի քրիստոնեական գրականություններից մեկը», լուրջ ուսումնասիրության առարկա դարձավ միայն 19-րդ դարի սկզբին, երբ Արևմուտքի աճող հետաքրքրությունը Արևելքի նկատմամբ ձեռք բերեց որոշակիորեն արտահայտված գիտա-ճանաչողական արժեք: Այս լուսավորական շարժման, այդ թվում և հայագիտության կենտրոնը դառնում է Ֆրանսիան:

19-րդ դարի 20-30-ական թվականներին Եվրոպայի բոլոր երկրներից հատկապես Ֆրանսիան է տվել ամենամեծ թվով անվանի գիտնականներ, որոնց երկերը հզոր ազդակ հանդիսացան արևելագիտության զարգացման գործում: Այդ փայլուն համաստեղությանն էր պատկանում նաև Սեն-Մարտենը՝ արտակարգ լայն մտահորիզոնի տեր մի գիտնական, որը 19-րդ դարի 20-ական թվականներին փաստորեն դարձավ արևելագիտության դրոշակակիրներից:

Անտուան-Ժան Սեն-Մարտենը ծնվել է 1791 թ., Փարիզում, բարեկեցիկ վաճառականի ընտանիքում: Արևելյան կենդանի լեզուների բարձրագույն դպրոցում ստացած բազմակողմանի և հիմնավոր գիտելիքների հարուստ պաշարը շուտով ուղենշեցին նրա հետաքրքրությունների ոլորտը և կյանքի հետագա ընթացքը: Նվիրվելով արևելյան լեզուների ուսումնասիրմանը՝ նա երբեք չի հրաժարվում ընտրած ուղուց: Քսաներկուամյա Սեն-

[1] **M.-F. Brosset**, Notice historique sur Saint-Martin, A.-J. Տե՛ս **Le Beau**, "Histoire du Bas-Empire", P, 1832, t.13.

Մարտենը տիրապետում էր արդեն մի քանի արևելյան լեզուների: Հայերենը, որի ուսումնասիրությունը շատ ավելի մեծ ջանքեր պահանջեց լեզվի իսկ բարդությունների և դասագրքերի բացակայության պատճառով, շուտով նրա գիտական նախասիրությունների հիմքը դարձավ: Իսկ մյուս արևելյան լեզուները օգնեցին գիտնականին ավելի լավ ճանաչել Հայաստանը, նրա մշակույթն ու պատմությունը:

Հայտնի է, որ հայագիտությունը ներառում է հայոց լեզուն, գրականությունն ու պատմությունը: Սեն-Մարտենի, ինչպես նաև շատ ուրիշ ֆրանսիացի արևելագետների գործունեությունը շեշտված պատմական ուղղվածություն ուներ: Ոգևորությամբ էին նրանք ձեռնամուխ լինում պատմագրական երկերի ուսումնասիրման և թարգմանության գործին, և բանասիրությունը, սերտորեն կապված պատմության հետ, հուսալի նեցուկ էր նրանց համար: Այսպիսով, Սեն-Մարտենի համար լեզուներ իմանալը միջոց էր, որը նա ի սպաս դրեց պատմությանն ու պատմական աշխարհագրությանը:

Սեն-Մարտենի առաջին աշխատությունը՝ «Պատմական և աշխարհագրական հիշատակներ Հայաստանի մասին», լույս տեսավ երկու հատորով և մեծ ճանաչում բերեց հեղինակին[2]: Գիրքը երկարատև և աշխատատար հետազոտությունների արդյունք էր, որի հեղինակը դիմել էր ոչ միայն հայկական, այլև արաբական, պարսկական, բյուզանդական, ասորական պատմագիրների երկերին՝ համեմատելով դրանք միմյանց և գիտության տվյալների հետ:

Առաջաբանում հեղինակը անդրադառնում է Հայաստանի ժամանակի վիճակին և հայերի արտագաղթին: Իսկ հայերենին նվիրված ակնարկում ներկայացված է լեզվի տարածման ոլորտը Ասիայի և Եվրոպայի երկրներում, ուր ապրում էին գաղթած հայերը:

Հատուկ նշված է հայերի և հայոց լեզվի դերը այդ երկրներում: Համապատասխան փաստարկներ բերելով՝ Սեն-Մարտենը ապացուցում է հայերեն սովորելու անհրաժեշտությունը ինչպես Հայաստանի, այնպես էլ հարակից երկրների պատմությունն ու գրականությունը ուսումնասիրելու համար:

Նա կարևորում է հատկապես հայ պատմիչների երկերը, որոնք «հետաքրքրությամբ են կարդացվում անգամ հռոմեացիների և հույների ստեղծած մեծ գործերից հետո»[3]:

Նա փորձում է նաև բացատրել Եվրոպայի բավականին երկարատև անտարբերության պատճառները յուրօրինակ լեզու և հին քաղաքակրթություն ունեցող Արևելքի այս քրիստոնյա երկրի հանդեպ: Բացի վերը նշված տեղեկությունների անբավարարությունից, իր կարծիքով, այս հարցում վճռորոշ դեր է խաղացել պետականության անկումը: Իրոք, դժվար էր առաջին հայացքից պատկերացնել, որ մի ժողովուրդ, որի մեծ մասը գտնվում էր մահմեդական լծի տակ, իսկ մյուս մասը ցրված էր աշխարհով մեկ, այնուամենայնիվ, դարերից եկած հարուստ մշակույթ և հղկված լեզու ունի: Դժվար էր ենթադրել, որ հայերի գիտության տենչը, ազգային ժառանգությունն ուսումնասիրելու ջերմ ձգտումը մղել էին նրանց Եվրոպայի և Ասիայի տարբեր քաղաքներում բազմաթիվ տպարաններ բացել: Ուստի՝ դժվար էր ենթադրել, որ այդ ժողովուրդն ու նրա երկիրն ավելի լուրջ և խորը ուսումնասիրության են արժանի: Բայց ո՛չ տեղեկությունների պակասը, ո՛չ էլ հեռավոր երկրի ու

---

[2] Saint-Martin A.-J., Memoires historiques et geographiques sur l'Armenie, t.I-II, Paris, 1818-1819.

[3] Saint-Martin A.-J., Memoires historiques et geographiques sur l'Armenie, Paris, 1818, t.I, Preface.

ժողովրդի հանդեպ սառն անտարբերությունը չկարողացան հետ պահել Սեն-Մարտենին ընտրած ուղուց:

Զգտելով վերջ տալ ստեղծված այս անարդար վիճակին՝ Սեն-Մարտենը Հայաստանն իր մեծածավալ արևելյան հետազոտությունների ելակետն է դարձնում:

«Պատմական և աշխարհագրական հիշատակարանների» հեղինակը դժվարին և բարդ աշխատանք կատարեց՝ բազում սկզբնաղբյուրներ ուսումնասիրելով ու վերլուծելով, համեմատելով ու ստուգելով:

Այս գործի առաջին հատորում Սեն-Մարտենը տալիս է Մեծ ու Փոքր Հայքերի պատմական նոր տվյալների վրա հիմնված նկարագրությունը, որը Բրոսսեն արդարացիորեն հսկայական էրուդիցիայի արդյունք է համարում:

Համեմատելով Արևելքի տարբեր երկրների աշխարհագետների հաղորդած տվյալները Հայաստանի մասին՝ Սեն-Մարտենը առաջին հերթին կարևորում է հայ հեղինակների տեղեկությունները:

Հայտնի է, թե որքան կարևոր է գիտնականի համար քննական մոտեցման ունակություն ունենալը, նկատել անհամապատասխանությունները և ուշադրություն դարձնել հետազոտվող երևույթների՝ ուրիշների տեսադաշտից դուրս մնացած կողմերին:

Գրքի երկրորդ հատորում նա գրում է Սյունյաց միտրոպոլիտ Ստեփաննոս Օրբելյանի կյանքի ու գործունեության և Մամիկոնյան ու Օրբելյան տոհմերի մասին: Այս հատորում զետեղված են նաև Ստեփաննոս Օրբելյանի «Պատմությունը» և Մովսես Խորենացուն ու Վարդան Վարդապետին վերագրվող «Աշխարհացույցների» բնագրերը բազմաթիվ մեկնաբանություններով և ծանոթագրություններով: Այս բնագրերը հրատարակված են եղել Սեն-Մարտենից առաջ[4], բայց այստեղ առաջին անգամ հայկական աղբյուրները ուղեկցվում էին եվրոպական լեզվով զուգահեռ թարգմանությամբ: Քանի որ գիտնականի տրամադրության տակ եղած ձեռագրերը հեռու էին բավարար լինելուց, և «Աշխարհացույցի» բնագիրը լի էր հետագա դարերի բացթողումներով, շեղումներով, սխալներով և հավելումներով, ուստի Սեն-Մարտենը բազմաթիվ դժվարությունների հանդիպեց երկի ժամանակը և հեղինակային պատկանելությունը պարզելու հարցում: Արդյունքում՝ նա «Աշխարհացույցը» վերագրեց 10-րդ դարի հեղինակի, սակայն հետագայում բնագրի զանազան խմբագրությունների համեմատությունները ցույց տվեցին, որ այս գործը պետք է գրված լինի 6-7-րդ դարերում:

Երիտասարդ գիտնականի գիրքը շատ մեծ արձագանք առաջացրեց գիտական աշխարհում: Հեղինակի մեկնաբանությունները և եզրակացությունները զարմացրեցին իրենց նորությամբ և համոզվածությամբ, մտքի ինքնուրույնությամբ և Ասիայի պատմությանն ու աշխարհագրությանը վերաբերող վիճելի բավական շատ հարցեր լուծեցին: Իհարկե, պայմանավորված արևելագիտության հետագա զարգացմամբ և նոր հիշատակարանների հայտնաբերմամբ՝ Սեն-Մարտենի համար այնժամ անհասկանալի որոշ հարցեր և հանգամանքներ պարզաբանվեցին, նրա եզրակացությունների մի մասը հնացավ, մյուսները շարունակում էին ուժի մեջ մնալ:

[4] Ստ. Օրբելյանի պատմությունը՝ Մադրասում, 1775 թ., Խորենացու «Աշխարհացույցը»՝ Մարսելում, 1683 թ., Վարդանի «Աշխարհացույցը»՝ Կոստանդնուպոլսում, 1728 թ.:

Գիտական հանդեսները ողջունեցին արևելագիտության հորիզոններն ընդարձակող այդ գործի հրատարակումը, որն անմիջապես իր արժանի տեղը գրավեց արևելագիտական արժեքավոր աշխատությունների շարքում: Ինչպես այդ առթիվ գրում էր Բրոսսեն, անվանելով Սեն-Մարտենի գիրքը «զարմանալի», «հրաշալի», նրա «երախայրիքը և գլուխգործոցը», նման աշխատանքն արժևորելու համար դրվատանքի խոսքերն իսկ բավական չեն: Մի ուրիշ գիտնական, Դյուլորյեի աշակերտ Ժոզեֆ-Անդրե Գատեյրիասը, ավելի ուշ, 80-ական թվականների սկզբին, գրում էր, որ «Պատմական և աշխարհագրական նոթերը Հայաստանի մասին» մնացին որպես մեր դարաշրջանի գիտական ամենահիանալի հուշարձաններից մեկը»: Սեն-Մարտենի ուսուցիչ Ծահան Ջրպետը ասում էր, որ նման աշակերտ ունենալը մեծ պատիվ է:

Այս գործի հրատարակումից շատ չանցած Սեն-Մարտենը ընտրվում է Արձանագրությունների ակադեմիայի անդամ և Արտաքին գործերի մինիստրություն հրավիրվում որպես փորձագետ: Հնագիտական ընկերության քարտուղարի պաշտոնին ավելանում են մի շարք նոր պաշտոններ և պարտականություններ, այդ թվում նաև՝ «Գիտնականների հանդեսի» («Ժուռնալ դե սավան») խմբագիրներից մեկի և Արևելագիտության բարձրագույն դպրոցում հայոց լեզվի ամբիոնի վարիչի:

Արևելքի հանդեպ հետաքրքրության աշխուժացումը և արևելագիտության հաջողությունները 1822 թ. հանգեցնում են Ասիական ընկերության ստեղծմանը: Այդ շարժման ոգեշնչողներից և հիմնադիրներից մեկը Սեն-Մարտենն էր: Կլապրոտի[5] և հայտնի չինագետ Աբել Ռեմյուզայի հետ միասին նա մտնում է ընկերության վարչության կազմի մեջ և շուտով ընկերության տպագիր մարմին «Ժուռնալ ազիատիկ»-ի խմբագիրն է դառնում:

20-ական թվականներին «Ժուռնալ դե սավան» և «Ժուռնալ ազիատիկ»-ում, որը Սեն-Մարտենի ղեկավարությամբ արևելագիտական ամենաազդեցիկ հրատարակություններից մեկն էր դարձել, տպագրվում էին նոր և հետաքրքիր հետազոտություններ, լուրջ բանավեճեր ծավալվում արևելագիտության տարբեր հարցերի շուրջ: Նշանակալից տեղ էին գրավում նաև հայագիտական նյութերը, այդ թվում Սեն-Մարտենի գրչին պատկանող հոդվածներ, թարգմանություններ, գրախոսություններ և հաղորդումներ: Հիշատակենք դրանցից ամենակարևորները. «Մովսես Խորենացու կյանքի և աշխատությունների մասին» (1823), «Հայոց մի ողբերգության վերլուծություն» (1823), «Վարդանի առակները՝ ֆրանսերեն բառացի թարգմանությամբ հանդերձ» (1825), «Սուրբ Ղազար կղզում հրատարակված հայ դասական հեղինակների ժողովածուի մասին» (1828), «Ղուկաս Ինճիճյանի Հին Հայաստանի նկարագրությունը» (1828), «Բուլղարիայի հայկական արձանագրությունների մասին» (1831) և այլն:

1822 թ. «Ժուռնալ ազիատիկ»-ի առաջին համարում տպագրվեց Արձանագրությունների ակադեմիայի հրապարակային նիստում գիտնականի կարդացած զեկուցումը՝ «Արշակունիների ծագման և պատմության մասին», ուր նա զուգահեռ է անցկացնում Արշակունյաց ու Եվրոպայի ավատատիրական կարգերի միջև: Հնադարյան և ժամանակակից Եվրոպայում ու Ասիայում բարքերի, սովորույթների, կրոնի, լեզուների և քերականական ձևե-

[5] Կլապրոտ Ժյուլ-Անրի (1783-1835), արևելագետ, ծագումով գերմանացի, 1814 թվականից ապրում էր Ֆրանսիայում: Երկար ժամանակ մնացել է Սիրիում, Կովկասում:

րի զուգահեռները և ընդհանրությունները նոր էին սկսում գիտական քննության նյութ դառնալ՝ կապված հնագույն ցեղերի, ժողովուրդների գաղթերի և նվաճումների պատմության հետ: Հեղինակի կարծիքով, այս ամենը կարող էր զգալի չափով բացատրվել Արշակունիների ծագումով, որ Արևելք էին եկել Եվրոպայից ու հզոր մի ժողովրդի, դակերի, մաս էին կազմում: Ի դեպ, նշենք, որ Արշակունիների պատմությունը, ի սկզբանե Սեն-Մարտենի ամենանախընտրելի թեման էր:

Սեն-Մարտենի կենդանության օրոք չհրատարակված գործերի մեջ հայտնաբերվել էին Արշակունիների պատմության առանձին հատվածներ՝ չավարտված մի աշխատություն, ուր շարադրված էր Արևելքի հին պատմության ամենահետաքրքիր դրվագներից մեկը: Անակնկալ մահը թույլ չտվեց գիտնականին աչքի անցկացնել, ի մի բերել աշխատության մասերը և վերջնականապես հրատարակության պատրաստել: «Հատվածներ Արշակունյաց պատմությունից» աշխատությունը լույս տեսավ 1850 թ.[6]: Ընդ որում, այդ հետմահու հրատարակության վերնագիրն անգամ վկայում է գործի անավարտ լինելու մասին: Իսկապես, այնտեղ կան բացթողումներ, իրար հակասող հատվածներ, նկատվում է որոշ անհետևողականություն և խիստ կապակցվածության բացակայություն: Դա յուրաքանչյուր լուրջ հեղինակի հայացքներում կատարվող անխուսափելի փոփոխությունների արդյունքն է, քանի որ՝ հիմնարար գործ ձեռնարկելով, աշխատանքի ընթացքում նա նոր տեսանկյունից է քննում փաստերը, դրանց կապը, դեպքերի պատճառականությունն ու հաջորդականությունը:

Սեն-Մարտենի բացառիկ էրուդիցիայի ապացույցն են և Միշոյի «Ընդհանուր հնագիտական բառարանի» համար գրած բազմաթիվ հոդվածները, հին հայկական, պարթևական, եգիպտական, ասորական թագավորների, հայոց կաթողիկոսների, հնադարյան փիլիսոփաների ու պատմաբանների մասին: Նրանցից Արշակ II-ին և այս շրջանի Հայաստանին է նվիրված «Խռովությունների պատմություն՝ Հայաստանը IV դարում, Արշակ II-ի օրոք» աշխատությունը[7]:

Այս աշխատանքը գրելիս նա օգտվել է հռոմեացի պատմաբան Մարցելինոսի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, բյուզանդացի պատմաբան Պրոկոպիոս Կեսարացու տեղեկություններից: Անվերջ պատերազմների ու դավաճանությունների, իշխանների ապստամբությունների, Արշակի անիրավության և պարսից թագավոր Շապուհի նենգ ու դաժան քաղաքականության հետևանքով առաջացած խռովության և ավերածության համատեքստում գիտնականը հատուկ ընդգծում է կաթողիկոս Ներսես Մեծի վեհանձնությունը, երկրի շահերին նպատակամղված գործունեությունը, Հայրապետի մշտական ու գործուն ձգտումը՝ հեռացնել Հայաստանից պատերազմների վտանգը, դժբախտություններն ու աղետները:

---

[6] **Saint-Martin A.-J.**, Fragments d'une histoire des Arsacides, Paris, 1850.

[7] **Saint-Martin A.-J.**, Histoire des révolutions de l'Arménie sous le règne d'Arsace II, pendant le 4ieme siècle, Paris, Journal Asiatique, 1829, t.4, 1830, t.5-6.

1824 թ. Սեն-Մարտենին հանձնարարում են Շարլ Լը Բոյի[8] բազմահատոր «Ներքին կայսրության պատմություն» երկի հրատարակումը: Նոր հրատարակության նպատակն էր լրացնել Լը Բոյի աշխատությունը երկերով, որոնց հեղինակը ծանոթ լինել չէր կարող, այսինքն՝ այն նորով, ինչը երևան էր եկել այդ պատմական շրջանի վերաբերյալ: Սեն-Մարտենը խանդավառությամբ է անցնում գործի և 1824-1830 թթ. ընթացքում հրատարակում է առաջին 10 հատորը՝ այն հավելելով բազմաթիվ բացատրություններով: Հրատարակության հենց սկզբում նշվում էր, որ Սեն-Մարտենն այն լիովին վերանայել, ուղղել և լրացրել է ըստ արևելյան հեղինակների տվյալների:

Այս աշխատությունը անվանելով ֆրանսիային փառք ու պատիվ բերող ամենահայտնի գործերից մեկը և ձգտելով հասցնել այն կատարելության ավելի բարձր մակարդակի՝ գիտնականը հիմնավորում է լրացումների ու ծանոթագրությունների անհրաժեշտությունը նրանով, որ գրքում բացակայում է արևելյան պատմական գրականության հսկայական շերտը: Մինչդեռ վերջինս չափազանց արժեքավոր, թեև հիմնականում դեռ անհայտ սկզբնաղբյուր էր հանդիսանում ասիական երկրների՝ Արևելյան (Ներքին) կայսրության հռոմեացիների ու հույների հետ ունեցած փոխհարաբերությունների, ինչպես նաև Բյուզանդիայի մասին: Այդ անհրաժեշտությունն առավել էր ուժեղանում տվյալ հարցերում հունական և լատինական երկերի ծայրահեղ համառոտությամբ: Հայագետ Սեն-Մարտենի համար անվիճելի էր հայկական աղբյուրների կարևորությունն այդ դարաշրջանի պատմությունը ճիշտ հասկանալու և լուսաբանելու գործում:

Լը Բոյի «Պատմության» առաջին հրատարակության մեջ դրանց շարադրման համառոտությունն ու ակնհայտ անբավարարությունը գիտնականը իրավացիորեն բացատրում է նրանով, որ հեղինակը օգտվում է միայն լատինական հեղինակ Մարցելինոսի տեղեկություններից, որն անցողակի, ի միջի այլոց էր գրում Հայաստանի մասին: Այստեղից էլ՝ բազմաթիվ անճշտություններ և անհստակություններ, սխալ տարեթվեր:

Շատ իրադարձություններ, որ պետք է արտացոլվեին Ներքին կայսրության ամբողջական պատմության մեջ, դուրս էին մնացել ընդհանուր շարադրանքից և, գիտնականի համոզմամբ, «միայն հայ հեղինակների օգնությամբ կարելի է լրացնել այդ բացը»[9]:

Ծանոթագրությունների կապակցությամբ հարկ է նշել, որ Սեն-Մարտենը գիտական աշխատության համար անհրաժեշտ այդ գործի անգերազանցելի վարպետ էր: Բրոսսեի վկայությամբ, այբբենական կարգով նա հավաքել էր 10.000-ից ավելի ծանոթագրություններ Հայաստանի, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության, աշխարհագրության և գրականության վերաբերյալ: Միաժամանակ այդ հետաքրքրագույն աշխատանքը որոշակի վտանգ էր պարունակում իր մեջ՝ գերելով և երբեմն խոչընդոտելով գիտնականի կոնկրետ ծրագրերի ավարտին:

Սեն-Մարտենը հասցրեց հրատարակել «Ներքին կայսրության պատմության» առաջին 12 հատորները, այնուհետև հրատարակությունը շարունակեց իր հավատարիմ աշակերտ

---

[8] Շարլ Լը Բո, (1701-1778), ֆրանսիացի պատմաբան, Արձանագրությունների Ակադեմիայի անդամ, ժամանակին մեծ հռչակ ստացած «Ներքին կայսրության պատմության» հեղինակ:

[9] Le Beau, Ch. Histoire du Bas-Empire, Paris, 1824, t.I, Introduction, p. IX.

ու բարեկամ Բրոսսեն՝ ավարտելով 1836 թ. ուսուցչի լրափոխած այս գիտական հուշարձանը 21-րդ հատորով:

Այսպիսով, Լը Բոյի «Ներքին կայսրության պատմության» նոր հրատարակությունը Սեն-Մարտենի շնորհիվ մի նոր երկ դարձավ՝ իր մեծ նպաստը բերելով արևելագիտության զարգացմանը:

20-ական թվականների վերջում Ֆրանսիայում հետզհետե ուժեղանում է Բուրբոնների միապետական վարչակարգին ընդդիմադիր լիբերալ-դեմոկրատական շարժումը, որը 1830 թ. Հուլիսյան հեղափոխությանն է հանգեցնում: Սեն-Մարտենը, որը պահպանողական կուսակցության համոզված կողմնակից էր, հանդես է գալիս մամուլում՝ ակտիվորեն զբաղվելով քաղաքականությամբ և լրագրությամբ: Նրա գիտական աշխատանքի ընթացքը դանդաղում է, իսկ կյանքը զգալիորեն բարդանում է քաղաքական այս գործունեության պատճառով: Գիտնականը զրկվում է համարյա բոլոր պաշտոններից (բացի ակադեմիական աթոռից և «Ժուռնալ ազիատիկ»-ի խմբագրությունից), նյութական մեծ դժվարություններ է կրում: Այդ ծանր շրջանում նրան հայտնի է դառնում Սանկտ-Պետերբուրգում և Մոսկվայում հարուստ հայկական գրադարաններ ստեղծելու մտադրությունների մասին: Ծրագրվում էր նաև նորակազմ հայկական նահանգներում տեղագրական հետազոտություններ անցկացնել: Սեն-Մարտենը ուղերձով դիմում է աշխարհահռչակ գիտնական Ալեքսանդր Ֆոն Հումբոլդտին, որը վայելում էր ռուսաց թագավորի բարեհաճությունը:

Ուղերձում նա իր ուժերն ու գիտելիքներն է առաջարկում այդ ազնիվ նպատակի համար՝ ներկայացնելով Հայաստանը պատմագրական տեսանկյունից ուսումնասիրելու ընդարձակ մի ծրագիր, որը ներառում էր բազմաթիվ և բազմազան հին հայկական հուշարձանների, արձանագրությունների, աշխարհասփյուռ արխիվային վավերագրերի ու ձեռագրերի որոնումը, հավաքումն ու հետազոտումը:

Բիբլիական հին երկրի միանալը ռուսական պետությանը հույս հարուցեց գիտական աշխարհում, որ այն մատչելի կդառնա գիտական հետազոտությունների համար: Բնականաբար, այդ հույսը տածում էր և Սեն-Մարտենը՝ խոստովանելով իր վաղեմի երազանքը՝ երկարատև գիտական ճամփորդություն կատարել Հայաստան, այն երկիրը, որի շրջանները «մարդկային ցեղի օրրան էին, ինչի մասին վկայում են նաև կրոնի ու պատմության հուշարձանները»[10]:

Սեն-Մարտենի համոզմամբ, այդ հեռանկարային նախագծի իրագործումը Ռուսաստանին փառք բերող կարևոր հետազոտությունների և մեծ հայտնագործությունների աղբյուր էր դառնում: Ըստ գիտնականի, հենց Հայաստանի ու հայ ժողովրդի վրա պետք է հենվի այն ազդեցությունը, որը Ռուսաստանը կոչված էր գործելու Ասիայի հետագա ճակատագրի վրա: Նա չէր կասկածում, որ այդ հետազոտությունների արդյունքը է հանդիսանալու արձանագրությունների արժեքավոր մի ժողովածուի և Հայաստանին նվիրված մի հիմնա-

---

[10] **Сен-Мартен А.-Ж.**, Памятная записка Ал. фон Гумбольдту. Տե՛ս Г. Эзов, Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898, с. 474-479. Առաջին անգամ հրապարակվել է 1893 թ. (հայերեն թարգմանությամբ) Թիֆլիսի «Արձագանք» հանդեսում, էջ 140:

րար աշխատության հրատարակումը: Դրական պատասխան ստանալու դեպքում, Սեն-Մարտենը մտադիր էր 1832 թ. գարնանը Սանկտ Պետերբուրգ մեկնել:

Պատասխանատու այդ առաջարկությունն իրեն հանձնարարելու համար համոզիչ փաստարկ էր ծառայում Հայաստանի իսկական «հայտնագործությանն» ուղղված գիտնականի ամբողջ գործունեությունը՝ անձնվեր և բեղմնավոր:

Սակայն շուտով նա իմացավ, որ ցարական կառավարությունը վաղաժամ է համարում լայնածավալ գիտական հետազոտությունների և ճանապարհորդության գաղափարը՝ նկատի առնելով հայկական նահանգների ծանր վիճակը պատերազմից հետո:

Գիտնականի ուղերձը գրվել էր իր անակնկալ մահից 7 ամիս առաջ:

Սեն-Մարտենը մահացավ խոլերայից 1832 թվականին, 41 տարեկան հասակում: Այդ վաղաժամ մահը ծանր հարված էր նրա բարեկամների, պաշտոնակիցների ու աշակերտների, ամբողջ գիտական հասարակայնության համար:

Արձանագրությունների Ակադեմիայի Սեն-Մարտենի 45-ամյակին նվիրված 1836 թ. հրապարակային նիստում ժամանակի արևելագետները հատուկ նշեցին, որ իր համակողմանի գիտելիքներով և անձանձիր հետազոտական գործունեությամբ նա վաստակել է գալիք սերունդների խոր երախտագիտությունն ու հարգանքը:

Սեն-Մարտենի գիտական ժառանգության մասն են կազմում նաև հայերենից կատարված թարգմանությունները:

Դավրիժեցու մասին իր աշխատության մեջ Բրոսսեն գրում էր, որ հայ պատմիչների ֆրանսերեն թարգմանությամբ մատենաշար հրատարակելու գաղափարը Սեն-Մարտենի մտահղացումն էր: Այդ մասին վկայում են 10 հայ մատենագիրների՝ Փարպեցու, Խորենացու, Եղիշեի և ուրիշների գործերի թողած անտիպ թարգմանությունները:

Մեծ է Սեն-Մարտենի և նրան հաջորդող փայլուն հայագետների համաստեղության վաստակը Հայաստանի հին մշակույթը հետազոտելու և հայ ժողովրդի անցած պատմական ուղին աշխարհին ներկայացնելու գործում: Դա մեզ պարտավորեցնում է խորին հարգանքով և ուշադրությամբ ուսումնասիրել գիտության այդ նվիրյալների ժառանգությունը, որը Ֆրանսիայի արևելագիտության փառքն է կազմում:

## ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

*ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ԱՆԾԱՆՕԹ ԷՋԵՐ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՑ

Ականավոր հայագետ և հռչակավոր բյուզանդագետ, Ս. Պետերբուրգի համալսարանի հայկական և վրացական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցը 1920 թ. ապրիլին ընդմիշտ հեռացավ Ռուսաստանից: Մեկ տարի նա բնակվում է Լոնդոնում, ուր համագործակցում է հայագետ Ֆ. Կոնիբերի հետ, հրատարակում Հայկական հարցին նվիրված մի մենագրություն:

1921 թ. վերջերին Ն. Ադոնցը տեղափոխվում է Փարիզ: Նրա կյանքի փարիզյան տարիները (1921-1931 թթ.) լի են գիտական, ազգային, հասարակական բուռն իրադարձություններով: Նա գործուն մասնակցություն է ունեցել փարիզահայ գրական կյանքի բոլոր նշանակալից իրադարձություններին, ընտրվել է (1928 թ.) Փարիզի Հայ գրական ակումբի նախագահ: Իր մասնակցությունն է բերել երիտասարդ գրողների «Ցարդգող» միության և Փարիզի Սանասարյան ժողովրդական համալսարանի աշխատանքներին, ղեկավարել համալսարանի հայագիտական բաժնի աշխատանքները: Գրական, ուսանողական, երիտասարդական, կանանց, արվեստագիտական և այլ միությունների հրավերներով բազմաթիվ դասախոսություններ է կարդացել հայ կյանքի ամենատարբեր հարցերի վերաբերյալ, թղթակցել հայ և օտար պարբերականներին:

1931 թ. աշնանը Ն. Ադոնցը տեղափոխվում է Բրյուսել, ուր նշանակվել էր տեղի համալսարանի Արևելագիտության բաժանմունքի հայագիտության ամբիոնի վարիչ: Հայագետի կյանքի վերջին տասը տարիները կապված են սույն ամբիոնի հետ: Նա շարունակում է իր գիտական գործունեությունը, հիմնականում տպագրվում ֆրանսալեզու գիտական մամուլում, մասնակցում տեղի հայկական փոքրաթիվ համայնքի աշխատանքներին, երբեմն-երբեմն զեկուցումներով հանդես գալիս Բելգիայի «Հայ երիտասարդական միության» և «Հայ ուսանողական միության» նիստերին:

Ն. Ադոնցի փարիզյան և բրյուսելյան տարիների գործունեության վերաբերյալ արժեքավոր վավերագրեր են պահպանվել նրա անձնական թողոնում, որն այժմ պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցում: Ադոնցյան արխիվը հայտնաբերվել է 1992 թ. վերջերին մեր կողմից[1]: Այստեղ առանձին թղթապանակներով դասավորված են ականավոր հայագետի կյանքի վերջին տարիներին վերաբերող բազմաթիվ արժեքավոր

---

[1] Պ. Հովհաննիսյան, Ե. Փամպուքյան, Ականավոր հայագետ Նիկողայոս Ադոնցի անձնական արխիվը, տե՛ս «Ազդակ» օրաթերթ, Բեյրութ, 1993 թ., 9 մարտի: Նաև՝ «Ազատամարտ» շաբաթաթերթ, Երևան, 1993, 9-15 ապրիլի, «Նպատակ» գիտահասարակական պարբերաթերթ, Երևան, 1993, N 8:

նյութեր, ինչպես նաև հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներով ձեռագիր ուսումնասիրություններ (հիմնականում սևագիր ու անավարտ):

Անցած տարիների ընթացքում այդ աշխատանքներից մի քանիսը հրատարակել ենք: Այժմ ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում աղոնցյան մի թանկագին մասունք ևս, որ կրում է «Հայ հայտնի պետյաններ անցյալում» խորագիրը: Սույն ինքնագիրը գրված է վանդակավոր թղթի վրա ( 21 x 30 սմ), դժվար ընթեռնելի է, իսկ որոշ հատվածներում ուղղակի անընթեռնելի:

Դժվար է հստակորեն ասել, թե այն ե՞րբ և ի՞նչ առիթով է գրված: Թեև կարելի է կռահել, որ կարող էր գրվել 1931-1935 թթ. ընթացքում: Դժվար չէ նաև կռահել, որ այն գրված է որպես զեկուցում: Այս ենթադրության օգտին են խոսում նյութի գիտական ապարատի բացակայությունը, մեծ թվով հապավումները ու կրճատումները, անփույթ ձեռագիրը, ոճը և այլն: Սույն զեկուցումը նա կարող էր կարդալ Փարիզի Հայ գրական ակումբի նիստերից մեկի ժամանակ, ինչպես կարդացել էր «Պռոշյան ընտանիքը Հայոց պատմության մեջ», «Նավասարդ», «Արտավան Արշակունի», «Հայերը բյուզանդական գիտության մեջ», «Խորենացու դերը գրականության մեջ» և այլ զեկուցումներ[2]: Կամ հանդես գալ Փարիզի Նուպարյան մատենադարանի կազմակերպած ասուլիսներից մեկի ժամանակ, որի ընթացքում հանդես էր եկել նաև «Մովսես Խորենացին և իր ժամանակը» դասախոսությամբ[3]: Վերջապես, հայտնի է, որ նա հանրամատչելի ոճով գրված զեկուցումներ է կարդացել նաև Բրյուսելի «Հայ համալսարանականների միության» նիստերում:

Աշխատանքը տպագրվում է նույնությամբ, անհրաժեշտ կետադրական միջամտություններով: Մեր կողմից ավելացված բառերն առնված են ուղղանկյուն` [ ] փակագծերի մեջ: Բոլոր տողատակերը (գիտական ապարատը) կազմվել է մեր կողմից:

Տպագրելով և ընթերցողների ուշադրությանը ներկայացնելով աղոնցյան այս մասունքը, լիահույս ենք, որ այն ամբողջական պատկերացում կարող է տալ մեծ հայագետի գիտական հետաքրքրասիրությունների շրջանակի և դրանց արտահայտման անսպառելի դրսևորումների մասին: Ադոնցի գիտական ժառանգությունը մեզ համար թանկ է և ուսանելի իր դրսևորման բոլոր կողմերով, անգամ հանրամատչելի զրույցների ձևով արտահայտված զեկուցումների տեսքով:

Տպագրվող հոդվածի բնագիրը պահվում է Համազգայինի Բեյրութի գրական պահոցի Նիկողայոս Ադոնցի թղթերում (տե՛ս Պահարան I, գզրոց Գ / Ա 8, թ. 1-8):

[2] Տե՛ս «Հայ մշակույթի օր» ժողովածու, Փարիզ, 1932, էջ 153-155:

[3] «Կյանք և արվեստ» տարեգիրք, Փարիզ, 1932, էջ 165:

*ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ*

# ՀԱՅ ՀԱՅՏՆԻ ԱԽՈՅԱՆՆԵՐ ԱՆՑՅԱԼՈՒՄ

Անձնական քաջությունը, ֆիզիկական ուժը, անհամեմատ շատ ավելի մեծ տեղ ունեին կյանքի մեջ հին ժամանակները, քան ներկայումս: Քաջությունը երկնային էր, համարյա աստվածային: Պատմական մեծ անձնավորություններից շատերը պարտական են գոնե առաջին հաջողություններն իրենց բազուկներին, քան գլխին: Ինքնապաշտպանության և կռվի միջոցներն ու գործիքներն էին լայնալիճ կամ հաստաձիգ աղեղ, պարսատիկ, բոնալիր, նիզակ, տապար ու սուսեր: Ծանր սպառազինություն, երկաթապատ զրահ, պահանջում էին այնպիսի մարմնավոր ուժ, հաղթանդամ կազմվածք, որին բնավ պետք չունի ժամանակակից ինքնաշարժ հրացանը, գնդացիրը և մյուս հրեշավոր անոթները: Որքան մարդկությունը հառաջանում է, այնքան նսեմանում է ուժի կարևորությունը, կարիքը: Պատմության ընթացքը կարելի է բնորոշել որպես հարատև փոխանցումը մարմնավոր և ֆիզիկական զորությունից դեպի մտավոր և հոգեկան ուժի: Բազուկները տեղի են տալիս գլխին: Մարմնավոր քաջությունը որքան հնանում է՝ մնում է անցած դարերի զարդ, այնքան մարդն անձուկով է նայում և կարոտում հին քաջությանը: Հին մարդիկ պատկերվում են որպես տիտաններ, անհաղթելի հսկաներ, անհեթեթ, անձնեղ [–մարմնեղ], մեծանձն, անձնյա, ոչ նման սովորական մարդի:

[Նրանք] պաշտամունքի նյութ են դառնում, համարվում են դյուցազուններ, այսինքն՝ կեսաստվածներ, սերված աստվածներից և մահկանացուներից: Հերակլես դեռ օրորոցում երկու վիշապ խեղդեց, որ Հերան ուղարկել էր նորածին մանկանը սպանելու համար: Անունը կապ ունի հերոս արմատի հետ, լատիներեն՝ սերվ, որ նշանակում է պահել, հսկել, rend-հարուա-haurna-servare-հսկա: Մեր Վահագն էլ է վիշապաքաղ:

Հին մարդիկ փառաբանում են քաջությունը, նրանք ստեղծում են հերոսների տիպարներ և քաջությունը համարում տուրք աստվածային: Քաջությունը տալիս է նաև անմահություն՝ հերոսները երբեմն երկինք են բարձրանում և որպես աստված միանում մյուս աստվածների խմբին:

Բոլոր հին ազգերը քաջության աստված ունեն և քաջության տիպար հերոսներ: Հույնաց՝ Աքիլլես, Տրովա՝ Հեկտոր, պարսից՝ Ռուստամ, հայոց՝ Տորք (մեր քաջության ավելի հին աստվածը և մեր բուն նախահայրն է Հայկ):

Մեր նախնիք ևս մեծապես գնահատում էին քաջությունը: Հայկը հայ ազգի նախահայրն է, հայ ազգի մարմնացումն է: Գեղապատշաճ, անձնյա, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ Հայկը քաջ և երևելի էր հսկաների մեջ: Բելը [Հայկի վրա է արշավում] երկնադեզ հասակով մրցող հսկաներով: Խորենացին Հայկի այս պատկերը քաղել է հիմնվելով հայ առաջնորդի ուժի, նրա անձնական քաջության նկարագրի վրա: Մամիկոնյան, Բագրատունի, Սյունյաց, Ամատունյաց և Արծրունյաց իշխանական տներն այնպիսի դեմքեր են տվել, որ իրապես հերոսներ են: Կուզեմ ներկայացնել պատմական մի քանի դեմքեր, որոնց քաջությունը միայն մարմնավոր չէր, այլ շաղկապված անվեհերության և գերմարդկային խիզախումի հետ: Մարմնավոր ուժն առանց հոգեկան արիության մեռած ուժ է: Սա է, որ շարժում է մարմնավորը, ոգի տալով՝ կրկնապատկում է այն:

Ստորև հիշվող անձինք պատմության մեծ դեմքեր չեն, [նրանք] փայլուն հետք չեն թողել իրենց հետևից: Բայց և այնպես հերոսության տիպարներ են, որովհետև արհամարհելով մահը առնական արիությամբ, դուրս գալով մենամարտության ասպարեզը՝ նրանք փառքով են պսակել իրենց ծնող, սնող ժողովրդին: Պետք է մի վտիտ հարգանքի տուրք տամ նրանց, ովքեր պատիվ են բերել հայությանը որպես մենամարտիկներ: Բյուզանդական [illegible] բանակի մեջ, հազարավորների, տասնյակ հազարների մեջ հանկարծ մի հայ է նետվում ընդդեմ թշնամու՝ իբրև կարող ընդունելու մենամարտը: Ահա նրանք՝ Արտավան[1], Արտավազդ[2], Անզալաս[3], Հովհաննես Գուզես[4], որ վկայված են օտար պատմիչներից[5]:

## ԱՐՏԱՎԱՆ (548 թ.)[6]

## ՍՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ՈՐԴԻ ՄԱՆՈՒԵԼԻ (590 թ.)

590 [թ.] Մորիկ կայսրը փորձեց հայ նախ[արարներին] Թրակիա ղրկել: Սակայն հայոց նախարարները ապստամբեցին և կամեցան «ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր»: Դա արվեց հետևյալ նպատակով. «զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց»[7]: Կայսրը արքունական պատվիրակներին հրովարտակով ղրկեց Հայաստան, սակայն Մանուելի որդի Սմբատ Բագրատունին նրանցից մեկին սպանեց: Բյուզանդ[ացիները] ձերբակալեցին Սմբատին և [ուրիշ] յոթ հոգու հետ տարան մայրաքա-

[1] Արտավան Արշակունի, բյուզանդական բանակի հայազգի զորավար, Հովհաննես Արշակունու որդին: Նախապես մարտնչել է Բյուզանդիայի դեմ, 539 թ. սպանել է Արևմտյան Հայաստան արշաված բյուզանդական զորավարներ Անկիրոսին և Սիտտասին: Այնուհետև ծառայել է Հուստինիանոս I կայսեր: Հյուսիսային Աֆրիկայում մարտնչել է վանդալների դեմ: 545 թ. սպանել է Նումիդիայի զորահրամանատար Գոնթարիսին և հպատակեցրել Նուբիան (546 թ.): Նշանակվել է Նուբիայի կառավարիչ: 548 թ. Հուստինիանոս I-ի դեմ կազմակերպել է դավադրություն, որի անհաջող ելքից հետո բանտարկվել է: Ներում շնորհվելուց հետո նշանակվել է նախ Թրակիայում (549 թ.), ապա Սիցիլիայում (551 թ.) տեղակայված բյուզանդական զորքերի հրամանատար:

Ն. Ադոնցը Արտավան Արշակունուն հատուկ ուսումնասիրություն է նվիրել (տե՛ս «Արտավան Արշակունի», «Հայրենիք» ամսագիր, 1929, N 11, էջ 96-109: Նաև՝ Ն. Ադոնց, Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 297-319):

[2] Արտավազդ (?-542), բյուզանդական բանակի հայազգի զորավար: Աչքի է ընկել գոթերի դեմ մղված իտալական արշավանքների (541-542 թթ.) և հատկապես Վերոնա քաղաքի պաշարման ժամանակ: Ընդունել է գոթերի Վալարիս զորականի՝ իր հետ մենամարտելու առաջարկը և սպանել նրան:

[3] Անզալաս (Ընջալող), բյուզանդական բանակի հայ զորական: 553 թ. Տոսկանա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ ընդունել է գոթերի բանակից Կոկկաս անունով մի քաջ պատերազմողի հրավերը և մենամարտի ժամանակ սպանել նրան:

[4] Հովհաննես Գուզես, բյուզանդական բանակի հայազգի զորավար, Հայաստանի կոմես Թովմայի որդին: Աչքի է ընկել 551 թ. Լազիկայի և Կոլխիսի համար մղված պատերազմներում: Մենամարտի ժամանակ սպանել է հսկա մարմնով մի քաջ ալանի և ապահովել բյուզանդական բանակի հաղթանակը:

[5] Ակնարկում է բյուզանդական նշանավոր պատմիչ Պրոկոպիոս Կեսարացուն: Հայաստանի և հայերի մասին Պրոկոպիոսի վկայությունները տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ Բարթիկյանի, Երևան 1967:

[6] Հատվածը շարադրված չէ: Արտավանի մասին տես ծան. N 1:

[7] «Պատմութիւն Սեբէոսի», աշխատասիրությամբ՝ Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 92:

ղաք: Դատեցին և որոշեցին ձգել կյունիկ[8], այսինքն՝ կրկես: Սմբատ էր «այր անհեղեդ անձամբ և գեղեցիկ տեսլեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով»[9]: Նա «հզաւր և պատերազմող» հռչակվել էր բազում պատերազմներում: [Սմբատն] այնպիսի ուժ ուներ, որ անցնելով «անտառախիտ մայրեաց և զաւրաւոր ծառոց» տակից՝ հաղթանդամ հզոր երիվարին նստած, ձեռքերը բարձրացնում, ծառի ոստից բռնում և իրանքով ու ոտքերով սեղմելով երիվարի մեջքը՝ նրան բարձրացնում էր գետնից վեր: Տեսնողները ահաբեկվում էին ու սաստիկ զարմանում:

Սմբատին մերկացրեցին և թողեցին միայն անդրավարտիքով, այնուհետև նրան ձգեցին կյունիկ, «զի կուր լիցի գազանաց»[10]: Սկզբում նրա վրա արձակեցին արջին (այս և հետագա բոլոր ընդգծումները հեղինակինն են - Պ. Հ.): Սմբատը գոռաց մեծաձայն և գնաց արջի վրա, զարկեց ճակատին բռունցքով և տեղնուտեղ սատակեց: Երկրորդ անգամ նրա վրա արձակեցին ցուլ: Սմբատը բռնեց ցուլի եղջյուրներից, դարձյալ իր աղաղակով ահ ձգեց ցուլի վրա, չարչարեց՝ ոլորելով պարանոցն ու ջարդելով եղջյուրները: Ցուլը թուլացած նահանջեց և փախստական դարձավ: Սմբատը հետևից վազելով «բուռն հարկանէր յագին և ի կճղակն ազդեր միոյ ոտին նորա», ցուլի կճղակը պոկվեց և մնաց Սմբատի ձեռքին: Ցուլը փախավ մի ոտով «բոկ»: (Նման մի քաջություն Խոր[ենացին] վերագրում է Տրդատ [III Մեծին]՝ ասելով, որ հույն մի ըմբիշ հնում «զկճղակ եզին թափեաց», իսկ Տրդատը մի ձեռքով «կալեալ զեղջերէն» երկու վայրի ցուլերի, «թափեաց հանդերձ ընդվզեալ ջախջախմամբ»)[11]:

Երրորդ անգամ կատաղի առյուծ արձակեցին նորա վրա: Երբ առյուծին արձակեցին, Սմբատը ճարպկորեն բռնեց նրա ականջից և նստեց մեջքին: Այնուհետև ձեռքը տարավ խոռոչափողը և սեղմելով խեղդեց առյուծին: Ամբոխը ոգևորությամբ ողջույնի աղաղակներ բարձրացնելով գոչեց և դիմեց կայսեր, որ ների հայ իշխանին: Իսկ Սմբատը հոգնած, հանգիստ էր առնում նստած առյուծի վրա: Կայսրուհին և կայսրը ողորմացին նորան, ներում շնորհեցին և բաղանիս դրկեցին: Այստեղ Սմբատին լվացին, հանդերձավորեցին և պալատ տարան: Հետագայում Սմբատը զրպարտության զոհ դարձավ և աքսորվեց «ի կղզիս հեռաւորս»[12], ապա կայսրը հրամայեց այնտեղից նրան տեղափոխել Աֆրիկա՝ տալով նորան զինվորական տրիբունի պաշտոն:

## ՍՄԲԱՏ ՎՐԿԱՆԻՑ ԽՈՍՐՈՎ ՇՆՈՒՄ[13] ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (+607 թ.)

Քուշանաց թագավորը Հեփթաղաց աշխարհում (Թուրքեստան) մեծ կազմությամբ ճամբարեց Սմբատի դեմ: Հեփթաղը պատգա[մավոր] ղրկեց Սմբատի մոտ.

---

[8] Բացօթյա կրկեսի բեմ, որի վրա տեղի էին ունենում կառամարզումներ, ցլամարտեր և այլ մրցումներ:

[9] Սեբէոս, էջ 92:

[10] Անդ, էջ 93:

[11] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 218:

[12] Սեբէոս, էջ 93:

[13] Սեբեոսի հրատարակիչներից Թ. Միհրդատյանցը («Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Կ. Պոլիս, 1851, էջ 104), Ք. Պատկանյանը («Պատմութիւն Սեբէոսի...», Ս. Պետերբուրգ, 1879, էջ 65), Գ. Աբգարյանը («Պատմութիւն Սեբէոսի», Երևան, 1979, էջ 101) նախընտրել են «Շում» տարընթերցվածը:

- Ի՞նչ օգուտ այսպես խառնամբոխ մտնել պատերազմի մեջ և սպանել մեր զորքը: Ին-
չո՞վ պիտի ճանաչվի իմ և քո քաջությունը: Արի՛, միայն ես և դու մենամարտենք: Ես այս-
տեղից, իսկ դու՝ այդտեղից եկ ախոյան. «զի այսպէս ծանիցի քեզ քաջութիւն իմ»[14]:
Սմբատը պատասխանում է. «Ահաւասիկ պատրաստ եմ ի մեռանել»: Երկար հարձակ-
վեցին միմյանց դեմ և կռվեցին ի տես երկու բանակների: Սակայն չէին կարողանում միմ-
յանց հաղթանել, որովհետև հսկայազորք (և ոչ «սակաւազաւրք», ինչպես տպված է, տե՛ս
Ք. Պատկանյանի հրատարակությունը, էջ 67)[15] և կուռ սպառազինյալ էին: Վերջապես
Սմբատին հաջողվեց ձգել նիզակը, պատռել վերտ և ամուր (ոչ վերտնամուր)[16] ու կուռ
զրահի ամրությունը և [Քուշանաց թագավորին] գետին տապալել[17]: Իսկ Քուշանաց զոր-
քը «իբրև տեսին զարքայն իւրեանց՝ զարհուրեցան և դարձան գնացին փախստական»[18]:

## ՎԱՍԻԼ ՄԱԿԵԴՈՆԱՑԻ (շուրջ 820-886 թթ.)[19]

## ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (973 թ.)

Անիի Գագիկ Շահնշահի մահից հետո նորա երկու որդիները՝ Հովհաննես-Սմբատ և Աշոտ գժտվեցին[20]: Աշոտը Արծրունյաց թագավոր Սենեքերիմից զորք է ստանում և շարժվում իր եղբոր վրա: Այդ ժամանակ որպես դեսպան Հովհաննես-Սմբատ թագավորի մոտ էր մի վրաց իշխան: Սա պարծենալով խնդրում է, որ Հայոց թագավորն իրեն թույլ տա գնալ և բռնել կենդանվույն Աշոտին և վերջ դնել արյունահեղությանը: Հովհաննես-Սմբատն ասում է. «Այր հզօր է Աշոտ, դու զիա՞րդ կարես անել գնա առաջի իմ»: Վրացին պատասխանում է. «Ի ձիոյն առից զնա կենդանի»: Սակայն Հովհաննես-Սմբատ թագավորը զգուշացնում է վրացուն, թե «առյուծի ձագին մի արհամարհիր, մինչև որ տեսանես»: Վրաց իշխանն արծվի նման սլացավ Աշոտի վրա՝ գոռալով. «Ո՞վ է Աշոտը, թող առաջ գա»: Աշոտը զայրացավ ինչպես ինձ և վրացին մինչ ուզում էր նիզակով զարկել, Աշոտը կայծակի արագությամբ հանեց պողովատիկ սուրը և այնպես հարվածեց սաղավարտին,

---

[14] Սեբէոս, էջ 102:

[15] Մեկ այլ կապակցությամբ Ն. Ադոնցը բառս սրբագրել է «սկայազաւրք» (տե՛ս «Պատմական ուսումնասիրություններ», էջ 118): Այսպես է վարվել նաև Գ. Աբգարյանը (էջ 103):

[16] Ստ. Մալխասյանցը բառը հենց այդպես էլ սրբագրել է («վերտ և ամուր», տե՛ս Ստ. Մալխասյանց, էջ 69), սակայն Գ. Աբգարյանն առաջարկում է «վերտամուտ» տարբերակը (տե՛ս Գ. Աբգարյան, էջ 103, հմմտ. էջ 270-271, ծան. 312):

[17] Հմմտ. Բասլաց թագավորի դեմ մարտնչող Տրդատ III Մեծի զրահը՝ «վերտ պահպանակօք» (տե՛ս Մովսէս Խորենացի, էջ 230):

[18] Սեբէոս, էջ 103:

[19] Ն. Ադոնցը թեև խորագրել, սակայն այս հատվածը չի շարադրել: Այլ առիթներով նա անդրադարձել է Վասիլ I կայսեր պատմական նկարագրին (տե՛ս «Վասիլ Հայկազն», «Հայրենիք» ամսագիր, 1931, N 8, 9, 10, 11, հմմտ. նույնի ֆրանսերեն տարբերակը «Byzantion» հանդեսի 1933 թ. համարներում, տե՛ս նաև N. Adontz, Etudes Armeno-Byzantines, Lisbonne, 1965):

[20] Զարմանալի է, սակայն Ն. Ադոնցը չի ուղղել Մատթեոս Ուռհայեցու մոտ նկատվող այս ակնհայտ անախրոնիզմը: Հայտնի է, որ Գագիկ I Շահնշահը մահացել է 1020 և ոչ թե 971/972 թվականին: Հետևաբար, նշված դեպքերն էլ տեղի են ունեցել 1020 թվականից հետո:

որ վրացու երկաթապատ մարմինը պատառեց, մինչև ստինքը երկուսի բաժանեց և «հանդերձ միջօքն յերկիր ընկենոյր»[21]:

## ՎԱՍԱԿ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ, ԲՋՆՈ ԻՇԽԱՆ (1021 թ.)

Թագավորը Դելումաց (դելմիկների - Պ. Հ.) եկավ և ավերեց Նիգ գավառը: Հայոց սպարապետ Վասակն իր որդի Գրիգորի[22] հետ ելավ նրանց դեմ: Վասակը չէր կարող սպասել, որ մինչև զորքը հավաքվի: Նա հինգ հարյուր մարդով առաջ անցավ: Այլազգիների զորքից դուրս եկավ մի ախոյան՝ սև խափշիկ, որ կոչվեր Ցոթ գայլն, որ իբրև «սև ամպ որոտալով, բոց արձակելով իր զրահներից» Վասակին կանչեց մենամարտի: Վասակի ենթակաները սարսափած էին, քանզի «նման մի մարդ դեռ երկրի վրա չէր ծնվել»: Վասակը հանգստացրեց նրանց և ասաց. «Ես դուրս կգամ նրա դեմ և նրան կտամ այն նույն պարգևը, ինչ Գավիթը տվեց Գողիաթին»: Խափշիկը գազանաբար վրա հասավ, որ գեղարդի վրա առնի Վասակին: Իսկ Վասակը փութաց և պողովատ թրով այնպես խփեց խափշիկի գլխին, որ նրա սաղավարտը երկուսի բաժանվեց, իսկ «մասունք մարմնոյ յերկիր անկանէին»[23]:

## ՀԱՍԱՆ ԵՎ ԾՆԾՂՈՒԿ (1042 թ.)

[Հասանը և Ծնծղուկը] Վասպուրականի Խաչիկ իշխանի որդիներն էին: [Նրանք] նոր էին վերադարձել Թրակիայից, ուր կռվել էին կայսրության թշնամիների դեմ: Իրենց բացակայության ժամանակ Խաչիկ իշխանը և նրա կրտսեր որդին՝ տասնհինգամյա պատանի Իշխանը, զոհ էին գնացել Սալմաստի մուսուլման ցեղերի հարձակումների ժամանակ:

Վրեժ լուծելու համար մի քուրդ են կաշառում և ղրկում Սալմաստ՝ լուր տարածելու, թե Խաչիկ իշխանի կալվածքն անպաշտպան է, «զի՞ կայք պարապ»՝ ոչխարների բազում հոտեր անտերունչ թափառում են: Քուրդն այդպես էլ արեց: Այլազգիները 15 հազարով արշավեցին [Վասպուրական]: Հասան և Ծնծղուկ ունեին 5 000 զինվոր:

Որպես «խոցված գազան» Հասանը հարձակվելով թշնամու բանակի վրա ձայն է տալիս. «Ո՞վ է, ո՞ւր է այն մարդը, որ սպանեց հորս՝ Խաչիկին, թո՛ղ առաջ գա»: Եվ ահա դուրս եկավ մի այլազգի սև մարդ և հզոր ձայնեց. «Ես եմ, որ սպանեցի առյուծ Խաչիկին և ահա նրա պատերազմական ձին, զգեստը, նշանակն ու թուրը ձեռքիս է»: Հասան տեսնելով հոր ինչքը սկսեց լալ և թուրը հանելով պատյանից, առյուծի պես սլացավ նրա վրա և հարվածելով երկու կտոր արեց, գետին տապալեց և [հոր] ձին ու նշանակը խլեց:

Նման կերպով ձայն տվեց և Ծնծղուկը. «Ո՞վ է սպանել իմ մանուկ եղբորս՝ Իշխանին, թո՛ղ ատյան դուրս գա, որ տեսնեմ նրան»: Դուրս եկավ մի քաջ պարսիկ և ասաց. «Ես եմ քո եղբայր Իշխանին սպանել, ահա նրա սպիտակ ձին, վառ նշանակը և թուրը»: [Ծնծ-

[21] Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 9:

[22] Խոսքը վերաբերում է նշանավոր քաղաքական ու ռազմական գործիչ, մատենագիր, փիլիսոփա, մանկավարժ Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն (990-1058 թթ.):

[23] Մատթէոս Ուռհայեցի, էջ 13-14:

ղուկը] կայծակի նման վրա հասավ, մի հարվածով սատակեցրեց նրան և առնելով [եղբոր] ձին և նշանակը դարձավ հետ:

Հայոց զորքերը խանդավառված հարձակվեցին թշնամու վրա, «դարձուցին ի փախուստ և կոտորեցին ի նոցանէ արս չորս հազար»[24]:

## ԱՐԿՆԻ ԱՄՐՈՑԻ ԻՇԽԱՆ ՀԱԲԵԼԻ ՀԱՐՊԻԿ, ԴԱՎԻԹ, ԼևՈՆ ԵՎ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՈՐԴԻՆԵՐԸ (1052 թ.)

Քաու և ննգավոր մարդիկ գնացին [Կոստանդին] Մոնոմախ կայսրի մոտ և ամբաստանեցին Չորրորդ Հայքի Պաղին գավառում բնակվող հայոց իշխաններին, թե նրանք «անարգանդ կան հրամանաց քոց և կամին ապստամբ լինել ի քէն»[25]: Բյուզանդացիները առնվազն կան հրամանաց... 

Բյուզանդացիներն ավերեցին բովանդակ գավառը: Նրանք ցանկացան ձերբակալել նաև Արկնի կոչված մեծ ամրոցի տեր Հաբել իշխանի չորս քաջ և հզոր որդիներին՝ Հարպիկին, Դավիթին, Լևոնին և Կոստանդինին: Եղբայրներից ավագը՝ Հարպիկը, ննգությամբ զոհ գնաց, մյուսները գերի տարվեցին մայրաքաղաք:

Կայսրը և բոլոր հույները ապշել էին տեսնելով նրանց ահեղ արտաքինը («սոսկալի տեսիլ կերպարանացն»), քանզի իրենց հաղթանդամությամբ նրանք գերազանցում էին բոլոր հույներին («ահատր էին տեսլեամբ և թիկամբքն հանդերձ բարձր էին քան զամենայն տունն Յունաց»): Կայսրը նրանց գեղեցիկ, հաղթանդամ արտաքինը նկատի ունենալով մարմնական ոչ մի պատժի չենթարկեց, այլ հրամայեց քաջ, հզոր և երևելի իշխաններ Դավթին, Լևոնին և Կոստանդինին կղզի աքսորել[26]:

## ՄԱԴԻՈՆ ԱՐԾՐՈՒՆԻ (1256 թ.)

[Մոնղոլական] Մանգու Մեծ խանի կողմից Հայաստանի, Վրաստանի, Իրանի և Մերձավոր Արևելքի կառավարիչ Հուլավու խանի մոտ է գալիս «մուղալ ազգաւ» (=մոնղոլ) հույժ ահագին, երկայն հասակով, թիկնեղ, շլինքը «գերդ զգոմիշու», ձեռներն անճոռնի իբրև արջի, մի մարդ: Սա ամեն օր ուտում էր մի ոչխար: Նա Մանգու խանից գիր էր բերել և մի անգին կապա: Գրի մեջ ասված էր, թե իմ եղբոր Հուլավու խանի մոտ եթե գտնվի մի բավքա (=ըմբիշ), որ գետնի այս ըմբիշին, թո՛ղ նրան լինի կապան: Իսկ եթե այս բավքան հաղթե, թո՛ղ կապան նրան հագցնեն և մեծ դեսպանությամբ ու պատվով հետ ուղարկեն իր մոտ:

Հուլավուն կանչեց իր զորքերի բոլոր գլխավորներին և հարցրեց, թե գիտեն ո՞րևէ մարդ թաթար, հայ կամ վրացի, որ կարողանա մենամարտել Մանգու խանի բավքայի հետ: Սակայն թաթարների մեջ այդպիսի մեկը չգտան, քանզի «ով տեսանէր զայրն զայն՝ ամենայնն վախէին ահագին հասակէն և ի տեսոյ նորա»: Իսկ հայ և վրացի իշխաններն

[24] Անդ, էջ 92:

[25] Անդ, էջ 109:

[26] Եղբայրներն աքսորում մնացին մինչև 1056 թ., երբ Թեոդորա կայսրուհին «մեծաւ փառաւորութեամբ արձակեաց զնոսա ի հայրենի աշխարհն իւրեանց ի բերդն Արկնի» (անդ, էջ 122):

ասացին, որ միայն մի մարդ կա, որ կարող է ճար լինել, այդ Արծրունյաց Սադուն իշխանն է, բայց այստեղ չէ, «այլ կայ ի տուն իւր»: Սադունը «էր երկայն և վայելուչ հասակաւ, յոյժ ուժեղ ի մանկութենէ»[27] և մենամարտերի մեջ փորձառու ու կիրթ:

Խանը մարդ ղրկեց նրա հետևից: Լսելով հրամանը Սադունը խիստ տրտմեց, որովհետև երբեք չէր մենամարտել խանի առաջ, իսկ հաշվակիցը ահագին էր և ուժով: Սադունը նախ գնաց Գագ՝ «առ ամենահաս Սուրբ Սարգիսն» և ուխտ ու մատաղ արեց, ապա ճանապարհ ընկավ Հուլավուի մոտ: Երբ խանը տեսավ Սադունին, նրա կորովը և երկայն հասակը՝ հույժ ուրախացավ: Նա հրամայեց, որ երկու ըմբիշներն ինը օր միասին կենան, որ օրն ուտեն մի ոչխար և խմեն մի տիկ գինի:

Երբ սահմանված օրերն անցան, [խանը] հրամայեց բոլոր գլխավորներին ժողովել իր առջև և կանչելով երկու ըմբիշներին հրամայեց մենամարտել: Երեք ժամ տևեց մենամարտը՝ ցերեկվա ժամը 3-ից մինչև 6-ը, և ըմբիշները չէին կարողանում միմյանց հաղթել: Սակայն Սադունը ուժգին թախմամբ զգետնեց Մանգու Մեծ խանի ախոյանին և հույժ բարձրացավ Հուլավու խանի աչքին: Խանը յարլիկ («խաոյախ») գրեց «և թողուլ նմայ մինչև ի յինն գունահն»[28]:

[27] «Պատմութիւն թաթարաց Վարդանայ պատմչի», Երուսաղեմ, 1870, էջ 47:
[28] Նույն, էջ 49:

ԳՐԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

# ԽՄԲԱԳԻՐԸ, ԲԱՆԱՍԵՐԸ, ԴԻՎԱՆԱԳԵՏԸ

«Մուղնի» հրատարակչությունը լույս է ընծայել «Երվանդ Մելքոնյան. բանասերն ու դիվանագետը» գիրքը, որում ամփոփված են կյանքից վաղաժամ հեռացած գիտնականի գործերի ընտրանին և մամուլում հրապարակված գնահատանքի խոսքերն ու հուշերը նրա մասին:

Ինչպես առաջաբանում գրում է հատորը հրատարակության պատրաստած Սանդրո Բեհբուդյանը, հայ մշակույթին, Եկեղեցուն, հայրենիքին նվիրված Երվանդ Մելքոնյանը կարճատև, սակայն բեղմնավոր կյանքում ծավալեց բազմաշերտ գործունեություն և կարողացավ թողնել հայագիտական մնայուն ուսումնասիրություններ՝ իր անունը կապելով հայ բազմադարյան հոգևոր մշակույթի հետ: Ներկայացվող հատորում ընդգրկված են «Դավիթ Զեյթունցի քերական», «Վրթանես Քերթողը և պատկերամարտությանը», «Հեսիքոս Երուսաղեմացու մի նորահայտ ճառը», «Վկայաբանություն Սուրբ Շուշանիկի», «Բացատրական բառարանների կառուցվածքը հայ բառարանագրության մեջ», «Մովսես Խորենացին «Արարատ» և «Էջմիածին» ամսագրերում» և մի շարք այլ գործեր:

Սիրիայի Կամիշլի քաղաքում հանգրվանած եղեռնազարկ ընտանիքում 1944 թ. ծնված Երվանդ Մելքոնյանը ծննդավայրում նախնական, Անթիլիասի դպրեվանքում հոգևոր ու Մայր Հայրենիքում բարձրագույն կրթություն ստանալով, նվիրվում է բազմաշերտ գործունեության:

Երևանի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ապա ասպիրանտուրան փայլուն ցուցանիշներով ավարտելուց հետո, նա աշխատանքի է անցել Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտում: Ինչպես ինքն է գրում, «Ավարտաճառս Լվովի Հաճկապար Սուրբ Աստվածածին եկեղեցվո ճեմարանի տեսուչ, լուսամիտ մանկավարժ Դավիթ Զեյթունցի քերականի «Մեկնություն քերականի» քերականության դասագիրքն էր՝ կազմված հարց ու պատասխանի ձևով: Այդ մեծ քերականագետ-գիտնականը կգծեր միջնադարյան հունատիպ քերականությունների շրջանը և նախակարապետ կդառնար լատինատիպ քերականության՝ հիմն-

ված լատիներենի և եվրոպական լեզուներու ուսումնասիրության վրա: Հետո սկսավ գրաբար-աշխարհաբար թարգմանական բառարանի կազմության բազմամյա աշխատանքը Գիտությունների Ազգային Ակադեմիայի Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտին մեջ: Մոտ 50 հազար բառ հաշվող բառարանը կսպասե իր խմբագրին և հրատարակության»:

«Անուղղելի» հայրենասեր Երվանդ Մելքոնյանի գիտա-մշակութային և մանկավարժական գործունեությունը նոր թափ ստացավ «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմագիր և Մայր Աթոռի գրաբարի դասախոս աշխատելու տարիներին:

Գրքում գրաբար և աշխարհաբար ներկայացված Վրթանես Քերթողի «Պատկերամարտների մասին» թուղթը, որն այդ թեմայով հայտնի առաջին գործն է ընդհանուր եկեղեցական գրականության մեջ, հաստատում է այն ենթադրությունը, ըստ որի պատկերամարտական շարժումը եղել է Հայաստանում մոտավորապես մեկուկես դար առաջ, քան Արևմուտքում: Թուղթը շատ կարևոր է նաև հայ նկարչության պատմության համար: Վրթանես Քերթողը հիշատակում է Սուրբ Գրիգոր Լուսավորչի, Գայանեի և Հռիփսիմեի նկարների մասին, հետևաբար այդ պատկերները պետք է լինեին հայ նկարիչների ստեղծածները, ուստի Մելքոնյանը ենթադրում է, որ արդեն 5-6-րդ դարերում կար նկարչության հայկական դպրոց:

Ժխտելով պատկերամարտների տեսակետը եկեղեցիներից պատկերները հանելու մասին, Վրթանես Քերթողը նշել է. «Կուռքերի մեհյաններում կան Աստղիկն ու Աֆրոդիտեն, նրանց ազդեցություններն ու անառակությունները, իսկ Աստծո եկեղեցիներում Տերունական Խաչը և առաքյալների ու մարգարեների խաչակիր գծերը, որոնք վերացրին ողջ կռապաշտությունը և փինզերքը բերին դեպի աստվածպաշտության՝ ամաչեցնելով սատանային և իր զորքերին»:

Հասարակական գործիչ, հոգիի մարդ Երվանդ Մելքոնյանի խորին համոզմամբ, Հայաստանում տեղի ունեցող կործանիչ երկրաշարժի օրը երկրագունդը ափերի մեջ առավ աղետյալ Հայաստանը և այն դարձավ մարդկության ցավը: «Հավատանք, ուրեմն,- գրեց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիրը,- որ Հայաստանը մի օր կդառնա մարդկության սերը, քանի որ մարդկությունը իր այս փոքր ածուից միայն հոգու շռայլություն է տեսել, համաշխարհային մտքի անդաստանում սփռած պաշտամո՛ւնք է տեսել, ու պիտի գուրգուրա նրան ու անվտանգ պիտի պահի, քանզի մարդկության հոգու ջերմության մի կայծն է հայ ժողովրդի ոգու արգասիքն է»:

Արդարև: Երկրաշարժի արհավրալի օրերին տասնյակ-հարյուրավոր մարդիկ իրենց արյունից բաժին հանեցին արյունաքամ հայ մարդուն: Աղետը, իրոք, միավորեց մարդկությանը սրտաչափ Հայաստանի շուրջը:

Բեյրութի «Արարատ» թերթին տված հարցազրույցում փոխանցելով իր հուշերը երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի մասին, «զոր իբրև մարդ, մտավորական, հոգեբան, ուսուցիչ, դաստիարակ և մանավանդ կարկառուն եկեղեցական ճանչնալու բախտն ու պատիվն ունեցած եմ ըլլալով անոր երկարամյա պաշտոնակիցը, գործակիցն ու բարեկամը», Մելքոնյանը գրում է, որ Վազգեն Ա Վեհափառը «Ամենեն շատ մտահոգ էր Եկեղեցվո ազգային առաքելությանը, որովհետև կհավատար, որ Եկեղեցին լուրջ ընելիք ունի, մանա-

վանդ Հայաստանի անկախացումեն հետք: Վեհափառը ժամանակը հրատապ համարեց ժողովրդի հոգևոր վերադաստիարակության համար, բայց, դժբախտաբար, Եկեղեցին պատրաստ չէր և բավարար հոգևոր կրթիչներ չուներ: Հողը պարարտ թեսնելով Հայաստան թափանցեցին կարգ մը աղանդներ: Այն ժամանակ Վեհափառը վճռական էր Եկեղեցին վերակազմելու ու իր ժամանակին և համապատասխան ջանքերով նախաձեռնեց կիրակնօրյա դպրոցներ բանալ, Հայ Եկեղեցվո երիտասարդական միություններ գոյացնել: Եվ, անշուշտ, եթե Աստված կյանք շնորհեր, շատ ընելիքներ ուներ»:

1994 թվականից Երվանդ Մելքոնյանն իր հարուստ փորձն ու գիտելիքներն ի սպաս դրեց հայ դիվանագիտությանը: Աշխատանքի անցնելով Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության համակարգում՝ նա մեծ ներդրում ունեցավ հայ-լիբանանյան միջպետական հարաբերությունների հաստատման և Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանության հիմնադրման գործում:

Անուրանալի է Հայաստանի Հանրապետության առաջին արտակարգ ու լիազոր դեսպան Մելքոնյանի անձնական ավանդը Հայաստանի և Լիբանանի միջև համակողմանի համագործակցության ծավալման ու բարեկամական կապերի ամրապնդման, Հայոց պետականության շուրջ լիբանանահայությանը համախմբելու հայրենանվեր գործում:

Թե՛ հոբելյանական միջոցառումներին ու մշակութային հանդիպումներին, թե՛ Բեյրութի «Արծիվ» գրական, մշակութային, կրոնական և ընկերային շաբաթաթերթին, թե՛ «Արարատ» լրագրի թղթակից Լյուսի Զուլֆայանին, թե՛ Հայաստանի հանրային ռադիոյի հոգևոր հաղորդումների բաժնի խմբագիր Սիլվա Սուքիասյանին տված հարցազրույցներում և թե՛ Լիբանանի հայկական դպրոցներում կազմակերպված միջոցառումներին իր ելույթներում նա, որպես պետության ներկայացուցիչ, արժևորել է հայ-լիբանանյան ամրապնդվող բարեկամությունը՝ Մայր Հայրենիքում ու Սփյուռքում ազգային արժեքների պաշտպանումն ու գնահատումը համարելով յուրաքանչյուր հայի սրբազան պարտքը:

Ազգային արժեքների նկատմամբ պատասխանատվությունը հայրենապաշտ դիվանագետի խորին համոզմամբ, «պիտի ըլլա Հայրենիք-Սփյուռք նոր հարաբերությունների մեկնակետը: Արժեք առաջին. ձեռք բերված անկախությունը՝ չվտանգել զայն: Արժեք երկրորդ. պետականություն՝ մասնակցել կայացմանը: Արժեք երրորդ. մշակութային ժառանգություն՝ իրացնել ու կրել մեր մեջ: Արժեք չորրորդ. պատմական ժառանգություն՝ փոխանցել հաջորդ սերունդներին: Արժեք հինգերորդ. ազգային արժանապատվություն՝ պահել հպարտ, հեռու չերաշխավորված հավակնություններե: Արժեք վեցերորդ. ազգային բարոյականություն՝ անխաթար պահել: Եվ արժեք յոթերորդ. ազգային համակամություն՝ ոչ՛ մեկություն և երբե՛ք միակություն ու մինակություն, այլ ամբողջացյա՛լ, հանուն ամբողջական փեսլականի»:

«Հպարտանալ ազգով ու անոր ստեղծած արժեքներով, լավ է, բայց ավելի լավ է ապրել այնպես, որ ազգդ քեզանով հպարտանա»: Այս նշանաբանով ապրեց ու աշխատեց Երվանդ Մելքոնյան բանասերն ու դիվանագետը՝ թողնելով բարի անուն ու քաղցր հուշեր մտերիմների, ընկերների հիշողությունում ապրելու համար Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի բնորոշմամբ որպես «Երվանդ քաղցրս»:

# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԳՐԻԳՈՐԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԸ

Կիրակի, մայիսի 4-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Նորին Սրբություն Շենուդա Գ Պապ-Պատրիարքի հանդիսապետությամբ մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի փոնակատարությունների ծիրից ներս այս անգամ ուխտավորաբար Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի ուխտապահ ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը:

Պատարագի ընթացքին երկու քույր Եկեղեցիների Հովվապետերն իրենց օրհնությունն ու պատգամը փոխանցեցին հավատացյալներին: «Մեր հայցը այսօր երկինք է բարձրանում Աշխարհամատրից ծավալվող լույսով, որ նորոգեց աշխարհը և առաքելական ժամանակներից բնակվում է նաև Հայաստանում ու Եգիպտոսում: Եվ թեպետ հեռավոր անցյալի չափանիշներով մեր երկրները աշխարհագրորեն միմյանցից բավականին հեռու են, սակայն այն հավատակերտ ժամանակներից ի Քրիստոս հաղորդությամբ մեր ժողովուրդներին միացրել է մեկ, ընդհանրական, առաքելական և Սուրբ Եկեղեցին: ...Նույնն է և մեր առաքելությունը, որ եղբայրական սիրով զորացած պիտի շարունակենք, որպեսզի հավատքը, հույսը և սերը լուսավորեն կյանքի իմաստը և դեպի Տերը ուղղորդեն նրա ընթացքները: ... Ձերդ Սրբություն, վստահ ենք, որ Ձեր այցը Ս. Էջմիածին եղբայրության նոր շունչ պիտի հաղորդի մեր Եկեղեցիների հարաբերություններին, որ իբրև թանկ հարստություն ժառանգել ենք մեր հայրերից»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

«Ձեր երկիրն առաջինն էր աշխարհում, որ ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Եվ ձեր Եկեղեցին կոչված է կրելու Տիրոջ խաչը: Մենք մի ենք մեր հավատքի և դավանանքի մեջ, և մեր երկու ժողովուրդներն անցել են բազում փորձությունների ու դժվարությունների միջով դարեր շարունակ: ...Մենք աղոթում ենք ձեր ժողովրդի և Եկեղեցու համար և հայցում ձեր աղոթքը մեզ համար, որպեսզի առավել ամրապնդվենք ամենքս մեր առաքելության և ի Քրիստոս մեր ծառայության մեջ»,- նշեց Ս. Մարկոսի Աթոռի գահակալը:

Սրբազան արարողությանը ներկա էին բարձրաստիճան հոգևորականներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀՀ ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, ՀՀ-ում Եգիպտոսի, Սիրիայի, Իրաքի արտակարգ և լիազոր դեսպանները:

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԸ

Կիրակի, մայիսի 11-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի ուխտավոր ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը:

«Որքա՜ն շնորհակալ ու երախտապարտ ենք մեր հայրերին, մեր նախահայրերին, որ մեր Հայաստան աշխարհում կառուցեցին մի տաճար, մի տուն, որ երբեք չի հնանում, տնկեցին մի ծառ, որ երբեք չի չորանում, և Ավետարանի կենարար աղբյուրից մի ակունք բխեցրեցին, որ երբեք չի ցամաքում: Եվ այդ ամենը խտացնում ենք այն խորհրդի մեջ, որ անվանում ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին: ... 1700 տարիներ շարունակ Ս. Էջմիածինը եղել է գտնվել դարերի ռեմակների մեջ, բայց կարողացել է պահել իր ինքնությունը, պահել իր ենադարյան դեմքը, պահել իր հավատքը, պահել իր խոստովանությունը հանդեպ Քրիստոսի և նախախնամության ցնով կարողացել է իր ժողովրդին պաշտպանել և պահպանել բոլոր տեսակ փորձություններից: Եվ այո՛, Էջմիածինը գոյություն ունեցել է, ունի և ունենալու է հայ ժողովրդի համար»,- ասաց Սրբազան Հայրը:

Հանուն Նորին Սրբության և Մայր Աթոռի միաբանության ուխտավորներին ողջունեց նաև Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Սրբազան արարողությանը ներկա էին Հայաստանի Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Ներսես արքեպս. Ներսեսյանը, բարձրաստիճան հոգևորականներ, Շիրակի մարզպետ Ֆելիքս Փիրումյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, Գյումրիի ընծայարանի սաներ:

Հավարտ Ս. Պատարագի ուխտավորների բազմությանը Վեհարանում ընդունեց Վեհափառ Հայրապետը:

# ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԵՑ ԵՎ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵՑ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊՍ. ՉՈՒԼՋՅԱՆԸ

Կիրակի, մայիսի 18-ին, Երևման Ս. Խաչի տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց հերթական Ուխտի Պատարագը: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծիրից ներս այս անգամ եկեղեցականաց դասի առաջնորդությամբ Սուրբ Էջմիածին էր եկել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի ուխտավոր ժողովուրդը: Օրվա պատարագիչն էր թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը:

«Ս. Էջմիածնի խորհուրդը մեր հոգում ու մտքում վառ պահելու գիտակցությամբ, մեր նախնյաց ավանդությանը հավատարիմ, այսօր մենք նս ուխտի ենք եկել՝ վերստին վերանորոգելու և վերաիմաստավորելու համար մեր անցյալն ու ներկան: Մեր աղոթքն է, որ շարունակենք հավատարիմ մնալ Առաքելական մեր Մայր Եկեղեցուն, շարունակենք պահել մեր հոգևոր միասնությունը և փեղի չտանք ազգակործան մոլուցքով կուրացած օտարածին ու այլադավան կրոնական ու քաղաքական շարժումներին»,- ասաց Սրբազան Հայրը:

Օրը հիշարժան էր նաև նրանով, որ հընթացս Ս. Պատարագի կատարվեց հինգ սարկավագների քահանայական ձեռնադրություն և օծում: Ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ-առմեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Սարգիս սրկ. Կնյազյանը վերակոչվեց Տ. Խաչատուր քահանա, Արմեն սրկ. Պետրոսյանը՝ Տ. Նշան քահանա, Արամ սրկ. Ղեւոնդյանը՝ Տ. Շմավոն քահանա, Լևոն սրկ. Աղոսյանը՝ Տ. Կիրակոս քահանա, Հակոբ սրկ. Հովհաննիսյանը՝ Տ. Գրիգոր քահանա: Սեպուհ Սրբազանն իր քարոզում խորհուրդ տվեց նորընծաներին լծվել ծառայասիրության և անմնացորդ նվիրումով ու սրբությամբ կրել Հիսուս Քրիստոսի քաղցր լուծը:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց Տ. Խաչատուր և Տ. Նշան նորաօծ քահանաների վեղարի փվչության և աբեղայի օրհնության կարգը:

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

*«... Դահեսցէ քաղցրութեամբ եւ ամրացուսցէ օրհնութեամբ եւ ծաղկազարդեսցէ շնորհափայլութեամբ զկիրս եւ զզայարանս ձեր, զմիտս եւ զխորհուրդս ձեր. ...հեղլով ի վերայ ձեր զշնորհս ճառագայթից լուսոյ Հոգւոյն Սրբոյ եօթնազան պայծառութեամբ»:*
(Ձեռնադրության Մաշտոց)

Սույն թվականի մայիսի 18-ին՝ Երևման Սուրբ Խաչի տոնին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, ձեռամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ, որի ընթացքում Մայր Աթոռիս հինգ միաբան սարկավագներ ստացան քահանայական ձեռնադրություն և օծում:

Համաձայն Ձեռնադրության «Մաշտոց»-ի հրահանգի, նախորդ օրը, երեկոյան ժամերգության ավարտին, տեղի ունեցավ «Կոչումն ընծայութեան» կարգը:

Ձեռնադրվող հինգ սարկավագներ՝ Սարգիս սրկ. Կնյազյանը, Արմեն սրկ. Պետրոսյանը, Արամ սրկ. Դևոնդյանը, Լևոն սրկ. Աղոյանը և Հակոբ սրկ. Հովհաննիսյանը, իրենց խոնարհությունը դրսևորելով *«Նայեա ի մեզ»* շարականի երգեցողության ներքո, ծնրադիր, երեք հանգրվաններով մոտեցան Սրբություն Սրբոց Իջման Սեղանին, որի առջև գահին բազմած Սրբազան Հայրը, հոգևոր դասի, ճեմարանականների և հավատավոր ժողովրդի ներկայությամբ, կատարեց հավատո քննության հանդիսավոր կարգը: Իբրև ճշմարիտ վկայությունը Հայաստանյայց Մայր Եկեղեցու դավանանքին և ավանդությանը հավատարիմ մնալու՝ ընծայյալներն ընթերցեցին Ս. Գրիգոր Տաթևացու *«Հաւատոյ խոստովանութիւնը»*՝ ուխտելով հավատարիմ մնալ Տերունական կենսաբեր պատգամներին և Եկեղեցու հայրերից ավանդված կանոններին:

Նորընծաների հոգևոր պատրաստվածության մասին վկայեց խարտավիլակը՝ Հոգեշնորհ Տ. Արշեն աբղ. Սանոսյանը, որը հավատացյալների անունից ձեռնադրող եպիսկոպոսին ասաց. *«Խնդրէ ի քէն մայրս մեր Սուրբ Եկեղեցի, զի ձեռնադրեսցես սարկաւագունս զոր ընծայեն քեզ յաստիճան քահանայութեան»* (Մաշտոց Ձեռնադրության, Վաղարշապատ, 1876, էջ 26):

Հաջորդ օրը, հընթացս Ս. Պատարագի, *«Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով...»* աղոթքից հետո *«Այսօր Աստուածութիւնն զուարճանայ...»* հոգենորոգ երգեցողության ներքո Սրբազան Հայրը խնկարկեց ընծայացուներին, որից հետո Հոգեշնորհ Տ. Արշեն և Տ. Վարդան աբեղաների փոխնիփոխ սաղմոսասացությամբ սարկավագները ծնկաչոք բարձրանում են Ս. Խորան և դառնում դեպի ներկա ժողովուրդը:



ՀԸՆԹԱՑՍ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՔԱՐՈԶՈՒՄ Է ՍԵՊՈՒՀ ՍՐԲԱԶԱՆԸ



Այնուհետև *«Աստուածային եւ երկնային շնորհ»* շարականի երգեցողության ներքո բարձրացնում են ձեռքերը՝ ի նշան աշխարհից հրաժարման և ի նվիրումն հոգևոր կյանքին: Ապա ծնրադիր մոտենում են Սրբազանին, որը Ձեռնադրության «Մաշտոց»-ից ընթերցելով համապատասխան հատվածը և ձեռքը յուրաքանչյուրի գլխին դնելով՝ ասում է. *«Ես զձեռս դնեմ ի վերայ սորա, եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»*, որին հաջորդում են հավաքված ժողովրդի արտասանած «Արժանի են» խոսքերը:

Այնուհետև Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ անվանակոչելով Սարգիս սրկ. Կնյազյանին Տ. Խաչատուր քահանա, Արմեն սրկ. Պետրոսյանին՝ Տ. Նշան քահանա, Հակոբ սրկ. Հովհաննիսյանին՝ Տ. Գրիգոր քահանա, Արամ սրկ. Ղևոնդյանին՝ Տ. Շմավոն քահանա, և Լևոն սրկ. Աղոսյանին՝ Տ. Կիրակոս քահանա: Սեպուհ Սրբազանը նորօծ քահանաներին փոխանցեց նաև Ս. Հաղորդության սկիհը՝ նրանց փայլով պատարագելու և Ամենակարող Տիրոջ փրկարար Մարմինն ու Արյունը բաշխելու իրավունք, որից հետո հրավիրեց նորօծ քահանաներին՝ իրենց անդրանիկ օրհնությունը բաշխելու հավատավոր ժողովրդին:

Այնուհետև Սեպուհ Սրբազանն օրվա խորհրդին պատշաճող քարոզ խոսեց և իր շնորհավորանքի խոսքն ուղղեց նորընծա քահանաներին՝ պատգամելով նրանց հավատարիմ մնալ իրենց ուխտին, ունենալ անսասան հավատք և անմար պահել Ս. Գրիգոր Լուսավորչից ավանդված հավատքի մշտավառ կանթեղը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից առաջ, Սրբազան Հոր հանդիսապետությամբ կատարվեց *«Օրհնութիւն աբեղայի»* կամ *«Օրհնութիւն վեղարի»* կարգը, և վեղար ստացան Տ. Խաչատուր և Տ. Նշան քահանաները: Սրբազան Հայրը նորընծաների գլխից հանելով ջբբոնը (թասակը)՝ այն փոխարինեց վեղարով, և ասաց. *«Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք: Աստուած զգեցուցէ ձեզ զնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ եւ ճշմարտութեամբ... կանխեալ ի սէրն Աստուծոյ հոգւով ի տուէ եւ ի գիշերի»:*

Հանդիսավոր արարողությունն ավարտվեց «Պահպանիչ»-ով և Տերունական «Հայր մեր» աղոթքով:

*ԷԴԻԿ ՈՒՐԱՐԱԿԻՐ ՀԱԿՈԲՅԱՆ*
*Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Ե լսարանի սան*



**Տ. ՆՇԱՆ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**
(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1972 թ. ապրիլի 4-ին Երևանում:

1979-1989 թթ. սովորել է տեղի համար 139 անգլերեն թեքումով և համար 135 միջնակարգ դպրոցներում:

1989-1993 թթ. սովորել է Երևանի Ալ. Թամանյանի անվան շինարարական քոլեջում:

1990-1991 թթ. ծառայել է Ուկրաինայում Խորհրդային զինված ուժերում:

1995-2001 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. հուլիսից աշխատանքի է անցել Ս. Էջմիածնի Վեհարանում որպես գործավար քարտուղար:

2002 թ. ապրիլի 11-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հոգևոր հովվի գործունեության հոգեբանական կողմերի քննություն» թեմայով:

2003 թ. մայիսի 18-ին՝ Երևման Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



## Տ. ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲԵՂԱ ԿՆՅԱԶՅԱՆ

(ավազանի անունը՝ Սարգիս)

Ծնվել է 1979 թ. հուլիսի 4-ին Էջմիածնի շրջանի Առատաշեն գյուղում:

1985-1994 թթ սովորել է փեղի միջնակարգ դպրոցում:

1994-2000 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2000 թ. հուլիսի 1-ից աշխատել է Մայր Տաճարի թանգարանում:

2001 թ. հուլիսի 22-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2002 թ. մայիսի 10-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Սարգիս Շնորհալու՝ Հակոբոս Առաքյալի Ընդհանրական թղթի մեկնությունը» թեմայով:

2002 թ. մայիսի 2-ից աշխատել է Մայր Աթոռի ճարտարապետաշինարարական բաժնում որպես գործավար քարտուղար:

2003 թ. մայիսի 18-ին՝ Երեմյան Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:



**Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
(ավազանի անունը՝ Հակոբ)

Ծնվել է 1958 թ. հուլիսի 21-ին Երևանում:

1965-1975 թթ. սովորել է համար 86 միջնակարգ ու Երևանի պետական համալսարանին կից ֆիզիկամաթեմատիկական թեքումով դպրոցներում:

1975-1980 թթ. սովորել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետա-շինարարական բաժնում՝ ստանալով ճարտարագետ-շինարարի որակավորում:

1980-2003 թթ. աշխատել է նախագծային և շինարարական կազմակերպություններում, Արարատյան Հայրապետական թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնում և մարդասիրական տարբեր գրասենյակներում:

2003 թ. մայիսի 11-ին, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. մայիսի 18-ին՝ Երևման Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ՇՄԱՎՈՆ ՔԱՀԱՆԱ ՂԵՎՈՆԴՅԱՆ
(ավազանի անունը՝ Արամ)

Ծնվել է 1976 թ. մարտի 20-ին Երևանում:

1984-1994 թթ. սովորել է քաղաքի համար 164, 186, 198, 135 միջնակարգ դպրոցներում:

1994-2000 թթ. սովորել է Մեանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

2000-2001 թթ. սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. հուլիսից գործավար-քարտուղար է աշխատել Մայր Աթոռի վարչակազմակերպական բաժնում

2001 թ. հուլիսի 22-ին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Մեսրոպ եպս. Չոլըքյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2001 թ. հոկտեմբերից ծառայության է անցել Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում:

2001 թ. դեկտեմբերից ծառայության է անցել ՀՀ զինված ուժերում որպես զորամասի հոգևոր սպասավոր:

2002 թ. օգոստոսի 26-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հայոց Հարցը «Արարատ» ամսագրի էջերում» թեմայով:

2003 թ. մայիսի 18-ին՝ Երևման Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:



## Տ. ԿԻՐԱԿՈՍ ՔԱՀԱՆԱ ԱՂՈՍՅԱՆ
(ավազանի անունը՝ Լևոն)

Ծնվել է 1978 թ. օգոստոսի 2-ին Էջմիածին քաղաքում:

1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի համար 2 և 11 միջնակարգ դպրոցներում:

1992-1997 թթ. սովորել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում և ընծայարանում:

1998-2000 թթ. ազատ ունկնդրի կարգավիճակով սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թ. դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. ապրիլի 30-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը և Հայ Ազատագրական Շարժումը» թեմայով:

2000 թ. օգոստոսից ծառայության է անցել Արագածոտնի թեմում որպես հոգևոր փեսուչ:

2003 թ. մայիսի 18-ին՝ Երևանի Ս. Խաչի տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

# ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ Ս. ԳԵՂԱՐԴԱՎԱՆՔ

Մայիսի 22-ին Գևորգյան Հոգևոր Ճեմարանում սկսվեցին ուսումնական տարին եզրափակող քննությունները: Ճեմարանում իրենց տարեվերջյան քննությունները հանձնեցին նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի և Շիրակի Ընծայարանի բարձր լսարանների սաները, որով առավել շեշտվեց հոգևոր այս երեք հաստատությունների միասնական մեկ համակարգ լինելը:

Այս քննությունները նշանակալից էին նաև նրանով, որ 130-ամյա այս հաստատության սաները քննություն էին հանձնում ոչ միայն որպես ճեմարանականներ, այլ նաև որպես Աստվածաբանական համալսարանի սաներ, քանի որ կառավարության որոշմամբ Ճեմարանը ճանաչվել և իր արժանի տեղն է գրավել Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների շարքում:

Քննական պատասխանատու և լարված շրջանն իր լրումին հասավ Ս. Գեղարդավանքում, ուր ուխտագնացության մեկնեցին հոգևոր կրթական երեք հաստատությունների սաները, և Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցավ տարեվերջյան ամփոփիչ մանկավարժական ժողովը:

Այսպիսով քննություններից հետո Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչության նախաձեռնությամբ և Վեհափառ Հայրապետի օրհնությամբ ու անմիջական մասնակցությամբ կազմակերպվեց ուխտագնացություն դեպի Գեղարդավանք: Թերևս սա վերջին տասնամյակում Գեղարդավանքում եղած ամենաբազմամարդ ուխտագնացությունն էր, որին մասնակցում էին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի, Վազգենյան Դպրանոցի, ինչպես նաև Շիրակի Ընծայարանի սաները, Գևորգյան Ճեմարանի ու Վազգենյան Դպրանոցի տեսչական ու դասախոսական կազմը:

Ուխտագնացությունը մեծ խորհուրդ ունի. այն երկնային Տիրոջը մերձենալու, Նրան ընդառաջ ելնելու ճանապարհ է: Բացի հոգևոր ներաշխարհը նորոգելուց և ամրապնդելուց, ուխտագնացությունը մեկ նպատակ ևս ունի. ազգանվեր հոգևորական դառնալու ճանապարհին կարևոր է մեր հինամյա տաճարներ ուխտի գնալը, մեզ ու մերը ճանաչելը: Հույսի, հավատի նման հոգեկերտ վկաները, ինչպիսին Գեղարդավանքն է, մեր հոգում քորքոքում են այն խանդավառությունը, որ մեզանից յուրաքանչյուրը ժառանգն ու տերն է այս ամենի, պահապանը այն սրբությունների, որոնք դարեր շարունակ իրենք իսկ պահպանել ու պահպանում են մեզ իրենց աստվածային օրհնությամբ ու մաքրությամբ:

Գեղարդավանքում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին ուսանողներն ու դասախոսները: Հազարամյա տաճարի կամարների ներքո Նորին Սրբությունն իր աղոթքը վերառաքեց առ Աստված Հայաստան աշխարհի, Հայաստանյայց մեր Մայր Եկեղեցու և հոգևոր հաստատությունների բարգավաճման ու զորացման համար: Այդ անկեղծ ու սրտաշարժ վայրկյաններին իրենց երկյուղած աղոթքներն էին երկինք ուղղում նաև ուսանողները, դա-

սախոսները և ներկա հավատացյալ ժողովուրդը: Ստեղծվել էր աղոթական մի մթնոլորտ. հինավուրց վանքը արձագանքում և ավելի ազդու էր դարձնում հոգի և հովվի միասնական աղոթքը:

Հայրապետը ներկաներին մաղթեց ու հորդորեց առաջնորդվելու առ Աստված, Սուրբ Եկեղեցին և առ Հայրենիքը պարտքի ու սիրո զգացումով. մշտապես աղոթելով, որ Աստծո ամենախնամ Աջը հովանի լինի ու միասնական պահի Մայր Հայրենիքն ու Եկեղեցին:

Գեղարդավանքում Վեհափառ Հոր նախագահությամբ տեղի ունեցավ նախատեսված մանկավարժական փարեվերջյան ժողովը, որն ամփոփեց ու գնահատական տվեց փարվա ընթացքում եղած բացթողումներին և ձեռքբերումներին:

Երեկոյան ուխտավորները վերադարձան Մայր Աթոռ՝ իրենց հոգում բերելով Ս. Գեղարդավանքի օրհնությունը, նոր խանդավառությամբ լծվելու Մայր Եկեղեցու և Հայրենիքի շենացման ու բարգավաճման սրբազան գործին:

*Պատրաստեցին*
*Գևորգյան Հոգևոր Ճեմարանի*
*Զ լսարանի սաները*

# ՋՐՎԵԺԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒԽՏԻ ՏՈՆԸ

1980-ական թթ. վերջերին Ջրվեժի բնակիչները դիմում են Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, այժմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ին տեղի եկեղեցին գործող դարձնելու խնդրանքով: Նորին Սրբության ձեռամբ էլ 1991 թ. մայիսի 3-ին վերաբացվում է Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցին և հոգևոր հովիվ է նշանակվում Արժանապատիվ Տ. Նորայր քահանա Բաղդասարյանը:

Երբ 1996 թ. ստեղծվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Կոտայքի թեմը, թեմակալ առաջնորդ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի կարգադրությամբ 1996 թ. նոյեմբերից Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու հոգևոր հովիվ նշանակվեց Արժանապատիվ Տ. Կյուրեղ քահանա Տայանը:

Արդեն երրորդ տարին է, ինչ մայիսի առաջին կիրակի օրը Ջրվեժում նշում են Ս. Կաթողիկե եկեղեցու Ուխտի տոնը: Եվ ահա 2003 թ. մայիսի 4-ն է, կիրակի: Տ. Կյուրեղ քահանայի քարոզի խոսքն է հնչում հավատացյալներով լեփ-լեցուն եկեղեցում. «Այսօր Աշխարհամատրան կիրակին է կամ Կանաչ կիրակին, այլ խոսքով՝ Քրիստոսի Եկեղեցու նավակատիքն է: Մեկ Ընդհանրական Եկեղեցու, աշխարհասփյուռ Եկեղեցու տոնն է այսօր: Տարվա մեջ այդպիսի երկու տոն կա՝ գարնանը և աշնանը: Այս Աշխարհամատրան կիրակին նաև տոնն է Երուսաղեմում կառուցված Ս. Հարություն տաճարի: Իսկ ինչո՞ւ է այս կիրակին Կանաչ անվանվում: Որովհետև Քրիստոսի Եկեղեցին Նրա հարությունից հետո և մանավանդ Սուրբ Հոգու գալուստից հետո ծաղկեց, կանաչեց, փարթամացավ և սփռվեց ամբողջ աշխարհում: Եվ այս տարի Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու ուխտի օրը, որ ամեն տարվա մայիսի առաջին կիրակին է, երկու տարի առաջ հաստատեցինք այն, շատ խորհրդանշական կերպով համընկել է Աշխարհամատրան կիրակիի հետ:

Նոր ժողովուրդ, ինչպիսի՞ն պետք է լինի Տիրոջ ժողովուրդը: Պետք է լինի՞ նույնը, ինչ որ դրսում շրջող մարդի՞կ, արդյոք չպե՞տք է Տիրոջ ժողովուրդը տարբերվի, Աստծո ընտրած ժողովուրդը չպե՞տք է տարբերվի: Ապա էլ ինչի՞ համար է Աստված ընտրում մարդուն, ինչի՞ համար է Իրեն սեփական ժողովուրդ ընտրում: Չէ՞ որ ընտրում է որպես վկայություն ամբողջ մարդկության առջև, ընտրում է որպես վկայություն ամբողջ աշխարհի համար: Չէ՞ որ Տերն ասաց. «Դուք եք աշխարհի լույսը: Դուք եք աշխարհի աղը»: Ահա ինչպիսին պետք է լինի Աստծո ժողովուրդը: Սեփական ժողովուրդ Աստծո, սրանից վեհ, սրանից բարձր, սրանից մեծ կոչում արդյոք կարո՞ղ է լինել ամբողջ տիեզերքում»:

Աստվածայինին հաղորդվելու տոնական տրամադրությունը Ս. Պատարագի ավարտից հետո եկեղեցու բակում շարունակվեց հոգևոր և ազգագրական երգերի ներքո: Այնուհետև մատաղ բաժանվեց հավատացյալներին, ովքեր միասին և միախորհուրդ համախմբված իրենց արժանապատիվ հոգևոր հովվի և բարեշնորհ Գագիկ սարկավագ Բաբայանի հետ վայելում էին միասնական հոգևոր ընտանիքի սերը:

Տոնախմբության ընթացքում Արժանապատիվ Տ. Կյուրեղ քահանա Տայանն անդրադառնալով օրվա հոգևոր խորհրդին՝ ասաց. «Մեր եկեղեցում երեխաները շատ են, և դա շատ է ուրախացնում մեզ բոլորիս: Շատ են երեխաները, որոնք սիրում են եկեղեցին, կապ-

ված են եկեղեցու հետ: Աստիճանաբար ավելանում է Ջրվեժի բնակիչների կապը եկեղեցու հետ: Իսկ եկեղեցական համայնքն ընդհանուր առմամբ կազմված է ամենատարբեր վայրերից եկած հավատացյալներից: Երևանից և ամենատարբեր վայրերից են գալիս այստեղ: Շատ հոգևորականներ են Պատարագ մատուցել Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցում և բոլորն էլ զգացել են այն ջերմ մթնոլորտը, որ տիրում է մեզ մոտ: Մի խոսքով. մենք մի ընտանիքի պես ենք այստեղ, և դա իսկապես հարստություն է»:

*ՄԵԴԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մայիսի 20-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու ծիսակատար Տ. Հուսիկ քահանա Հարությունյանի ուղեկցությամբ այցելեց Թբիլիսիի Սուլխան-Սաբա Օրբելիանու անվան պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոն:

Առաջնորդ Հոգեշնորհ Հորը դիմավորեցին մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան պարոն Սերգո Վարդազանիձեն, հայագիտության ամբիոնի վարիչ տիկին Նինո Ածցիատուրին և պրոֆեսոր Էմմա Ախտյանը, ովքեր սիրով առաջնորդեցին Հոգեշնորհ Հորը համալսարանի ռեկտոր պրոֆեսոր Վախթանգ Սաթանիայի ընդունարան:

Համալսարանի ռեկտորը, ողջունելով առաջնորդ Հոգեշնորհ Հորը, նշեց, որ իրենց համար մեծագույն պատիվ է, որ համալսարանում գործում է հայագիտության ամբիոն, որտեղ մասնագիտական կրթություն են ստանում վրացախոսական հայ ուսանողները: Նա հպարտորեն նշեց, որ ՀՀ նախագահ պարոն Ռոբերտ Քոչարյանի կողմից պարգևատրվել է Սուրբ Մովսես Խորենացու անվան շքանշանով: Կարևորելով հայկական դպրոցներում վրացերեն լեզվի ուսուցումը, պարոն Սաթանիան նշեց, որ համալսարանի հայ շրջանավարտները լիովին կարող են իրականացնել վրացերենի ուսուցումը:

Այնուհետև տիկին Էմմա Ախտյանն առաջնորդ Հոգեշնորհ Հորը ծանոթացրեց հայագիտության ամբիոնի գործունեությանը: Ամբիոնը ստեղծվել է 1930 թ.: Գործունեության նպատակն է հայկական դպրոցների հայ և վրաց լեզվի ու գրականության ուսուցիչների պատրաստումը: Ամբիոնը ղեկավարել են անվանի հայ գիտնականներ, նրանց թվում և՝ պրոֆեսոր Էմմա Ախտյանը:

Առաջնորդ Հոգեշնորհ Հայրը համալսարանի դահլիճում հանդիպեց նաև հայագիտական բաժնի ուսանողների և դասախոսական կազմի հետ, որտեղ ռեկտոր Սաթանիան ևս մեկ անգամ խոսեց հայ և վրաց ժողովուրդների հոգևոր-մշակութային դարավոր բարեկամության մասին՝ շեշտելով, որ այսօրվա ձևավորված հարաբերությունների մեջ կարևոր ու հիմնական դեր ունեն Հայ և Վրաց Եկեղեցիները, ինչպես նաև գիտության, մշակույթի և կրթության բնագավառի աշխատողները: Փոխադարձ խոսքում Հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը նշեց, որ իր այցը ոչ միայն քաղաքավարական, այլ նաև գործնական նպատակ ունի և շարունակությունն է այն ջերմ հարաբերությունների, որոնք ձևավորվել են Վրաց և Հայ Եկեղեցիների երկու Հովվապետերի եղբայրական գործակցությամբ: Առաջնորդ Հոգեշնորհ Հայրը վկայակոչեց մայիսի 7-9-ը Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի՝ Հայաստան այցելության ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքերը. «Մեր երկու ժողովուրդների բարեկամության երաշխիքներից մեկը վրացահայերն են: Մենք շնորհակալ ենք Վրաստանի իշխա-

նություններից և Եկեղեցուց, որ այդչափ ուշադիր են վրաստանաբնակ հայերի նկատմամբ: Հայերը եղել են և կան իբրև խոնարհ և բարի Վրաստանի նվիրյալ և օրինապահ քաղաքացիներ»:

Շարունակելով իր խոսքը, առաջնորդ Հոգեշնորհ Հայրը քաջալերեց ուսանողներին, որ ընտրել են մատաղ սերնդին դաստիարակելու և կրթելու կարևորագույն առաքելությունը, և խորհորեց լինել ուսումնատենչ ու սերտորեն կապված Մայր Եկեղեցուն:

Պատասխանելով ուսանողությանը հետաքրքրող հարցերին, որոնք հիմնականում Վրաց Պատրիարքի՝ Հայաստան և Ս. Էջմիածին այցելությանն էին վերաբերում, Հոգեշնորհ Հայրը մանրամասնեց և ներկայացրեց այն ջերմ մթնոլորտը, որը ձևավորվել է Հայ և Վրաց Եկեղեցիների ղեկավարների միջև:

Շնորհակալություն հայտնելով համալսարանի ռեկտորին և դասախոսական կազմին հայ երիտասարդներին կրթելու և դաստիարակելու համար, ինչպես նաև իր առաջին այցելության առիթով, Վազգեն վարդապետը Ս. Էջմիածնի հոգևոր արվեստի գործերին նվիրված «Գանձատուն» ալբոմը նվիրեց համալսարանի ռեկտոր պարոն Սաթանիային, Հայ Եկեղեցու Պատարագի մեկնության, երգեցողության և Քրիստոնեականի գրքեր՝ դասախոսական կազմին ու աշակերտությանը:

Փոխադարձաբար համալսարանի հայ ուսանողներն առաջնորդ Հոգեշնորհ Հորը նվիրեցին իրենց «Վիրահայ ուսանող» ամսագրի անդրանիկ համարը:

# ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

Գերմանիոյ հայոց թեմը օժտուեցաւ նոր քահանայ հայրով մը՝ յանձին Բարեշնորհ Գրիգոր սրկ. Մարգիկեանի:



Բարեշնորհ Գրիգոր սարկաւագի քահանայական կոչման արարողութիւնը տեղի ունեցաւ շաբաթ, 22 փետրուար 2003-ին, Քէօլնի Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցւոյ մէջ՝ խարգահիլակութեամբ Ռումանիոյ եւ Պուլղարիոյ առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպս. Մարտիկեանի եւ թեմի ողջ հոգեւոր դասի մասնակցութեամբ:

Յաջորդ օրը, կիրակի, 23 փետրուարին, հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց առաջնորդ Գարեգին Սրբազանը, որ կատարեց նաեւ ձեռնադրութիւնն ու օծումը Գրիգոր սարկաւագին՝ վերանուանելով Տէր Հայազատ:

Նորաօծ քահանայ հայրն իր քառասունքիապաշխարութիւնը պիտի անցնէ Ռումանիոյ հայ վանքերէն մեկուն մէջ՝ հսկողութեան ներքեւ Տիրայր Սրբազանի, որուն նախապէս եղբորը թոռն է ձեռնադրեալը: Տէր Հօր կնքահայրութեան պատուաբեր պաշտօնը ստանձնեց Թեմական Խորհուրդի անդամ պրն. Սարգիս Ադամ:

Տէր Հայազատ իր նախնական եւ միջնակարգի ուսումն առած է Սուխումի եւ Հայաստանի մէջ, երեք եւ կէս տարիներ զինուած է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքին մէջ, ապա աւարտած է Երեւանի համալսարանի Աստուածաբանութեան բաժինը: Այս տարուայ ընթացքին կ՚աւարտէ եւ կը ստանայ իր մագիստրոսի տիտղոսն ու պաշտօնի կ՚անցնի Քէօլնի Մայր եկեղեցւոյ մէջ:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ սույն թվականի մայիսի 19-ից 25-ը Հոգեշնորհ Տ. Գարեգին աբեղա Հարությունյանի հետ մասնակցեցինք "World Vision" միջազգային բարեգործական կազմակերպության կողմից Բուխարեստում "Christ to the Children" ծրագրի շրջանակներում "Training of Trainers" նպատակային վերնագրով գումարված խորհրդաժողովին, որը նվիրված էր մանուկների քրիստոնեական ուսուցման առարկայի և կրոնից ուսուցիչների պատրաստման ծրագրերին: Նիստերին հրավիրված էին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետխորհրդային 10 երկրների հոգևորական ու աշխարհական շուրջ 27 մասնակիցներ, ինչպես նաև մեկ ներկայացուցիչ Եգիպտոսից:

Բացի մեզանից Հայաստանը ներկայացնում էին նաև Հայր Անտոն վարդապետ Թոթոնջյանը՝ Կաթողիկե Եկեղեցուց, ով ներկայիս Հայաստանի "Caritas" կազմակերպության տնօրենն է, Կարեն Մանուկյանը՝ Ավետարանչական Եկեղեցուց, և Կարինե Հարությունյանը՝ Հայաստանի "World Vision"-ից:

Եռօրյա քննարկումների ընթացքում ամերիկացի բանախոսները փորձեցին մասնակիցներին ծանոթացնել երեխաների քրիստոնեական կրթության առարկայի (Curriculum) և դասավանդման արևմտյան մեթոդներին ու ձևերին՝ ի մասնավորի կարևորելով անչափահասների հավատքի և հոգեբանության տարիքային փուլերի զարգացման առանձնահատկությունները: Միաժամանակ կարևորվեցին ուսուցիչների դասավանդման որակական հատկանիշներն ու հմտությունները՝ Սուրբ Գրքի ծանոթության, մանկավարժական փորձի ու անհատական մոտեցման, նյութի դյուրընկալ մատուցման և արդյունավետ դասավարման տեսանկյունից:

Խորհրդաժողովի կազմակերպիչներն ասացին, որ իրենք ակնկալում են, թե մասնակիցները խորհրդաժողովի արդյունքում ձեռք բերված նյութերն ու փորձը կաշխատեն կիրառել իրենց երկրների կրթա-մշակութային կյանքում, այդ մեթոդները համադրելով ուսուցիչների քրիստոնեական կրթության ու պատրաստության առկա ծրագրերի հետ:

Խորհրդաժողովի օրերին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի հրավերով մայիսի 25-ին, կիրակի օրը, առաջնորդանիստ եկեղեցում մասնակցեցինք Պատարագի սրբազան արարողությանը, որից հետո հանդիպում ունեցանք տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

*ՊԱՐՈՒՅՐ ՔԱՀԱՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայիսի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իրանի Հանրապետության կրթության նախարար Մուստաֆա Մոյինին՝ ՀՀ կրթության նախարար Լևոն Մկրտչյանի և երկու երկրների դեսպանների ուղեկցությամբ:

Հանդիպման ընթացքում խոսվեց կրթական ասպարեզում երկու երկրների միջև առկա համագործակցության, ինչպես նաև հայ-իրանական դարավոր բարեկամության ու պատմամշակութային առնչությունների մասին:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ իրանահայությունը, շնորհիվ Իրանի բարյացակամ վերաբերմունքի, շարունակում է ապրել իր կրոնական-ազգային կյանքով: Նորին Սրբությունն իբրև ժողովուրդների բարեկամության ճշմարիտ արտահայտություն նկատեց Երևանում Կապույտ մզկիթի գործունեությունը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԻՐ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՎԵՑ ՍՊԻՏԱԿՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Մայիսի 13-ին Վեհարանի դահլիճում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց սպիտակցի շուրջ 500 երեխաների:

Նորին Սրբությունն իր հայրապետական մաղթանքն ու օրհնությունը տվեց նրանց՝ պատգամելով լինել հայրենիքի ու Մայր Եկեղեցու արժանավոր զավակներ:

Երեխաների ուխտագնացությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին նախաձեռնել էր սպիտակաբնակ Սլավիկ Հովակիմյանի ընտանիքը, որ մտադիր է նման այցելությունները դարձնել պարբերական: Ս. Էջմիածնում երեխաներն առիթ ունեցան լինելու նաև Մայր Աթոռի թանգարաններում: Ս. Էջմիածնից երեխաները մեկնեցին Երևանի Նորքի Հայորդյաց տուն, ուր նրանց համար գեղեցիկ համերգ էին կազմակերպել Հայորդյաց տան սաները:

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

*Մայիսի 4-ին, կիրակի.- Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս Պատարագ մատուցեց Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը: «Հայր մեր»-ից առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առթիվ հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Ալեքսանդրիայի Պապ և Ս. Մարկոսի Աթոռի Պատրիարք Նորին Սրբություն Շենուդա Գ-ն, իբրև քույր Եկեղեցիների Գահակալներ, իրենց պատգամն ուղղեցին հավատացյալ ժողովրդին:

*Մայիսի 11-ին, կիրակի.- (Կարմիր Կիրակէ):*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Միքայել եպս. Աջապահյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Էջմիածինը դարեր շարունակ եղել է հայ ժողովրդի հույսը, դարեր շարունակ հեփապնդումների է ենթարկվել և այսօր գոյություն ունի հայ ժողովրդի համար» (Արտակ եպս. Սմբատյանց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 45):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մայիսի 18-ին, կիրակի.- Տօն Երևման Ս. Խաչի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը: Հրնթացս Սուրբ և Անմահ Պատարագի պատարագիչ Սրբազան Հայրը կատարեց քահանայական ձեռնադրություն, որից հետո հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 48):

*Մայիսի 25-ին, կիրակի:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ռուկան արքեպս. Գալփաքյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Եւ ծագեսցէ ձեզ երկիւղածաց անուան իմոյ արեգակն արդարութեան...» (Մաղ. Դ 2-3) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 50):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Մայիսի 28-ին, չորեքշաբթի. - Առաջին Հանրապետության օր:*

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ի ոգեկոչումն 1918 թ. Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ կատարվեց Հանրապետական մաղթանք:

***Մայիսի 29-ին, հինգշաբթի.-Համբարձումն Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Սա է, որ ի գերեզմանէն յարեաւ եւ աւերեաց զդժոխս եւ վերհամբարձեալ փառօք գայ առ Հայր՝ Տէր կարող ի պատերազմի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տես էջ 53):

Հավարտ Սուրբ և Անմահ Պատարագի, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ 1441 թ. Հայոց Հայրապետական Աթոռի՝ Սսից Լուսավորչահաստատ Ս. Էջմիածնում վերահաստատման:

# "ЭЧМИАДЗИН"
# ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ
# ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
**(Май 2003 г.)**


1. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** – Визит Александрийского Папы и Патриарха Престола Святого Марка Его Святейшества Шенуды III в Армению и Первопрестольный Святой Эчмиадзин (помещен текст Совместного заявления, подписанного Его Святейшеством Католикосом Гарегином II и Его Святейшеством Патриархом Шенудой III), 2-4 мая 2003 г. (с. 3-11).
2. **ДЬЯКОН ВАЗГЕН КЕСАБЛЯН** – Визит Главы Грузинской православной церкви, Католикоса-Патриарха Всея Грузии Его Святейшества Ильи II в Первопрестольный Святой Эчмиадзин, 7-9 мая 2003 г. (с. 12-17).
3. **ДЬЯКОН АРТУР ОГАНИСЯН** – Освящение церкви Св. Саркиса г. Красноярска и освящение церкви Успения Святой Богоматери г. Львова Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 14-18 мая 2003 г. (с. 18-28).


## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ


4. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю избрания Его Высокопреосвященства архиепископу Овнану Тертеряну главой армянской западной епархии США на торжестве в Канадской епархии, 27 мая 2003 г., № 351 (с. 29-30).
5. Благословение Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, протоархимандриту Варужану Гапараджяну, 12 мая 2003 г., № 350 (с. 31-32).
6. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Андранику Зораяну по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 1 мая 2003 г., № 160 (с. 33-34).
7. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Дживану Гальфа по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 1 мая 2003 г., № 161 (с. 35-36).
8. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-же Маргарите Овсепян по случаю её награждения орденом «Св. Григория Просветителя», 1 мая 2003 г., № 163 (с. 37-38).
9. Патриаршие награды (пожалование в мае 2003 г. энциклик, благословений и орденов Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим неоценимые услуги Армянской церкви) – (с. 39).
10. Поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Победы и Мира, 9 мая 2003 г. (с. 40).
11. Слово Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Независимости, 28 мая 2003 г. (с. 41).
12. Поздравление Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю

Дня благословения выпускников, 23 мая 2003 г. (с. 42).

13. Его Высокопреосвященство архиепископ Овнан Тертерян избран Предстоятелем армянской западной епархии США (помещена биография Его Высокопреосвященства архиепископа Овнана Тертеряна) 3-4 мая 2003 г., № 351 (с. 43-44).

## ПРОПОВЕДИ

14. Проповедь Его Преосвященства епископа Микаэла Аджапагяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 11 мая 2003 г. (с. 45-47).
15. Проповедь Его Преосвященства епископа Сепуха Чулджяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургии Обета, 18 мая 2003 г. (с. 48-49).
16. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Воскана Галпакяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургию Обета, 25 мая 2003 г. (с. 50-52).
17. Проповедь иеромонаха Торгома Тоникяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на праздник Вознесения, 29 мая 2003 г. (с. 53-54).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

18. **АРПЕНИК КАЗАРОСЯН** – Католикос армян Овсеп Вайоцдзореци (научное исследование) – (с. 55-62).
19. **ГАЯНЭ МХИТАРЯН** – Названия невмов в системе музыкальной терминологии (научное исследование) – (с. 63-70).
20. **САРКИС МХИТАРЯН** – Стихотворное послание Григора Магистроса «О крестоносном посохе, подаренном Петросу, Католикосу армян», (научное исследование) – (с. 71-76).
21. **ВАРДАН ГРИГОРЯН** – Армянская церковь Успения Святой Богоматери г. Львова (научное исследование) – (с. 77-82).
22. **СУСАННА ДЖАНИКЯН** – Духовно-национальные основы подъёма армянского изобразительного искусства в 1920-1960 гг. (научное исследование) – (с. 83-88).

### Арменоведение в Европе

23. **ЭЛЕОНОРА ГУКАСЯН** – Глашатай Армении в Европе (научное исследование) – (с. 89-96).

### Публикация

24. **ПЕТРОС ОГАНИСЯН** – Неизвестные страницы Николаёса Адонца (представлена неопубликованная статья «Армянские известные исполины прошлого» Николаёса Адонца) – (с. 97-98).
25. **НИКОЛАЁС АДОНЦ** – Армянские известные исполины прошлого (статья) – (с. 99 - 105).

## РЕЦЕНЗИЯ

26. **НАРУЖАН ВОСКАНЯН** – Редактор, филолог, дипломат (о книге «Ерванд Мелконян, филолог и дипломат» Сандро Бегбудяна) – (с. 106-108).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

27. Литургию Обета отслужил в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина Предстоятель армянской епархии Украины Его Высокопреосвященство архиепископ Григорис Буниатян, 4 мая 2003 г. (с. 109).
28. Литургию Обета отслужил в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина глава Ширакской епархии Его Преосвященство епископ Микаэл Аджапахян, 11 мая 2003 г. (с. 110).
29. Литургию Обета отслужил в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина глава Гугаркской епархии Его Преосвященство епископ Сепух Чулджян, 18 мая 2003 г. (с. 111).
30. **ЭДИК АКОПЯН** – Рукоположение и Литургия Обета в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 18 мая 2003 г. (помещены биографии иеромонаха Ншана Петросяна, иеромонаха Хачатура Князяна, иерея Григора Оганисяна, иерея Шмавона Гевондяна и иерея Киракоса Агосяна) – (с. 112-118).
31. Экзамены конца учебного года в Духовной семинарии Геворкян и паломничество в монастырь св. Гегарда, 22 мая 2003 г. (с. 119-120).
32. **СЕДА АРУТЮНЯН** – Праздник церкви Св. Катогике в Джрвеже, 4 мая 2003 г. (с. 121-122).
33. Первый визит главы епархии армян Грузии архимандрита Вазгена Мирзаханяна в Государственный педагогический университет г. Тбилиси, 20 мая 2003 г. (с. 123-124).
34. Рукоположение в армянской епархии Германии, 22-23 мая 2003 г. (с. 125).
35. **СВЯЩЕНИК ПАРУЙР АВЕТИСЯН** - Конференция посвященная христианскому воспитанию, Бухарест, 19-20 мая 2003 г. (с. 126).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

36. Аудиенция у Его Святейшества Гарегина II министра просвещения Ирана г-на Мустафы Мойини, 6 мая 2003 (с. 127).
37. Католикос Гарегин II благословил детей г. Спитака, 13 мая 2003 г. (с. 127).

38. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Первопрестольном Св. Эчмиадзине в течение мая 2003 г. (с. 128-129).

# "ETCHMIADZIN"
# OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN
## (May 2003)


1. **GAYANE ALEXANIAN** – Visit of His Holiness Shenouda III, Pope of Alexandria and Patriarch of the See of Saint Mark, to Armenia and to the Mother See of Holy Etchmiadzin, May 2-4, 2003 (Text of the Common Declaration signed by His Holiness Catholicos Karekin II and His Holiness Pope Shenouda III (p. 3-11).
2. **DEACON VAZGEN KESABLIAN** – Visit of His Holiness Ilia II, Catholicos-Patriarch of All Georgia and Head of the Orthodox Church of Georgia, to the Mother See of Holy Etchmiadzin, May 7-9, 2003 (p. 12-17).
3. **DEACON ARTHUR HOVHANNISIAN** – Consecration of the Saint-Sarkis church of Krasnoyarsk and re-consecration of the church of the Dormition of the Holy Virgin in Lvov by His Holiness Catholicos Karekin II, Catholicos of All Armenians, May 14-18, 2003 (p. 18-28).


## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING


4. Letter of Blessing and Confirmation of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Hovnan Derderian on the occasion of his election as the Primate of the Western Diocese of the Armenian Church of North America, May 27, 2003, no. 351 (p. 29-30).
5. Letter of Blessing of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Supreme Archimandrite Varoujan Gaparadjian, May 12, 2003, no. 350 (p. 31- 32).
6. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Andranik Zorayan, on the occasion of his decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", May 1, 2003, no. 160 (p. 33-34).
7. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Jivan Galfa on the occasion of his decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", May 1, 2003, no. 161 (p. 35-36).
8. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mrs. Margarit Hovsepian on the occasion of her decoration with the Medal of "Saint Gregory the Illuminator", May 1, 2003, no. 163 (p. 37-38).
9. Pontifical Awards (Encyclicals, Letters of Blessing and Medals granted in May 2003 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to devoted clergymen and laymen of the Armenian Church) – (p. 39).
10. Congratulatory Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of May 9, Victory and Peace Day, May 9, 2003 (p.40).
11. Speech of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of the Commemoration Day of the First Armenian Republic, May 28, 2003 (p. 41).
12. Congratulatory Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the

occasion of the Day of Blessing for Graduated Students, May 23, 2003 (p. 42).

13. His Eminence Archbishop Hovnan Derderian was elected Primate of the Western Diocese of the Armenian Church of North America (Biography of His Eminence Hovnan Derderian), May 3-4, 2003 (p. 43-44).

## SERMONS

14. Sermon delivered by His Grace Bishop Mikael Ajapahian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath of the Armenian Diocese of Shirak, May 11, 2003 (p.45-47).
15. Sermon delivered by His Grace Bishop Sepouh Chuljian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath of the Armenian Diocese of Gougark, May 18, 2003 (p.48-49).
16. Sermon delivered by His Eminence Archbishop Voskan Kalpakian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath of the Diocese of Greece, May 25, 2003 (p.50-52).
17. Sermon delivered by Rev. Fr. Torgom Tonikian in the Cathedral of Holy Etchmiadzin on the Feast of the Ascension, May 29, 2003 (p.53-54).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

18. **ARPENIK GHAZAROSIAN** – An investigation of Hovsep of Vayots Dzor, Catholicos of All Armenians – (p.55-62).
19. **GAYANE MEKHITARIAN** – An investigation of the System of the Musical Terms of the Neum Names – (p.63-70).
20. **SARKIS MEKHITARIAN** – An investigation of The Epistle in Verse "About the Cross-like Crosier which was offered to Petros I, Catholicos of All Armenians" by Grigor Magistros – (p.71-76).
21. **VARDAN GRIGORIAN** – An investigation of the Armenian Church of the Dormition of the Holy Virgin in Lvov – (p. 77-82).
22. **SOUSANNA JANIKIAN** – An investigation of the Spiritual and National Bases of the rise of Armenian Fine Arts Rise from 1920 to 1960 – (p. 83-88).

## Armenian Studies in Europe

23. **ELIONORA GHOUKASSIAN** – The Herald of Armenia in Europe (investigation) – (p. 89-96).

## Publication

24. **PETROS HOVHANNISIAN** – Unknown Pages by Nicolas Adontz (Presentation of the unpublished article "Armenian Giants of the Past" by Nicolas Adontz (p. 97-98).
25. **NICOLAS ADONTZ** – Armenian Giants of the Past (article) – (p. 99-105).

# CRITICAL REVIEW

26. **VARUZHAN VOSKANIAN** – Editor, linguist, diplomat (About the Book "Yervand Melkonian, Linguist and Diplomat" by Sandro Behboutian) – (p. 106-108).

# IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

27. Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Eminence Archbishop Grigoris Buniatian, Primate of the Armenian Diocese of Ukraine, May 4, 2003 (p.109).
28. Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Eminence Bishop Mikael Ajapahian, Primate of the Shirak Diocese, May 11, 2003 (p.110).
29. Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin by His Eminence Bishop Sepuh Chulgian, Primate of the Gugark Diocese, May 11, 2003 (p.111)
30. **STOLE-BEARER EDIK HACOBIAN** – Ordination of Priests and Divine Liturgy of Oath celebrated in the Cathedral of Holy Etchmiadzin, May 18, 2003 (Biographies of Pr. Nshan Petrossian, Fr. Khachatur Kniazian, Rev. Grigor Hovhannisian, Rev. Shmavon Ghevondian, Rev. Kirakos Aghossian) – (p. 112-118).
31. Year-end final examinations at the Gevorkian Theological Seminary of Holy Etchmiadzin and pilgrimage to the Monastery of Geghard, May 22, 2003 (p. 119-120).
32. **SEDA HARUTIUNIAN** – Divine Liturgy of Oath celebrated by St Katoghike Church of Jrvej, May 4, 2003 (p.121-122).
33. First Visit of Senior Archimandrite Vazgen Mirzakhanian, Primate of the Armenian Diocese of Georgia, to State Pedagogical University of Tbilisi, May 20, 2003 (p.123-124).
34. Ordination of a Priest at the Armenian Diocese of Germany, May 22-23, 2003 (p.125).
35. **REVEREND PAROUYR AVETISIAN** – Meeting devoted to Christian Education, Bucharest, May 20, 2003 (p.126).

# AUDIENCES AT THE MOTHER SEE

36. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Mustafa Moyini, Minister of Education of Iran, May 6, 2003 (p.127).
37. His Holiness Karekin II received and blessed children of Spitak, May 13, 2003 (p.127).

38. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during May 2003 (p.128-129).

# "ETCHMIADZINE" ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE

(Mai 2003)


1. **GAYANE ALEXANIAN** – Visite de Sa Sainteté Chénuda III, Pape d'Alexandrie et Patriarche du Siège de Saint-Marc, en Arménie et au Saint-Siège d'Etchmiadzine, 2-4 mai 2003 (Texte de la Déclaration commune signée par Sa Sainteté le Catholicos Garéguin II et Sa Sainteté le Patriarche Chénuda III (p. 3-11).
2. **DIACRE VAZGUEN KESSABLIAN** – Visite de Sa Sainteté Ilia II, Primat de l'Eglise Orthodoxe géorgienne, Catholicos-Patriarche de toute la Géorgie, au Saint-Siège d'Etchmiadzine, 7-9 mai 2003 (p. 12-17).
3. **DIACRE ARTHUR HOVHANNISSIAN** – Consécration de l'église Saint-Sarkis de Krasnoyarsk et re-consécration de l'église de la Dormition de la Sainte Vierge de Lvov par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, 14-18 mai 2003 (p. 18-28).


## ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION


4. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à la cérémonie organisée au Canada à l'occasion de l'élection de Son Eminence l'archevêque Hovnan Tertérian au poste de Primat du Diocèse arménien occidental des Etats-Unis d'Amérique, 27 mai 2003, no.351 (p. 29-30).
5. Message de bénédiction de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'archimandrite suprême Varoujan Gaparadjian, 12 mai 2003, no.350 (p. 31-32).
6. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Andranik Zorayan à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 1er mai 2003, no.160 (p. 33-34).
7. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Djivan Galfa à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 1er mai 2003, no.161 (p. 35-36).
8. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à Mme Margarit Hovsépian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 1er mai 2003, no.163 (p. 37-38).
9. Distinctions pontificales (Encycliques pontificales, messages de bénédiction et ordres accordés par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne au mois de mai 2003) – (p. 39).
10. Message de félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion du 9 Mai, Fête de la Victoire et Jour de la Paix, 9 mai 2003 (p. 40).
11. Intervention de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion du Jour de l'Indépendance, 28 mai 2003 (p. 41).
12. Message de félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à

l'occasion du Jour de la bénédiction des promus des écoles, 23 mai 2003 (p. 42).

13. Election de Son Eminence l'archevêque Hovhan Tertérian à la dignité de Primat du Diocèse arménien occidental des Etats-Unis d'Amérique (Biographie de Son Eminence l'archevêque Hovhan Terterian), 3-4 mai 2003 (p. 43-44).

## SERMONS

14. Sermon de Son Eminence l'évêque Mikael Adjapahian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 11 mai 2003 (p. 45-47).
15. Sermon de Son Eminence l'évêque Sépouh Tchouldjian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 18 mai 2003 (p. 48-49).
16. Sermon de Son Eminence l'archevêque Voskan Galpakian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Sainte Messe du Vœu, 25 mai 2003 (p. 50-52).
17. Sermon du Révérend Père Torgom Tonikian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Fête de l'Ascension, 29 mai 2003 (p. 53-54 ).

## ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES

18. **ARPENIK GHAZAROSSIAN** – Hovsep Vayotsdzorétsi, Catholicos des Arméniens (recherche scientifique) – (p. 55-62).
19. **GAYANE MEKHITARIAN** – Les noms des neumes dans le système des termes musicaux (recherche scientifique) – (p. 63-70).
20. **SARKIS MEKHITARIAN** – L'Epître en vers de Grigor Magistros « Sur la crosse à croix offerte au Seigneur Pétros, Catholicos des Arméniens » (recherche scientifique) – (p. 71-76).
21. **VARDAN GRIGORIAN** – L'église arménienne de la Dormition de la Sainte Vierge de Lvov (recherche scientifique) – (p. 77-82).
22. **SOUSSANNA DJANIKIAN** – Les bases spirituelles et nationales de l'essor des arts plastiques arméniens entre 1920 et 1960 (recherche scientifique) – (p. 83-88).

## Les études arméniennes en Europe

23. **ELIONORA GHOUKASSIAN** – Le héraut arménien en Europe (recherche scientifique) – (p. 89-96).

## Publication

24. **PETROS HOVHANNISSIAN** – Pages inconnues de Nicolas Adontz (Présentation de l'article inédit « Les géants arméniens du passé » de Nicolas Adontz) – (p.97-98).
25. **NICOLAS ADONTZ** – Les géants arméniens du passé (article) – (p.99-105).

## CRITIQUE LITTERAIRE

26. **VAROUJAN VOSKANIAN** – Rédacteur, philologue, diplomate (sur le livre « Ervand Melkonian, philologue et diplomate » de Sandro Behboudian) – (p. 106-108).

## AU SAINT- SIEGE ET DANS LES DIOCESES

27. Messe du Vœu servie à la Cathédrale de Saint Etchmiadzine par Son Eminence l'archevêque Grigoris Bouniatian, Primat du Diocèse arménien d'Ukraine, 4 mai 2003 (p. 109).
28. Messe du Vœu servie à la Cathédrale de Saint Etchmiadzine par Son Eminence l'évêque Mikael Adjapahian, Primat du Diocèse du Chirak, 11 mai 2003 (p. 110).
29. Messe du Vœu servie à la Cathédrale de Saint Etchmiadzine par Son Eminence l'évêque Sépouh Tchouldjian, Primat du Diocèse du Gougark, 18 mai 2003 (p. 111).
30. **PORTE-CHASUBLE EDIK HACOBIAN** – Ordination de prêtres et Messe du Vœu à la Cathédrale de Saint Etchmiadzine, 18 mai 2003 (Biographies de Fr. Nchan Pétrossian, Fr. Khatchatour Kniazian, Rev. Grigor Hovhannissian, Rev. Chmavon Ghévondian, Rev. Kirakos Aghossian) – (p. 112-118).
31. Examens de fin d'année au Séminaire Guévorkian de Saint Etchmiadzine et pèlerinage au monastère de Guéghard, 22 mai 2003 (p. 119-120).
32. **SEDA HAROUTUNIAN** – Fête du Vœu de l'église Katoghiké de Djervej, 4 mai 2003 (p. 122-122).
33. Première visite de l'archimandrite Vazguen Mirzakhanian, Primat du Diocèse arménien de Géorgie, à l'Université pédagogique d'Etat de Tbilissi, 20 mai 2003 (p. 123-124).
34. Ordination de prêtre au Diocèse arménien d'Allemagne, 22-23 février 2003 (p. 125).
35. **REVEREND PAROUYR AVETISSIAN** – Réunion consacrée à l'éducation chrétienne, Bucarest, 19-25 mai 2003 (p. 126).

## AUDIENCES AU SAINT-SIEGE

36. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Mustafa Moyini, Ministre de l'éducation de l'Iran, 6 mai 2003 (p. 127).
37. Bénédiction des enfants de Spitak par Sa Sainteté Garéguin II, 13 mai 2003 (p. 127).

38. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine au mois de mai 2003 (p. 128-129).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"**
**Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie**

ԴԱՍԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ